ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ


ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(119) 2025



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(119)2025



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

*Վրիպակ

ՀՀ ՍԴ տեղեկագրի նախորդ՝ 1(118)2025 համարում տեղ է գտել վրիպակ: Մասնավորապես՝ նշված համարի 2-րդ և 565-րդ էջերում նշված Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ խմբագրական խորհրդի կազմի փոխարեն պետք է լիներ հետևյալ կազմը՝ Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ:

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

▪ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱԿ ՑԱՆԿԵՐՈՒՄ – ***Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ*** 8

▪ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***..... .45

▪ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ – ***Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ***.....58

▪ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***.....79

▪ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ – ***Ա. ՄԱՆԱՍՅԱՆ, Մ. ՏՈՆԵՅԱՆ***..... 93

▪ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ – ***Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ***.....127

▪ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ – ***Ս. ՔՈՉԱՐՅԱՆ***..... 147

▪ THE SUBMISSIVE PRESIDENCY: FROM CONSTITUTIONAL ARBITER TO POLITICAL SUBORDINATE AMID DEMOCRATIC EROSION AND THE

BREAKDOWN OF CONSTITUTIONAL CHECKS AND BALANCES IN ARMENIA'S PARLIAMENTARY REPUBLIC – ***A. HARUTYUNYAN***
(ՀՆԱՁԱՆԴ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԻՑ ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԷՐՈԶԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱԿԱԿՇԻՌՆԵՐԻ ՈՒ ԶՍՊՈՒՄՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ– ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***).....163

- ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ – ***Հ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ*** 178

- БАНКОВСКИЕ УСЛУГИ, ПРЕДОСТАВЛЯЕМЫЕ ПОТРЕБИТЕЛЯМ – ***Р. АМИРОВА***
(ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ – ***Ռ. ԱՄԻՐՈՎԱ***).....191

- ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԼԻՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ – ***Ա. ԱԶԱՏՅԱՆ***.....209

- ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԻՀԻԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ – ***Ի. ԽԱՉԱՏՐՅԱՆ***.....231

- THE LEGAL NATURE OF TAX LIABILITY AND SOME ISSUES REGARDING DOUBLE LIABILITY – ***L. ALEKSANYAN***
(ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ – ***Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***).....246

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1775-1780)

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1775, 1 ապրիլի 2025 թվականի)……266

▪ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ……290

▪ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1776, 16 ապրիլի 2025 թվականի)……304

▪ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1777, 22 ապրիլի 2025 թվականի)……436

▪ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ……442

▪ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1778, 22 ապրիլի 2025 թվականի)……449

▪ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....454

▪ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆՁԱՆՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1779, 22 ապրիլի 2025 թվականի).....461

▪ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....465

▪ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1780, 22 ապրիլի 2025 թվականի).....472

▪ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ս. ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....491

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ</u>

▪ ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԽ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻՆ..... 515

▪ ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ.....517

▪ ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ.....518

▪ ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՍՊԱՆԻՆ.....519

<u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ</u>

▪ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ.....520



DOI: 10.59560/18291155-2025.2-9

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱԿ ՑԱՆԿԵՐՈՒՄ

Ամփոփագիր

Բացահայտվում են պետական մարմնի՝ օրենքի տեքստում չնախատեսված կամ օրենսդրական փակ ցանկում չներառված լիազորությունը իրավակիրառ պրակտիկայում ճանաչելու թույլատրելիությունը և այդ ճանաչման ստրատեգիաները (հիմնավորումները):

Իրավակիրառ պրակտիկայում օրենքով չնախատեսված լիազորությունը կարելի է ճանաչել, եթե այդ լիազորությունը աներկբայորեն և անհրաժեշտաբար բխում է պետական մարմնի գործառույթներից և դա պայմանավորված է պետական մարմնի նվազագույն գործառութային գործունակության ապահովելու անհրաժեշտությամբ:

Քննարկվում են օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման երեք ստրատեգիական ուղղություններ՝ extra legem իրավունքի զարգացման դոկտրինը, contra legem իրավունքի զարգացման դոկտրինը և իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը: Ներկայացվում են այս ստրատեգիաների բովանդակությունը և նրանց տարբերությունները:

ՀՀ դատական պրակտիկայում հանդիպում են օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու դեպքեր: Ներկայացվում են քննարկվող հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ բարձրագույն դատական խորհրդի մոտեցումները:

ՀՀ դատական մարմինների՝ օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու հիմնավորումների ստրատեգիայի ընտրությունը կա՛մ հստակ չէ, կա՛մ այդ ընտրությունը հետևողական չէ: ՀՀ դատարանները հիմնավորումների ստրատեգիայի տարբերակման հարցում երբեմն խճճվում են և նույն լիազորության ճանաչման կապակցությամբ վկայակոչում են և՛ extra legem իրավունքի զարգացման դոկտրինը, և՛ օրենքի տարածական մեկնաբանումը:

Հիմնաբառեր. նվազագույն գործառութային գործունակություն, փակ ցանկ, contra legem, extra legem, իմպլիցիտ լիազորություն, թաքնված լիազորություն, էքսպլիցիտիզացիա:

1. Ընդհանուր դրույթներ

Հանրային իրավահարաբերություններում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետև՝ պետական մարմինների) համար գործում է իրավական կարգավորման լիազորման տիպը («*լիազորված է անել այն, ինչ սահմանված է օրենքով*»): Եթե պետական մարմնին օրենքով լիազորություն վերապահված չէ, ապա նրան արգելվում է կատարել օրենքով չլիազորված գործողությունը: Երբեմն իրավական կարգավորման այս տիպն ամրագրված է լինում պետության սահմանադրությունում, որտեղ ուղիղ նշվում է, որ պետական մարմինը կարող է կատարել այնպիսի գործողություն, որի համար լիազորված է օրենքով (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը):

Հանդիպում են նաև դեպքեր, երբ կոնկրետ պետական մարմնի լիազորությունները սահմանադրությամբ կամ օրենքով թվարկվում են փակ ցանկի ձևով: Սահմանադրական իրավունքի դոկտրինում պետական մարմինների իրավասությունները օրենքով հստակ սահմանելը կամ լիազորությունների numerus clausus թվարկումը համարվում են իշխանության սահմանափակման նեգատիվ միջոցներ[1]:

Ընդհանուր առմամբ պետական մարմնի օրենքով չնախատեսված կամ լիազորությունների փակ ցանկում չներառված «լիազորությունը[2]» իրավա-

[1] **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник. В 2 т. Т. 1. - М.: Изд. Проспект, 2023. - С. 322.

[2] Պոզիտիվիստները պետական մարմնի՝ օրենքով չնախատեսված վարքագծի կապակցությամբ «լիազորություն» բառը չեն գործածի, քանի որ եթե վարքագիծը օրենքով նախատեսված չէ, ուստի այն լիազորություն չէ:

կիրառի կողմից ճանաչելը (այն փաստացի իրականացնելը) անթույլատրելի է, քանի որ դրանով կբարձրանա նրա կողմից կամայականություն դրսևորելու ռիսկը և կխաթարվի երկրում առկա սահմանադրականությունը: Մյուս կողմից՝ այս հարցում պետք է խուսափել ծայրահեղ և բացարձակ մոտեցումներից, քանի որ այն կարող է վտանգել պետական մարմնի ֆունկցիոնալությունը: Բանն այն է, որ հանդիպում են դեպքեր, երբ անհրաժեշտ լիազորության բացակայության (օրենքով նախատեսված չլինելու) հետևանքով պետական մարմինը կորցնում է գործառութային նվազագույն գործունակությունը, որի արդյունքում մարդը զրկվում է համապատասխան պետական պաշտպանությունից (հանրային ծառայությունից օգտվելու հնարավորությունից): Ենթադրենք սահմանադրությամբ, որպես դատախազության գործառույթ, նշված է քննիչի գործունեության օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը, իսկ քրեադատավարական օրենսգրքի համապատասխան հոդվածում փակ ցանկով թվարկվում են դատախազության (դատախազի) լիազորությունները, որում դատախազի կողմից քննիչի անօրինական որոշումները վերացնելու մասին լիազորությունն ամրագրված չէ: Դատախազի լիազորությունների օրենսդրական փակ ցանկում քննիչի ապօրինի որոշումը վերացնելու լիազորության բացակայության պայմաններում դատախազության հսկողության գործառույթի և օրենսդրական փակ ցանկում ապօրինի որոշումը վերացնելու լիազորության բացակայության (նեգատիվ փաստի) միջև ծագում է աղաղակող անհամաչափություն, որի հետևանքով դատախազությունը կորցնում է իր գործառութային նվազագույն գործունակությունը, իսկ մարդն էլ զրկվում է դատախազության պաշտպանությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը 14.10.2008 թ. ՍԴՈ-766 որոշմամբ մշակել է պետականագիտության տեսանկյունից արժեքավոր բանաձև, ըստ որի՝ «գործառույթ-ինստիտուտ-իրավասություն» եռամիասնական սահմանադրական ներդաշնակության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար: ՀՀ սահմանադրական դատարանն այս որոշմամբ ըստ էության ճանաչել է պետական մարմնի գործառույթի առաջնությունը, իսկ իրավասությունը (լիազորությունը) համարել է գործառույթն իրականացնելու միջոց: Եթե պետական մարմնի լիազորությունների փակ ցանկում նրա գործառույթներից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող լիազորությունը ներառված չէ, ապա «գործառույթ-ինստիտուտ-իրավասություն» եռամիասնական համակարգի մեջ իրավասության (լիազորության) համեմատությամբ գործառույթի առաջնության գաղափարն արդարացնում է գործառույթներից

աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող լիազորությունը պետական մարմնի՝ օրենքով նախատեսված լիազորությունների փակ ցանկում ճանաչելը:

Այս աշխատանքում պետական մարմնի լիազորություն ասելով հասկանում ենք գործառութային և իշխանական բնույթի լիազորությունները: Պետական մարմնի կազմակերպաիրավական բնույթի կամ ոչ իշխանական բնույթի գործողությունները չեն համարվում լիազորություն: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանը 16.04.2003 թ. ՍԴՈ–412 որոշմամբ ՀՀ Նախագահի 2003 թ. ընտրությունից հետո հասարակության ներսում առկա սուր դիմակայությունը հաղթահարելու նպատակով ՀՀ Նախագահին և ՀՀ ազգային ժողովին առաջարկել էր կազմակերպել վստահության հանրաքվե[1]: ՀՀ սահմանադրական դատարանի այս առաջարկը իշխանական բնույթի ակտ չէ և քննարկվող հարցի տեսանկյունից լիազորություն չէ, ուստի այս իրավիճակում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ոչ իշխանական բնույթի առաջարկ ներկայացնելու համար հատուկ օրենսդրական հիմքեր կամ լիազորող նորմ նախատեսելու անհրաժեշտություն չկար:

2. Օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման հիմնական ստրատեգիաները

Կասկածից վեր է, որ դատախազության օրինակի հիման վրա նկարագրված իրավիճակներում պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության համար անհրաժեշտ (նրա գործառույթներից աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող) լիազորությունը պետք է ստանա պաշտոնական (օրինակ՝ դատական) ճանաչում, պարզապես խնդիրն այն է, թե իրավակիրառն այդ ճանաչումը ինչ ճանապարհով պետք է հիմնավորի: Հնարավոր են օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման հիմնավորումների տարբեր ստրատեգիաներ: Այս աշխատանքում կքննարկենք օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման երեք ստրատեգիական ուղղությունները՝ extra legem իրավունքի զարգացման դոկտրինը, contra legem իրավունքի զարգացման դոկտրինը և իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը:

[1] **Ղամբարյան Ա.** Վստահության հանրաքվե կազմակերպելու ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկը և քաղաքական իշխանության ինքնասահմանադրականացման բաց թողնված հնարավորությունը // Հայ-ռուսական համալսարանի Լրաբեր (հումանիտար և հասարակական գիտություններ) 2021, № 3 (39), Էջեր 84-96:

2.1. Լիազորության ճանաչումը extra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա

Extra legem իրավունքի զարգացման դոկտրինի դեպքում իրավակիրառը նախ պետք է փաստի, որ օրենսդիրը, պետական մարմնի լիազորությունները սահմանելիս կամ փակ ցանկում լիազորությունները թվարկելիս, թույլ է տվել սխալ, որի հետևանքով օրենքի տեքստում առկա է բաց, այսինքն՝ անհրաժեշտ լիազորությունը չի նախատեսվել օրենքում կամ փակ ցանկում, այնուհետև՝ փորձի այդ բացը լրացնել օրենքով նախատեսված համանման լիազորության միջոցով: Ենթադրենք օրենքով նախատեսված է, որ դատարանը իրավասու է *գործն ըստ էության լուծող* դատական ակտը բեկանել և գործն ուղարկել այլ դատարան, սակայն *գործն ըստ էության չլուծող* դատական ակտերի վերաբերյալ օրենքով նման լիազորություն նախատեսված չէ: Եթե պարզվի, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը բեկանելու լիազորությունը օրենքում ուղիղ չնախատեսելն ակնհայտորեն օրենսդրական սխալի արդյունք է, և այդ լիազորությունն աներկբայորեն և անհրաժեշտաբար բխում է այդ մարմնի գործառույթից, ապա դատարանը կարող է այդ բացը լրացնել՝ համանման հարաբերությունը կարգավորող լիազորող նորմն անալոգիայի կարգով կիրառելու միջոցով:

Այս ստրատեգիայի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

Նախ՝ իրավական կարգավորման լիազորման տիպի պարագայում, հատկապես եթե լիազորությունները ձևակերպված են փակ ցանկով, գործնականում հազվադեպ է հնարավոր փաստական տվյալներով հաստատել, որ լիազորությունը ցանկում չի ներառվել օրենսդրական սխալի հետևանքով: Նման բան հնարավոր է, եթե, օրինակ, օրենսդրական գործընթացի երկրորդային աղբյուրներով (travaux préparatoires), մասնավորապես՝ պառլամենտական լսումների արձանագրություններով հիմնավորվում է, որ լիազորությունը փակ ցանկում չի ներառվել ակնհայտ բացթողման արդյունքում:

Երկրորդ՝ իրավական կարգավորման լիազորման տիպի և ծայրահեղ պոզիտիվիստական իրավաընկալման պայմաններում իրավակիրառը, որպեսզի հնարավորություն ունենա extra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա ճանաչել օրենքով չնախատեսված լիազորությունը, պետք է պոզիտիվ իրավունքով օժտված լինի օրենքի անալոգիա կիրառելու ընդհանուր լիազորությամբ (օրինակ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով) :

Երրորդ՝ extra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա լիազորության ճանաչման դեպքում իրավակիրառը կանգնում է օրենքի անալոգիայի և օրենքի տարածական մեկնաբանման տարանջատման տեսական բարդ հարցի առջև: Օրենքի տարածական մեկնաբանությունն ըստ էության օրենքի անալոգիան քողարկելու միջոց է, որի հետևանքով և՛ տեսական, և՛ գործնական առումներով հաճախ հնարավոր չէ հստակ նշել՝ օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը (կիրառումը) իրականացվել է համանման ոլորտի համար նախատեսված լիազորող նորմը օրենքի անալոգիայի կարգով կիրառելո՞ւ, թե՞ դրա տարածական մեկնաբանման միջոցով: Պատահական չէ, որ ՀՀ դատական մարմինները, երբեմն խճճվելով այս տեսական բարդ հարցում, նույն առարկայի կապակցությամբ վկայակոչում են և՛ extra legem անալոգիան, և՛ օրենքի տարածական մեկնաբանումը (այս մասին՝ հաջորդիվ):

2.2. Լիազորության ճանաչումը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինի դեպքում դատարանը, հիմք ընդունելով պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքը, օրենքին (փակ ցանկից բխող իմպլիցիտ արգելքին) հակառակ «բացում է» լիազորությունների ցանկը և օրենքով չնախատեսված լիազորությունը (վարքագծի հնարավորությունը) ներառում է այդ ցանկում: Եթե դատախազության վերաբերյալ վերը նշված հիպոթետիկ օրինակում դատարանը ղեկավարվի contra legem իրավունքի զարգացման դոկտրինով, ապա նա, հիմք ընդունելով դատախազության գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքը, պետք է դատախազի լիազորությունների փակ ցանկին հակառակ (փակ ցանկում այլ լիազորություն չներառելու իմպլիցիտ արգելքին հակառակ) «բացի» այդ ցանկը և քննիչի ապօրինի որոշումը վերացնելու դատախազի լիազորությունը ներառի (ճանաչի) այդ ցանկում:

Լիազորությունների փակ ցանկը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա «բացելու» և ցանկում օրենքով չնախատեսված լիազորություն ներառելու հնարավորությունը անմիջականորեն կախված է օրինականության սկզբունքի ընկալումից և «սկզբունք - վարքագծի կանոն - բացառություն» իրավական կազմվածքի ճանաչումից: Եթե իրավական համակարգում օրինականության սկզբունքը բացարձականացվում է և օրինականության պահպանման նկատմամբ ցուցաբերվում է ձևապաշտական

խստություն (ռիգորիզմ[1]), ապա հասկանալի է, որ օրինականության սկզբունքից որևէ բացառություն անելը կգնահատվի որպես իրավախախտում, նույնիսկ եթե այդ բացառությունը կոչված է ապահովելու պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակությունը: Այլ կերպ ասած՝ եթե օրինականությունը դիտարկվում է «Dura lex, sed lex [2]» կամ «Pereat mundus et, fiat justitia[3]» իրավական մաքսիմներից բխող ձևապաշտական խստության համատեքստում, ապա օրինականության սկզբունքից բացառությունը (contra legem իրավունքի զարգացման դոկտրինը) իրավաբանորեն անհնարին է[4]:

Իրավիճակը կփոխվի, եթե օրինականության սկզբունքը դիտարկվի հետմոդեռնիստական ռելյատիվիզմի (հարաբերականության) լույսի ներքո և «սկզբունք-վարքագծի կանոն - բացառություն» իրավական կազմվածքի համատեքստում: Այս դեպքում օրինականության սկզբունքից իրավաչափ բացառություն անելը կհամարվի թույլատրելի[5]: Այս իրավիճակում contra legem իրավունքի զարգացման դոկտրինը համարվում է օրինականության սկզբունքից իրավաչափ բացառություն:

2.3. Լիազորության ճանաչումը իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի հիման վրա

Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի պարագայում ընդունված է այն մոտեցումը, որ պետական մարմինը կարող է օժտված լինել ոչ միայն էքսպլիցիտ լիազորություններով (օրենքի տեքստում կամ լիազորությունների ցանկում ուղիղ նախատեսված լիազորություններով), այլ նաև նրա գործառույթներից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող իմպլիցիտ լիազորություններով: Եթե օրենսդիրը պետական մարմնին վերապահել է որևէ գործառույթ, ապա պարզ տրամաբանությունը հուշում է, որ օրենսդիրը նրան

[1] Ռիգորիզմ (ригоризм - լատ. rigor խստություն) - որևէ սկզբունքի խստագույն պահպանումը: Բարոյագիտության մեջ՝ ձևապաշտության տարատեսակ, որը ենթադրում է բարոյական նորմերի անշեղ կատարումը՝ անկախ կոնկրետ պայմաններից, նույնիսկ հակառակ նպատակահարմարության, մարդկանց և հասարակության շահերի: Տե՛ս **Հայրապետյան Ա.Պ.,** Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Եր.: Հեղինակային հրատ., 2011, էջեր 487-488:

[2] Օրենքը խիստ է, բայց օրենք է:

[3] Թող աշխարհը կործանվի, բայց օրենքը հաղթի:

[4] Այս մասին տե՛ս **Гамбарян А.С.** Развитие права вопреки закону (contra legem) в Республике Армения // Государство и право. 2023. № 5. - С. 145-157:

[5] Այս մասին տե՛ս **Гамбарян А.С.** Принцип законности и положение «судья подчиняется закону» в контексте доктрины развития права contra legem // Правоприменение. 2023. Т. 7. № 4. - С. 15–24:

անհրաժեշտաբար օժտել է նաև այդ գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորությամբ, նույնիսկ եթե այդ լիազորությունը օրենքի տեքստում ուղիղ չի ձևակերպվել: Տրամաբանական չէր լինի, եթե օրենսդիրը մի կողմից պետական մարմնին վերապահեր գործառույթ, մյուս կողմից՝ նրան զրկեր այդ գործառույթն իրականացնելու նվազագույն հնարավորությունից՝ *գիտակցաբար* նրան չօժտելով անհրաժեշտ լիազորությամբ (լիազորությունների փակ ցանկում այն գիտակցաբար չներառելով):

Սահմանադրական իրավունքի տեսությունում նշվում է, որ պետական մարմնի լիազորությունների սպառիչ ցանկի կանոնից բացառություն է այն դոկտրինը, որը ճանաչում է սահմանադրության տեքստում ուղղակի (էքսպլիցիտ) չձևակերպված, սակայն նրա գործառույթներից բխող լիազորությունների գոյությունը: Օրենքի տեքստում էքսպլիցիտ չձևակերպված, սակայն նրա գործառույթներից բխող լիազորություններն անվանվում են տարբեր կերպ՝ ենթադրյալ լիազորություններ[1], իմպլիցիտ լիազորություններ[2], «թաքնված» լիազորություններ[3], արտակարգ (էքստրաօրդինար) լիազորություններ[4] կամ լիազորություն սահմանող անտեսանելի սահմանադրության նորմեր[5]: Օրինակ՝ «անտեսանելի սահմանադրության» հայեցակարգի կողմնակիցները

[1] **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник.В 2 т. Т. 2. - М.: Изд. Проспект, 2023. - С. 96.

[2] **Бредихин А.Л.** Имплицитные полномочия президента Российской Федерации // Экономика. Социология. Право. 2020. № 1(17). - С. 109-113; **Лангнер Т.С.** Конституционные и имплицитные полномочия Президента Российской Федерации // Вестник экономической безопасности. 2023, № 1. - С. 121-125.

[3] **Краснов М.А., Шаблинский И.Г.** Российская система власти: треугольник с одним углом. - М.: Изд. Ин-т права и публичной политики, 2008. - С. 52-53; **Комарова В.В.** Скрытые полномочия Президента России: вопросы теории и практики // Вестник Университета имени О.Е. Кутафина (МГЮА). 2018, № 6(46). - С. 15-23; **Стельмах В.Ю.** Возможны ли "скрытые" полномочия прокурора при осуществлении надзора за органами предварительного расследования? // Современное уголовно-процессуальное право - уроки истории и проблемы дальнейшего реформирования. 2019. Т. 2. № 1(1). - С. 200-205; Институт скрытых полномочий Президента РФ в конституционном праве: история и современное состояние / В.С. Черных, И.Е. Селезнев, М.А. Скачкова, И.С. Деркач // Право и управление. 2025, № 1. - С. 17-19; **Обгольц С.А.** Поручения Президента Российской Федерации как способ реализации скрытых полномочий / С.А. Обгольц // Образование и право. 2023, № 4. - С. 126-131; **Исаев И.А.** Конституция и скрытая традиция / И.А. Исаев // История государства и права. 2023, № 6. - С. 16–20. DOI: 10.18572/1812-3805-2023-6-16-20.

[4] **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации: учебник. 6-е изд., изм. и доп. - М.: Норма, 2007. - С. 453; **Прокофьев В.Н.** Экстраординарные полномочия президента РФ // Государственная власть и местное самоуправление. 2017, № 3. - С. 8-13.

[5] The Invisible Constitution in Comparative Perspective. Edited by Dixon R, Stone A. Cambridge University Press. 2018, **Уитц Р., Шайо А.** Конституционные ценности в практике конституционного правосудия Венгрии // Сравнительное конституционное обозрение. – 2007, № 2(59). – С. 85.

նշում են, որ «անտեսանելի» սահմանադրական նորմերը կարգավորում են հանրային իշխանության կազմի, լիազորությունների և գործունեության կարգին վերաբերող սահմանադրական հարցեր, սակայն դրանք ուղղակիորեն ձևակերպված չեն երկրի գրված սահմանադրությունում[1]:

Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը հիշեցնում է Նոբելյան մրցանակակիր Ֆ. Հայեկի՝ օրենքի տեքստում ուղիղ ձևակերպված նորմերի գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ իմպլիցիտ (օրենքի տեքստում չձևակերպված) նորմերի մասին մոտեցումը: Նա նշում էր.

«Գործողությունների գոյություն ունեցող կարգի պահպանումը, որին, ըստ էության, ծառայում են բոլոր բացահայտ կանոնները, կարող է պահանջել տարածայնությունները լուծելու համար անհրաժեշտ այլ կանոններ, որոնց գոյություն ունեցող կանոնները (բացահայտ կանոնները՝ հեղ.) չեն պատասխանում: Ուստի՝ որևէ առումով դեռևս գոյություն չունեցող կանոնը կարող է հանդես գալ որպես գոյություն ունեցող կանոնների «ենթադրյալ» ամբողջություն, և ոչ թե այն իմաստով, որ փրամաբանորեն կարող է բխել դրանցից, այլ այն իմաստով, որ որպեսզի բոլոր մյուս կանոնները ծառայեն իրենց նպատակին, անհրաժեշտ է նաև այս լրացուցիչ կանոնը»[2]:

Նախ՝ Հայեկը օրենքի տեքստում չձևակերպված նորմերը տարբերակում էր սովորութային նորմերից, որոնք թեև օրենքի տեքստում ձևակերպված չեն, սակայն իրականությունում գոյություն ունեն որպես պարբերաբար կրկնվող կանոններ: Նա նշում էր, որ օրենքի տեքստում չձևակերպված կանոններն անհրաժեշտ են օրենքի տեքստում ձևակերպված նորմերի գործառութային գործունությունն ապահովելու համար:

Երկրորդ՝ Հայեկը օրենքի տեքստում չձևակերպված նորմերը (ըստ էության իմպլիցիտ նորմերը - հեղինակ) անվանում է գոյություն ունեցող նորմերի ենթադրյալ ամբողջություն, սակայն հստակ նշում է, որ դրանք ոչ թե պարզապես տրամաբանորեն բխեցվում են օրենքի տեքստում բացահայտ ձևակերպված նորմերից, այլ դրանք անհրաժեշտ են, որպեսզի բացահայտ նորմերը ունակ լինեն իրականացնելու իրենց գործառույթը:

[1] **Goldsworthy J.** The Implicit and the Implied in a Written Constitution // Comparative Law and Policy. Edited by Dixon R, Stone A. Cambridge University Press; 2018. P. 109.

[2] **Хайек Ф.А.** Право, законодательство и свобода: современное понимание либеральных принципов справедливости и политики / Пер. с англ. - М., Челябинск: Изд. Социум, 2024. - С. 97.

Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի տեսանկյունից թեև պետական մարմնի գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորությունը օրենքի տեքստում տեսանելի կերպով ձևակերպված չէ, սակայն ճանաչվում է այդ լիազորության *իմպլիցիտ գոյությունը իրավակարգում,* քանի որ այն աներկբայորեն և անհրաժեշտաբար բխում է պետական մարմնի գործառությունից: Ընդգծենք, որ իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը կարող է կիրառվել, եթե կոնկրետ իրավիճակում առանց վարանելու հնարավոր է պնդել, որ պետական մարմնի գործառույթն իրականացնելու *հիմնական, եթե ոչ միակ* ճանապարհը և անհրաժեշտ միջոցը օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումն է:

Եթե պետական մարմնի լիազորությունները թվարկված են փակ ցանկով, ապա իմպլիցիտ լիազորությունը էքսպլիցիտիզացիայի է ենթարկվում[1] օրենսդրական փակ ցանկում: Այլ կերպ ասած՝ օրինակ դատարանը իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող լիազորությունը իր ակտով նյութականացնում է (ճանաչում է) լիազորությունների փակ ցանկում՝ այն դարձնելով տեսանելի: Եթե դատախազության վերաբերյալ վերը նշված հիպոթետիկ օրինակում դատարանը ղեկավարվի իմպլիցիտ լիազորությունների դոկտրինով, ապա պետք է հաստատի քննիչի ապօրինի որոշումը վերացնելու դատախազի լիազորության իմպլիցիտ գոյությունը *իրավակարգում և այն* էքսպլիցիտիզացնի դատախազության լիազորությունների փակ ցանկում:

Օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու վերը նշված երեք դոկտրինների արդյունքը նույնն է՝ երեքի դեպքում էլ ճանաչվում է պետական մարմնի՝ օրենքի տեքստում չնախատեսված կամ փակ ցանկում չներառված, սակայն նրա գործառույթներից աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող լիազորությունը, պարզապես տարբեր է դրանց հիմնավորումների ստրատեգիան:

Նախ պետք է փաստել, որ իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի պարագայում ընդունվում է, որ իրավակարգում գոյություն ունեն իմպլիցիտ նորմեր, որոնց ճանաչումն ըստ էության նշանակում է դրանց փաստացի կիրառում: Այս պարագայում ծագում է այն հարցը, թե իմպլիցիտ նորմերի իրավակիրառումը ինչ տեղ է զբաղեցնում intra legem, extra legem և contra legem իրավակիրառման տեսակների համակարգում:

[1] Նկարագրել տեսանելի ձևով:

Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի և extra legem ու contra legem դոկտրինների տարբերակման հարցը հատկապես սուր է դրվում, երբ իրավունքի անալոգիայի ձևով իրականացվող extra legem իրավունքի զարգացումը կամ contra legem իրավունքի զարգացումն ընթանում է օրենքում էքսպլիցիտ չամրագրված սկզբունքների հիման վրա: Բանն այն է, որ օրենքում ուղիղ չամրագրված սկզբունքների հիման վրա լիազորության ճանաչումը (իրավունքի անալոգիայի ձևով extra legem իրավունքի զարգացումը) կամ օրենքում ուղիղ չամրագրված սկզբունքի հիման օրենքի կոնկրետ դրույթին (լիազորությունների փակ ցանկին) հակադրվելով լիազորությունների փակ ցանկը «բացելը» ու այդ ցանկում լիազորություն ճանաչելը (contra legem իրավունքի զարգացումը) նման են իմպլիցիտ լիազորությունների դոկտրինին: Այս երեք դեպքերում օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման սուբստանցիոնալ հիմքը օրենքում ուղղակիորեն չամրագրված՝ պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքն է:

Իմպլիցիտ նորմերի իրավակիրառման տեսակի ճանաչումը և դրա ինքնավարությունը իրավակիրառման մյուս տեսակներից իրավագիտության մարտահրավերներից է, որը կարիք ունի համակողմանի ուսումնասիրության: Այս աշխատանքում պարզապես նշենք, որ ի տարբերություն իրավունքի անալոգիայի ձևով իրականացվող extra legem իրավունքի զարգացման դոկտրինի, իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի պարագայում օրենքի տեքստում առկա բացի (օրենսդրական բացի) հարցը դառնում է անկարևոր, քանի որ իրավակիրառը ելնում է այն գաղափարից, որ օրենքի տեքստում ուղիղ (էքսպլիցիտ) չնշված լիազորությունն իրավակարգում գոյություն ունի իմպլիցիտ, ուստի վերանում է օրենսդրական բացի առկայության հարցը քննարկելու անհրաժեշտությունը: Մինչդեռ, extra legem իրավունքի զարգացման դեպքում անհրաժեշտ է քննարկել օրենսդրական բացի առկայության, ինչպես նաև դրա դրսևորումների՝ օրենսդրական բացթողման, կամ գիտակցված լռության հստակեցման հարցերը:

Ի տարբերություն contra legem իրավունքի զարգացման, իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի պարագայում դատարանը չի հակադրվում իրավակարգին: Ինչ վերաբերում է օրենքին, ապա դատարանն առնվազն լեզվական ձևակերպումների մակարդակում չի հակադրվում նաև օրենքի տեքստում նախատեսված փակ ցանկին և contra legem տրամաբանությամբ չի «բացում» փակ ցանկը, այլ՝ իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող լիազորությունն էքսպլիցիտիզացնում է փակ ցանում:

Իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող լիազորության՝ օրենսդրական փակ ցանկում էքսպլիցիտիզացիայի միջոցով ճանաչումը ինքնատիպ վիճակ է, որով լուծվում է նաև ինքնալիազորման արգելքի հարցը: Ինքնալիազորման արգելքը չի հանդուրժում պետական մարմնի կողմից ինքն իրեն (առանց օրենքի վերապահման) լիազորություններ սահմանելու և դրանք իր նորմատիվ բնույթի ակտերով որոշելու պրակտիկան[1]: Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի պարագայում ինքնալիազորման արգելքը չի խախտվում, քանի որ, օրինակ, դատարանը ինքն իրեն չի վերապահում իրավակարգում բացակայող նոր լիազորություն, այլ իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող լիազորությունը պարզապես էքսպլիցիտիզացիայի միջոցով ճանաչում է իր լիազորությունների փակ ցանկում:

Իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի կողմից առաջարկվող լեզվական ձևակերպումները քաղաքական առումով անհամեմատ մեղմ են, քան contra legem իրավունքի զարգացման դոկտրինի պարագայում է: Այնուամենայնիվ, իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը մեր ընկալմամբ համարվում է contra legem իրավունքի զարգացումը քողարկելու միջոց, որն անկեղծ մոտեցում չէ:

3. Օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման սուբստանցիոնալ հիմքը

Տարբեր իրավական համակարգերում հանդիպում են դեպքեր, երբ դատարանը ճանաչում է պետական մարմնի օրենքով չնախատեսված լիազորությունը: Օրինակ, միջազգային իրավունքում տարածում է գտել ենթադրյալ իրավասության (լիազորությունների) հայեցակարգը, համաձայն որի՝ միջազգային կազմակերպության և նրա մարմինների իրավասությունները (լիազորությունները) պետք է որոշվեն՝ հիմնվելով նրանց առջև դրված նպատակների ու խնդիրների վրա: Միջազգային դատարանները, հիմք ընդունելով այս հայեցակարգը, բազմիցս որոշումներ են կայացրել, որոնք պաշտոնապես օժտում են և՛ առանձին մարմիններին, և՛ հենց դատարաններին լրացուցիչ լիազորություններով[2]:

[1] Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա.**, Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2024, Vol. 15, № 1(40), էջ 26:

[2] **Кучин М.В.** Судебное нормотворчество: концептуальные основы: монография. - М.: Изд. Юрайт, 2019. - С. 192-193.

Մեր պատկերացմամբ օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու համար պահանջվում է բարձր ստանդարտ: Օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու համար բավարար չէ զուտ այն հանգամանքը, որ այդ լիազորությունը պարզապես բխում է նրա խնդիրներից: Օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը կարող է թույլատրելի համարվել բացառապես այն դեպքում, եթե դա պայմանավորված է պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովման անհրաժեշտությամբ, հակառակ դեպքում պետական մարմինը կզրկվի գործառութային նվազագույն գործունակությունից:

Օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումն արդյո՞ք համարվում է պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակությունն ապահովելու միջոց, թե՞ ոչ, պետք է որոշել «պետական մարմնի գործառույթից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող լիազորություն» բանաձևով: Լիազորությունը համարվում է գործառույթից *աներկբայորեն* բխող, եթե այն անվերապահորեն գտնվում է կոնկրետ պետական մարմնի գործառույթների օբյեկտիվ սահմաններում: Լիազորությունը համարվում է գործառույթից *անհրաժեշտաբար* բխող, եթե պետական մարմնի գործառույթների օբյեկտիվ սահմաններում անվերապահորեն գտնվող լիազորությունը գործառույթի իրականացման միակ կամ հիմնական գործուն միջոցն է: Այսինքն՝ օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու ծայրահեղ քայլը կարող է արդարացված համարվել, եթե առանց վարանելու հնարավոր է պնդել, որ պետական մարմնի գործառույթն իրականացնելու *հիմնական, եթե ոչ միակ* ճանապարհը օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումն է:

Պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովումը համարվում է հատկապես contra legem իրավունքի զարգացման և իմպլիցիտ լիազորությունների դոկտրինների սուբստանցիոնալ հիմքը, քանի որ այս ստրատեգիաները հիմնված են պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքի վրա: Extra legem իրավունքի զարգացման դոկտրինի պարագայում այս սկզբունքը կարող է նշանակություն ունենալ միայն իրավունքի անալոգիայի պարագայում, քանի որ օրենքի անալոգիայի դեպքում խնդիր է դրված գնահատել ոչ թե լիազորության աներկբա և անհրաժեշտ կապը պետական մարմնի գործառույթի հետ, այլ պարզապես գտնել համանման հարաբերությունը կարգավորող մեկ այլ լիազորող նորմ:

Օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու այն դեպքերը, որոնք պայմանավորված են քաղաքական նպատակահարմարությամբ կամ պետական մարմնի գործունեության զուտ արդյունավետությունը բարձրացնելու կամ պետական մյուս մարմինների համեմատությամբ ավելի ուժեղ դիրք ունենալու ցանկությամբ, որևէ կապ չունեն օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու մեր կողմից նշված ստրատեգիաների հետ: Այսպես՝ տարբեր պետությունների սահմանադրական դատարաններ թեև օրենքով օժտված չեն եղել սահմանադրության փոփոխության նկատմամբ նախնական վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ, սակայն հռչակել են այդպիսի լիազորությունը, օրինակ՝ Ավստրիա, Բուլղարիա, Գերմանիա, Հնդկաստան, Իտալիա, ԱՄՆ, Չեխիա, Ռուսաստան և այլն: Ընդ որում, սահմանադրական դատարանների կողմից օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու (հռչակելու) փաստը պայմանավորված չի եղել սահմանադրական դատարանի գործառութային նվազագույն գործունակության ապահովման անհրաժեշտությամբ: Դ. Շուստրովը նշում է, որ սահմանադրական վերահսկողության մարմինները հազվադեպ են պատճառաբանում սահմանադրության փոփոխության նկատմամբ սահմանադրական վերահսկողության լիազորությունների հռչակումը: Որպես կանոն, այս լիազորության հռչակումը սահմանափակվում է դրա իրականացման պարզ փաստով, մինչդեռ «լիազորման» պատճառների և հիմքերի բացատրությունը պարզապես բացակայում է: Սահմանադրական վերահսկողության որոշ մարմիններ, այնուամենայնիվ, փորձում են բացատրել լիազորության հռչակման պատճառները, սակայն այդ պատճառաբանությունների ընտրության միջև օրինաչափություն բացահայտելը դժվար է: Որոշ մարմիններ տարածական են մեկնաբանում «Օրենք» հասկացությունը՝ որպես սահմանադրական վերահսկողության օբյեկտ, ներառելով նաև փոփոխությունների մասին օրենքները (Չեխիա), մյուսները անհեթեթություն են համարում Սահմանադրության արդյունավետ երաշխավորման համար անհրաժեշտ լիազորության բացակայությունը (Իտալիա) և այլն[1]:

ՌԴ սահմանադրական դատարանը ՌԴ նախագահի հարցման հիման վրա վերահսկողությունն է իրականացրել 2020 թվականի սահմանադրական լայնածավալ փոփոխությունների նկատմամբ, ՌԴ Սահմանադրությամբ և ՌԴ սահմանադրական դատարանի մասին օրենքով օժտված չլինելով նման

[1] **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник. В 2 т. Т. 2. - М.: Изд. Проспект, 2023. - С. 300-301.

լիազորությամբ: Ռուս սահմանադրագետները նման լիազորության ad hoc ճանաչման մեջ նկատում են քաղաքական ենթատեքստ[1]: Ինչպես նշվեց, զուտ քաղաքական շարժառիթներից ելնելով պետական մարմնի՝ օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը որևէ կապ չունի օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու մեր կողմից նշված ստրատեգիաների հետ:

Մեկ այլ օրինակ: Հանդիպել են դեպքեր, երբ կոնկրետ պետության սահմանադրական դատարանը ճանաչել է իր կողմից սահմանադրությունը վերացական մեկնաբանելու օրենքով չնախատեսված լիազորությունը՝ այն հիմնավորելով առավելապես իրավահամեմատական փորձով: Օրինակ՝ Սլովենիայի Սահմանադրական դատարանը դեռևս 1993 թվականին, առանց դրա համար օրենքով ուղղակիորեն լիազորված լինելու, կայացրել է մեկնաբանման առաջին որոշումը: Նման տեսակի որոշումներ կայացնելու իր իրավասությունը հիմնավորելու նպատակով Դատարանը, օգտագործելով argumentum a majori-ն, վկայակոչել է գերմանական և իտալական սահմանադրական դատարանների մոտ այս տեսակի որոշում կայացնելու լիազորության առկայությունը[2]:

Այս օրինակում Սահմանադրական դատարանի կողմից օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը պայմանավորված է ոչ թե նրա գործառութային նվազագույն գործունակության ապահովման անհրաժեշտությամբ, այլ՝ ուրիշ պետությունների սահմանադրական դատարանների՝ սահմանադրությունը վերացական մեկնաբանելու լիազորության առկայությամբ: Մեր պատկերացմամբ սահմանադրական դատարանը, գործառութային նվազագույն գործունակությունն ապահովելու թելադրանքով, կարող է ճանաչել սահմանադրությունը վերացական մեկնաբանելու օրենքով չնախատեսված լիազորությունը հետևյալ պայմաններում: Ենթադրենք սահմանադրությամբ սահմանադրական դատարանին, սահմանադրական արդարադատություն իրականացնելու գործառույթից բացի, վերապահված է նաև մեկնաբանելու միջոցով սահմանադրության միատեսակ կիրառությունն ապահովելու *գործառույթ*, սակայն օրենքով նախատեսված չէ նրա՝ սահմանադրությունը *վերացական մեկնաբանելու* լիազո-

[1] **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник. В 2 т. Т. 2. - М.: Изд. Проспект, 2023. - С. 310-313.

[2] **Тестен Ф.** Толковательная функция конституционного суда // Конституционное правосудие на рубеже веков: материалы международной конференции, посвященной 10-летию Конституционного Суда Российской Федерации (1-2 ноября 2001 г., г. Москва). - М.: Изд. НОРМА, 2002. - С. 144-145.

րություն: Սահմանադրության վերացական մեկնաբանությունը սահմանադրության միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթն իրականացնելու հիմնական, եթե ոչ միակ միջոցն է, որի բացակայության դեպքում դատարանը զրկվում է իր գործառույթն իրականացնելու նվազագույն գործունակությունից: Բանն այն է, որ սահմանադրական դատարանը չի կարող արդարադատության գործառույթի շրջանակում տրված կազուալ մեկնաբանությամբ ապահովել իր երկրորդ գործառույթի (մեկնաբանմամբ սահմանադրության միատեսակ կիրառության ապահովման) իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում պետական մարմնի գործառույթից աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող լիազորության ճանաչման ստրատեգիայի ընտրությունը կապված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի (օրինականության սկզբունքը) 1-ին մասի մեկնաբանության հետ:

4. Օրենքով չնախատեսված լիազորությունների ճանաչումը ՀՀ-ում

4.1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը

ՀՀ իրավական համակարգում արդյո՞ք հնարավոր է ճանաչել պետական մարմնի՝ օրենքի տեքստում ուղիղ չձևակերպված կամ լիազորությունների փակ ցանկում չներառված, սակայն նրա գործառույթներից աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող լիազորությունը: Այս հարցի պատասխանը կախված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի ընկալումից:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Քննարկենք այս հոդվածի մեկնաբանման երկու տարբերակ:

Տարբերակ առաջին՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում գործածվող «(...) իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» ձևակերպման «նեղ-տեքստային» մեկնաբանություն, ըստ որի՝ պետական մարմինն օժտված է լիազորությամբ, եթե այն օրենքի տեքստում ձևակերպված է ուղղակիորեն, այսինքն՝ պետական մարմինը կարող է օժտված լինել միայն օրենքում էքսպլիցիտ (տեսանելի, ուղիղ) ձևակերպված լիազորությամբ: Եթե օրենքի տեքստում պետական մարմնի լիազորությունը ուղիղ (տեսանելի) ձևակերպված չէ, ապա նման լիազորություն գոյություն չունի:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի «նեղ-տեքստային» մեկնաբանության պարագայում իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը բացառվում է, ուստի այն չի կարող դառնալ քննարկման առարկա: Ինչ վերաբերում է լիազորությունների փակ ցանկը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա «բացելու» և ցանկում գործառութային լիազորություն ներառելու հնարավորությանը, ապա դա կախված է օրինականության սկզբունքի նկատմամբ առկա վերաբերմունքից, որի մասին արդեն նշվել է:

Եթե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համատեքստում օրինականության սկզբունքը բացարձականացվում է և օրինականության պահպանման նկատմամբ ցուցաբերվում է ռիգորիստական մոտեցում (ձևապաշտական խստություն), ապա հասկանալի է, որ օրինականության սկզբունքից որևէ բացառություն անելը, անկախ պատճառից, կգնահատվի որպես իրավախախտում:

Մինչդեռ, եթե օրինականության սկզբունքը դիտարկվի ռելյատվիզմի համատեքստում և «սկզբունք - վարքագծի կանոն - բացառություն» իրավական կազմվածքի լույսի ներքո, ապա ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի «նեղ-տեքստային» մեկնաբանության պարագայում ևս հնարավոր է լիազորությունների փակ ցանկը contra legem իրավունքի զարգացման դոկտրինի հիման վրա «բացել», եթե, իհարկե, նման ծայրահեղ քայլը պայմանավորված է բացառապես պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Այսպես՝ եթե պետական մարմնի գործառութային լիազորությունը օրենքի տեքստում կամ լիազորությունների փակ ցանկում ամրագրված չէ, սակայն դրա բացակայությունը մարմնին զրկում է նվազագույն ֆունկցիոնալությունից, ապա, հիմք ընդունելով պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքը, լիազորությունների փակ ցանկը հնարավոր է contra legem տրամաբանությամբ «բացել» և ճանաչել պետական մարմնի գործառույթներից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող լիազորությունը:

Եթե սահմանադրական մարմնի լիազորությունների փակ ցանկը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ, ապա այդ ցանկում չնախատեսված լիազորությունը contra legem տրամաբանությամբ ճանաչելու դեպքում ծագում է նաև նման ցանկ նախատեսող սահմանադրական նորմին հակադրվելու իրավաչափության հարցը: Ընդհանուր առմամբ contra constitutionem իրավունքի զարգացման դոկտրինը թույլատրում է հակադրվել ՀՀ Սահմանադրությանն այն ծայրահեղ (արտակարգ) իրավիճակներում, երբ

պետական մարմնի (օրինակ՝ պառլամենտի) գործառույթից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող լիազորությունը չճանաչելը և դրա հիման վրա չգործելը կհակասի պետականապահպանության սկզբունքներին, այսինքն՝ կստեղծի պետականապահպանությանը սպառնացող ռիսկային իրավիճակներ: Այս պարագայում գործում է contra constitutionem իրավունքի զարգացման դոկտրինը, որը պետականապահպանության սկզբունքների թելադրանքով արդարացնում է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունների փակ ցանկին (այդ ցանկից բխող իմպլիցիտ արգելքին) հակադրվելը: Այլ կերպ ասած՝ contra constitutionem իրավունքի զարգացման դեպքում պառլամենտը, հայտնվելով պետականապահպանության արտակարգ վիճակում, հակադրվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, այլ նաև իր սահմանադրական լիազորությունների փակ ցանկից բխող իմպլիցիտ արգելքին և ճանաչում է իր գործառույթից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող լիազորություն, որն անհրաժեշտ է պետականապահպանությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու համար[1]:

Սահմանադրական համակարգը չի կարող հանդուրժել այնպիսի իրավիճակ, երբ «գործառույթ – ինստիտուտ - լիազորություն» աղաղակող աններդաշնակության հետևանքով պետական մարմինը կորցնում է իր նվազագույն ֆունկցիոնալությունը: Ուստի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ցանկացած պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակության կորուստը կարող է գնահատվել որպես պետականապահպանության սպառնալիք, ուղղակի փոքրացված մասշտաբով:

Տարբերակ երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում գործածվող «(...) իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» ձևակերպման «տեքստային-գործառութային» մեկնաբանություն, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրության նշված հոդվածն ընդհանուր առմամբ պահանջում է, որ պետական մարմնի լիազորությունները օրենքի տեքստում ձևակերպված լինեն ուղիղ, սակայն այս հոդվածը ինքնին չի բացառում նաև պետական մարմնի այնպիսի լիազորությունների գոյությունը, որոնք թեև օրենքի տեքստում էքսպլիցիտ ձևակերպված չեն, սակայն *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխում են տվյալ պետական մարմնի գործառույթներից (իրավակարգում

[1] **Гамбарян А.С.** Развитие парламентом права contra constitutionem в Республике Армения // Сравнительное конституционное обозрение. 2022, № 4 (149). Էջեր 129-153:

իմպլիցիտ գոյություն ունեցող լիազորություններ): ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի այսպիսի մեկնաբանությունը հիմնված է իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի վրա:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի «տեքստային-գործառութային» մեկնաբանության դեպքում contra legem իրավունքի զարգացման դոկտրինը կիրառելի չէ, քանի որ իմպլիցիտ լիազորությունների ճանաչման պարագայում որևէ մեկը չի հակադրվում իրավակարգին: Ինչպես նշվեց, իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի դեպքում գործում է այն գաղափարը, որ օրենքում ուղղակի չնշված լիազորությունը իմպլիցիտ գոյություն ունի իրավակարգում, ուստի լիազորության ճանաչման դեպքում այդ համակարգին ոչ ոք չի հակադրվում:

Հայաստանում պետական մարմնի իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը կամ լիազորությունների փակ ցանկը contra legem տրամաբանությամբ «բացելու» մասին մոտեցումը տարածում չունեն: Հայ իրավաբանների մեծ մասը կարծում է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպված է շատ պարզ և հստակ, ուստի չեն էլ քննարկում օրենքով չնախատեսված լիազորությունները ճանաչելու որևէ հնարավորության հարց[1]: Նրանք պետական մարմնի լիազորությունները օրենքով սահմանված լինելու պահանջը դիտարկում են բացառապես իրավական պետության և մարդու իրավունքներով սահմանափակված լինելու գաղափարների համատեքստում և դրան տալիս են բացարձակ (անվերապահ) նշանակություն: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանը 07.05.2019 թ. ՍԴՈ-1459 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին տվել է «նեղ-տեքստային» մեկնաբանություն և կոշտ ձևակերպումներ գործածելու միջոցով ըստ էության բացառել է ոչ միայն լիազորությունների ցանկը contra legem տրամաբանությամբ «բացելու», այլ նաև պետական մարմնի գործառույթից *անհրաժեշտաբար* բխող իմպլիցիտ լիազորությունը ճանաչելու հնարավորությունը (խոսքը ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունների փակ ցանկի մասին է): Սակայն այս որոշումից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ ՀՀ սահմանադրական դատարանին, այնուամենայնիվ, չի հաջողվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի կոշտ ձևակերպումներով մեկնաբանությունը գործնականում դարձնել ունիվերսալ և բացարձակ

[1] **Նազարյան Վ.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. ծանոթագրություններով և մեկնաբանություններով: Եր., 1995, էջ 15: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., 2010, էջ 98:

(անվերապահ) պարզաբանում: ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ գործով 17.03.2020 թ. ՍԴԱՈ-66 որոշմամբ փաստացի ընդունեց, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի մի քանի ամիս առաջ տված իր մեկնաբանությունը վիճահարույց է, քանի որ դրա արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը որոշակի իրավիճակներում զրկվում է իր գործառութային նվազագույն գործունակությունից, իսկ մարդը՝ պետության արդարադատության մարմիններից պաշտպանություն հայցելու հնարավորությունից: ՀՀ սահմանադրական դատարանն այդ գործով լռությամբ կամ փաստացի ընդունել է, որ հնարավոր են դեպքեր, երբ պետական մարմնի՝ օրենքում էքսպլիցիտ չձևակերպված, սակայն նրա գործառութային նվազագույն գործունակությունն ապահովող լիազորության ճանաչումն անխուսափելի է (ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունների փակ ցանկի մասին ՀՀ սահմանադրական դատարանի 07.05.2019 թ. ՍԴՈ-1459 և 17.03.2020 թ. ՍԴԱՈ-66 որոշումները կքննարկվեն հաջորդիվ):

4.2. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիպել են դեպքեր, երբ դատարանները իրավաբանորեն կամ փաստացի ճանաչել են օրենքում ուղիղ չձևակերպված (փակ ցանկում չներառված) լիազորության գոյությունը, թեև դատական ակտերի հիմնավորումներում նրանք չեն հիշատակել ո՛չ իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը, ո՛չ էլ contra legem իրավունքի զարգացման դոկտրինը:

Այսպես՝ 1998 թ. ՀՀ քր. դատ. օր.-ի[1] 419-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված էր գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի վեց կետից բաղկացած լիազորությունների փակ ցանկ, որում նախատեսված էր նաև դատական ակտը բեկանելու և այդ մասով գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը: Նույն հոդվածի 2-րդ մասում կրկին փակ ցանկի ձևով թվարկված էին գործն ըստ էության չլուծող դատական ակտերի (դրանք կանվանենք՝ միջանկյալ դատական ակտեր) վերանայման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի **երկու լիազորություն**՝ մերժել վճռաբեկ բողոքը՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ,

[1] Ուժը կորցրել է 01.07.2022 թվականին:

կամ **կայացնել նոր դատական ակտ**, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը ձևավորել էր կայուն պրակտիկա, ըստ որի՝ կալանք կիրառելու վերաբերյալ գործերով դատական ակտը (միջանկյալ դատական ակտը) վերանայելու արդյունքում նա իրավասու է բեկանել դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, թեև այդ ժամանակաշրջանում գործող քրեադատավարական օրենսդրությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ նման լիազորություն չուներ: Դա նշանակում էր, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դրսևորում էր մի վարքագիծ, որը նախատեսված չէր միջանկյալ դատական ակտերին վերաբերող լիազորությունների օրենսդրական փակ ցանկում:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.05.2019 թ. ՍԴՈ-1459 որոշմամբ քննարկել է այն հարցը, թե ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից արդյոք իրավասու է միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում սեփական որոշմամբ փոխել իր լիազորությունների բովանդակությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նշել է.

*«ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում, Վճռաբեկ դատարանը կարող էր իրականացնել միայն այն լիազորությունները, որոնք սահմանված էին Օրենսգրքի վիճարկվող դրույթով: Բացի դրանից, **ՀՀ դատարանները կաշկանդված են և՛ Սահմանադրությամբ, և՛ օրենքներով** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի **օրենքն** այդ դատարանների կողմից կարող է ոչ թե վերացվել, անվավեր ճանաչվել, վերանայվել, այլ **միայն կիրառվել:** Որևէ դատարանի՝ օրենքով սահմանված լիազորություններն իրավակիրառ պրակտիկայում փոփոխելը՝ դրանք ընդլայնելու ուղղությամբ՝ **անկախ պատճառաբանությունից**, անթույլատրելի է: (...) Ընդհանուր իրավասության և մասնագիտացված (ոչ սահմանադրական) դատարանները կաշկանդված են **ոչ միայն Սահմանադրությամբ, այլև օրենքով՝** հակառակ դեպքում իրենք կարող են հանդես գալ կա՛մ որպես օրենսդիր, կա՛մ որպես սահմանադրական արդարադատության մարմիններ»:*

ՀՀ սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը տվյալ վեճի առարկայի (կալանքի կիրառման իրավաչափության վերաբերյալ) տեսանկյունից, անկասկած, հիմնավորված է, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝

կալանքի վերաբերյալ որոշումը բեկանելու և նոր քննության ուղարկելու՝ օրենքով չնախատեսված «լիազորության» ճանաչումը որևէ կերպ կոչված չէր ապահովելու նրա գործառութային նվազագույն գործունակությունը: Քրեադատավարական տեսանկյունից ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է վերջնական լուծի բողոքարկվող կալանավորման իրավաչափության հարցը և կանխի այս կարևոր հարցով հետագա դատական շրջապտույտը:

Այս գործով հիմնական խնդիրն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, անտեսելով իրավական կյանքի բազմաշերտությունը, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս գործածել է այն աստիճանի կոշտ ձևակերպումներ, որոնք բացառում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի մեկնաբանություն, որը հնարավորություն կտա այլ իրավիճակներում, ելնելով պետական մարմնի գործառութային նվազագույն գործունակությունն ապահովելու անհրաժեշտությունից, պետական մարմնի լիազորությունների փակ ցանկը contra legem տրամաբանությամբ «բացելու» և ցանկում անհրաժեշտ լիազորությունը ներառելու կամ իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի օգնությամբ անհրաժեշտ լիազորությունը ճանաչելու[1]:

Այնուամենայնիվ, ի սկզբանե պարզ էր, որ ՀՀ սահմանադրական դատարանի այս մեկնաբանությունը գործնականում չէր կարող ունենալ բացարձակ (անվերապահ) նշանակություն: ՀՀ սահմանադրական համակարգը չի կարող հանդուրժել ՀՀ Սահմանադրության այնպիսի մեկնաբանություն, որի արդյունքում կվտանգվի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմնի ֆունկցիոնալությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս, հաշվի չէր առել, որ ՀՀ վերաքննիչ դատարանը կարող է ընդունել այնպիսի միջանկյալ դատական ակտեր, օրինակ՝ վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումը, որոնց դեմ վճռաբեկ բողոք բերելու դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող այլ բան անել, քան այդ դատական ակտը բեկանելն է և նոր քննության ուղարկելն է, այսինքն՝ դրսևորել մի վարքագիծ, որը ներառված չէ նրա լիազորությունների փակ ցանկում:

Այսպես՝ ՀՀ վերաքննիչ դատարանը թիվ ԵԴ/0426/11/18 գործով որոշում է կայացրել բողոքն առանց քննության թողնելու (բողոքը վարույթ չընդունելու)

[1] Ճիշտ է՝ ՀՀ սահմանադրական դատարանը որոշման մեջ նշել է «սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում» վերապահումը, սակայն բուն դիրքորոշման մեջ առկա ձևակերպումները թույլ չեն տալիս այդ մեկնաբանությունը դիտարկել որպես հարաբերական:

մասին այն հիմնավորմամբ, որ բողոք բերած անձը բողոք բերելու իրավունք չուներ: Այս որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: Եթե ՀՀ վճռաբեկ դատարանն այս բողոքը քննելու արդյունքում որոշեր, որ ՀՀ վերաքննիչ դատարանը, բողոքը վարույթ չընդունելով, խախտել է օրենքը, ապա չէր կարող իրացնել նոր դատական ակտ կայացնելու օրենքով նախատեսված իր լիազորությունը, քանի որ ՀՀ վերաքննիչ դատարանը բողոքը վարույթ չէր ընդունել և բողոքն ըստ էության չէր քննել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավասու չէ վերաքննիչ դատարանի փոխարեն բողոքն ըստ էության քննել և դրա վերաբերյալ որոշում կայացնել: ՀՀ վճռաբեկ դատարանը ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, նա չի իրականացնում փաստերի անմիջական հաստատման լիազորություն և գործը վերանայում է նախորդ ատյանների դատարաններում հաստատված փաստերի շրջանակներում:

Եթե այս գործով ղեկավարվենք ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1459 որոշմամբ տրված մեկնաբանությամբ, ապա կստացվի, որ ՀՀ վճռաբեկ դատարանը որևէ պարագայում չէր կարող բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի՝ բողոքը վարույթ չընդունելու որոշումը, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունների փակ ցանկում միջանկյալ դատական ակտերը բեկանելու լիազորություն նախատեսված չէր: Ստեղծվում է հետևյալ իրավիճակը: Մի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքով նախատեսված լիազորությունների փակ ցանկում դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու լիազորություն նախատեսված չէր և այդ ցանկից դուրս լիազորություն ճանաչելը, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանության, կհակասեր ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին, մյուս կողմից՝ առանց ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և նոր քննության ուղարկելու հնարավորության ՀՀ վճռաբեկ դատարանը կկորցներ իր գործառութային նվազագույն գործունակությունը, որի հետևանքով մարդը կզրկվեր դատական պաշտպանությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի՝ մի քանի ամիս առաջ ՍԴՈ-1459 որոշմամբ հայտնած դիրքորոշումը, վերը նկարագրված խնդիրը լուծելու նպատակով թիվ ԵԴ/0426/11/18 գործով 18.09.2019 թ. որոշում է կայացրել վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

Այս գործով սահմանադրական դատավարությունում որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ ազգային ժողովը (ներկայացուցիչը) հարցի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

*«ՀՀ քր. դատ. օր.-ի վիճարկվող դրույթները դիտարկելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1459 որոշման լույսի ներքո՝ պետք է փաստել, որ միանգամայն ողջամիտ է միջանկյալ դատական ակտերի վերանայումը որպես կանոն Վճռաբեկ դատարանում ավարտելու պահանջը, սակայն այդ կանոնից պետք է **նախատեսել բացառություններ**՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես ընթացակարգային բնույթի խախտումների վերաբերյալ ներկայացվող հիմնավորումներով՝ առանց անդրադառնալու սփորադաս դատարաններում ըստ էության վիճարկվող խնդրի իրավաչափության հարցին (...) ՀՀ քր. դատ. օր.-ի վիճարկվող դրույթներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ (...) դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները»*[1]:

ՀՀ ազգային ժողովն ընդգծել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1459 որոշմամբ ստեղծել է փակուղային իրավիճակ, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը նշված գործով միջանկյալ դատական ակտի վերանայման արդյունքում իրավունքի խախտում արձանագրելուց զատ հնարավորություն չի ունենալու գործուն միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ: Այնուհետև՝ ՀՀ ազգային ժողովն եզրակացրել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի վիճարկվող դրույթների՝ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, որով ըստ էության ճանաչվում էր օրենքով չնախատեսված լիազորությունը, չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը[2]:

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2020 թ. ՍԴԱՈ-66 աշխատակարգային որոշման 3-րդ կետը:

[2] Տպավորություն է ստեղծվում, որ ՀՀ ազգային ժողովի այս դիրքորոշումը վճռական նշանակություն է ունեցել այս գործի համար, քանի որ հետագայում և՛ ՀՀ սահմանադրական դատարանը, և՛ ՀՀ վճռաբեկ դատարանը մի քանի անգամ մեջբերել են այն:

Եթե ՀՀ սահմանադրական դատարանը հետևեր մի քանի ամիս առաջ հայտնած ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ իր «նեղ-տեքստային» մեկնաբանությանը, ապա պետք է հաստատեր, որ ՀՀ վճռաբեկ դատարանը որևէ պարագայում չէր կարող ՀՀ վերաքննիչ դատարանի բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումը բեկանել և նոր քննության ուղարկել, սակայն նա գիտակցում էր, որ դրա արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը կզրկվեր գործառութային նվազագույն գործունակությունից:

Հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ ազգային ժողովի հայտնած դիրքորոշման ակնհայտ ճշմարտացիության պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանին այլ բան չէր մնում, քան կարճել դատական վարույթը և *փաստացի* հրաժարվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի մի քանի ամիս առաջ ՍԴՈ-1459 որոշմամբ տված կոշտ մեկնաբանությունից: ՀՀ սահմանադրական դատարանը վարույթը կարճելու մասին 17.03.2020 թ. ՍԴԱՈ-66 աշխատակարգային որոշմամբ նշել է.

«Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելու ընդհանուր կանոնից բացառություններ նախատեսելն անհրաժեշտ է համարել նաև պատասխանողը (ՀՀ ազգային ժողովը՝ հեղ.): (...) օրենսդրական զարգացումների ապահովումն Ազգային ժողովի իրավասությունն է, և հետևաբար՝ դիմողի բարձրացրած հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին»:

ՀՀ սահմանադրական դատարանի այս որոշումից հետո ՀՀ վճռաբեկ դատարանը վերսկսել է թիվ ԵԴ/0426/11/18 գործով կասեցված վարույթը և նշել է.

«Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության ուղարկելու լիազորության բացակայության պարագայում, օբյեկտիվորեն զրկված կլինի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունից: Ավելին, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս, Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության չուղարկելու պարագայում, որոշ գործերով ստիպված կլինի փաստել իրավունքի

խախտումը՝ առանց այն վերացնելու, ինչն ըստ Սահմանադրական դատարանի՝ կնշանակի չիրականացնել արդարադատություն: (…) Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերանայելիս անձի իրավունքի խախտումը փաստելով, որոշ դեպքերում այն կարող է արդար դատաքննության երաշխիքներին համահունչ վերականգնվել ոչ այլ կերպ, քան գործը նոր քննության ուղարկելու միջոցով»:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելու մասին որոշումը բեկանելու և բողոքը նոր քննության ուղարկելու՝ օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը, անկասկած, հիմնավորված է, քանի որ այս լիազորությունն աներկբայորեն և անհրաժեշտաբար բխում է ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթից: Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը իրավասու չլիներ բեկանելու ՀՀ վերաքննիչ դատարանի այս որոշումը, ապա նա կզրկվեր գործառութային նվազագույն գործունակությունից, այսինքն՝ լայն իմաստով արդարադատություն իրականացնելու նվազագույն հնարավորությունից:

Այժմ անդրադառնանք ՀՀ վճռաբեկ դատարանի հիմնավորումների (փաստարկումների) ստրատեգիային: ՀՀ վճռաբեկ դատարանը օրենքով չնախատեսված քննարկվող լիազորության ճանաչման մասին դիրքորոշումը պատճառաբանել է ոչ թե իմպլիցիտ լիազորությունների դոկտրինի օգնությամբ, այլ extra legem իրավունքի զարգացման ռազմավարությամբ: Դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտերին վերաբերող լիազորող նորմը կիրառել է համանման հարաբերության՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտին (միջանկյալ ակտերին) վերաբերող հարաբերության նկատմամբ: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է.

«Նման դեպքում, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի իրավաչափությունը ստուգելիս, պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քր. դատ. օր.-ի 419-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները»:

ՀՀ վճռաբեկ դատարանն ուղիղ չի նշել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ լիազորությունների փակ ցանկում առկա օրենսդրական բացի և օրենքի անալոգիայի կիրառման մասին, սակայն դատական ակտի պատճառաբանությունից պարզ է, որ նա գործն ըստ

էության լուծող դատական ակտի վերաբերյալ լիազորությունը (նորմը) փաստացի կիրառել է անալոգիայի կարգով:

Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը ղեկավարվեր իմպլիցիտ լիազորությունների դոկտրինով, ապա, հիմք ընդունելով իր գործառութային նվազագույն գործունակության ապահովման սկզբունքը, պետք է արդարադատության իրականացման սահմանադրական գործառույթից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող և իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող կոնկրետ տեսակի միջանկյալ դատական ակտը բեկանելու լիազորությունը էքսպլիցիտիզացիայի միջոցով ճանաչեր լիազորությունների փակ ցանկում:

4.3. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի՝ օրենքով չնախատեսված լիազորության ճանաչումը

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդի (այսուհետև նաև՝ ԲԴԽ) պրակտիկայում ևս հանդիպել են դեպքեր, երբ նա իր լիազորությունների փակ ցանկում ճանաչել է իր սահմանադրական գործառույթից աներկբայորեն և անհրաժեշտաբար բխող, սակայն օրենքի տեքստում ուղիղ չնախատեսված լիազորությունը, օրինակ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ԲԴԽ-ի կողմից կարճելու՝ օրենքով էքսպլիցիտ չնախատեսված լիազորությունը:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ ԲԴԽ-ն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասում փակ ցանկում թվարկված են ԲԴԽ-ի 10 կետից բաղկացած սահմանադրական լիազորությունները: ՀՀ Սահմանադրության նույն հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով (այսուհետև՝ ՀՀ դատական օրենսգիրք) ՀՀ բարձրագույն դատական խորհրդին կարող են վերապահվել այլ լիազորություններ: ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասում ևս փակ ցանկով թվարկված են ԲԴԽ-ի 44 կետից բաղկացած լիազորություններ, որոնցից շատերը, ի դեպ, կրկնում են ՀՀ Սահմանադրությամբ թվարկված լիազորությունները, օրինակ՝ և՛ ՀՀ Սահմանադրությամբ, և՛ ՀՀ դատական օրենսգրքով սահմանված է, որ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կոնկրետ գործով ծագել է հետևյալ հարցը՝ ԲԴԽ-ն արդյո՞ք

իրավասու է կարճել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իր կողմից իրականացվող վարույթը (հիմնական կարգապահական վարույթ), եթե պարզվում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ԲԴԽ-ին դիմել է (նախնական կարգապահական վարույթ) շահագրգռված անձը (բացարկման ենթակա անձը): Ավելի պարզ՝ ԲԴԽ-ն արդյո՞ք իրավասու է կարճել *հիմնական* կարգապահական վարույթը, եթե պարզում է, որ *նախնական* կարգապահական վարույթը հարուցվել է անօրինական, այսինքն՝ բացարկման ենթակա անձի (ոչ պատշաճ սուբյեկտի) կողմից:

ԲԴԽ-ի լիազորությունների փակ ցանկում նախատեսված չէ՝ նախնական կարգապահական վարույթն ապօրինի (ոչ պատշաճ սուբյեկտի կողմից) հարուցված լինելու պարագայում ԲԴԽ-ի կողմից հիմնական կարգապահական վարույթը կարճելու մասին լիազորություն: ՀՀ դատական օրենսգրքով *նախնական* կարգապահական վարույթը կարճելու լիազորությամբ օժտված են միայն *նախնական* կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ օժտված մարմինները, օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարը: Օրենքում նաև թվարկված են նախնական կարգապահական վարույթը կարճելու հիմքերը (ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-րդ մաս), իսկ այդ հիմքերի ցանկում նախնական կարգապահական վարույթի անօրինական հարուցված լինելու հանգամանքը, որպես վարույթը կարճելու հիմք, ներառված չէ:

Ինչպես նշվեց, ի տարբերություն նախնական կարգապահական վարույթի, հիմնական կարգապահական վարույթը կարճելու ԲԴԽ-ի լիազորություն կամ վարույթը կարճելու հիմք օրենքով նախատեսված չեն: ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Ինչպես նկատում ենք, ԲԴԽ-ի՝ հիմնական կարգապահական վարույթը եզրափակող լիազորությունների ցանկը փակ է և այդ ցանկում հիմնական կարգապահական վարույթը կարճելու լիազորություն նախատեսված չէ,

սակայն ԲԴԽ-ն 13.07.2020 թ. թիվ ԲԴԽ-39-Ո-Կ-11 որոշմամբ լիազորությունների փակ ցանկում ճանաչել է նախնական կարգապահական վարույթի հարուցման օրինականությունը ստուգելու, ինչպես նաև՝ այդ վարույթի հարուցումն անօրինական համարելու դեպքում վարույթը կարճելու լիազորությունները: ԲԴԽ-ն այս որոշման մեջ նշել է.

«(...) ՀՀ օրենսդրությունն թույլատրում և պաշտպանում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթում պաշտպանվող դատավորի կողմից վարույթ հարուցող մարմնի ներկայացուցչին բացարկ հայտնելու իրավունքը, ուստի կարգապահական վարույթի հարուցման փուլում այդ իրավունքի չիրացման կամ դեֆեկտային իրացման նկատմամբ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը, որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող սահմանադրական մարմին, իրավունքն ունի դիտարկումներ անել և այդ դիտարկումների արդյունքում վերաբերմունք արտահայտել: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից այս գործառույթի իրականացումը հետապնդում է մեկ նպատակ՝ երաշխավորել դատարանների և դատավորների անկախությունը (...)»:

Մի կողմ թողնելով այս որոշման մեջ տերմինների (պետական մարմնի «իրավունք», «պարտականություն», «իրավասություն», «գործառույթ») գործածության անհետևողականությունը կամ անտեղիությունը՝ նշենք, որ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդի կողմից օրենքով չնախատեսված լիազորությունների ճանաչումը, անկասկած, հիմնավորված է, քանի որ նախնական կարգապահական վարույթի հարուցման օրինականությունը ստուգելու և այն ապօրինի համարելու դեպքում վարույթը կարճելու լիազորությունները (այսուհետև՝ վարույթը կարճելու լիազորություն) աներկբայորեն և անհրաժեշտաբար բխում են նրա գործառույթից: Եթե ԲԴԽ-ն իրավասու չլիներ կարճելու դատավորի նկատմամբ ապօրինի հարուցված կարգապահական վարույթը, ապա կստացվեր, որ նա պետք է ապօրինի հարուցված վարույթով կայացներ գործն ըստ էության լուծող որոշում (դատավորի մեղավորության կամ անմեղության մասին որոշում): Այս իրավիճակում ԲԴԽ-ն կզրկվեր դատավորի անկախությունն երաշխավորելու գործառույթի իրացման նվազագույն գործունակությունից:

Այժմ անդրադառնանք ԲԴԽ-ի հիմնավորումների (փաստարկումների) ստրատեգիային: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանու-

թյուններում նկատվում է անհետևողականություն, քանի որ նա օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչել է՝ մի դեպքում այդ լիազորությունը բխեցնելով ԲԴԽ-ի սահմանադրական գործառույթից, մյուս դեպքում՝ սահմանադրական այլ լիազորությունից՝ այն տարածական մեկնաբանման միջոցով, երրորդ դեպքում՝ դիմելով extra legem իրավունքի զարգացման (իր տերմինաբանությամբ՝ praeter legem արդարության կիրառման) դոկտրինի օգնությանը: Ասվածը մանրամասնենք:

ԲԴԽ-ն վարույթը կարճելու լիազորությունը բխեցրել է ոչ միայն դատարանների և դատավորների անկախությունն երաշխավորելու իր սահմանադրական գործառույթից, այլ նաև՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու սահմանադրական լիազորությունից (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ)՝ այդ լիազորությունը տարածական մեկնաբանելու միջոցով: Նա թիվ ԲԴԽ-39-Ո-Կ-11 որոշմամբ նշել է.

«ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն իրավազորում է ՀՀ բարձրագույն դատական խորհրդին ոչ միայն որոշել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու հարցը, այլև իրավազորում է ՀՀ բարձրագույն դատական խորհրդին, դատարանի և դատավորի անկախության երաշխավորման դիրքերից ելնելով, լուծել բոլոր այն հարցերը, որոնք կառնչվեն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի հետ (...) ներառյալ այն հարցերը, որոնք ի դերև են գալիս կարգապահական վարույթի հարուցման փուլում (...): Իսկ լուծել այդ հարցերը, նշանակում է իրավական վերաբերմունք արտահայտել, թե որքանով է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ողջ գործընթացը, կարգապահական վարույթ հարուցելուց մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունումը, գտնվել այն իրավապահանջների շրջանակներում, որոնցում անշեղորեն պետք է պահպանվի դատարանների և դատավորների անկախության երաշխավորման հրամայականը»:

ԲԴԽ-ն նշել է, որ ապօրինի հարուցված վարույթը կարճելու լիազորությունը դուրս է բերել ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի (սահմանադրական լիազորության) տարածական մեկնաբանման միջոցով. «Բարձրագույն դատական խորհուրդը կարևոր է համարում ընդգծել, որ սույն

որոշման մեջ իր կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներն իր սահմանադրական լիազորության տարածական մեկնաբանության և կիրառման մասին (...)»:

ԲԴԽ-ի հիմնավորումների ստրատեգիայի անհետևողականության մասին է վկայում նաև այն, որ ԲԴԽ-ն տարածական մեկնաբանման մասին հիշատակելու հետ մեկտեղ նշել է extra legem իրավունքի զարգացման (իր տերմինաբանությամբ՝ praeter legem արդարության կիրառման) մասին: Այսպես՝ նա թիվ ԲԴԽ-39-Ո-Կ-11 որոշմամբ նշել է.

*«Ահա այստեղ կարևոր է դառնում դատարանի՝ praeter legem արդարության կիրառման իրավասությունը: Բարձրագույն դատական խորհուրդն այդպիսով ուղղակիորեն կիրառում է ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված իր սահմանադրական լիազորությունը՝ լրացնելով ՀՀ դատական օրենսգրքում իր **լիազորությունների և դրանց իրականացման կառուցակարգերի** օրենսդրական բացը» (ընդգծումը՝ հեղ.):*

Փաստորեն ԲԴԽ-ն օրենքով չնախատեսված լիազորությունը (հիմնական վարույթը կարճելու լիազորությունը) ճանաչել է և՛ սահմանադրական լիազորությունը տարածական մեկնաբանելու ճանապարհով, և՛ praeter legem (extra legem) արդարության կիրառման միջոցով օրենսդրական բացը լրացնելու միջոցով: Նման իրավիճակը տրամաբանության տեսանկյունից խոցելի է: Եթե ԲԴԽ-ն վարույթը կարճելու լիազորությունը բխեցրել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու սահմանադրական լիազորությունը տարածական մեկնաբանելու ճանապարհով, ապա դա նշանակում է, որ նյութաիրավական բնույթի լիազորության հարցում օրենսդրական բաց չկա, պարզապես այդ լիազորությունը իրավակարգում գոյություն ունի իմպլիցիտ ձևով: Այս պարագայում կարելի է խոսել միայն վարույթը կարճելու իմպլիցիտ լիազորության իրականացման կառուցակարգերի բացի մասին, բայց ոչ նյութաիրավական բնույթի լիազորության բացի մասին: Այսպիսով՝ տպավորություն է ստեղծվում, որ ԲԴԽ-ն նորմի տարածական մեկնաբանման և օրենսդրական բացը լրացնելու տարբերակման հարցում խճճվել է[1]:

[1] ԲԴԽ-ն վերը նշված որոշման եզրափակիչ մասում, մի կողմից ղեկավարվել է ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով (որից նա տարածական մեկնաբանմամբ բխեցրել էր վարույթը կարճելու լիազորությունը), մյուս կողմից՝ փաստացի օրենքի անալոգիայի ճանապարհով ղեկավարվել է ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-

Եթե ԲԴԽ-ն ղեկավարվեր իմպլիցիտ լիազորությունների դոկտրինով, ապա նա, հիմք ընդունելով գործառութային նվազագույն գործունակության սկզբունքը, պետք է դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու իր սահմանադրական գործառույթից *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխող և իրավակարգում իմպլիցիտ գոյություն ունեցող՝ վարույթը կարճելու լիազորությունը էքսպլիցիտիզացիայի միջոցով ճանաչեր լիազորությունների փակ ցանկում:

5. Եզրահանգումներ

Պետական մարմնի լիազորությունները օրենքով ուղիղ սահմանելու պահանջը պետական մարմնի կողմից կամայականություններ դրսևորելու հնարավորությունը սահմանափակելու միջոց է: Այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկայում կարող է ծագել օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու անհրաժեշտություն: Նման լիազորության ճանաչումը թույլատրելի է, եթե այդ լիազորությունն *աներկբայորեն* և *անհրաժեշտաբար* բխում է պետական մարմնի գործառույթներից:

Իրավակիրառման ընթացքում օրենքով չնախատեսված լիազորությունը ճանաչելու սուբստանցիոնալ հիմքը պետական մարմնի նվազագույն գործառութային գործունակության ապահովման սկզբունքն է: Նման ծայրահեղ քայլը կարող է արդարացված համարվել, եթե առանց վարանելու հնարավոր է պնդել, որ պետական մարմնի գործառույթներն իրականացնելու հիմնական, եթե ոչ միակ ճանապարհը օրենքով չնախատեսված լիազորությունների ճանաչումն է, հակառակ դեպքում պետական մարմինը կզրկվի իր նվազագույն գործառութային գործունակությունից:

րդ մասի 1-ին կետով, ըստ որի՝ վարույթ հարուցած մարմինը (օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարը) կարճում է *նախնական* կարգապահական վարույթը, եթե առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք: Ակնհայտ է, որ ԲԴԽ-ն ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը փաստացի կիրառել է օրենքի անալոգիայի կարգով, քանի որ այդ նորմի հասցեատերը ոչ թե ԲԴԽ-ն է, այլ նախնական կարգապահական վարույթ հարուցող և իրականացնող մարմիններն են, օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարը: Իրականում՝ ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում նշված վարույթը կարճելու հիմքը անալոգիայի կարգով չի կարող կիրառվել, քանի որ այն նման չէ վարույթն անօրինական հարուցելու դեպքին: Պատահական չէ, որ ԲԴԽ-ն հետագայում նույն հարցին վերաբերող երկու այլ գործերով կայացրած որոշումների եզրափակիչ մասերում ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետն այլևս չի վկայակոչել (տե՛ս 02.09. 2021 թ. թիվ ԲԴԽ-56-Ո-Կ-18 և 04.11.2021 թ. թիվ ԲԴԽ-81-Ո-Կ-22 որոշումները):

Առանձնացվում են օրենքով չնախատեսված լիազորության ճանաչման հետևյալ երեք ստրատեգիական ուղղությունները՝

1) extra legem իրավունքի զարգացման դոկտրինը,

2) contra legem իրավունքի զարգացման դոկտրինը,

3) իմպլիցիտ լիազորությունների դոկտրինը:

Սկզբունքորեն անընդունելի է, երբ օրենքով չնախատեսված լիազորությունը փորձ է արվում ճանաչել մեկ այլ լիազորող նորմի տարածական մեկնաբանման միջոցով: Օրենքի տարածական մեկնաբանությունն ըստ էության extra legem իրավունքի զարգացման դոկտրինը (օրենքի անալոգիան) քողարկելու միջոց է:

Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ՀՀ դատարանները ճանաչում են օրենքով էքսպլիցիտ չձևակերպված լիազորություններ, սակայն նրանց հիմնավորումների (փաստարկների) ստրատեգիան հստակ չէ, կամ դատարանները հիմնավորումների ստրատեգիայի հարցում հետևողական չեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., 2010, 1086 էջ:

2. **Ղամբարյան Ա.,** Ենթաօրենսդրական ակտ ընդունելու՝ «օրենքի հիման վրա» և «լիազորող նորմի» պայմանները: Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն, 2024, Vol. 15, № 1(40),
URL: https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.007

3. **Ղամբարյան Ա.,** Վստահության հանրաքվե կազմակերպելու ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկը և քաղաքական իշխանության ինքնասահմանադրականացման բաց թողնված հնարավորությունը: Հայ-ռուսական համալսարանի Լրաբեր (հումանիտար և հասարակական գիտություններ) 2021, № 3 (39). DOI: 10.48200/1829-0450_2021_3_84.

4. **Նազարյան Վ.,** Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. ծանոթագրություններով և մեկնաբանություններով: Եր., 1995, 115 էջ:

5. **Goldsworthy J.** The Implicit and the Implied in a Written Constitution. In: Dixon R, Stone A, eds. The Invisible Constitution in Comparative Perspective. Comparative Constitutional Law and Policy. Cambridge University Press; 2018, DOI: https://doi.org/10.1017/9781108277914.004

6. **Goss C.** Interim Constitutions and the Invisible Constitution. In: Dixon R, Stone A, eds. The Invisible Constitution in Comparative Perspective. Comparative Constitutional Law and Policy. Cambridge University Press; 2018,
DOI: https://doi.org/10.1017/9781108277914.006

7. The Invisible Constitution in Comparative Perspective. Edited by Dixon R, Stone A. Cambridge University Press. 2018. 592 p. DOI: 10.1017/9781108277914.

8. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации: учебник / М.В. Баглай. 6-е изд., изм. и доп. - М.: Норма, 2007. - 784 с.

9. **Бредихин А.Л.** Имплицитные полномочия президента Российской Федерации / А.Л. Бредихин // Экономика. Социология. Право. 2020, № 1(17).

10. **Гамбарян А.С.** Принцип законности и положение "судья подчиняется закону" в контексте доктрины развития права contra legem / А.С. Гамбарян // Правоприменение. 2023. Т. 7. № 4. DOI: 10.52468/2542-1514.2023.7(4).15-24.

11. **Гамбарян А.С.** Развитие парламентом прав contra constitutionem в Республике Армения / А.С. Гамбарян // Сравнительное конституционное обозрение. 2022, № 4(149). DOI: 10.21128/1812-7126-2022-4-129-153.

12. **Гамбарян А.С.** Развитие права вопреки закону (contra legem) в Республике Армения / А.С. Гамбарян // Государство и право. 2023, № 5. - С. 145–157. DOI: 10.31857/S102694520025195-5.

13. **Исаев И.А.** Конституция и скрытая традиция / И.А. Исаев // История государства и права. 2023, № 6. DOI: 10.18572/1812-3805-2023-6-16-20.

14. **Комарова В.В.** Скрытые полномочия Президента России: вопросы теории и практики / В.В. Комарова // Вестник Университета имени О.Е. Кутафина (МГЮА). 2018, № 6(46). DOI: 10.17803/2311-5998.2018.46.6.015-023.

15. **Краснов М.А., Шаблинский И.Г.** Российская система власти: треугольник с одним углом / М.А. Краснов, И.Г. Шаблинский. - М.: Институт права и публичной политики, 2008. - 231 с.

16. **Кучин М.В.** Судебное нормотворчество: концептуальные основы: монография / М.В. Кучин. - М.: Юрайт, 2019. - 275 с.

17. **Лангнер Т.С.** Конституционные и имплицитные полномочия Президента Российской Федерации / Т.С. Лангнер // Вестник экономической безопасности. 2023, № 1. DOI: 10.24412/2414-3995-2023-1-121-125.

18. **Обгольц С.А.** Поручения Президента Российской Федерации как способ реализации скрытых полномочий / С.А. Обгольц // Образование и право. 2023, № 4. DOI 10.24412/2076-1503-2023-4-126-131.

19. **Прокофьев В.Н.** Экстраординарные полномочия президента РФ / В.Н. Прокофьев // Государственная власть и местное самоуправление. 2017, № 3.

20. **Стельмах В.Ю.** Возможны ли “скрытые” полномочия прокурора при осуществлении надзора за органами предварительного расследования? / В.Ю.

Стельмах // Современное уголовно-процессуальное право — уроки истории и проблемы дальнейшего реформирования. Т. 2. 2019, № 1(1).

21. **Тестен Ф.** Толковательная функция конституционного суда / Ф. Тестен // Конституционное правосудие на рубеже веков: материалы международной конференции, посвященной 10-летию Конституционного Суда Российской Федерации. - М.: Норма, 2002.

22. **Уитц Р.** Конституционные ценности в практике конституционного правосудия Венгрии / Р. Уитц, А. Шайо // Сравнительное конституционное обозрение. 2007, № 2(59).

23. **Хайек Ф.А.** Право, законодательство и свобода: современное понимание либеральных принципов справедливости и политики / Пер. с англ. - Челябинск: Социум, 2024. - 644 с.

24. **Черных В.С.** Институт скрытых полномочий Президента РФ в конституционном праве: история и современное состояние / В.С. Черных, И.Е. Селезнев, М.А. Скачкова, И.С. Деркач // Право и управление. 2025, № 1. DOI: 10.24412/2224-9133-2025-1-17-19.

25. **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник. В 2 т. Т. 1. - М.: Проспект, 2023. - 512 с.

26. **Шустров Д.Г.** Учение о конституции: учебник. В 2 т. Т. 2. - М.: Проспект, 2023. - 528 с.

ПРИЗНАНИЕ НЕ ПРЕДУСМОТРЕННЫХ ЗАКОНОМ ПОЛНОМОЧИЙ В ЗАКРЫТЫХ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ ПЕРЕЧНЯХ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

Раскрывается допустимость признания в правоприменительной практике полномочий государственного органа, не предусмотренных в тексте закона или не включенных в закрытый законодательный перечень, а также стратегии (обоснования) такого признания.

В правоприменительной практике полномочия, не предусмотренные законом, могут быть признаны, если эти полномочия *однозначно* и *необходимо* вытекают из функций государственного органа и это обусловлено необходимостью обеспечения минимальной функциональной дееспособности государственного органа.

Обсуждаются три стратегических направления признания полномочий, не предусмотренных законом: доктрина развития права *extra legem*, доктрина

развития права *contra legem* и доктрина имплицитных полномочий. Представлено содержание этих стратегий и их различия.

В судебной практике Республики Армения имеются случаи признания полномочий, не предусмотренных законом. Выбор стратегии обоснования (аргументации) признания судебными органами РА полномочий, не предусмотренных законом, либо неясен, либо этот выбор непоследователен. Суды РА иногда запутываются в вопросе разграничения стратегий обоснования и в связи с признанием одного и того же полномочия ссылаются как на доктрину развития права *extra legem*, так и на расширительное толкование закона.

Ключевые слова: минимальная функциональная дееспособность, закрытый перечень, contra legem, extra legem, имплицитные полномочия, скрытые полномочия, эксплицитизация.

RECOGNITION OF POWERS NOT PROVIDED BY LAW IN CLOSED LEGISLATIVE LISTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

The article examines the admissibility of recognizing powers of a state body in law enforcement practice that are not explicitly provided for in the text of the law or excluded from the closed legislative list, as well as the strategies (justifications) for such recognition.

In law enforcement practice, powers not provided for by law may be recognized if they unambiguously and necessarily derive from the functions of the state body and are required to ensure its minimum functional capacity.

Three strategic approaches to recognizing powers not stipulated by law are discussed: the doctrine of legal development *extra legem*, the doctrine of legal development *contra legem*, and the doctrine of implicit powers. The content of these strategies and their differences are presented.

In the judicial practice of the Republic of Armenia, there are cases of recognizing powers not provided for by law. The approaches of the Constitutional Court of the Republic of Armenia, the Cassation Court of the Republic of Armenia, and the Supreme Judicial Council of the Republic of Armenia regarding the discussed issue are presented.

The choice of strategy for justifying (arguing) the recognition of such powers by the judicial bodies of Armenia is either unclear or inconsistent. The courts of Armenia sometimes confuse the delineation of justification strategies and, when recognizing the same power, refer both to the doctrine of legal development *extra legem* and to the extensive interpretation of the law.

Keywords: minimum functional capacity, closed list, contra legem, extra legem, implicit powers, hidden powers, explicitation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 21.05.2025 թ., տրվել է գրախոսության 01.06.2025 թ., ընդունվել է տպագրության 03.06.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.2-45

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար,
Հայ-ռուսական համալսարանի դոցենտ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ուղղված հանցագործությունների մի շարք նրբերանգների ուսումնասիրմանը: Հետազոտելով հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման հիմնախնդիրների առանձնահատկությունները՝ փաստվում է, որ քաղաքականության ոլորտում իրավական կարգավորումների սահմանադրականացման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջացել հիմնահարցի շուրջ ձևավորել նոր մոտեցումներ:

Հիմնաբառեր. հանրային իշխանություն, հանցագործություն, իրավունք, քաղաքականություն, պետություն:

1. Ներածություն

Գաղտնիք չէ, որ հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ուղղված հանցագործությունների հիմնախնդիրները սրվում են հատկապես նախընտրական շրջանում: Այս առումով, էլ ավելի է խորանում նշյալ ոլորտում հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտությունը:

Հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար, առաջնահերթ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև անտիկ աշխարհի փորձը, ինչը ապացույցն է այն բանի, որ քաղաքական հանցագործությունների կանխարգելումը և քաղա-

քական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման հիմնահարցերը անտիկ շրջանից առ այսօր չեն կորցրել արդիականությունը: Ավելին, հաշվի առնելով քաղաքական հանցագործությունների ճյուղավորման արդի միտումները, դրանց աշխարհագրության և որակի փոփոխությունները, ինչպես նաև քաղաքական ոլորտի նոր քաղտեխնոլոգիական և մանիպուլյացիոն ռիսկերի առկայությունը՝ գնալով էլ ավելի է ընդլայնվում նաև քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակը:

Ընտրական մարմինների ձևավորման գործընթացի և ժամանակակից ժողովրդավարական հիմքերի համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքականության ոլորտում հանցագործությունների կանխարգելումը անկյունաքարային նշանակություն ունի հատկապես արդի պայմաններում:

2. Անտիկ աշխարհի փորձը

Անտիկ ժամանակներից առ այսօր հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման խնդիրները եղել և գտնվում են մասնագետների ուշադրության ներքո: Արդեն իսկ անտիկ դարաշրջանի մտածողներն սկսել էին դատողություններ անել կառավարման ճշմարիտ և ոչ ճշմարիտ ձևերի, կառավարիչների դերի և որակների մասին, ինչի հետ էլ կապում էին հասարակության և պետության զարգացումն ու բարգավաճումը[1]: Օրինակ՝ Պլատոնը քաղաքականության համար որոշիչ էր համարում մարդկանց կառավարելու ունակությունը, այսինքն՝ համապատասխան գիտելիքների առկայությունը[2]: Միևնույն ժամանակ, Պլատոնը խելամիտ էր համարում կանանց ընդգրկումը պետության իշխող դասի մեջ՝ համարելով, որ նրանք ունեն նույն առաքինություններն ու կարողությունները, ինչ տղամարդիկ, բացառությամբ միջին կնոջ և միջին տղամարդու ֆիզիկական ուժի տարբերությանը[3]: Ի հակառակ Պլատոնի՝ Հին Հունաստանի մեկ այլ անվանի մտածող՝ Արիստոտելը, դեմ էր կանանց և բոլոր նրանց, ովքեր հարստության և կրթության բացակայության պատճառով ի վիճակի չէին ինքնուրույն խելացի որոշումներ կայացնել, քաղաքական իրավունքներով օժտելուն: Ավելին,

[1] **Мирумян К.А.** История политической науки. Часть 1: Эпоха античности. - Ереван: Издательство РАУ, 2004. - 299 с.

[2] **Plato**, Statesman. 311 p., http://www.perseus.tufts.edu/hopper/text.jsp?doc=Perseus%3Atext%3A1999.01.0171%3Atext%3DStat.

[3] **Thomas R. Martin,** An Overview of Classical Greek History from Mycenae to Alexander / M.R. Thomas. - TRM OV 15.8, http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=TRM+OV+15.8&fromdoc=Perseus%3Atext%3A1999.04.0009

Արիստոտելը քաղաքացի էր համարում միայն նրանց, ովքեր և՛ որպես քաղաքացի, և՛ որպես պաշտոնյա գործնական գիտելիքներ ունեին հասարակության քաղաքական կազմակերպման և պոլիսի կյանքի վերաբերյալ: Քանի որ յուրաքանչյուր քաղաքացի, ըստ Արիստոտելի, «պետության մասնիկ» է՝ պետությունը պետք է զբաղվի բոլոր քաղաքացիների դաստիարակությամբ՝ ձևավորելով համապատասխան քաղաքացիներ, ովքեր պարտավոր են ակտիվ մասնակցություն ունենալ պետական գործերին՝ ցուցաբերելով կա՛մ քաղաքական, կա՛մ ճանաչողական գործունեություն[1]:

Անվանի հույն մտածողների մոտեցումներից պարզ է դառնում, որ անտիկ ժամանակաշրջանից ի վեր քաղաքական հասունության և քաղաքական գիտելիքներին վերաբերող խնդիրները մշտապես գտնվել են իմաստունների ուշադրության կենտրոնում: Այս համատեքստում, եթե Պլատոնը համապատասխան գիտելիքների պահանջը վերագրում էր միայն նրանց, ովքեր հավակնում են քաղաքական իշխանության, ապա Արիստոտելը էլ ավելի բարձրացրեց նշաձողը՝ պահանջելով քաղաքական գիտելիքներ բոլոր այն քաղաքացիներից, ովքեր մասնակցում են իրենց կառավարիչների ընտրությանը:

3. Հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման արդի խնդիրները

Հասարակության քաղաքական հասունության, քաղաքական գործունեության վերաբերյալ համապատասխան գիտելիքների և որակների առկայությունը քաղաքական իշխանության հավակնորդների ու ընտրական իրավունքով օժտված քաղաքացիների համար էլ ավելի մեծ կարևորություն են ներկայացնում արդի պայմաններում: Եթե քաղաք-պետություններում քաղաքական իշխանությունը ձևավորվում էր ուղղակիորեն[2], այսինքն՝ մենք գործ ունեինք ուղիղ ժողովրդավարության հետ, ապա մեր օրերում, ինչպես արդեն ասվել է, մենք գործ ունենք քաղաքական իշխանության հետ, որը ազատ ընտրությունների հիման վրա մի դեմոկրատից անցնում է մյուսին[3]: Հենց այս տեսանկյունից և այս համատեքստում է, որ քաղաքական իրավունքների

[1] **Aristotle,** Politics /translated by Benjamin Jowett / p. – 181, https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/aristotle/Politics.pdf

[2] **Сырых В.М.** Теория государства и права. - Москва: Юстицинформ, 2006. - С. 12.

[3] **Арутюнян А.Р.** Международные методологические основы избирательного права (От античности до современности: философско-правовое измерение) // Мудрость. – 2(19)2021.

իրացման դեմ ուղղված և քաղաքական հանցագործությունների հիմնախնդիրները հիմնարար բնույթ են ստանում: Վերը նշված խնդիրների իրավական կարգավորումը օրենսդրական բարձրագույն մակարդակով, այդ թվում՝ քրեաիրավական, կարևոր են ինչպես հանրային իշխանության ընտրովի մարմինների բնականոն ձևավորման, այնպես էլ քաղաքական կառավարման ողջ ընթացքում:

Այս ոլորտի կարգավորման պարտավորությունը առաջնահերթ պայմանավորված է ժամանակակից ժողովրդավարական պետությունների Սահմանադրությունների այն դրույթի հետ, ըստ որի՝ «իշխանությունը պատկանում է ժողովրդին և, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով[1]»: Այսինքն՝ այս դրույթով են նաև բարձրագույն իրավական մակարդակով երաշխավորվում քաղաքական իրավունքներն ու ազատությունները, որոնք պատկանում են բացառապես բոլոր քաղաքացիներին (ովքեր հասել են այդ իրավունքների իրականացման համար օրենքներով սահմանված տարիքին)՝ անկախ սեռից, ազգությունից և ռասայից, և որևէ մեկը չի կարող վերջիններին զրկել այդ իրավունքներից, բացառությամբ՝ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերի: Վերոգրյալով է պայմանավորված այն տեսակետը, որ քաղաքական իրավունքների իրացմանն ուղղված ցանկացած խոչընդոտ կարելի է որակել ոչ միայն որպես հանցագործություն մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, այլև սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ: Այս առումով քաղաքական իրավունքների իրացման ոլորտում քրեաիրավական կարգավորման խնդիրները մեծ նշանակություն են ստանում, քանի որ քաղաքական իրավունքների իրացման դեմ ուղղված հանցագործությունները ուղղված են ոչ միայն ու ոչ այնքան որոշակի թվով քաղաքացիների քաղաքական իրավունքների իրացման, որքան հանրային իշխանության մարմինների ձևավորման դեմ:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Հոդված 2, Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով, https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-2015-t-vakani-dektemberi-6-i-hanrak-veov-endownvats-p-op-okhowt-yownnerov

4. Քաղաքականության ոլորտում քրեաիրավական կարգավորումների սահմանադրականացումը

Քաղաքականության ոլորտում քրեաիրավական կարգավորումների սահմանադրականացումն ապահովելու համար առաջնահերթ անհրաժեշտ է սահմանել, թե ի վերջո, որ արարքներն է անհրաժեշտ դիտարկել որպես քաղաքական իրավունքների դեմ ուղղված: Այս համատեքստում, կարելի է առաջարկել քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների հետևյալ սահմանումը. «Քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունը սոցիալապես վտանգավոր արարք է, որն ուղղված է քաղաքական իրավունքների իրացման և հանրային իշխանության ընտրովի մարմինների ձևավորման դեմ ու նախատեսված է այս կամ այն պետության քրեական օրենսգրքով»: Ընդ որում, եթե այլ հանցագործությունների դեպքում մեղավորությունը կարող է դրսևորվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ, ապա քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների դեպքում տեղի է ունենում բացառապես ուղղակի դիտավորություն:

Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործություններին, ապա քաղաքականության աշխարհը, որպես ամբողջություն, որպես հասարակական կյանքի ենթահամակարգ, քրեագիտության և, մասնավորապես, դրա զարգացող ճյուղերից մեկի՝ քաղաքական քրեագիտության ուսումնասիրության օբյեկտ է[1]: Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից իրավական գրականության մեջ «քաղաքական հանցագործություն» հասկացության նկատմամբ միանշանակ մոտեցում չկա, քրեագիտական գրականության մեջ քաղաքական հանցագործությունը հասկացվում է որպես հանցագործություն, որը կապված է բացահայտ գործողությունների/անգործության հետ, որոնք վնասում են պետության, նրա կառավարության կամ քաղաքական համակարգի շահերին: Այնուամենայնիվ, «քաղաքական քրեագիտություն» հասկացության հիմնադիր Դ.Ա. Շեստակովն առաջարկում է քաղաքական հանցագործությունները բաժանել երկու խմբի.

- պետության և նրա պաշտոնատար անձանց դեմ ուղղված հանցագործություններ,

[1] **Зорин А.В.** Криминология политической преступности как частная криминологическая теория. - С. 88, https://cyberleninka.ru/article/n/kriminologiya-politicheskoy-prestupnosti-kak-chastnaya-kriminologicheskaya-teoriya/viewer

▪ պետության և նրա ներկայացուցիչների հանցագործությունները բնակչության դեմ[1]:

Ներկայացված մոտեցման տրամաբանությունից կարելի է եզրակացնել, որ քաղաքական հանցագործությունների առաջին խումբը ներառում է սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, որոնք դրսևորվում են այն հասարակական հարաբերությունների վրա ոտնձգող գործողությունների տեսքով, որոնցով ապահովվում են սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության կայունությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունը[2]:

Հանցագործությունների երկրորդ խումբը ներառում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները, որոնք նախատեսված են մի շարք պետությունների քրեական օրենսգրքի Հատուկ մասով և սահմանվում են որպես սոցիալապես վտանգավոր գործողություններ, որոնք խախտում են պետության կողմից երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները[3]:

Չնայած այն հանգամանքին, որ Շեստակովի հայեցակարգը որոշակի վերապահումներով ընդունելի է այս հիմնախնդրով զբաղվող շատ գիտնականների համար[4][5], սակայն կան նաև հակադիր կարծիքներ: Օրինակ՝ Վ.Ս. Ուստինովը քաղաքական հանցագործությունը ներկայացնում է որպես հանցագործությունների ամբողջություն, որոնք կատարվում են միայն զինված ճանապարհով պետական իշխանությունը բռնի կերպով գրավելու նպատակով. իսկ որպես քաղաքական հանցագործությունների հիմնարար տեսակներ նշում է կուսակցությունները, իշխանության բռնի զավթման, նոր պետության բռնի ստեղծման, այլ պետության տարածքի միացման շարժումները

[1] **Шестаков Д.А.** Понятие, предмет, система и перспективы криминологии // Криминология. Общая часть: учебник / Под ред. В.В. Орехова. – СПб., 1992. - С. 9.

[2] Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н. С.Ш. Цагикяна. - Ереван, 2017. - С. 666, 669.

[3] ՀՀ Քրեական օրենսգիրք: Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153080

[4] **Гилинский Я.И.** Криминология: курс лекций. - СПб., 2002. – С. 243.

[5] **Ward T.** British Journal of Criminology / 2005. Vol. 45, no. 4. P. 162–184.

(ռազմական հեղաշրջում) և օրինական ընտրված իշխանության հակասահմանադրական տեղահանումը (պետական հեղաշրջում)[1]:

Պետական հանցագործությունները քաղաքական հանցագործություններից չտարբերելով՝ հարկ է նշել, որ դրանք փոխկապակցվում են՝ որպես մաս և ամբողջություն: Եթե պետական հանցագործությունն իրենից ներկայացնում է պետությունների և իշխող ուժի ներկայացուցիչների հանցավոր գործունեությունը, որի ընթացքում խախտվում են ինչպես ներքին քրեական օրենքները, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերը, ապա քաղաքական հանցագործությունների սուբյեկտներ կարող են լինել ինչպես պետությունն ու իշխանության ներկայացուցիչները, այնպես էլ՝ բնակչությունը: Այս համատեքստում քաղաքական հանցագործությունն ավելի լայն է, քան պետական հանցագործությունը, և պետական հանցագործությունը կազմում է քաղաքական հանցագործությունների բաղկացուցիչ մասը:

Բացի այդ, մենք առաջարկում ենք ընդլայնել քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակը՝ արձանագրելով, որ քաղաքական հանցագործությունների սուբյեկտներ կարող են լինել ոչ միայն պետությունը, բնակչությունը և իշխող վերնախավի ներկայացուցիչները, այլև բոլոր քաղաքական ուժերն ու գործիչները: Այս համատեքստում առավել ընդունելի է Գ.Ն. Գորշենկովի՝ քաղաքական հանցագործությունների սահմանման մոտեցումը, ըստ որի՝ քաղաքական հանցագործությունը դիտարկվում է որպես քրեորեն պատժելի արարքների ամբողջություն, որն ընտրվում է որպես քաղաքական բնույթի նպատակներին հասնելու միջոց[2]: Գրեթե միանման մոտեցում է առաջարկում նաև Վ.Վ. Լունեևան, ով կարծում է, որ քաղաքական հանցագործությունը ներկայացնում է իշխող կամ ընդդիմադիր քաղաքական էլիտաների սոցիալապես վտանգավոր պայքարը իշխանության գալու կամ դրա անօրինական պահպանման համար[3]: Գորշենկովի բնորոշմամբ՝ քաղաքական հանցագործություն ասելով պետք է հասկանալ բոլոր այն քրեորեն պատժելի արարքները, որոնք ուղղված են ինչպես քաղաքական իշխանության գալուն, այնպես էլ պահպանմանը: Իսկ Լունեևը, ի տարբերություն Գորշենկովի,

[1] **Устинов В.С.** Понятие и криминологическая характеристика организованной преступности: лекция. - Н. Новгород, 1993. - С. 14.

[2] **Горшенков Г.Н.** Политическая преступность // Криминология: словарь / Под общ. ред. В.П. Сальникова. – СПб., 1999. – 125 с.

[3] **Лунеев В.В**. Политическая преступность // Криминология: учебник / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. 3-е изд., перераб. и доп. – М., 2004. – 289 с.

քաղաքական հանցագործությունների հիմքում դնում է զուտ քաղաքական դրդապատճառները՝ համարելով, որ սա իշխող էլիտայի և (կամ) իշխանության հավակնողների հանցավոր գործունեություն է, որի նպատակը քաղաքական իշխանություն ստանալը կամ պահելն է: Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործությունների սուբյեկտների շրջանակի ընդլայնմանը, ապա այս առաջարկը պայմանավորված է ժամանակակից իրողություններով և հատկապես անցումային պետությունների քաղաքական իրողություններով: Մեր խորին համոզմամբ, ամենևին էլ պատահական չէ, որ դեռևս անտիկ աշխարհում կիրառվում էր ինտելեկտուալ ցենզը, որը տարածվում էր ինչպես իշխանության հավակնորդների, այնպես էլ՝ ընտրողների վրա: Այս խնդիրն առավել սուր է դրված հատկապես արդի պայմաններում, սակայն, միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն փաստը, որ ժամանակակից պայմաններում ժողովրդավարական, իրավական պետությունները չեն կարող զրկել քաղաքականապես չզարգացած քաղաքացիներին ընտրական իրավունքից կամ այս կամ այն ընտրական պաշտոնին հավակնելու իրավունքից, ապա ժամանակակից պետությունները քաղաքական ընտրություններից հետո անդառնալի հետևանքներից խուսափելու համար պետք է համապատասխան լուծումներ գտնեն:

Գաղտնիք չէ, որ անցումային և զարգացող երկրներում, որտեղ չկա կայուն միջին խավ, քաղաքացիների մեծամասնությունը ցածր քաղաքական, քաղաքացիական և իրավական գիտակցություն ունի: Եթե սրան գումարենք նաև ընտրապայքարի ժամանակ տարբեր քաղաքական տեխնոլոգիաների և մանիպուլյացիոն գործիքների կիրառման հնարավորությունը, ապա քաղաքացիների քաղաքական անգրագիտության փաստը հաճախ անուշեղեն է ծառայում անազնիվ քաղաքական ուժերի և քաղաքական գործիչների համար, ովքեր նախընտրական արշավների և կառավարման ժամանակ հաճախ անիրական, անկատար, երբեմն հակապետական խոստումներ են տալիս՝ ստանալով ընտրողների ձայները:

Անշուշտ, իշխանության գալու և իշխանությունը պահելու վերը նշված ուղին և՛ հակասահմանադրական է, և՛ հակաժողովրդավարական: Ճիշտ է, այս պարագայում ևս, քաղաքական գործիչները իշխանությունը ստանում են ժողովրդից ստացած քվեի արդյունքում, սակայն այն ոչ թե իրական կամարտահայտության արդյունք է, այլ՝ խաբեության: Հետևաբար, նմանատիպ իրավիճակներից խուսափելու և ժողովրդի կամարտահայտության իրական երաշխիքներ սահմանելու համար իրավական պետությունը պարտավոր է կանխել բոլոր հնարավոր տեսակի երևույթները: Որպեսզի

իշխանության գալու և իշխանությունը պահելու ընթացքում ժողովուրդը չմանիպուլյացվի քաղաքական ուժերի կողմից, անհրաժեշտ է, որպեսզի պետությունը քաղաքականության սուբյեկտներին պարտադրի կառավարման շրջանում առաջնորդվել բացառապես նախընտրական ծրագրերի դրույթներով: Մեր կարծիքով, որպես լուծում կարող է հանդես գալ քաղաքական ուժի կամ քաղաքական գործչի նախընտրական ծրագրից և նախընտրական քաղաքական խոստումներից խուսափելու օրենսդրական ամրագրումն ու քրեականացումը: Ավելին, այն դեպքերում, երբ նախընտրական ծրագրից խուսափելու արդյունքում պետությանը և հասարակությանը մեծ վնաս է հասցվում (օրինակ՝ պաշտպանական քաղաքականության կտրուկ փոփոխության կամ արտաքին քաղաքականության արմատական փոփոխության արդյունքում), ապա պետք է նախատեսել նաև սահմանադրական պատասխանատվություն քաղաքական ուժի համար, որով կարող է այս կամ այն քաղաքական ուժի գործունեությունը որոշակի ժամանակով կասեցվել:

Քաղաքական հանցավորության մի փոքր այլ դրսևորում է քաղաքական կոռուպցիան, որի առանձնահատկությունը պահանջում է արմատական քաղաքական բարեփոխումներ[1]: «Քաղաքական կոռուպցիան պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն վստահված պետական իշխանության լիազորությունների և իրավունքների, պետական իշխանության համակարգում պաշտոնական դիրքի և կարգավիճակի, պետական իշխանության մարմնի կարգավիճակի օգտագործումն է՝ անձնական և (կամ) խմբային ապօրինի քաղաքական շահի հետապնդման նպատակով (քաղաքական հարստացում)»:[2] Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն քաղաքական հանցագործությունների այլ տեսակների, քաղաքական կոռուպցիան թաքնված է և հաճախ անտեսանելի է մնում[3]: Քաղաքական կոռուպցիայի սահմանումից բխում է, որ քաղաքական կոռուպցիայի վերջնական նպատակը նույնպես քաղաքական շահն է, այսինքն՝ քաղաքական իշխանության գալը կամ դրա պահպանումը: Այս իմաստով տեղին է առանձնացնել նաև

[1] **Amundsen I.** 1999. Political Corruption. An Introduction to the Issues / I. Amundsen. - Bergen, Norway, Chr. Michelsen Institute. P. 1-39, https://www.cmi.no/publications/file/1040-political-coiTuption.pdf

[2] **Нисневич Ю.А.** Политическая коррупция: определение, формы проявления, механизм и ресурсы, https://www.hse.ru/mirror/pubs/lib/data/access/ram/ticket/32/14837297842a50d15e56ab9dc5f6f1fc67c482fc85/Artnis89.pdf

[3] **Квон Д.А.** Политическая коррупция: понятие, цели, субъекты / Д.А. Квон, https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-korruptsiya-ponyatie-tseli-subekty/viewer

էլեկտորալ կոռուպցիան, որը քաղաքական կոռուպցիայի հիմնական տարրերից է և նկատվում է հատկապես ընտրությունների կազմակերպման ու անցկացման փուլում:

Քաղաքականապես կոռուպցիոն գործողություններն ուղեկցվում են իրավական ակտերի, երբեմն՝ օրենքների և Սահմանադրության խախտումներով: Քաղաքական կոռուպցիան տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ քաղաքական գործիչներն ամեն կերպ չարաշահում են իրենց իսկ կողմից ընդունված օրենքները, անտեսում կամ շրջանցում են դրանք, և հետագայում էլ վերջինների հովանու ներքո ընդունվում են այնպիսի օրենքներ, որոշումներ, որոնք արտահայտում են ոչ թե հավաքական ժողովրդի, այլ նեղ խմբային և մասնավոր շահերը: Ի վերջո, քաղաքական կոռուպցիան գնալով արմատավորվում է, որի արդյունքում հանգեցնում է ընտրական գործընթացի ամբողջական դեֆորմացման՝ իմիտացնելով ազատ ընտրություններ, իսկ քաղաքական գործիչները, ովքեր իշխանության են եկել «ոչ ազնիվ» ճանապարհով, խոչընդոտում են քաղաքացիների մնացած քաղաքական իրավունքների հետագա իրացմանը արդեն նաև քաղաքական իշխանության իրականացման փուլում: Սա իր հերթին, որպես կանոն, հանգեցնում է ավտորիտար ռեժիմի, ինչը բացառում է որևէ քաղաքական իրավունքի առկայությունը, իսկ ընդդիմությունը վերածվում է քաղաքական «բուտաֆորիայի» կամ, ինչպես ընդունված է ասել, «գրպանային ընդդիմության»:

5. Ամփոփում

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ քաղաքական հանցագործությունները, ի տարբերություն հանցագործությունների այլ տեսակների, առանձնանում են իրենց բարդությամբ և բազմաշերտությամբ: Այս հանցագործությունների «արդյունքները» դոմինոյի էֆեկտով թափանցում են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներ՝ ավերելով խաղաղ համակեցության կայուն մեխանիզմները:

Քաղաքական հանցագործությունների կանխարգելման համար ժամանակակից իրավական, ժողովրդավարական երկրները բարձրագույն օրենսդրական մակարդակում պետք է ամրագրեն, որ քաղաքական ուժերը՝ քաղաքական կուսակցությունները, քաղաքական դաշինքները, հետաքրքրությունների խմբերը, առանձին քաղաքական գործիչները, քաղաքական իշխանության գալուց հետո, բացի ֆունկցիոնալ պարտավորություններից, պետք է կրեն նաև ծրագրային պատասխանատվություն: Այս պահանջը մի

կողմից կարող է քաղաքական գործիչներին զերծ պահել քաղաքական անպատասխանատու խոստումներից, մյուս կողմից՝ ապահովել երաշխավորված հանգիստ նախընտրական և հետընտրական գործընթացները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Мирумян К.А.** История политической науки. Часть 1: Эпоха античности. - Ереван: Издательство РАУ, 2004. - 299 с.
2. **Plato,** Statesman / 311 c., http://www.perseus.tufts.edu/hopper/text.jsp?doc=Perseus%3Atext%3A1999.01.0171%3Atext%3DStat.
3. **Thomas R. Martin.** An Overview of Classical Greek History from Mycenae to Alexander / M.R. Thomas. - TRM OV 15.8, http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=TRM+OV+15.8&fromdoc=Perseus%3Atext%3A1999.04.0009
4. **Aristotle,** Politics /translated by Benjamin Jowett, https://socialsciences.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/aristotle/Politics.pdf
5. **Сырых В.М.** Теория государства и права. - Москва: Юстицинформ, 2006.
6. **Арутюнян А.Р.** Международные методологические основы избирательного права (От античности до современности: философско-правовое измерение) // Мудрость. – 2(19)2021.
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), հոդված 2: Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով, https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-2015-t-vakani-dektemberi-6-i-hanrak-veov-endownvats-p-op-okhowt-yownnerov
8. **Зорин А.В.** Криминология политической преступности как частная криминологическая теория, https://cyberleninka.ru/article/n/kriminologiya-politicheskoy-prestupnosti-kak-chastnaya-kriminologicheskaya-teoriya/viewer
9. **Шестаков Д.А.** Понятие, предмет, система и перспективы криминологии // Криминология. Общая часть: учебник / Под ред. В.В. Орехова. – СПб., 1992.
10. Юридическая энциклопедия / Под общей редакцией д.ю.н. С.Ш. Цагикяна. - Ереван, 2017.
11. ՀՀ Քրեական օրենսգիրք: Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153080
12. **Гилинский Я.И.** Криминология: курс лекций. - СПб., 2002.
13. **Ward T.** British Journal of Criminology / 2005. Vol. 45, no. 4.
14. **Устинов В.С.** Понятие и криминологическая характеристика организованной преступности: лекция. - Н. Новгород, 1993.

15. **Горшенков Г.Н.** Политическая преступность // Криминология: словарь / Под общ. ред. В.П. Сальникова. – СПб., 1999. – 125 с.

16. **Лунеев В.В.** Политическая преступность // Криминология: учебник / Под ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. 3-е изд., перераб. и доп. – М., 2004. – 289 с.

17. **Amundsen I.** 1999. Political Corruption. An Introduction to the Issues / I. Amundsen. - Bergen, Norway, Chr. Michelsen Institute. - P. 1-39, https://www.cmi.no/publications/file/1040-political-coiTuption.pdf

18. **Нисневич Ю.А.** Политическая коррупция: определение, формы проявления, механизм и ресурсы.

19. https://www.hse.ru/mirror/pubs/lib/data/access/ram/ticket/32/14837297842a50d15e56ab9dc5f6f1fc67c482fc85/Artnis89.pdf

20. **Квон Д.А.** Политическая коррупция: понятие, цели, субъекты / Д.А. Квон, https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-korruptsiya-ponyatie-tseli-subekty/viewer

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ФОРМИРОВАНИЯ ВЫБОРНЫХ ОРГАНОВ ПУБЛИЧНОЙ ВЛАСТИ

Аннотация

Статья посвящена исследованию ряда нюансов преступлений против формирования выборных органов государственной власти. Изучая специфику проблем формирования выборных органов государственной власти, утверждается, что с точки зрения конституционализации правовых норм в сфере политики необходимы новые подходы к решению этой проблемы.

Ключевые слова: публичная власть, преступность, право, политика, государство.

SOME FEATURES OF CRIMES AGAINST THE FORMATION OF ELECTED PUBLIC AUTHORITIES

Annotation

The article is devoted to the study of a number of nuances of crimes against the formation of elected public authorities. Examining the specifics of the

problems of forming elected public authorities, it is stated that from the point of view of the constitutionalization of legal regulations in the field of politics, there is a need to form new approaches to this issue.
Keywords: public power, crime, law, politics, state.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 12.06.2025 թ., գրախոսության 14.06.2025 թ., ընդունվել է տպագրության 20.06.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.2-58

ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՊՏՀ «Հասարակական գիտությունների» ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ամփոփագիր

Ժամանակակից աշխարհում իրավագիտության սկզբունքային և ամենապատասխանատու իրավական տեսական և օրենսդրական նշանակության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը պետական իշխանության մարմինների իրավասահմանման գործունեությունն է:

Իրավասահմանումը (իրավաստեղծագործությունը)՝ որպես պետաիրավական ինստիտուտ, ունի բովանդակային մի շարք այնպիսի էական բաղադրիչներ, որոնք հավասարազոր են իրավունքի այնպիսի սկզբունքների, ինչպիսիք են իրավական օրինականությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը և այլ հատկանիշներ, որոնք ներհատուկ են իրավական այլ ինստիտուտների, օրինակ՝ գիտականությանը, արհեստավարժությանը:

Իրավաստեղծագործությունը լայն իմաստով՝ որպես իրավական կատեգորիա, ունի բովանդակային կառուցվածքի բաղադրիչներ, որոնք վկայում են վերջինիս փուլերի, տեսակների, օրենսդրության համակարգման, իրավաբանական տեխնիկայի, դրա տարրերի մասին:

Պետական մարմինների իրավաստեղծագործության արդյունքը, դրա ռիսկը խոսում է իրավական ակտի նախագծման պահից «իրավաբանական տեխնիկային» ներկայացվող պահանջների կատարյալ պահպանվածության մասին, որը իրավական ակտի գործնական կիրառման ընթացքում վկայում է այն ստեղծագործած մարմնի հեղինակության, հասարակական կարծիքի և վերլուծությունների, իրավական ակտի տվյալ պահի հասարակական պահանջի և իրավական ճշգրիտ կարգավորումների մասին և իր սպառողական

արժեքով վեր է ածվում նորմատիվային բնույթի առօրյա կիրառման ակտի:

Ժամանակակից իրավագիտության ոլորտում իրավաբանական տեխնիկան՝ որպես իրավունքի մեծարժեք իրավական ինստիտուտ, որպես իրավասահմանման առանցք, իրավագետների կողմից բացահայտվում և քննարկվում է որպես տեսական և կիրառական իրավագիտական առանձին գիտական դասընթաց, ինքնուրույն իրավական կարգավորման ոլորտ, որի իմացությամբ է պայմանավորված պետական մարմինների կողմից ընդունած իրավական ակտերի որակը:

Հոդվածում գիտական բացահայտումների և վերլուծությունների միջոցով ընտրանքային կարգով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության վերջին տարիներին տնտեսության բարեփոխումներին ուղղված որոշումներից մեկը, որի մշակման գործընթացները վկայում են, որ նրա հեղինակները անտեղյակ են իրավական ակտին ներկայացվող «իրավաբանական տեխնիկայի» հնարքներից:

Հիմնաբառեր. իրավասահմանում, իրավաստեղծագործություն, իրավաբանական տեխնիկա, սուբսիդիա, տոկոսադրույք, տնտեսական ռիսկ, տնտեսական օժանդակություն, օժանդակության միջոց:

Իրավագիտությունը չի կարող անտարբերությամբ ընդունել այն նոր տերմինաբանական գոյացությունները, որոնք հասարակական կեցության գիտատեխնիկական առաջընթացին համահունչ թելադրում են իրավական գիտություններին և ճանապարհ հարթում նոր իրավական կատեգորիաների և առանձին իրավական ինստիտուտների նորագույն իրավական տերմինաբանության համալրմանը, որոնք իրենց զգացնել են տալիս հատկապես իրավունքի նյութական նորմերի պահանջները գործնականում վարույթային եղանակներով կյանքի կոչելիս:

Նոր իրավական կատեգորիաների, տերմինների, հասկացությունների ձևավորման, դրանց ընկալման, ճանաչողության նպատակներով վերջիններիս տեսական բացահայտումները, կարծում ենք, անհրաժեշտություն են ազգային իրավագիտության նվաճումները մայրենի լեզվում սեփականաշնորհելու և իրավագիտության հարուստ նվաճված դրույթները բազմապատկելու համար:

Գիտական հոդվածի ներկայացված վերտառությունը հեռու է լեզվաբանական նորույթի հավակնությունից, այն առօրյա կիրառմամբ համահունչ է ՀՀ պետական մարմինների իրավասահմանման գործնական բնույթին, որով պայմանավորված են ներկայացուցչական և գործադիր իշխանության մար-

մինների կողմից ընդունած ինչպես նորմատիվային, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերը, որոնք հասարակական, պետական կյանքի կարգավորման հենասյուներն են:

Նպատակը քննարկվող նյութի գործածական շրջանակների ոչնչով չհիմնավորված իրավաբանական և իրավագիտական նոր սահմանումների արմատավորումն է իրավունքի մի շարք այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են քաղաքացիական, ֆինանսական, հարկային, մաքսային, բյուջետային, բանկային իրավունքի ճյուղերը, որոնց ներհատուկ է ցանկացած խախտման դեպքում պետական հարկադրանքի կիրառումը:

Իրավագիտական նոր սահմանումները, ըստ էության, հայտնագործություններ են, որոնք տարրական իրավագիտության անտեղյակության, ժամանակին հանձնարարված մասնագիտական նյութերը չյուրացնելու պատճառ են, որով պետական ապարատը համալրած իրավաբան և այլ մասնագիտությունների ներկայացուցիչները, որպես կենսաբանական երևույթ համալրելով պետական ապարատը, վեր են ածվում ընդհանրացված «ռեսուրսի»՝ կորցնելով իրենց մասնագիտական որակները:

Ժամանակակից աշխարհի բոլոր պետություններում, առօրյա գործադիր-կարգադրիչ գործունեությամբ իրենց մեծածավալ աշխատանքների տեսակարար կշռով սահմանազատվում են գործադիր իշխանության մարմինները:

Ներկա ժամանակաշրջանում, մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում արմատավորվում են սեփականության նոր ձևերը և շուկայական հարաբերությունները, դրվում է գիտության անմիջական արտադրողական ուժի վերածելու խնդիրը, միաժամանակ օրակարգի հարց է դառնում արտաքին տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը և հասարակության կարիքների համար իրավական նոր և արդյունավետ սահմանումների ամրագրումը, որը բարձրացնում է իրավունքի և իրավակարգավորումների դերը և նշանակությունը պետության իրավաստեղծ գործունեության ոլորտում:

Այսօր, պետությունների արտաքին տնտեսական համագործակցությունն իրականացվում է եվրոպական և Եվրասիական տնտեսական միությունների ակտիվ մասնակցությամբ, որոնք տնտեսական և իրավական մեթոդներով ուղղորդում են պետությունների միջազգային առևտրատնտեսական, ֆինանսական, ռազմական համագործակցությանը՝ խստորեն պահպանելով մասնակից ցանկացած պետության տնտեսական և պետական ինքնիշխանությունը և անվտանգությունը միջազգային բազմաճյուղ համագործակցության ոլորտում:

Տնտեսության և պետական իշխանության սուվերենության և ազգային անվտանգության ապահովման միակ ճշմարիտ ուղին ՀՀ ներկա կառավարությունը տեսնում է գիտելիքահենք հզոր պետության կառուցմամբ:

Գիտության բնագավառում կառավարության քաղաքականությունը նպատակաուղղված է գիտելիքների բոլոր ճյուղերի դինամիկ առաջադիմության և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ առավել հեռանկարային ուղղություններում կադրերի մասնագիտական, նյութական և ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, որը միտված է արագացնել տնտեսական և սոցիալական նախատեսված նպատակների իրականացումը, ապահովել հասարակության հոգևոր զարգացումը, երկրի հուսալի պաշտպանությունը:

Ներկայումս տնտեսական գործունեության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների ռեալ գոյություն ունեցող համակցությունը ինչպես ներքին տնտեսական, այնպես էլ արտաքին առևտրատնտեսական համագործակցության բնագավառում այնքան է ընդլայնվել և բարդացել, որ ծայրահեղ անհրաժեշտություն է առաջացել տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորումը ճանաչել որպես իրավունքի ինքնուրույն ենթաճյուղ: Սա է պատճառը, որ տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորման հիմնախնդիրը իրավունքի տնտեսության մեջ առևտրատնտեսական գործունեության պրակտիկայից բխող անհրաժեշտություն է, իսկ ոլորտը կարգավորող որակապես բարձր օրենսդրության ձևավորումը՝ կենսական անհրաժեշտություն: Տնտեսական բարեփոխումներին համահունչ՝ իրավագիտության ոլորտում խնդիրն այն է, որ պետք է գույքի, ապրանքի, առևտրատնտեսական գործունեության ոլորտում ծավալվող հարաբերությունների հետազոտության միջոցով բացահայտել իրավունքի և ձևավորվող նոր օրենսդրությունը որպես տնտեսվարման հանրային իրավունքի համալիր ենթաճյուղերի կարգավորման առարկայի հասկացություն և այն սահմանազատել ավանդական քաղաքացիական և մասնավոր իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող հասարակական հարաբերություններից:

Ներկայումս, հասարակության զարգացման գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ գիտության նվաճումները ներդնելով նյութական բարիքների արտադրության գործընթացում՝ նպաստում են ապրանքային արտադրության քանակական և որակական փոփոխությունների, արտադրողականության աճի բարձրացմանը: Ձևավորվում են շուկայական տնտեսության նոր, ապրանքային հարաբերություններ, որոնց մասնակիցների (սուբյեկտների) գույքային

իրավունքների պաշտպանությունը տեղիք է տալիս քաղաքացիական միասնական իրավունքի ճյուղի համակարգում նոր՝ «ձեռնարկատիրական», «գործարարական», «առևտրային», «բիզնես», ինչպես նաև «տնտեսական» իրավունքի իրավական ինստիտուտների ի հայտ գալու:

Անդրադառնալով քաղաքացիական իրավունքի համակարգից գույքային իրավունքների հանրային իրավական կարգավորումների սահմանազատմանը՝ որպես համալիր ենթաճյուղի և տնտեսական գործունեության ոլորտում պետական կարգավորում պահանջող արտադրատնտեսական հարաբերությունների ինքնուրույն զանգվածի վկայակոչենք ՀՀ կառավարության «Տնտեսության արդիականացման միջոցառումների մասին» նորմատիվային բնույթի ենթաօրենսդրական ակտերը՝ որպես տնտեսական օրենսդրության նոր զարգացումներ, որոնք իրավական բարեփոխումների ճանապարհով ամրագրում են տնտեսության պետական կարգավորման նոր ձևերի և մեթոդների արմատավորման անհրաժեշտությունը:

Այսօր, ավելի քան երբևէ, ակտիվ աշխատանք է տարվում օրենսդրության համակարգման ուղղությամբ: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն է ձեռք բերում իրավունքի համակարգի հետ կապված այնպիսի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ իրավունքի և օրենսդրության համակարգի միասնականությունը, իրավունքի նոր ճյուղերի և ենթաճյուղերի սահմանազատումը, ինչպես նաև իրավունքի ներքին ճյուղային կառուցվածքի վերադասավորումներին վերաբերող հարցերը:

«**Տնտեսական օրենսդրություն**» **հասկացությունը՝** որպես իրավական կատեգորիա, ինչպես հիշատակվեց, բոլոր ժամանակներում տնտեսական վեճերի առարկա է: Այսօր էլ իրավագիտության մեջ տնտեսական օրենսդրության կապակցությամբ կարծիքները տարբեր են:

Տնտեսական օրենսդրությունը գործող իրավական օրենսդրության մի մասն է, որին բնորոշ են ընդհանուր օրենսդրության բոլոր սկզբունքները:

Ընդհանրություններով հանդերձ, այն ունի մի շարք առանձնահատկություններ՝ պայմանավորված հասարակական կյանքի տարբեր ոլորտների տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններով: Դրանց ծագման հիմքը արտադրատնտեսական հարաբերությունները, նյութական բարիքների արտադրությունը և բաշխումն են, որոնց իրավական կարգավորումը կազմակերպվում է կենտրոնացված-ուղղահայաց կամ հորիզոնական ներգործության մեթոդներով: Դրանք նպաստում են արտադրության կենտրո-

նացմանը, պետական միասնական հսկողության իրականացմանը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր անհատական գործունեության նկատմամբ:

«Տնտեսական օրենսդրություն» հասկացության և դրա բովանդակության ճիշտ ըմբռնմանը մեծապես օգնում է ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրքը», որի 2-րդ հոդվածում, որպես արտադրատնտեսական գործունեության բացատրություն բերված է «Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը, ըստ որի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Իրավաբանական գրականության մեջ, հիմք ընդունելով «Ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության հիմնական հատկանիշները, այսօր փորձեր են կատարվում լուսաբանել «Տնտեսական գործունեություն» հասկացությունը:

Տնտեսական գործունեություն պետք է համարել օրենքով չարգելված ցանկացած գործունեություն, որն ուղղված է եկամտի (շահույթի) ստացմանը՝ անկախ այդ գործունեության արդյունքում օգուտներ ստանալուց կամ դրանց բացակայությունից:

Հիշատակված ապրանքադրամական արժեքները ձևավորվում, երևան են գալիս ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց տնտեսական-տնտեսվարման գործունեության շնորհիվ: Իրավական հիմքը օրենքները և այլ ենթաօրենսդրական ակտերն են, որոնք գույքային իրավահարաբերությունների մասնակիցներին ուղղորդում են ընդհանուր տնտեսության արդիականացման նպատակային միջոցառումների մշակմանը, ինչպես նաև աջակցման տնտեսական և սոցիալական նշանակության խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական շրջանառության ոլորտում հասարակական ամբողջական արդյունքը կարող է արտադրվել և բաշխվել ինչպես իշխանակազմակերպական, այնպես էլ կամային-պայմանագրային հարաբերությունների միջոցով, որոնք կարող են դրսևորվել առևտրային կազմակերպությունների փոխադարձ հարաբերություններում՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, հանձնարարությունների կատարման և այլ եղանակներով: Դրանց մի մասը կարգավորվում է տնտեսական գործունեության հանրային իրավական կարգավորման ենթաճյուղի օրենսդրությամբ ամփոփված իրավական նորմերի միջոցով:

Վերջին տարիներին պետության տնտեսության արդիականացման միջոցառումների իրավական կարգավորմանն ուղղված բոլոր իրավական ակ-

տերն ուղղված են գործունեության այս ոլորտում ծագող հարաբերությունների առանձնահատկությունների բացահայտումներին և վերջիններս այլ իրավահարաբերություններից սահմանազատելու իրավական բավարար հիմքերի ձևավորմանը, որոնք հնարավորություն են ընձեռում վստահորեն խոսել տնտեսական օրենսդրության և նրա ժամանակակից իրավական հայեցակարգերի համապատասխան կոդիֆիկացման մասին, **որը իրավական տեխնիկայի և մշակույթի գերակա պահանջներից մեկն է**:

Անդրադառնալով տնտեսական օրենսդրության, ինչպես նաև ժամանակի պահանջներից բխող տնտեսության արդիականացման միջոցառումների համակարգված օրենսդրության մշակման իրավագիտական բացահայտումներին՝ փաստենք, որ վերը հիշատակված արտադրատնտեսական հարաբերությունների բացահայտումները բերում են մի համոզման, որ տնտեսական օրենսդրության համակարգը օբյեկտիվ երևույթ է, որը ձևավորվում է հասարակական կյանքի ընդհանուր օրինաչափությունների հիմքի վրա: Լինելով իրական գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների համակարգի արտացոլումը՝ տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավունքի ճյուղի նորմը կառուցվում է ոչ թե մարդկանց կամայական հայեցողությամբ, այլ օբյեկտիվ իրականության հիման վրա, որի աղբյուրը հասարակության ապահովման նյութական բարիքների արտադրությունը, բաշխումը և վերաբաշխումն է: Լայն առումով **տնտեսական իրավունքի նորմը իրավաստեղծ մարմինների սուբյեկտիվ գիտակցական կամային գործունեության արդյունքն է**: Նեղ իմաստով տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերը դառնում են իրավունքի համակարգի բնական տարրեր միայն հասարակական կյանքի նյութական պահանջմունքների օբյեկտիվ արտացոլման դեպքում՝ հասարակական հարաբերություններում սահմանելով նյութական բարիքների արտադրական ու տնտեսական, ինչպես նաև ապրանքադրամական արտադրության բովանդակությունը: Տնտեսական հարաբերություններ կարգավորող իրավունքի ճյուղի նորմերը տնտեսական օրենքների (արժեքի օրենք) օբյեկտիվ պահանջներին համահունչ, իրավաստեղծ մարմնի կամքից անկախ, միավորվում են նորմերի հարաբերականորեն ինքնուրույն խմբում, որոնք կարգավորում են արտադրատնտեսական, ապրանքային հարաբերությունները: Հետևաբար, իրավական նորմը անհատական հայեցողությամբ անթույլատրելի է վերագրել իրավունքի այս կամ այն ճյուղին: Եթե նորմը հրապարակվել է տնտեսական հասարակական հարաբերություններ կարգավորելու համար, ապա այն օբյեկ-

տիվորեն մտնում է այն իրավունքի ճյուղի մեջ, որն ուղղված է արտադրական, ապրանքադրամական հարաբերությունների կարգավորմանը:

Տնտեսական օրենսդրության համակարգը, ինչպես վկայում է գործնական կյանքը, կառուցվում է այլ սկզբունքով: Նրա ձևավորման համար զգալի տեղ է գրավում գիտատեխնիկական առաջընթացը, սուբյեկտիվ գործոնը, որով պայմանավորված են ժամանակակից արտադրական հարաբերությունները, որոնք մարդկային հաղորդակցության փոփոխվող տարատեսակ ձևերի համակցություն են:

Հասարակական կեցության ֆունկցիոնալ հիմքը իրենց բովանդակությամբ տարբեր նյութական և հոգևոր հասարակական հարաբերությունների փոխադարձ կապն ու փոխպայմանավորվածությունն է:Հետևաբար, անհնար է հայտնաբերել հասարակական հարաբերությունների այնպիսի մեկուսացված ոլորտ, որտեղ գերիշխի իրավունքի մեկ ճյուղի կողմից կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների միայն մեկ տեսակ: Այսօր գործնական անհրաժեշտություն է առաջանում իրավական կարգավորման մեջ առանձնացնել հասարակական հարաբերությունների այն զանգվածը, որոնք ծագում են տնտեսության արդիականացման գործընթացների տարբեր ոլորտներում:

Պետական իշխանության մարմինները (օրենսդիր, գործադիր) իրենց իրավաստեղծ (իրավասահման) գործունեության մեջ պետք է հաշվի առնեն հասարակական կյանքի օբյեկտիվ պահանջները: Նրանք ի զորու չեն փոփոխելու իրավունքի որոշակի ճյուղի կողմից կարգավորվող հասարակական հարաբերություններն արտացոլող իրավական նորմերի բովանդակությունը, որի դասական օրինակ է տնտեսական իրավունքի նորմերի օբյեկտիվ առկայությունը:

Ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ տնտեսական օրենսդրության համակարգը իրավունքի աղբյուրների ամբողջություն է, որոնք իրավական նորմերի արտահայտման ձև են հանդիսանում: Այդ պատճառով օրենսդրությունից դուրս իրավունք գոյություն չունի: Նրանք հարաբերակցվում են որպես ձև և բովանդակություն: Կոդիֆիկացված օրենսդրության մեջ իրավական նորմերը և նրանց տարբեր կառուցվածքային կազմավորումները ձեռք են բերում արտաքին դրսևորման հնարավորություն: Այս իմաստով տնտեսական իրավունքի համակարգը և օրենսդրության համակարգն ամբողջությամբ համընկնում են: Իրավունքի ճյուղերի և համանուն օրենսդրության գիտական բացահայտումները հուշում են, որ հատկապես տնտեսական օրենսդրության ոլորտում միևնույն նորմատիվ իրավական ակտը

կարող է կարգավորել իրենց բովանդակությամբ տարբեր տեսակի հասարակական հարաբերություններ, ներառելով իրավունքի մի քանի ճյուղերի նորմեր: Այդ պատճառով այն չի կարող ունենալ իրավական կարգավորման միասնական առարկա և մեթոդ: Դա բացատրվում է նրանով, որ իրական կյանքում պահանջ է առաջանում նորմատիվ-իրավական մեկ ակտի կամ խմբի միջոցով կարգավորել ոչ թե հասարակական հարաբերությունների մեկ տեսակ, այլ որոշակի ոլորտում գործող մի ամբողջ խումբ բազմատեսակ հարաբերություններ, որոնք ծագում են արտադրական հարաբերությունների գործընթացում և ուղղված են նյութական բարիքների արտադրությանը:

Նյութական արտադրության ոլորտներում ծագող բազմազան փոխկապված հարաբերությունները, նրանց արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը պայմանավորում է օրենսդրության համակարգում կառուցվածքային այնպիսի տարրերի ստեղծումը, որոնք չեն համընկնում իրավունքի համակարգի հետ: Այդ պատճառով իրավունքի ճյուղը ոչ միշտ է համապատասխանում օրենսդրության ճյուղին: Խոսքը վերաբերում է տնտեսական իրավունքի ճյուղի և տնտեսական օրենսդրության փոխհարաբերությանը, որը առ այսօր հայրենական իրավագիտության ոլորտում անուշադրության մատնված հիմնախնդիրներից մեկն է, որի ժամանակակից հայեցակարգերի մշակումը մեծ ավանդ կհանդիսանա իրավագիտության մշակույթի համակարգում: Հանրապետության բարձրագույն գործադիր իշխանության իրականացման-իրավաստեղծ գործունեության աջակցության նպատակով իրավական ակտերի մշակման գործընթացների իրավական կողմերի բարելավման իմաստով առաջարկում ենք վերլուծությունների հիման վրա **տնտեսական օրենսդրությունը ըստ տարածքի և ժամանակի գործողության** համակարգել և խմբավորել ըստ՝

ա) համապետական ճյուղային օրենսդրության, որի նորմերը կկարգավորեն միայն տնտեսական իրավունքի ճյուղի առարկա հանդիսացող որոշակի տեսակի հասարակական հարաբերություններ (օրինակ բոլոր սոցիալ-տնտեսական զարգացման պլանային իրավական ակտերը): Այստեղ օրենսդրության ճյուղը համընկնում է իրավունքի ճյուղին (օրինակ՝ հարկաբյուջետային, քաղաքացիական օրենսդրություն):

բ) ներճյուղային տնտեսական օրենսդրության, որը կսահմանի տնտեսական գործունեության առանձին ոլորտների տնտեսահրավական կարգավորումները (օրինակ՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսության կազմակերպման և ֆինանսավորման կարգը):

գ) համալիր տնտեսական օրենսդրության, որը կներառի իրավունքի մի քանի ճյուղեր, որոնք կկարգավորեն արտադրական և ապրանքադրամական բովանդակությամբ հասարակական հարաբերություններ, որոնք կընդգրկեն հասարակական կյանքի համեմատաբար ինքնուրույն ոլորտներ (բյուջետային, հարկային, բանկային, մաքսային, արժութային): Պարզաբանման նպատակով ընդգծենք, որ տնտեսական համալիր օրենսդրության կարգավորման առարկան, ի տարբերություն իրավունքի ճյուղերի, ոչ թե հասարակական հարաբերությունների տեսակ է, այլ ոլորտ, որն ընդգրկում է նրանց տարբեր տեսակները[1]:

Տնտեսության արդիականացման միջոցառումների իրավական կարգավորման օրենսդրությունը՝ որպես օրենսդրության համալիր ճյուղ, իր մեջ ընդգրկում է պետական, վարչական, ֆինանսական, հարկային, քրեական, քաղաքացիական և իրավունքի այլ ճյուղեր, որոնք կարգավորում են տնտեսական շինարարության (տնտեսական, արտադրական, ապրանքադրամական) յուրահատուկ կենսագործունեությունը: Այն կոչված է ապահովելու և կարգավորելու պետության տնտեսական գործունեության ոլորտում արտադրության կազմակերպման, նյութական բարիքների ստեղծման գործընթացում ձևավորվող ապրանքադրամական, ֆինանսական հարաբերությունները:

Տնտեսական օրենսդրությունը պետության գործող միասնական օրենսդրության մի մասն է: Այն արտացոլում է հասարակության տնտեսական և պետական կարգի հիմնական գծերը, ամրապնդում է տվյալ պետության կողմից ընդունված նյութական բարիքների ստեղծման ուսմունքի հիմնական դրույթները:

Տնտեսական օրենսդրության իրավաբանական հիմքը պետության սահմանադրությունն է, որն ամրագրում է նրա տնտեսական կարգը, երաշխավորում է սեփականության ձևերը, շրջակա միջավայրի պահպանությունը, սահմանում է շուկայական տնտեսվարումը, մասնավոր սեփականությունը, ինչպես նաև ազատ և մրցակցային տնտեսական գործունեությունը (Սահմանադրության 10, 11, 12-րդ հոդ.):

Սահմանադրության հիման վրա ընդունված տնտեսության արդիականացման օրենսդրական ակտերը կարգավորվում են տնտեսության ոլորտում ծավալվող արտադրական, արդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտե-

[1] Տե՛ս, մանրամասն, **Սուքիասյան Գ.Ա.,** Տնտեսական օրենսդրության իրավագիտական բացահայտումները: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան, Տեղեկագիր, 1(105)2022, էջ 101-102:

սության արտադրության կազմակերպման և կառավարման ոլորտի ամենատարաբնույթ հարաբերությունները:

Իրավական բացահայտումների արդյունքներով դժվար չէ նկատել, որ տնտեսական օրենսդրությունն այնպիսի հանրային իրավական ակտերի համակցություն է, որոնք սահմանում և կարգավորում են արտադրատնտեսական հարաբերություններից բխող ապրանքանյութական բարիքների արտադրությունը, բաշխումը, վերաբաշխումը, կուտակման և օգտագործման ընթացքում ծագող հարաբերությունները: Այս ամենը դրսևորվում է գույքի կամ նյութական այլ արժեքների ստեղծման գործընթացում և, ըստ անհրաժեշտության, շուկայական հարաբերություններում իրենց վերջնական տեսքով կարող են վերածվել դրամական միջոցների:

Վերը հիշատակված իրավագիտական վերլուծությունները նպատակ են հետապնդում բարձրացնել պետական ապարատի իրավաբանական և իրավագիտական մասնագիտացված ծառայությունների զգոնությունը իրավաստեղծ գործունեությանը ներկայացվող որակական պահանջների բարելավման ուղղությամբ: Խոսքը վերաբերում է իրավագիտության սկզբունքային և ամենապատասխանատու իրավական տեսական և գործնական նշանակության կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ պետական իշխանության կենտրոնական և տեղական մարմինների իրավաստեղծ գործունեությանը:

Հիմնախնդրի՝ որպես իրավական երևույթի բովանդակությունը իրավագիտության մեջ բնութագրվում է իրավական նորմերի ընդունմանը, փոփոխմանը կամ վերացմանն ուղղված իրավասու պետական և հանրային մարմինների իրավական գործունեություն:

Իրավասահմանումը (իրավաստեղծագործությունը)՝ որպես պետաիրավական ինստիտուտ, ունի բովանդակային մի շարք այնպիսի էական բաղադրիչներ, որոնք հավասարազոր են իրավունքի այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են իրավական օրինականությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը և այլ հատկանիշներ, որոնք ներհատուկ չեն իրավական այլ ինստիտուտների, օրինակ՝ գիտականությանը, արհեստավարժությանը[1]:

Իրավաստեղծագործությունը լայն իմաստով՝ որպես իրավական կատեգորիա, ունի բովանդակային կառուցվածքի բաղադրիչներ, որոնք վկայում են

[1] Տե՛ս մանրամասն, **Ներսեսյանց Վ.Ա.,** Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք): Ե., «Նաիրի» հրատ., 2001, էջ 180-181:

վերջինիս փուլերի, տեսակների, օրենսդրության համակարգման, իրավաբանական տեխնիկայի, դրա տարրերի մասին:

Պետական մարմինների իրավաստեղծագործության արդյունքը, դրա որակը խոսում է իրավական ակտի նախագծման պահից «իրավաբանական տեխնիկային» ներկայացվող պահանջների խստորոշ պահպանվածության մասին, որը իրավական ակտի գործնական կիրառման ընթացքում վկայում է այն ստեղծագործած (արարած) մարմնի հեղինակության, հասարակական կարծիքի և վերաբերմունքի, իրավական ակտի տվյալ պահի հասարակական պահանջի և իրավական ճշգրիտ կարգավորումների մասին և իր սպառողական արժեքով վեր է ածվում նորմատիվային բնույթի առօրյա կիրառման ակտի:

Հասարակության պետականության զարգացմանը զուգընթաց, պատմականորեն բոլոր պետություններում իրավական ակտերի տեքստերը մշակելիս մշտապես ուշադրության կենտրոնում են պահվել իրավաբանական տեխնիկայի կանոնները: Հիշարժան և ուսուցանելի են հատկապես Ավստրիայի կայսրուհի Մարիա-Թերեզայի կողմից Ավստրիայի քաղաքացիական օրենսգրքի նախագծի մշակման գործընթացում 1772 թ. հեղինակած «իրավաբանական տեխնիկայի» սկզբունքները, որոնց մի մասը այսօր էլ լայնորեն կիրառվում է պետությունների ներկայացուցչական մարմինների իրավաստեղծ գործունեության ընթացքում: Օրինակ, Մարիա-Թերեզան պահանջում էր «իրավական ակտերը մշակելիս հեռու մնալ ցանկացած երկիմաստություններից, անհուսալիությունից, իրավական ակտերի կամ ակտում զետեղված իրավական նորմերի իմաստի և բովանդակության կրկնությունից»[1]:

Ժամանակակից պայմաններում իրավաբանական տեխնիկան որպես իրավունքի մեծարժեք իրավական ինստիտուտ իրավագետների կողմից բացահայտվում և քննարկվում է որպես տեսական և կիրառական իրավագիտության առանձին գիտական դասընթաց, ինքնուրույն իրավական կարգավորման ոլորտ: Այլ խոսքով, իրավաբանական տեխնիկայի կարգավորման առարկան իրավական ակտն է, նրանում համակարգված հասարակական հարաբերությունների տեսակային և անհատական օբյեկտները: Իրավաբանական տեխնիկան իրավական հնարքների, միջոցների, կանոնների համակցություն է, որը կիրառվում է իրավական ակտերի նախագծման գործընթացում վերջիններիս որակական կատարելության և իրացման

[1] Տե՛ս **Малько А.В., Ныркov В.В., Шумдиков К.В.** Теория государства и права. - М.: «Коморус», 2009, էջ 114:

անհատական արդյունավետության ապահովման նպատակով: Իրավաբանական տեխնիկայի միջոցները, կանոնները, ինչպես նաև հնարքները բազմազան են, որոնց խախտումները, շրջանցումները էապես անդրադառնում են իրավական ակտի որակական հատկանիշների վրա՝ անպտուղ դարձնելով իրավական ակտի ներգործության շրջանակները ըստ տարածության, ժամանակի, ինչպես նաև ըստ իրավահարաբերության սուբյեկտների: Ընդգծենք, որ տեխնիկայի միջոցներ են իրավաբանական տերմինները, օրինակ «իրավաբանական անձ», «սուբյեկտիվ իրավունք կամ պարտականություն», «իրավական սահմանափակում» և այլն: Իրավաբանական տեխնիկայի կանոններ են՝ իրավական ակտի լեզուն, լեզվի հասկացությունը, նյութի շարադրանքի փոխկապվածությունը, տրամաբանական կապը, իսկ իրավական ակտի հնարքներ են ակտի անվանումը, ընդունման տեղը, ամսաթիվը, հոդվածները, կետերը և այլ կառուցվածքային հատկանիշները:

Իրավաբանական տեխնիկան առանձնահատուկ է նրանով, որ մայր իրավական ակտի առանձին դրվագները լուսաբանելու համար ակտին կից տրվում են հավելվածներ, կանոններ, հրահանգներ, որոնք ամբողջական են դարձնում իրավական ակտի (օրենքի, որոշման) իմաստը և բովանդակությունը: Վերջիններս իրավասահման գործունեության, կյանքի կոչվող համապատասխան իրավական ակտի անբաժան մասն են և որպես կանոն իրավական ակտի համապատասխան մասերը պետք է հղում պարունակեն այդ հավելվածներին:

Պետական մարմինների իրավաստեղծագործության (իրավասահմանման) բացահայտումները մեծ զգացողություն և ուշադրություն են պահանջում հատկապես իրավական ակտերում գործածվող կամ ապագա շրջանառությունում կիրառման ենթակա իրավաբանական հասկացություններին և տերմիններին:

Իրավաստեղծ գործունեության բարելավմանն ուղղված իրավաբան գիտնականների գիտահետազոտական վերլուծությունների ընդհանրացումների հիման վրա կարելի է պնդել, որ մշակվող ինչպես նորմատիվային, այնպես էլ ենթաօրենսդրական կամ տեղական իշխանության մարմինների համապատասխան իրավական ակտերը պետք է գործածեն կամ կիրառական դարձնեն հասարակությանը, պետական կամ տնտեսական մարմիններին արդեն հայտնի և նրանց կողմից գործնականում կիրառվող իրավական ակտերում սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Ձևավորվող իրավական ակտում նոր և բազմիմաստ հասկացությունների, տերմինների,

կատեգորիաների սահմանման դեպքերում, եթե դրանք միանշանակ ընկալման կասկածների տեղիք են տալիս, ապա պարզաբանումների նպատակով այդ իրավական ակտերում պետք է տրվեն դրանց հասկացությունը՝ բացահայտելով բովանդակության իրավական առանձնահատկությունները:

Հավելենք, որ անթույլատրելի է իրավական ակտում արձանագրել այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք չեն օգտագործվել տվյալ իրավական ակտում կամ օրենսդրության տարբեր ճյուղերից հանրահայտ են:

Անթույլատրելի է նաև միևնույն իրավական ակտում սահմանված հասկացությունը կամ տերմինը կրկնել այլ բովանդակությամբ:

Պետական իշխանության մարմինների իրավաստեղծագործական գործունեության արդյունքների (նորմատիվ և ենթաօրենսդրական իրավական ակտերի) մշակման և գործնական կիրառման արդյունավետության գնահատումը հուշում է, որ իրավական ակտը պետք է լինի ամբողջական ու համակարգված, տրամաբանության բոլոր կապերի փոխկապակցվածությամբ, բազմակողմանիորեն կարգավորի իրավական ակտով նախատեսված բոլոր հարաբերությունները:

Գործնականում իրավական կարգավորման ծավալների աննկարագրելի ընդարձակության պատճառով երբեմն միևնույն իրավական ակտով անհնար է կարգավորել ոլորտի բոլոր առանձնահատկությունները: Նման իրադրության պայմաններում գործածության հղված ակտում պահանջվում է պարտադիր հղումների սահմանման ճանապարհով մատնացույց անել այն իրավական ակտերը, որոնցով սահմանված են դուրս մնացած հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները:

Պետության և նրա լիազոր մարմինների իրավասահմանման գործունեության տեսական վերլուծությունների իրավագիտական բացահայտումներն արժևորելու, այն առարկայական դարձնելու նպատակով վկայակոչենք ՀՀ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի 2020 թ. մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումները հաստատելու մասին» թիվ 355-Լ որոշումը և այս որոշման մեջ 2022 թ. օգոստոսի 4-ի ՀՀ կառավարության փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումը, հատկապես գիտական վերլուծության ներկայացնել 2020 թ. մարտի 26-ի թիվ 355-Լ որոշման «Հավելվածը», որը պաշտոնապես հրապարակվել է 2022 թ. հունվարի 31-ին:

Նկատենք, որ հիշատակված իրավական ակտը (որոշումը)՝ որպես բարձրագույն գործադիր-կարգադրիչ գործունեության մարմնի իրավաստեղծագործություն, դուրս է իրավական ակտերին ներկայացվող իրավաբանական

տեխնիկայի տեսական քննարկումների ներկայացված տարրական կանոններից: Մի կողմ թողնելով առավել էական սկզբունքների հիմնախնդիրները՝ իրավաստեղծագործության մասնագիտական որակները գնահատելու նպատակով ընդգծենք, որ որոշման «հավելվածը» բաղկացած է 8 բաժիններից և ունի 18 հոդված: Առաջին բաժնում սահմանվում է «տնտեսության արդիականացման միջոցառման» նպատակը, օժանդակության ձևը, որը ըստ էության հանգում է տնտեսվարող սուբյեկտների համար մատչելի ֆինանսական միջոցների հասանելիությանը, որը ըստ էության պետք է արդիականացնի արտադրական հնարավորությունները և խթանի ՀՀ նոր տեխնոլոգիաների ներմուծումը:

Անակնկալ է ներկայացվում հատկապես որոշման «հավելվածի» երկրորդ բաժնում, որը կրում է «տնտեսվարողների շրջանակը» վերտառությունը, որի երկրորդ հոդվածում ի ցույց հանրապետության իրավունքի համակարգի, իրավունքի ճյուղերի, ինչպես նաև իրավունքի ընդհանուր և ճյուղային օրենսդրության և դրանցից յուրաքանչյուրի ներքին կառուցվածքի, առանձին իրավական ինստիտուտների հիմնարար հասկացությունների և կատեգորիաների անտեղյակության պատճառով անհիշելի ժամանակներից իրավագետների, տնտեսագետների կողմից մշակված և քաղաքացիական շրջանառության մեջ ամենօրյա, սովորական խոսակցական գործածության շտեմարանից առանձնացնում են «տնտեսվարող» արտահայտությունը և իրավական շուք հաղորդելու նպատակով, որպես նորույթ, հավելվածի երկրորդ գլխի երկրորդ կետում սահմանում են «**տնտեսվարողի**» հասկացությունը՝ հատուկ շեշտադրելով, որ ՀՀ տնտեսվարող է համարվում հանրապետության տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող մասնավոր առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը (բացառությամբ լիցենզավորող գործունեություն իրականացնող (բացառությամբ առողջապահության, տրանսպորտի և կրթության բնագավառի կամ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների), որն ապահովում է ստորև թվարկված բոլոր չափանիշների համապատասխանությամբ, ապա հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերով, որպես պարտադիր չափանիշներ ընդգծում ա) բարվոք վարկային պատմություն և բ) բարվոք հարկային պատմություն:

Հոդվածի առարկան, որի նպատակը պետական մարմինների իրավասահմանման հիմնախնդիրների իրավագիտական բացահայտումներն են, ունի աղճատված և անհասկանալի իրավական շարադրանք: Հիշատակված

իրավական ակտի թերությունների հիմնական պատճառներից մեկը իրավագիտությունից անտեղյակությունն է:

Որոշումը և նրա անբաժան մասը կազմող «հավելվածը» մշակողները ժամանակին և այսօր էլ չեն յուրացրել «Քաղաքացիական», «Ձեռնարկատիրական», «Բանկային», «Տնտեսական», ինչպես նաև «Բիզնես» իրավունքի ճյուղերի գործող ուսմունքները, որոնք պատճառ են հանդիսացել հիշատակված որոշումը և վերջինիս «հավելվածը» իրավաբանական գրագիտության հիմքով խոտանելու համար:

Մեր կարծիքի հիմնավորման նպատակով հիշեցնենք ՀՀ իրավունքի համակարգում, ի թիվս այլ իրավունքի ճյուղերի, վերը հիշատակված իրավունքի ճյուղերի առկայությունը և ընդգծենք, որ քննադատվող իրավական ակտը նախագծելիս առաջին պլանում անհրաժեշտ էր տեսնել ՀՀ «Քաղաքացիական իրավունք»-ի ճյուղը և նրա հիշատակված երկու ենթաճյուղերը, առավել ևս որոշման առարկան, հարաբերությունները, օբյեկտները և սուբյեկտները սահմանելիս առաջնորդվել ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» առաջին հոդվածում ամրագրված բոլոր ելակետային դրույթների, պահանջների անթերի կատարմամբ, որը կկողմնորոշեր և կուղղորդեր որոշման նպատակների և օժանդակության օբյեկտների ճիշտ ընտրությունը, որոշման իրավաբանական տեխնիկայի սկզբունքների և առաջադրվող պահանջների իրավական ամբողջական կարգավորումներին:

Գործող ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցներին, ինչպիսիք ֆիզիկական անձինք են՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:

Բացահայտումների բովանդակության պարզեցման նպատակով, ավելորդ չհամարելով ընդգծենք, որ քաղաքացիական շրջանառությունը տնտեսական հարաբերությունների միասնական համակարգ է, որի մասնակիցների գույքային հարաբերությունները հիմնականում ծագում են պայմանագրերից՝ առաջացնելով պարտավորական իրավունք: Հետևաբար, գույքային հարաբերությունների մասնակիցները տնտեսական գործունեություն իրականացնող անձինք են, որոնց սեփականության իրավունքը սահմանված է Սահմանադրության 60-րդ հոդվածով, ըստ որի՝ լիազորված են օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունը տիրապետել, օգտագործել և տնօրինել սեփական հայեցողությամբ: Այլ խոսքով՝ գույքային հարաբերությունների սուբյեկտները

շուկայական հարաբերություններում սպառողական ապրանքների ձեռք բերման, օգտագործման նպատակով, տնօրինում են իրենց եկամուտները և կապված այդ պահանջմունքների (հոգևոր և նյութական) բավարարման հետ՝ միմյանց հետ մտնում են գույքային հարաբերությունների մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, պետության տնտեսական գործունեության ոլորտում ծագող գույքային հարաբերությունները շատ հաճախ համարելով առանձնահատուկ, վերջիններիս տալիս է ձեռնարկատիրական, բիզնես, գործարարական, առևտրային, կոմերցիոն, ինչպես նաև տնտեսական հարաբերություններ անվանումը: Պատահական չէ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն այս հարաբերություններին հաղորդում է իրավական բնույթ և սահմանում, որ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական այտերը, ինչպես հիշատակվել է, կարգավորում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները (հոդ. 1, կետ 3): Գործող Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում պարզաբանման նպատակով սահմանվում է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը, ըստ որի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է: Օրենսգրքի հետագա սահմանումներից պարզ է դառնում, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձը հանդես է գալիս որպես «կազմակերպություն», որի քաղաքացիական շրջանառության ամենաբազմազան հարաբերություններին մասնակցությունից ծագող գույքային հարաբերությունները կազմում են քաղաքացիական իրավակարգավորումների առարկան, և ծագում են բացառապես տնտեսության ոլորտում բազմազան «գործունեության» ձևերով, որոնց ծագման հիմքը արտադրատնտեսական հարաբերությունները, նյութական բարիքների արտադրությունը և բաշխումն են, որոնց իրավական կարգավորումը կազմակերպվում է կենտրոնացված-ուղղահայաց կամ հորիզոնական ներգործության մեթոդներով: Նման տնտեսվարմանը նպաստում է արտադրության կենտրոնացման, պետական միասնական հսկողության իրականացումը ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր անհատական գործունեության նկատմամբ:

Հետևաբար, Քաղաքացիական օրենսգրքով սահմանված «ձեռնարկատիրական գործունեությունը» ըստ էության տնտեսվարումն է, իսկ տնտեսվարումը իրականացնողները «տնտեսվարողներ» են, որոնց թվին են դասվում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4, 5, 6-րդ գլուխներում ամրագրված

քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, բացառությամբ «շահույթ» չհետապնդող կազմակերպությունների:

Ուշագրավ է նաև քննարկվող որոշման «հավելվածում» ընդգծված առողջապահության, տրանսպորտի, կրթության բնագավառի ձեռնարկատիրական, բիզնես գործունեություն իրականացնող կազմակերպություններին «տնտեսվարող» չճանաչելը, որը ըստ էության իրավունքի «սահմանափակում է», որը հակասում է գործող Սահմանադրության 59-րդ հոդվածի սահմանումներին, ըստ որի՝ «յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Անգամ եթե ընդունենք այս որոշումը որպես իրավաբանորեն կատարյալ ենթաօրենսդրական ակտ, ապա նման սահմանափակումները վկայում են վերջինիս ցածր մշակվածության մասին:

Իրավունքից հեռու շարադրանքի տարօրինակությամբ հետաքրքրություն է ներկայացնում «հավելվածի» երրորդը «օժանդակության ձևերը» 3-րդ բաժնի 3-րդ կետի շարադրանքի բովանդակությունը, որտեղ ասված է, որ օժանդակությունը տրվում է տնտեսվարողներին ՀՀ տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացվող նպատակային վարկերի ձևով: Պարզորոշ երևում է, որ վարկերը իրենց բնույթով նպատակային են, տոկոսադրույքները սուբսիդավորված են:

Այնուհետև, նույն շարադրանքում ընդգծվում է, որ վարկերի (լիզինգի) վերադարձի ռիսկն ամբողջությամբ կրում է ֆինանսական կազմակերպությունը:

Պարզվում է, որ որոշման նախագծողները անտեղյակ են նաև գործարարներին աջակցելու պետության բյուջեից ֆինանսավորման և բյուջետային վարկավորման իրավակարգավորումներից, այսինքն բացի գործող քաղաքացիական օրենսդրությունից, անհրաժեշտ էր տիրապետել նաև ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքին, ըստ որի տնտեսվարողին տրամադրվող սուբսիդիան իր բնույթով բաժնային իրավունք է, հետևաբար վարկը չվերադարձնելու դեպքում «ռիսկը» նույնպես կիսվում է, այլապես նման վարկավորումը կորցնում է վարկ ստանալու տնտեսվարողի շահագրգռվածությունը:

Իրավագիտական վերլուծությունները, ինչպես նաև բացահայտումները բերում են այն համոզման, որ պետական մարմինների իրավաստեղծագործական (իրավասահմանման) գործունեությունը հեռու է իրավաստեղծագործական գործունեություն համարվելուց, քանի որ վերջինս ստեղծագործական

աշխատանքի հատուկ տեսակ է, որը կապված է համապատասխան աղբյուրներում հասարակության բոլոր անդամների կյանքի և փոխհարաբերությունների կանոններն ու կարգը սահմանող համապարտադիր իրավական նորմերի որոնման, ձևակերպման և պաշտոնական ամրագրումների հետ:

Այս կանոններն առաջին հերթին պահանջում են իրավասահմանման սուբյեկտների բարձր պրոֆեսիոնալիզմ: Մասնագիտական թերություններն ինչ-որ չափով կարող են հարթեցվել գիտնական-իրավաբանների հանձնարարականների հաշվառմամբ, իրավակիրառ լուծումների նախապատրաստմանը մասնակցող բարձրակարգ մասնագետների օգնությամբ, որը գործնականում պետական մարմինների իրավասահմանման գործընթացներին բնորոշ չէ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականություն ցանկ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին», թիվ 355-Լ որոշում:

2. **Ներսեսյանց Վ.Ա.,** Իրավունքի և պետության տեսություն (բուհական դասագիրք): Ե., «Նաիրի» հրատ., 2001, էջ 180-181:

3. **Малько А.В., Ныркoв В.В., Шушдиков К.В.** Теория государства и права. - М.: «Коморус», 2009, էջ 114:

4. **Սուքիասյան Գ.,** Տնտեսական օրենսդրության իրավագիտական բացահայտումները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, 1(105)2022, էջ 101-102:

ОБЕСПЕЧЕНИЕ ЮРИДИЧЕСКОЙ ТЕХНИКИ В ПРАВОТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Аннотация

В современном мире одной из наиболее принципиальных и ответственных проблем правовой теории и законодательства является деятельность органов государственной власти по правотворчеству.

Правотворчество (юридическое нормотворчество) как государственно-правовой институт включает ряд существенных содержательных

компонентов, которые равнозначны таким принципам права, как законность, демократия, гласность и другие характеристики, присущие иным правовым институтам, например, научности и профессионализму.

Правотворчество в широком смысле как правовая категория обладает компонентами содержательной структуры, которые свидетельствуют о его стадиях, видах, систематизации законодательства, юридической технике и ее элементах. Результат и риски правотворческой деятельности государственных органов отражают строгое соблюдение требований, предъявляемых «юридической технике» с момента разработки проекта правового акта. Это соблюдение свидетельствует об авторитете органа, создавшего акт, общественном мнении и анализе, общественных потребностях в правовом акте на данный момент, а также о точности правового регулирования, что в конечном итоге превращает акт в нормативный документ повседневного применения с высокой потребительской ценностью.

В области современной юридической науки юридическая техника как ценный правовой институт и основа правотворчества раскрывается и обсуждается юристами как отдельная теоретическая и прикладная юридическая дисциплина, самостоятельная область правового регулирования, знание которой определяет качество правовых актов, принимаемых государственными органами.

В статье с помощью научных выводов и анализа выборочно изучено одно из постановлений Правительства Республики Армения, направленных на реформы экономики в последние годы. Процессы разработки этого решения свидетельствуют о том, что его авторы не знакомы с тонкостями «юридической техники», предъявляемыми правовым актам.

Ключевые слова: правотворчество, юридическое нормотворчество, юридическая техника, субсидия, процентная ставка, экономический риск, экономическая поддержка, меры поддержки.

PROVISION OF LEGAL TECHNIQUE IN LAW-MAKING ACTIVITY

Annotation

In the modern world, one of the most fundamental and critical issues in legal theory and legislation is the law-making activity of state authorities.

Law-making (law-making activity), as a state-legal institution, encompasses several essential components that align with legal principles such as legality, democracy, transparency, and other characteristics inherent to legal institutions, such as scientific rigor and professionalism.

In a broader sense, law-making activity as a legal category includes structural components that reflect its stages, types, systematization of legislation, legal technique, and its elements.

The outcome and risks of law-making activity of state bodies highlight the strict adherence to the requirements of "legal technique" during the drafting of a legal act. This adherence reflects the authority of the drafting body, public opinion, and analyses, as well as the public demand for the legal act at a given moment and its precise legal regulation, ultimately transforming it into a normative act of daily practical application with significant consumer value.

In contemporary legal science, legal technique, as a valuable legal institution and the cornerstone of law-making, is explored and discussed by legal scholars as a distinct theoretical and applied legal discipline and an independent area of legal regulation. The quality of legal acts adopted by state bodies depends on the mastery of this discipline.

Through scientific findings and analyses, the article examines, on a selective basis, one of the decisions of the Government of the Republic of Armenia in recent years aimed at economic reforms. The development processes of this decision indicate that its authors were unaware of the intricacies of the "legal technique" required for legal acts.

Keywords: law-making, law-making activity, legal technique, subsidy, interest rate, economic risk, economic support, support measures.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.05.2025 թ., տրվել է գրախոսության 02.06.2025 թ., ընդունվել է տպագրության 12.06.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.2-79

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության սպորաբաժանումներում
և համայնքային ենթակայության
կազմակերպություններում իրավաբանական
աշխատանքների համակարգման բաժնի պետ,
Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության սկզբունքները՝ սահմանադրական կարգավորումների համատեքստում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության սկզբունքների վերաբերյալ տեսական գրականության մեջ ներկայացված գիտական մոտեցումները, այդ մարմինների սահմանադրաիրավական բնույթի առանձնահատկությունները և կատարված իրավական հետազոտությունների հիման վրա վեր են հանվել այն սահմանադրական սկզբունքները, որոնք ընկած են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում և սահմանում են, թե կոնկրետ ինչ վարքագծի մոդելի վրա պետք է կառուցված լինեն այդ մարմինների փոխհարաբերությունները:

Սույն հոդվածի նպատակը սահմանադրական կարգավորումների համատեքստում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման

մարմինների փոխգործակցության հիմքում դրվող սկզբունքների վերհանումն է, դրանց առանձնացումը:

Հոդվածում քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն, դրան զուգահեռ, հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում այնպիսի հիմնահարցերի, որոնք առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական հետազոտության առարկա չեն հանդիսացել:

Կատարված իրավական վերլուծությունների հիման վրա պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում առանձնացվում է տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական կայունության ապահովման սկզբունքը, որը պետք է ուղղված լինի այդ մարմինների փոխգործակցության ընթացքում պետական իշխանության մարմինների կողմից տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական հիմքերը սահմանող նորմերում որևէ փոփոխությունների կատարման հնարավորության բացառմանը:

Հիմնաբառեր. պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններ, փոխգործակցություն, սկզբունքներ:

Ներածություն

Հանրային իշխանական հարաբերություններում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները միմյանց հետ գտնվում են որոշակի փոխհարաբերությունների մեջ: Այդ մարմինների գործունեության հիմքում ընկած ընդհանուր նպատակների, խնդիրների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական գործունեության ընդհանուր ոլորտների առկայությունն իրենց գործառույթների իրականացման ողջ գործընթացում որոշակի փոխգործակցություն է առաջացնում: Նման փոխգործակցությունը ենթադրում է նորմատիվ իրավական կարգավորում, դրսևորվում է կողմերի փոխգործակցության հիմնական ուղղությունների, ձևերի միջոցով և հիմնվում որոշակի սկզբունքների վրա:

Իրավագիտության մեջ «փոխգործակցություն» տերմինը հանդիպում է իշխանության որոշակի մարմինների միջև հարաբերությունների բնույթը, փոխադարձ համագործակցության մեջ նրանց լիազորությունների իրականացումը (վերահսկողական գործառույթներ, դատական ակտերի կատարում, տեղեկա-

տվության փոխանցում և այլն) սահմանելիս[1]: Մասնագիտական գրականության մեջ այն սահմանվում է որպես իրավահարաբերության երկու կամ ավելի սուբյեկտների ակտիվ, համակարգված գործունեություն, որն արտահայտվում է որոշումների կայացման և գործողությունների կատարման մեջ, ուղղված է մեկ միասնական նպատակին հասնելուն[2] և բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝ 1) իրավահարաբերության երկու կամ ավելի սուբյեկտների առկայություն, 2) իրավահարաբերության սուբյեկտների ակտիվ գործունեություն (որոշումների ընդունում կամ գործողությունների կատարում, որոնք ազդում են իրավահարաբերության մեկ այլ սուբյեկտի վրա), 3) իրավահարաբերության սուբյեկտների համակարգված գործունեություն (այնպիսի որոշումների ընդունում և գործողությունների կատարում, որոնք իրավահարաբերության այլ սուբյեկտներին հայտնի են օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա), 4) մեկ միասնական նպատակի առկայություն, որին ուղղված է իրավահարաբերության սուբյեկտների գործունեությունը[3]:

Ինչպես ցանկացած գործունեություն, այնպես էլ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը հիմնված է որոշակի սկզբունքների, գաղափարների վրա, որոնք սահմանում են, թե կոնկրետ ինչ մոդելի վրա պետք է կառուցված լինեն այդ մարմինների փոխհարաբերությունները և ինչ հիմնարար գաղափարներ, պահանջներ պետք է ընկած լինեն այդ հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում:

Մասնագիտական գրականության մեջ իրավունքի սկզբունքները բնորոշվում են որպես օբյեկտիվ օրինաչափություններն իրավաբանորեն արտացոլող հասարակական կյանքի հիմնական գաղափարներ ու ելակետային, ղեկավար դրույթներ, որոնք որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության (կիրառման) գործընթացը, դրա բովանդակության հիմնական

[1] Տե՛ս Информационно-аналитический отчет об исполнении решений КС РФ в 2022 году "Об исполнении решений Конституционного Суда Российской Федерации, принятых в ходе осуществления конституционного судопроизводства, в 2022 году" (подготовлен Секретариатом Конституционного Суда Российской Федерации в соответствии с пунктом 2 § 67 Регламента Конституционного Суда Российской Федерации) // СПС "Консультант Плюс":

[2] Տե՛ս **Карташов В.Г.** Взаимодействие органов государственной власти субъекта Российской Федерации и органов местного самоуправления // Конституционное и муниципальное право, 2007, № 19, էջ 34:

[3] Տե՛ս **Нуркин М.Г.** Теоретико-правовые основы взаимодействия государственных органов власти и органов власти местного самоуправления // Право и государство: теория и практика. 2009, № 8, էջ 26:

հարցերը, սոցիալական էությունը[1]: Ավանդաբար, սահմանադրական իրավունքի գիտության մեջ որոշակի սահմանադրաիրավական երևույթի իրավական կարգավորման սկզբունքները սահմանվում են որպես դրա գործունեության և զարգացման առավել ընդհանուր օբյեկտիվորեն գոյություն ունեցող օրինաչափություններ[2]:

Ցանկացած հասարակական հարաբերություններում փոխգործակցության նպատակները, խնդիրները, սկզբունքները, ձևերն ու մեթոդները տարբերվում են՝ կախված փոխգործակցության սուբյեկտների իրավական բնույթից, ուստի, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության սկզբունքները դիտարկելիս անհրաժեշտ է դրանք սահմանել՝ հիմք ընդունելով այդ մարմինների իրավական բնույթի առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան չեն տալիս պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների ընդհանուր նկարագիրը: Դրանցում հստակորեն չեն նկարագրվում պետական կառավարում-տեղական ինքնակառավարում փոխհարաբերությունների իրավական ասպեկտները: Այս առումով պատահական չէ տեսական գրականության մեջ առկա այն պնդումը, որ հաշվի առնելով ժամանակակից իրողությունները՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հիմնադիրները խուսափել են սահմանել պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների իրավական ասպեկտները[3]:

Սույն աշխատանքի նպատակը իրավական հետազոտության հիման վրա սահմանադրական կարգավորումների համատեքստում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում դրվող սկզբունքների վերհանումն է, դրանց առանձնացումը: Հետազոտության նպատակին հասնելու համար հոդվածի առջև դրված են հետևյալ խնդիրները. ուսումնասիրության առարկա դարձնել պետական

[1] Տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, **Արթուր Վաղարշյան**: Եր., ԵՊՀ, Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 45:

[2] Տե՛ս **Ковачев Д.А.** Конституционный принцип: его понятие, реальность и фиктивность / Д.А. Ковачев // Журнал российского права. 1997, № 9, էջ 71:

[3] Տե՛ս **Тимофеев Н.С.** Реформа местного самоуправления - единство власти и демократизм. //Местное самоуправление в России. Сборник статей под общей редакцией д.э.н. В.Б. Зотова. – М., էջ 105:

իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության սկզբունքների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ներկայացված գիտական մոտեցումները, այդ մարմինների սահմանադրաիրավական բնույթի առանձնահատկությունները և կատարված իրավական հետազոտությունների հիման վրա վեր հանել այն սահմանադրական սկզբունքները, որոնք պետք է ընկած լինեն այդ մարմինների փոխգործակցության հիմքում:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմքում ընկած են մի շարք սկզբունքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն այդ մարմինների միջև փոխադարձ ու համակարգված հարաբերությունների ձևավորման համար: Տարբեր տեսաբանների կողմից առանձնացվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության տարբեր սկզբունքներ, որոնցից ոմանք նման են, իսկ որոշները՝ տարբեր: Տարբեր են նաև առաջարկվող սկզբունքների դասակարգումներն ու այդ դասակարգման հիմքում դրվող չափանիշները:

Մասնագիտական գրականության մեջ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցության հիմքում առանձնացվում են՝ ժողովրդաիշխանության[1], տեղական ինքնակառավարման ինքնուրույնության, օրինականության, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավահավասարության[2], պետական և տեղական շահերի համադրման[3], սուբսիդիարության սկզբունքները[4] և այլ սկզբունքներ[5]:

[1] Տե՛ս **Ванеев О.Н., Спас М.А.** Город и самоуправление: вопросы теории. - Красноярск, 2003, էջ 69:

[2] Տե՛ս **Скрипкин Г.В.** Взаимодействие органов государственной власти и местного самоуправления. - М., 2011, էջ 60-62:

[3] Տե՛ս **Селютина Е.Н.** Взаимоотношения органов государственной власти РФ и органов местного самоуправления: правовой и политический аспекты местного самоуправление. - Орел, 2003, էջ 125:

[4] Տե՛ս **Маловкина Н.В.** Правовое регулирование взаимодействия органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления. Автореф. дисс. … канд. юрид. наук. - Белгород, 2013, էջ 8:

[5] Տեսական գրականության մեջ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմքում առանձնացվում են նաև հետևյալ սկզբունքները՝ 1) նպատակների և խնդիրների միասնականությունը՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ապահովելու գործում, 2) տեղական ինքնակառավարման իրականացմանը և համակարգի զարգացմանը համակողմանի պետական աջակցությունը, 3) պետական գործերի և տեղական գործերի բաժանումը՝ պետական և տեղական ինքնակառավարման լիազորությունների

Հանրային իշխանական հարաբերություններում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպչական և գործառութային նշանակությամբ պայմանավորված, կապված են հասարակական հարաբերությունների վրա կառավարչական ազդեցության ընդհանուր սահմանադրական սկզբունքներով[1]: Ուստի, այդ մարմինների փոխհարաբերությունների նկարագրի կառուցման, դրանց փոխգործակցության հիմքում ընկած սկզբունքների վերհանման և առանձնացման համար առաջնային է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները կարգավորող սահմանադրաիրավական նորմերի վերլուծությունը:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (Սահմանադրության 1-ին հոդված): Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունք՝ ինքնիշխանությունն արտահայտում է պետական իշխանության ներքին գերակայությունն ու լիիշխանությունը և արտաքին անկախությունը: Այս առումով անհրաժեշտ է կարևորել մասնագիտական գրականության մեջ առկա այն մոտեցումը, ըստ որի՝ «(...) պետության ինքնիշխանությունը

և տնօրինման առարկաների հստակ տարանջատման հենքով, 4) ինքնուրույնությունը և պատասխանատվությունը համայնքային նշանակության հանրային հարցերը լուծելիս, 5) համայնքի գործերին պետության և պետական իշխանության մարմինների միջամտության անթույլատրելիությունը, 6) համերաշխությունը, փոխգործակցությունը և համագործակցությունը, 7) տեղական ինքնակառավարման մարմինների համապարտությունը՝ պետական խնդիրներն ու պատվիրակված լիազորություններն իրականացնելիս, 8) փոխադարձ տեղեկացվածությունն ու հրապարակայնությունը, 9) հակասությունների և տարաձայնությունների հանգուցալուծումը համաձայնեցման ընթացակարգերի կամ դատական կարգով, 10) փոխադարձ պատասխանատվությունը: Առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք, ընդհանուր խմբագրությամբ **Գ. Դանիելյանի**, Երևանի պետ. համալս., Հայրապետ, 2015, էջ 361-362: Այդ մարմինների միջև հարաբերություններում կարևորվում են նաև՝ 1) իրավասության և կազմակերպական ինքնուրույնության երաշխավորումը, 2) սահմանադրությամբ և օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման գույքային և ֆինանսական առանձնացվածության հանգամանքը, 3) տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված իրավասության և ֆինանսական ռեսուրսների համաչափության ապահովումը, 4) պետական իշխանության մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին առանձին պետական լիազորություններով օժտելու և այդ լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, 5) վարչատարածքային միավորների կայունության երաշխավորումը, 6) տեղական ինքնակառավարման դատական պաշտպանության երաշխավորումը և այլն: Առավել մանրամասն տե՛ս **Մարգարյան Տ.Կ.,** Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Գիտություն», 2016, էջ 37-38:

[1] Տե՛ս **Бондарь Н.С.** Местное самоуправление и конституционное правосудие: конституционализация муниципальной демократии в России. - М.: Норма, 2008, էջ 215:

հանդիսանում է այն սկզբունքը, որը կանխորոշում է սահմանադրաիրավական ողջ համակարգն ու դրա պետական կարգավորման սկզբունքների բովանդակությունը»[1]:

Սահմանադրական կարգավորումների վերլուծությունից բխում է պետական իշխանության ինքնիշխան բնույթի ածանցյալ լինելը ժողովրդի ինքնիշխանությունից: Պետական իշխանության ածանցյալ բնույթի մասին դրույթն իր սահմանադրական ամրագրումն է ստացել Սահմանադրության 2-րդ հոդվածում, որը հռչակում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Նման ձևակերպումը հստակ սահմանազատում է իշխանության իրականացման գործառնական և ինստիտուցիոնալ տարբեր համակարգերը՝ թե՛ պետական իշխանությունը, և թե՛ տեղական ինքնակառավարումը դիտելով որպես ժողովրդի իշխանության իրականացման անմիջական ձևեր և սահմանում դրանց՝ ժողովրդի իշխանությունից ածանցյալ բնույթը:

Տեղական ինքնակառավարումը ամրագրելով որպես սահմանադրական կարգի հիմունքներից մեկը՝ Սահմանադրությունը, միաժամանակ, դրանով իսկ երաշխավորում է տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպական առանձնացումը հասարակության և պետության կառավարման համակարգում (Սահմանադրության 9-րդ հոդված):

Միաժամանակ, Սահմանադիրը, ճանաչելով և երաշխավորելով տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը, հաստատում է պետական գործերի և տեղական գործերի բաժանումը՝ պետական և տեղական ինքնակառավարման լիազորությունների և տնօրինման առարկաների հստակ տարանջատման հենքով և նախանշում, որ տեղական ինքնակառավարումը իր լիազորությունների սահմաններում ինքնուրույն է: Ասվածի վառ վկայությունն է նաև Սահմանադրության 4-րդ հոդվածը, որը հռչակում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա,

[1] Տե՛ս **Дамдинов Б.Д.** Государственный суверенитет в системе принципов федеративного устройства России: некоторые проблемы теории и практики // Сибирский юридический вестник, 2003, N4, էջ 19:

դրանով իսկ մեկ անգամ ևս բացառելով տեղական ինքնակառավարման, դրա մարմինների ներառումը պետական կառավարման համակարգում:

Տեղական ինքնակառավարման ճանաչման ու երաշխավորման պահանջը բխում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայից, որի 2-րդ հոդվածը հռչակում է, որ տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ճանաչված լինի ներպետական օրենսդրությունում և, հնարավորինս, երկրի Սահմանադրությունում: Այս առումով, որպես սահմանադրական կարգի հիմունքներ, թե՛ պետական իշխանության և թե՛ տեղական ինքնակառավարման կազմակերպման ու գործունեության իրավական հիմքերը սահմանվել են Սահմանադրությամբ՝ Սահմանադրի կողմից:

Նշված սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Սահմանադրությամբ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում որպես հիմնարար սահմանադրական սկզբունքներ առաջին հերթին ընկած են ժողովրդաիշխանության, պետական ինքնիշխանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ճանաչման և երաշխավորման սկզբունքները:

Ստորագրելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան՝ Եվրոպայի խորհրդի անդամ երկրները պարտավորվել են պահպանել դրանով սահմանված հոդվածներն այն ձևով և ծավալով, ինչպես նախատեսված է նույն Խարտիայի 12-րդ հոդվածում: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջներին համապատասխան՝ Սահմանադրության 9-րդ գլխով Սահմանադրի կողմից սահմանվել են տեղական ինքնակառավարման՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկի կազմակերպման և գործունեության սահմանադրաիրավական հիմքերը:

Ներկայացվածի համատեքստում անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրության 202-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ «Տեղական ինքնակառավարումը» վերտառությամբ 9-րդ գլխում ներառված հոդվածների փոփոխություններն ընդունելու իրավասությունը վերապահված է Ազգային ժողովին՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մինչդեռ Սահմանադրության նույն 202-րդ հոդվածի և պետական իշխանության սահմանադրաիրավական հիմքերը սահմանող և համակարգային առումով փոխկապակցված Սահմանադրության այլ հոդվածներում (1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներ և այլն) փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով:

Այսինքն, ժողովրդի իշխանության իրացման ձևերից մեկի՝ պետական իշխանության սահմանադրաիրավական հիմքերը սահմանող Սահմանադրության առանձին հոդվածներում փոփոխությունների կատարումը հնարավոր է միայն հանրաքվեի միջոցով, մինչդեռ նույն դեպքում ժողովրդի իշխանության իրացման մյուս ձևի՝ տեղական ինքնակառավարման, սահմանադրաիրավական հիմքերը սահմանող հոդվածներում փոփոխություններն ընդունում է պետական իշխանությունը՝ Ազգային ժողովի միջոցով:

Այս առումով, թեև Սահմանադրության 203-րդ հոդվածով նախատեսվում է, որ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն, իսկ 202-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության 1-ին գլուխն ընդունվում է միայն հանրաքվեի միջոցով, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադիր իշխանությունը պատկանում է ժողովրդին և ժողովուրդն իր իշխանությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով իրականացնելու համար Սահմանադրության ընդունմամբ սահմանել է տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության իրավական հիմքերը, գտնում ենք, որ տեղական ինքնակառավարման իրականացման սահմանադրաիրավական հիմքերը սահմանող նորմերի փոփոխության ընդունումը նույնպես պետք է իրականացվի այն ընդունող մարմնի՝ ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով:

Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները պետք է կառուցված լինեն փոխադարձ հավասարության հիման վրա, որտեղ հիմնական դերը թեև վերապահված է պետությանը, սակայն միևնույն ժամանակ, կարծում ենք, որ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության ընթացքում այդ մարմինների փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական կայունության ապահովման սկզբունքի հիման վրա՝ նպատակ ունենալով բացառելու պետական իշխանության մարմինների կողմից ժողովրդաիշխանության իրացման մյուս ձևի՝ տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական հիմքերը սահմանող սահմանադրական նորմերում որևէ փոփոխությունների կատարումը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության սկզբունքները կարելի է բնորոշել որպես դրա իրականացման օբյեկտիվորեն գոյություն ունեցող օրինաչափություններ, որոնք որոշում են ինչպես այդ մարմինների փոխգործակցության բովանդակությունը, այնպես էլ ապահովում են վերջիններիս համակարգված աշխատանքը՝ նպաստելով համաձայնեցված գործողությունների մշակմանը՝ ի շահ իրենց առջև դրված ընդհանուր խնդիրների լուծմանն ու նպատակների իրականացմանը,

2) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հարցերը պետք է կարգավորվեն Սահմանադրությամբ կամ օրենքներով, իսկ այդ մարմինների փոխգործակցության հիմքում որպես առաջնորդող սկզբունքներ պետք է ընկած լինեն սահմանադրական սկզբունքները: Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում ընկած սահմանադրական սկզբունքների առաջին խումբը սահմանադրական կարգի հիմունքները կազմող սկզբունքներն են, որոնք ընկած են պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների կազմակերպման և գործունեության հիմքում, այդ թվում նաև՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հիմքում, իսկ երկրորդ խումբը այն սահմանադրական սկզբունքներն են, որոնք ուղղակիորեն վերաբերում են տեղական ինքնակառավարմանը և սահմանում են դրա կազմակերպման և գործունեության իրավական կարգը,

3) պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության առաջնորդող սկզբունքների շրջանակում պետք է ընկած լինի նաև տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական կայունության ապահովման սկզբունքը, որը պետք է ուղղված լինի այդ մարմինների փոխգործակցության ընթացքում պետական իշխանության մարմինների կողմից ժողովրդաիշխանության իրացման մյուս ձևի՝ տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական հիմքերը սահմանող նորմերում որևէ փոփոխությունների կատարման հնարավորության բացառմանը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ՝ ընդունված 15.10.1985 թ.:

3. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք // ընդհանուր խմբագրությամբ **Գ. Դանիելյանի**: Երևանի պետ. համալս., Հայրապետ, 2015, 384 էջ:

4. **Մարգարյան Տ.Կ.**, Տեղական ինքնակառավարման սահմանադրականացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Եր., «Գիտություն», 2016, 124 էջ:

5. **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, **Արթուր Վաղարշյան**: ԵՊՀ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2011, 448 էջ:

6. **Бондарь Н.С.** Местное самоуправление и конституционное правосудие: конституционализация муниципальной демократии в России. - М.: Норма, 2008. - 592 с.

7. **Ванеев О.Н., Спас М.А.** Город и самоуправление: вопросы теории. - Красноярск, 2003. - 372 с.

8. **Дамдинов Б.Д.** Государственный суверенитет в системе принципов федеративного устройства России: некоторые проблемы теории и практики // Сибирский юридический вестник. 2003, N 4.

9. **Карташов В.Г.** Взаимодействие органов государственной власти субъекта Российской Федерации и органов местного самоуправления /В.Г. Карташов // Конституц. и муниципал. право. 2007, № 20.

10. **Ковачев Д.А**. Конституционный принцип: его понятие, реальность и фиктивность / Д.А. Ковачев. - Журнал российского права. 1997, № 9.

11. **Маловкина Н.В.** Правовое регулирование взаимодействия органов государственной власти субъектов Российской Федерации и органов местного самоуправления. Автореф. дисс. … канд. юрид. наук. - Белгород, 2013. - 174 с.

12. **Нуркин М.Г**. Теоретико-правовые основы взаимодействия государственных органов власти и органов власти местного самоуправления // Право и государство: теория и практика. 2009, № 8.

13. **Селютина Е.Н.** Взаимоотношения органов государственной власти РФ и органов органов местного самоуправления: правовой и политический аспекты местного самоуправления. - Орел, 2003. - 183 с.

14. **Скрипкин Г.В.** Взаимодействие органов государственной власти и местного самоуправления. - М., 2011. - 128 с.

15. **Тимофеев Н.С.** Реформа местного самоуправления - единство власти и демократизм. // Местное самоуправление в России. Сборник статей под общей редакцией д.э.н. В.Б. Зотова. – М.: Ось-89, 2003.

16. Информационно-аналитический отчет об исполнении решений КС РФ в 2022 году “Об исполнении решений Конституционного Суда Российской Федерации, принятых в ходе осуществления конституционного судопроизводства, в 2022 году” (подготовлен Секретариатом Конституционного Суда Российской Федерации в соответствии с пунктом 2 § 67 Регламента Конституционного Суда Российской Федерации) // СПС “Консультант Плюс”.

ПРИНЦИПЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ И МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ

Аннотация

В статье рассматриваются принципы взаимодействия органов государственной власти и местного самоуправления в контексте конституционного регулирования.

В рамках исследования проанализированы представленные в теоретической литературе научные подходы, касающиеся принципов взаимодействия между органами государственной власти и местного самоуправления, а также особенности их конституционно-правовой природы и на основе проведённых правовых исследований выделены конституционные принципы, лежащие в основе их взаимодействия и определяющие модель поведения, на которой должны строиться их взаимные отношения.

Целью настоящей статьи являются выявление и систематизация принципов, лежащих в основе взаимодействия органов государственной власти и местного самоуправления, в контексте конституционного регулирования.

В статье рассматриваются вопросы, которые в той или иной степени нашли отражение в трудах различных авторов, но вместе с тем затрагиваются и такие фундаментальные проблемы, которые ранее не становились предметом комплексного научного обсуждения и правового анализа.

На основе проведённого правового анализа в качестве одного из ключевых принципов взаимодействия выделяется принцип обеспечения конституционно-правовой стабильности местного самоуправления. Этот принцип должен быть направлен на недопущение возможности внесения изменений в определяющие конституционно-правовые основы местного самоуправления нормы органами государственной власти в процессе их взаимодействия.

Ключевые слова: органы государственной власти и местного самоуправления, взаимодействие, принципы.

PRINCIPLES OF INTERACTION BETWEEN STATE AUTHORITIES AND LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REGULATIONS

Annotation

This article discusses the principles of interaction between state authorities and local self-government bodies within the context of constitutional regulations.

Within the scope of the research, scientific approaches presented in theoretical literature regarding the principles of interaction between state and local self-government bodies are examined. The study explores the constitutional-legal characteristics of these bodies and, based on conducted legal research, identifies the constitutional principles underlying the interaction between state and local self-government bodies. These principles define the behavioral model upon which the relationships between these entities should be built.


The aim of this article is to reveal and distinguish the principles that form the basis of such interaction in the context of constitutional regulations.

The article addresses issues that, to some extent, have been reflected in the works of various authors. At the same time, it tackles fundamental issues that have not previously been the subject of comprehensive scientific discussion or legal research.

Based on the legal analyses conducted, the principle of ensuring constitutional-legal stability of local self-government is identified as a cornerstone of interaction between state authorities and local self-government bodies. This principle should aim to prevent any possibility of changes to the legal norms that define the constitutional-legal foundations of local self-government by state authorities during their interaction.

Keywords: state authorities and local self-government bodies, interaction, principles.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.05.2025 թ., տրվել է գրախոսության 02.06.2025 թ., ընդունվել է տպագրության 12.06.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.2-93

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան,
ԵՊՀ սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ



ՄԻԼԵՆԱ ՏՈՆԵՅԱՆ
ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի օգնական

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ամփոփագիր

Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության ու խթանմանն առնչվող խնդիրներին: Աշխատանքի շրջանակում մանրամասն ուսումնասիրվել և վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ խտրականության արգելքին, ինքնության պահպանման տարրերի՝ լեզվի, կրոնի, ավանդույթների և մշակույթի պահպանման և զարգացման իրավունքներին վերաբերելի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները, միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին տրված հանձնարարականները: Առկա խնդիրների և վերը նշված կարգավորումների համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել

են առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը:

Հիմնաբառեր. ազգային փոքրամասնություն, իրավունքների պաշտպանություն և խթանում, խտրականության արգելք, ինքնության պահպանման տարրեր, լեզվի պահպանման իրավունք, մշակութային ինքնության պահպանում, հասարակական կյանքում արդյունավետ մասնակցություն:

1. Ներածություն

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման մեխանիզմների շարունակական զարգացումն առանցքային նշանակություն ունի ժամանակակից աշխարհում նրանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով մի շարք միջազգային փաստաթղթեր, ստանձնել է կոնկրետ պարտավորություններ ազգային փոքրամասնության պատկանող անձանց՝ իրենց փոքրամասնության լեզուն սովորելու, կրթության իրավունքի, մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պահպանման, ինչպես նաև խտրականության բացառման համատեքստում:

Չնայած ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման առնչությամբ ստանձնած պարտավորություններին՝ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման առնչությամբ գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է պատշաճ և գործուն կառուցակարգերի մշակում և իրականացում: Նշված խնդիրները վերաբերում են ինչպես ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրավահավասարության ապահովմանն ու խտրականության բացառմանը, այնպես էլ վերջիններիս ինքնության պահպանման տարրերին՝ լեզվի, կրոնի, մշակույթի և ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Հենց այս խնդիրներն են վերլուծության առարկա դարձել հոդվածի շրջանակներում: Աշխատանքում ներկայացվել են դրանց վերաբերյալ առկա միջազգային չափանիշներն ու ներպետական իրավակարգավորումները, պետության կողմից ձեռնարկված քայլերը, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրները: Այս համատեքստում արվել են համապատասխան եզրահան-

գումներ և ներկայացվել առաջարկներ՝ վկայակոչված խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Իրավահավասարությանն առնչվող համապարփակ օրենսդրության անհրաժեշտությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման և խտրականության բացառման համատեքստում

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում բացառիկ կարևորություն ունեն իրավահավասարության ապահովումն ու խտրականության բացառումը, քանի որ ազգային փոքրամասնությունները բնակվում են տվյալ երկրի բնակչության մեծամասնության շրջանում, հետևաբար՝ մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, օրինակ՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների տարբերությամբ պայմանավորված՝ կարող են հանդիպել տարբեր մարտահրավերների, այդ թվում՝ խտրական վերաբերմունքի դրսևորումների:

Խտրականության բացառումը և առհասարակ իրավահավասարությունը հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության հիմնական և համընդհանուր սկզբունք[1] և միջազգային իրավունքի հիմնարար բաղադրիչ, որը առաջացնում է անմիջական և ընդհանրական, համալիր (cross-cutting) պարտավորություններ[2]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման և վերջիններիս նկատմամբ խտրականության բացառման առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրությամբ կարգավորումներ նախատեսելուց զատ, ստանձնել է մի շարք պարտավորություններ՝ ամրագրված տարատեսակ միջազգային իրավական փաստաթղթերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից,

[1] Տե՛ս CCPR General Comment No. 18: Non-discrimination, UN Human rights committee, November 10, 1989, https://www.refworld.org/legal/general/hrc/1989/en/6268

[2] Տե՛ս General comment no. 20, Non-discrimination in economic, social and cultural rights (art. 2, para. 2, of the International Covenant on Economic, Social and Cultural Rights), UN. Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, https://digitallibrary.un.org/record/659980?v=pdf:

հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Շրջանակային կոնվենցիա) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Ուստի, սահմանադրական և կոնվենցիոն մակարդակում ամրագրված են կարգավորումներ իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության բացառման առնչությամբ, որոնցից բխում է, որ պետությունները պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն և բացառել ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն, ինչպես նաև ձեռնարկել պատշաճ միջոցներ նշված խումբը ներկայացնող անձանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության տարբերությամբ պայմանավորված՝ խտրական դրսևորումները արգելելու ուղղությամբ: Մինչդեռ ՀՀ ոլորտային օրենսդրության մակարդակում սահմանված՝ ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով իրավահավասարության ապահովման և խտրականության բացառման, ինչպես նաև իրավունքների խթանման մեխանիզմները չի կարելի համարել համապարփակ, պատշաճ և գործուն:

Իրավահավասարության ապահովումը, խտրականության բացառումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանումը չեն կարող սահմանափակվել կոնվենցիոն կամ սահմանադրական մակարդակում կամ առանձին իրավական ակտերում հատվածական կամ հռչակագրային կարգավորումներ նախատեսելով: Կարծում ենք, որ նշված նպատակների

իրականացման տեսանկյունից կարևոր է համապարփակ և միասնական իրավական ակտի ընդունումը, օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի նախատեսումն ու պատշաճ գործադրումը:

Մինչդեռ մեր, ինչպես նաև շատ այլ հասարակություններում, գերակայում է այն ընկալումը, որ ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող ոլորտը ենթադրում է բացառապես առաջ եկող խնդիրներին արձագանքելու, դրանք ի հայտ գալու դեպքում լուծելու անհրաժեշտություն, և որևէ առանձնահատուկ խթանող քաղաքականություն ու կարգավորումներ անհրաժեշտ չեն այդ համատեքստում: Այս մոտեցումն ամբողջությամբ հակասում է թե՛ ոլորտի տրամաբանությանը, թե՛ այդ առումով առկա չափանիշներին:

Գտնում ենք, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված քաղաքականության և համապարփակ օրենսդրության մշակումն ու ընդունումն անհրաժեշտ է վերջիններիս ինքնության պահպանման և զարգացման համար հավասար հնարավորությունների ապահովման, նրանց նկատմամբ խտրականության բացառման, ինչպես նաև հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքում ներառականության ապահովման տեսանկյունից: *Այդ հանգամանքը ենթադրում է պետության կողմից նշված ոլորտում ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու պարզ քաղաքականության փոխարեն:*

Դեռևս 2019 թվականին ՀՀ-ում շրջանառվել են «Իրավահավասարության ապահովման մասին» և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերը, որոնք, սակայն, դեռ չեն ընդունվել: Այսինքն՝ ոլորտին վերաբերելի խնդիրները համակարգային առումով մնում են չկարգավորված՝ առաջ բերելով ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող մի շարք խնդիրներ:

Վերոնշյալ ոլորտի օրենսդրական դաշտի ընդունման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես՝ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետությանը հանձնարարական են ներկայացրել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների

կոմիտեն[1] և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ)[2]:

ԵԽ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[3] որպես անհապաղ իրականացվող գործողություն առաջարկել է վերանայել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը՝ այն լիովին համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին, նե-րառյալ Շրջանակային կոնվենցիային՝ ապահովելով, որ վերջինիս բովանդակությունը քննարկվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Իրավահավասարության, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում առանցքային նշանա-կություն ունի իրավապաշտպան գործունեություն իրականացնող դերակա-տարների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը[4]: Օրինակ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն իր հրապարակային գործունեության շրջանակում բազմիցս ընդգծել է նշված ոլորտում համապարփակ օրենսդրության ընդունման ու պատշաճ կիրառման կարևորությունը, ինչը գոյություն ունեցող խնդիրները հաղթահարելու կարևոր գրավականներից է: Նշված օրենսդրությունը չպետք է ունենա հռչակագրային բնույթ, այլ պետք է սահմանի իրական հնարավորություններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների երաշխա-վորման համար՝ ընդգծելով ոլորտում պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունները, այդ թվում՝ երաշխավորելու և նպաստելու վերջիններիս մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը[5]:

Հիշատակման է արժանի և այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ձևավորվել և գործում է ազգային փոքրամաս-նություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհուրդ (սույն խորհրդին առավել

[1] Տե՛ս «Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ», Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2023 թվականի հոկտեմբերի 13, թիվ E/C.12/ARM/CO/4, 21-22 կետեր:

[2] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը, 2023 թվական, https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33

[3] Տե՛ս Resolution on the implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

[4] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/am/site/ViewNews/3063 հղումը:

[5] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3065 հղումով:

մանրամասն անդրադարձ է կատարվել հոդվածի 5-րդ պարագրաֆում), որն իր հերթական նիստի շրջանակում քննարկման առարկա է դարձրել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Խորհրդի անդամների կողմից ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ նախագծով ամրագրված կարգավորումների վերաբերյալ: Վերջիններս ամփոփվել են մեկ համահավաք փաստաթղթում[1] և ներկայացվել իրավասու պետական մարմնին՝ նախագծում համապատասխան լրամշակման աշխատանքներ կատարելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ վկայակոչված օրենքի նախագծի առնչությամբ համատեղ կարծիք են ներկայացրել Վենետիկի հանձնաժողովը և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինությունը (DGII)[2]: Համատեղ կարծիքում ամփոփված են նախագծի կարգավորումների առնչությամբ վերջիններիս դիտարկումներն ու առաջարկությունները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջնահերթ ենք համարում ոլորտին առնչվող համապարփակ օրենսդրության շուտափույթ ընդունումն ու պատշաճ գործարկումը՝ ամրագրելով հստակ և որոշակի կարգավորումներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավական կարգավիճակի, նրանց նկատմամբ խտրականության արգելքի բովանդակության վերաբերյալ:

Կարևոր ենք համարում նաև Հայաստանի Հանրապետությունում պատշաճ քայլերի ձեռնարկումն՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ու խթանման վերաբերյալ հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր մշակելու ուղղությամբ՝ հստակ անդրադարձ կատարելով հակախտրականության ոլորտին առնչվող հարցերին:

3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանումը՝ որպես վերջիններիս իրավունքների երաշխավորման կարևորագույն գրավական

Իրավահավասարության ապահովման, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի մարդու իրավունքների խթանումը:

[1] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3104 հղումով:

[2] Տե՛ս Joint Opinion on the Draft Law on National Minorities, Venice Commission and DGII, 2024, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)019-e

Իրավունքների խթանումը ենթադրում է հավասար հնարավորությունների ապահովում, ինչպես նաև հատուկ միջոցների ձեռնարկում և իրացում համապատասխան ոլորտներում[1]: Քննարկվող ոլորտի համատեքստում ասվածը ենթադրում է պետության կողմից ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման տարրերի, մասնավորապես՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև հասարակական կյանքում արդյունավետ մասնակցության ապահովմանն ուղղված պատշաճ մեթոդաբանության և կառուցակարգերի մշակում ու իրացում, ինչպես նաև երկարաժամկետ և շարունակական գործողությունների իրականացում՝ կարճատև կամ դրվագային լուծումների փոխարեն:

Մարդու իրավունքների խթանումը, ի թիվս այլնի, ներառում է մարդու իրավունքների մասին իրազեկվածության բարձրացումը, ուսուցումը և վերապատրաստումը հանրության բոլոր շրջաններում, ինչպես նաև այնպիսի մեթոդաբանության և նյութերի մշակումը, որոնք կարող են ամրապնդել իրավունքի խթանման ուղղությամբ տարվող աշխատանքները[2]:

Ըստ ՄԱԿ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկում-ների[3]՝ խթանումը ընդգրկում է այն գործառույթները, որոնց նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված են և հարգված: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման համակարգը առավել շատ կենտրոնացած է իրավունքների պաշտպանության մեխանիզմների վրա: Մինչդեռ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը միտված քաղաքականության մշակումից և իրացումից զատ խիստ կարևորվում է նաև

[1] Տե՛ս Office of the High Commissioner for Human Rights, *Note on the Sixth Session of the Working Group on Minorities of the Sub-Commission on the Promotion and Protection of Human Rights* 22-26 May 2000.

[2] Տե՛ս Promoting Human Rights at Local and Regional Level, Council of Europe, 2016, https://rm.coe.int/168071b33b

[3] Տե՛ս General Observations of the Sub-Committee on Accreditation, Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI), 2018, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_GeneralObservations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf

նշված ոլորտում իրավունքների խթանման ուղղությամբ պատշաճ կառուցակարգերի առկայությունն ու գործադրումը:

Հարկ է նկատի ունենալ, որ նշված ոլորտի առնչությամբ պետության պարտավորությունը չի կարող ունենալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որ ենթադրի բացառապես պետության պասիվ քաղաքականությունը իրավունքների իրացմանը չմիջամտելու ձևաչափով: Այս իրավունքը ենթադրում է նաև պետության պարտավորությունը՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության հիմնական տարրերը պահպանելու և զարգացնելու համար:

Ասվածը ենթադրում է նշված ոլորտում պետության կողմից ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու կամ նշված իրավունքի իրացմանը չխոչընդոտելու պարզ քաղաքականության փոխարեն:

Ստորև կներկայացվեն ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ՝ ազգային փոքրամասնությունների առանձին իրավունքների համատեքստում:

3.1. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանն ու կրթության իրավունքին առնչվող խնդիրները իրավունքների խթանման համատեքստում

Տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման համատեքստում բազմաթիվ են կրթության համակարգին և լեզվի պահպանմանն առնչվող խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում նշված ոլորտում իրավունքների երաշխավորման համակարգի վրա:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների տեսանկյունից խիստ կարևորվում է իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորությունը: Հարկ է նկատի ունենալ, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանումն էական նշանակություն ունի վերջիններիս ինքնության պահպանման հարցում, և այս բնագավառում առկա խնդիրները կարող են հանգեցնել ինքնության պահպանմանը վերաբերելի խնդրահարույց իրավիճակների:

Ազգային փոքրամասնությունների՝ իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեն կրթական հաստատություններում համապատասխան

լեզուների պատշաճ դասավանդումը, ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետների պատրաստումն ու առկայությունը և այլն: Նշված կառուցակարգերի բացակայությունը կամ ոչ բավարար լինելը վերջնարդյունքում կարող են հանգեցնել իրավունքների խախտման կամ սահմանափակման տարբեր դրսևորումների:

Ստորև կներկայացնենք քննարկվող ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող առանձին խնդիրներ՝ վերը թվարկված կառուցակարգերի բացակայության կամ ոչ բավարար լինելու համատեքստում:

Այսպես, ՀՀ-ում բացակայում են ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետներ կրթելու համար նախատեսված ուսումնական հաստատությունները կամ դրանց համապատասխան կառուցվածքային միավորները: Նշվածը հանգեցնում է ոլորտի մասնագետների սակավության կամ առհասարակ բացակայության: Ավելին՝ նշված լեզուների մասնագետների բացակայության կամ սակավության պատճառով ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող ուսուցիչների համար համապատասխան վերապատրաստումներ, ըստ էության, տարիներ շարունակ չեն իրականացվում:

Ասվածին զուգահեռ, դեռևս 2010 թվականին կրթական ոլորտի բարեփոխումների արդյունքում ՀՀ օրենսդրությամբ ուսուցիչների համար սահմանվել է բարձրագույն կրթության պահանջ, որի իրացման նպատակով այդ չափանիշին չբավարարող ուսուցիչներին տրվել է որոշակի ժամանակահատված՝ ստանալու բարձրագույն կրթություն: Նշված ժամանակահատվածում շատ ուսուցիչներ ստացել են բարձրագույն կրթություն: Իսկ ոչ բարձրագույն կրթությամբ մասնագետներին տրվել է հավելյալ հնարավորություն՝ կամավոր ատեստավորման մասնակցության արդյունքում համապատասխան շեմը հաղթահարելու դեպքում շարունակելու աշխատանքը:

Քանի որ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետները մեծամասամբ ունեն միջին մասնագիտական կրթություն, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ համապատասխան կառուցվածքային միավորները բացակայում են, ուստի վերջիններիս մեծ մասը մասնակցել են կամավոր ատեստավորմանը՝ աշխատանքը շարունակելու նպատակով: Ատեստավորման անցողիկ շեմը չհաղթահարելու արդյունքում նշված ուսուցիչների մի մասը կանգնել է աշխատանքից ազատվելու վտանգի առաջ այն պարագայում, երբ

վերջիններս, որպես կանոն, ուսումնական հաստատություններում ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող միակ ուսուցիչներն են եղել:

Նշված խնդիրները հանգեցնում են մի շարք իրավունքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց լեզուն, ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքների խախտման, քանի որ տվյալ ուսուցիչների՝ աշխատանքից ազատվելու պարագայում՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները զրկվում են իրենց լեզուն ուսումնասիրելու կամ առհասարակ իրենց լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար: Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Նույն կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ: Միևնույն ժամանակ,

նշված պարտավորությունները չպետք է իրագործվեն՝ ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

ԵԽ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[1] ներկայացրել է լրացուցիչ առաջարկություններ, այն է՝ ընդլայնել փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես ասորերենով ուսուցման առաջարկը, դրան աջակցելու համար ապահովել ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը և նորացված ուսումնական նյութերի առկայությունը, աջակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին կիրակնօրյա դպրոցներ և փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական նախաձեռնություններ առաջարկելու հարցում, ձեռնարկել քայլեր՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկը ընդհանուր ուսումնական ծրագրի հիմնական և միջնակարգ մակարդակներում, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման և ֆինանսական խթանների միջոցով, որպեսզի եզդի աշակերտները վերապատրաստվեն և աշխատեն որպես ուսուցիչներ: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն եզդիերենով հետագա կրթություն (մասնագիտական, մեծահասակների համար նախատեսված և շարունակական):

Վերը շարադրված իրավական կարգավորումներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն, բոլոր մակարդակներում ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ, տրամադրել համարժեք հնարավորություններ ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնել շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

Միաժամանակ, նշված պարտավորությունները չպետք է կրեն հռչակագրային բնույթ, և պետությունը պետք է ստեղծի պատշաճ կառուցակարգեր՝ վերոնշյալ իրավունքների իրացման համար:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ-ում, հատկապես վերջին տարիներին, իրականացվում են քայլեր՝ ոլորտի բարեփոխման, ազգային փոքրամաս-

[1] Տե՛ս Resolution on the implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

նությունների իրավունքների խթանման ուղղությամբ, սակայն դրանք բավարար չեն ոլորտին առնչվող միջազգային չափանիշների տեսանկյունից:

13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում»:

հոդվածներով նախատեսվել են լրացուցիչ իրավակարգավորումներ, որոնք նկարագրում են այդ դեպքերը բնութագրող հատկանիշները, դրսևորումները կամ պայմանները և միտված են առավել հստակեցնելու դրանցից յուրաքանչյուրի պարագայում աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկությունները:

Հարկ ենք համարում նշել, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասում նշված բոլոր դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում միայն աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու կամ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքերում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին (113-րդ հոդվածի 5) և 6) կետեր):

2. Գրականության ակնարկ

Հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրների լուծման նպատակով առաջնահերթ ուսումնասիրվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113, 121, 122, 220-230-րդ, 231, 232, 233, 237-241-րդ հոդվածները: Նշված հոդվածներով սահմանվում են ինչպես անորոշ, այնպես էլ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետը լրանալը, գործատուի նախաձեռնությամբ լուծելու դեպքերը, աշխատանքային կարգապահության խախտման, կարգապահական պատասխանատվության կիրառման և կարգապահական տույժերի տեսակներին վերաբերող իրավակարգավորումները:

Ինչպես նաև ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 141-րդ հոդվածները, որոնք վերաբերում են վնասների հատուցմանը, ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք համարվող տեղեկատվությանը:

Ժ. Սարգսյանի և Ա. Հայրապետյանի «Աշխատանքային օրենսգրքի մեկնաբանություններ», Մաս 1 (Երևան 2023) ձեռնարկում ներկայացված պարզաբանումները և վերլուծությունները որպես հիմք են ընդունվել սույն հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ինչը հնարավորություն է տվել

բացահայտել աշխատանքային օրենսդրության նորմերի վերաբերյալ օրենսդրի կամքը[1]:

3. Հետազոտության մեթոդաբանություն

Հեղինակների կողմից կիրառվող հիմնական հետազոտական մեթոդներն են՝ համակարգային վերլուծության, ընդհանրացման, համեմատական-իրավական մեթոդները: Նշված մեթոդների կիրառմամբ իրականացվել է աշխատանքային օրենսդրության տարբեր նորմերի համակարգային վերլուծություն, դատական պրակտիկայի ընդհանրացում և օրենսդրի կամքի բացահայտում:

4. Վերլուծություն

4.1. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը 113-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլնի՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմք է նախատեսում նաև աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում (Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Ընդ որում օրենքը նախատեսում է, որ այս հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համակարգային առումով փոխկապակցված է նույն օրենսգրքի աշխատանքային կարգապահության խախտմանը, կարգապահական պատասխանատվության կիրառմանը և կարգապահական տույժերի տեսակներին վերաբերող համապատասխան դրույթներին: Մասնավորապես Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի

[1] Մասնավորապես ուսումնասիրվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.12.2012 թ. թիվ ԿԴ/0125/02/11, 04.10.2013 թ. թիվ ԵԿԴ/2600/02/10, 28.03.2019 թ. թիվ ԵԿԴ/4054/02/16, 10.07.2020 թ. թիվ ՇԴ/2860/02/18, 29.10.2021 թ. թիվ ԵԱՔԴ/3661/02/17 որոշումները:

113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ, աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

Աշխատանքային հարաբերությունների բնույթը պահանջում է ոչ միայն այդ հարաբերությունների կողմերի իրավունքների իրացման, այլև պարտականությունների կատարման անհրաժեշտություն, հետևաբար աշխատանքային հարաբերությունների ծագման պահից աշխատողը և գործատուն ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ, այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմերին: Աշխատանքային հարաբերություններում աշխատանքային կարգապահության կարգավորումը նպատակ ունի ապահովել հավասարակշռությունը աշխատողների և գործատուների իրավունքների և պարտականությունների միջև, նպաստել աշխատանքային սկզբունքների պահպանմանը[1]: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրն աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել *օրինականության, բարեխղճության և ողջամտության* սկզբունքների պահպանմամբ[2]: Եթե աշխատողը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում աշխատանքային պայմանագրով սահմանված պարտավորությունները, այդ թվում՝ չի պահպանում աշխատանքային կարգապահությունը, ապա գործատուն կարող է կիրառել Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժերից որևէ մեկը՝ հաշվի առնելով աշխատողի կողմից թույլ տրված խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

[1] **Սարգսյան Ժ., Հայրապետյան Ա.,** «Աշխատանքային օրենսգրքի մեկնաբանություններ»: Եր,. «Պրոքս» ՍՊԸ, 2023, Մաս 1, էջ 196:

[2] Արմինե Աբելյանն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանի թիվ ԿԴ/0125/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշում:

Այսպիսով, Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում և Օրենսգրքի 121-րդ հոդվածում առկա դրույթների վերլուծությամբ հանգում ենք հետևյալին, որ օրենսդիրը աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմքով աշխատանքային հարաբերությունների դադարեցման համար սահմանել է *որոշակի նախապայմանների միաժամանակյա առկայության պահանջ*, այն է՝

1) աշխատանքային պարտականություններն առանց հարգելի պատճառի չկատարելը,

2) աշխատանքային պարտականությունները պարբերաբար չկատարելը,

3) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը, աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողի՝ առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ ունենալը:

Միաժամանակ հարկ է նշել, որ թեև աշխատանքային պարտականություններն աշխատողի կողմից առանց հարգելի պատճառի չկատարելու դեպքում գործատուին է վերապահված Օրենսգրքով սահմանված կարգապահական տույժի տեսակն ընտրելու և կիրառելու, ինչպես նաև առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ ունենալու պարագայում Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավասությունը, սակայն կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտման ծանրությանը և դրա ընտրության դեպքում գործատուն պետք է ղեկավարվի Օրենսգրքի 224-րդ հոդվածի պահանջներով, համաձայն որի՝ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը 10.07.2020 թ. թիվ ՇԴ/2860/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը «...չնայած այն հանգամանքին, որ աշխատողի կողմից աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում գործատուն ինքն է որոշում կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակը, այնուամենայնիվ, այն չի կարող կրել կամայական բնույթ, և յուրաքանչյուր դեպքում գործատուի կողմից ընտրված կարգապահական տույժի տեսակը պետք է համաչափ լինի աշխատողի կողմից կատարված խախտման

ծանրությանը, որի ապահովմանն էլ ուղղված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված՝ մինչև կարգապահական տույժի կիրառումն աշխատողից խախտման մասին պարտադիր գրավոր բացատրություն պահանջելու գործատուի պարտականությունը»:

Վերահաստատելով և զարգացնելով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը 29.10.2021 թ. թիվ ԵԱՔԴ/3661/02/17 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ նշել է, որ կարգապահական տույժերից որևէ մեկն ընտրելիս, գործատուն իրավունք չունի դրսևորել կամայական մոտեցում և որ կարգապահական տույժերից որևէ մեկի կիրառման դեպքում, պարտավոր է հաշվի առնել խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքային կատարողական արդյունավետությունը: Այսինքն, կարգապահական տույժերից որևէ մեկն ընտրելիս, գործատուն իրավունք չունի դրսևորել կամայական մոտեցում՝ առանց հաշվի առնելու աշխատողի իրավունքները երաշխավորող օրենսդրությամբ սահմանված սկզբունքները: Ըստ այդմ, ՀՀ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում[1], գործատուն պարտավոր է ղեկավարվել և հիմք ընդունել Օրենսգրքի 224-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Հարկ է նշել, որ աշխատանքային վեճերը դատական կարգով լուծելիս, այդ վեճերով ապացուցման պարտականության բաշխման բեռի ծանրությունը հիմնականում կրում է գործատուն[2]: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով գործատուի նախաձեռնությամբ որոշակի կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման, «...գործատուն ոչ միայն պարտավոր է ապացուցել աշխատողի

[1] Խոսքը վերաբերում է Օրենսգրքի 113-րդ հոդվածով նախատեսված՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու այն դեպքերին, որոնք կիրառվում են որպես կարգապահական տույժ:

[2] Օրինակ՝ աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու դեպքում գործատուն է կրում ազատման հրամանի իրավաչափությունն ապացուցելու, աշխատողին հասանելիք գումարները վճարված լինելու հանգամանքն ապացուցելու, աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանքի բացակայությունն ապացուցելու պարտականությունները և այլն:

կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու փաստերը (կարգապահական խախտում), այլ նաև թե՝ համապատասխան կարգապահական տույժն ընտրելիս արդյո՞ք հաշվի առնվել են աշխատողի կողմից թույլ տրված խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը: Ընդ որում, նշված փաստերից որևէ մեկի վիճելի մնալու դեպքում, դրա բացասական հետևանքները պետք է կրկին կրի գործատուն»: Այսինքն, գործատուի կողմից ընտրված և կիրառված կարգապահական տույժի տեսակի համաչափությունը պետք է ապացուցի գործատուն:

Այսպիսով, Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահանջվում է ոչ միայն վերը թվարկված նախապայմանների միաժամանակյա առկայությունը, այլև կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնների պահպանումը, մասնավորապես՝ 1) գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ, 2) այդ բացատրությունը պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը, տվյալ դեպքում՝ մինչ աշխատանքային պայմանագրի լուծումը, 3) առանց խախտման մասին աշխատողի կողմից տրված գրավոր բացատրության, կարգապահական տույժը կարող է կիրառվել, տվյալ դեպքում՝ աշխատանքային պայմանագիրը լուծվել, միայն այն դեպքում, երբ գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն:

4.2. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլնի, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմք է նախատեսում աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համակարգային առումով փոխկապակցված է նաև Օրենսգրքի 122-րդ հոդվածի, ինչպես նաև աշխատանքային կարգապահության խախտմանը, կարգապահական պա-

տասխանատվության կիրառմանը և կարգապահական տույժերի տեսակներին վերաբերող համապատասխան դրույթների, մասնավորապես՝ Օրենսգրքի 223-րդ հոդվածի հետ:

Օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը.

4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկական կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ և այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը[1]:

[1] Հարկ է նշել, որ մինչև 03.05.23 թ. աշխատանքային օրենսդրության փոփոխությունները, Օրենսգրքի 122-րդ հոդվածով նախատեսված էր աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու երեք դրսևորում, այն է՝ դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս աշխատողի կողմից գործատուին նյութական վնաս պատճառած լինելը, աշխատողի կողմից

Սույն հոդվածում անդրադարձ կկատարվի միայն նշված հոդվածի 1), 2) և 3) կետերով նախատեսված հիմքերին:

Այսպիսով, աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքերից **առաջինը** *աշխատողի կողմից այնպիսի արարք կատարելն է, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս:* Այս կապակցությամբ հարկ է նշել, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում նյութական վնասի առկայությունը պետք է դիտարկվի Օրենսգրքով նախատեսված՝ աշխատողին նյութական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավակարգավորումների համատեքստում՝ հաշվի առնելով աշխատանքային հարաբերություններում վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ կիրառելի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ վնասի ինստիտուտին վերաբերող ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Այսինքն, վնասն օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է, որը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ): Վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և դրանց միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի[1]:

պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ հրապարակելը կամ դրանց մասին մրցակից կազմակերպությանը հայտնելը, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողի կողմից տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք կատարելը:

[1] Տես, մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.10.2013 թ. թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

Հարկ է նշել, որ համաձայն Օրենսգրքի 232-րդ հոդվածի՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

1) պատճառված է վնաս.

2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով.

3) առկա է պատճառական կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև.

4) առկա է խախտողի մեղքը.

5) խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ.

6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

Իր հերթին, Օրենսգրքի 237-րդ հոդվածով սահմանված է, որ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.

2) նյութերի գերածախս թույլ տալու հետևանքով.

3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում.

4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից.

5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով.

6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքերից **երկրորդը** վերաբերում է *ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողի կողմից տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք կատարելուն:*

Այսինքն, որպեսզի գործատուն վերը նշված հիմքով աշխատանքային պայմանագիրն իր նախաձեռնությամբ լուծի, անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

1) աշխատողը հանդիսանա ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող անձ, և

2) թույլ տրված լինի համապատասխան աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

Օրենսգիրքը չի սահմանում «ուսումնադաստիարակչական գործառույթ» եզրույթը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է, որ ուսումնադաստիարակչական գործառույթը հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողների կողմից իրականացվող ուսումնական և դաստիարակչական գործընթացների մշակմանը, կազմակերպմանը, իրականացմանը և համակարգմանն ուղղված աշխատանքներն են (3-րդ հոդվածի 1-ին մասի 14.4 կետ): Մինչդեռ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանում չկա: Օրենքի մի քանի հոդվածների համակարգային վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ուսումնադաստիարակչական գործառույթը բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողների կողմից իրականացվող այն գործառույթն է, որի նպատակն է սովորողների մեջ պատշաճ վարքի ու վարվելակերպի, քաղաքացիական դիրքորոշման, հայրենասիրության ձևավորումը, սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, 28.04.2022 թ. թիվ ԱՐԴ/3713/02/20 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ եզրույթին, նշել է, որ ««ուսումնադաստիարակչական գործառույթներ» իրականացնող կարող է համարվել այն անձը, ով միաժամանակ՝ համալիր կերպով, իրականացնում է ինչպես ուսումնական, այնպես էլ՝ դաստիարակչական գործառույթներ»:

Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված չէ, թե ինչպիսի արարքներն են նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով համարվում ուսումնադաստիարակչական գործառույթները շարունակելու հետ անհամատեղելի:

Անդրադառնալով այս հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Աստղիկ Մխիթարյանն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի* գործով կայացրած որոշմամբ նշել է, որ ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողի արարքները պետք է հանդիսանան այնպիսին, որ խաթարեն այդ գործառույթների էությունը և նպատակը՝ վտանգելով կամ արգելք հանդիսանալով դրանց

պատշաճ իրագործմանը, կամ հակասեն բարոյականության համընդհանուր նորմերին:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ օրենսդրի այդպիսի մոտեցումը տրամաբանորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ ներքին կարգապահական կանոններով չեն կարող սահմանվել այն բոլոր պահանջները և սահմանափակումները, որոնք պետք է պահպանի ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը: Այդպիսի պահանջները բխում են տվյալ աշխատանքի բնույթից և դրա հասարակական նշանակությունից[1]:

Սակայն, մեր դիտարկմամբ, իրավական որոշակիության, ինչպես նաև գործատուի հայեցողության բացառման տեսանկյունից անհրաժեշտ է ոլորտային օրենսդրությամբ հստակ սահմանել «ուսումնադաստիարակչական գործառույթ» եզրույթը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործատուն ինքն իրավասու է գնահատել, թե որքանով է աշխատողի արարքը խոչընդոտում նրա կողմից ուսումնադաստիարակչական գործառույթները, այդ թվում սովորողների մեջ պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում ձևավորելու պարտականությունները պատշաճ իրականացնելուն: Հետևաբար, **եթե աշխատողի արարքն անհամատեղելի է ուսումնադաստիարակչական գործառույթների պատշաճ իրականացման հետ, գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով անգամ այն դեպքում, երբ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարքը չի դրսևորվել աշխատանքային կարգապահության սահմանված կանոնների խախտմամբ:**

Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքերից **երրորդը** վերաբերում է *պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին մրցակից կազմակերպությանը հայտնելուն:* Օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված արարքի կատարման արդյունքում աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծելիս, պետք է դիտարկել, թե արդյո՞ք աշխատողի հրապարակած տեղեկատվությունը համապատասխանում է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիք հասկացությունների՝ օրենսդրությամբ սահմանված բնորոշումներին: Մասնա-

[1] Վճռաբեկ դատարանի 2023 թ. թիվ ԵԿԴ/4054/02/16 որոշում:

վորապես, «Պետական գաղտնիքի մասին» 2023 թվականի մարտի 1-ին ընդունված ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետական գաղտնիքը (պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ)՝ Հայաստանի Հանրապետության ռազմական կամ արտաքին հարաբերությունների կամ տնտեսության, գիտության և տեխնիկայի կամ հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, արտադրանքը կամ նյութերը, որոնք, սույն օրենքի համաձայն, պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին: Հարկ է նշել, որ ի տարբերություն 1996 թ. ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի՝ որում սահմանվում էր «ծառայողական գաղտնիք» եզրույթը, 2023 թվականին ընդունված «Պետական գաղտնիքի մասին» նոր օրենքով սահմանվում է «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» եզրույթը, մասնավորապես օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է՝ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունը Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց, պաշտոնատար անձանց գործունեությանն առնչվող, սույն օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին չդասվող տեղեկություններն են, արտադրանքը կամ նյութերը, որոնք պարունակում են պետական գաղտնիքի տարրեր, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը, և որոնց տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական և տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով տրված է ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության սահմանումը, ըստ որի, տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով:

Հատկանշական է, որ տեղեկատվությունը որպես ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք համարելու համար, օրենսդիրը որպես անհրաժեշտ նախապայման է դիտարկում այդ տեղեկատվությունը տիրապետողի կողմից դրա գաղտնիության պահպանման համար միջոցներ ձեռնարկելը: Այսինքն՝ գործատուն պետք է իր հերթին կատարի անհրաժեշտ գործողություններ այդ տեղեկատվության գաղտնիությունը երրորդ անձանցից պահպանելու համար, այլապես, այն լայն շրջանակներին հասու լինելու դեպքում, չի կարող համարվել ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք, և աշխատողի կողմից այդ տեղեկատվությունն այլ անձանց հայտնելը բավարար հիմք չի հանդիսանա աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառաբանությամբ աշխատանքից ազատելու համար:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, 28.03.2019 թ. թիվ ԵԿԴ/4054/02/16 քաղաքացիական գործի շրջանակներում վերլուծելով Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենսգրքի այլ նորմերը, մասնավորապես՝ աշխատանքային կարգապահության խախտմանը, կարգապահական պատասխանատվության կիրառմանը և կարգապահական տույժերի տեսակներին վերաբերող իրավակարգավորումները, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ «... աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում օրենսդրի կողմից գործատուի համար սահմանվել է աշխատողի նկատմամբ ներգործության կիրառման երկու տարբերակ՝

1) գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում՝ առանց աշխատողին նախապես ծանուցելու պարտականության, կամ

2) կարգապահական պատասխանատվության կիրառում՝ մասնավորապես որպես կարգապահական տույժ կիրառելով աշխատանքային պայմանագրի լուծումը, որի դեպքում գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական տույժի կիրառման ընթացակարգը»:

Այսպիսով, նման այլընտրանք նախատեսելը նպատակ է հետապնդում հավասարակշռել աշխատողի և գործատուի շահերը, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ անհապաղ աշխատանքային պայմանագիրը չլուծելը կարող է լրացուցիչ վնասներ հասցնել գործատուին (օրինակ՝ եթե աշխատողը հրապարակել է սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն):

4. Եզրակացություններ

Այսպիսով, Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում և Օրենսգրքի 121-րդ հոդվածում առկա դրույթների վերլուծությամբ հանգում ենք հետևյալին, որ օրենսդիրը բավարար երաշխիքներ է սահմանել աշխատողների իրավունքների պաշտպանության առումով՝ կապված գործատուի նախաձեռնությամբ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում աշխատանքային պայմանագրի լուծման հետ, մասնավորապես՝

1. հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության պահանջ՝ ա) աշխատանքային պարտականություններն առանց հարգելի պատճառի չկատարելը, բ) աշխատանքային պարտականությունները պարբերաբար չկատարելը, գ) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը, աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողի՝ առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ ունենալը:

2. Գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները, մասնավորապես՝ 1) աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ, 2) այդ բացատրությունը պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը, տվյալ դեպքում՝ մինչ աշխատանքային պայմանագրի լուծումը, 3) առանց խախտման մասին աշխատողի կողմից տրված գրավոր բացատրության, կարգապահական տույժը կարող է կիրառվել, տվյալ դեպքում՝ աշխատանքային պայմանագիրը լուծվել, միայն այն դեպքում, երբ գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն,

3. Գործատուն պետք է հաշվի առնի կատարված խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Օրենսգրքի 113-րդ հոդվածի 6) կետով նախատեսված հիմքով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու առնչությամբ Օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված լրացուցիչ իրավակարգավորումները նկարագրում են այդ դեպքերը բնութագրող հատկանիշները, դրսևորումները կամ պայմանները և միտված են առավել հստակեցնելու դրանցից յուրաքանչյուրի պարագայում աշխատանքային պայմանագրի

լուծման առանձնահատկությունները: Սակայն առկա իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, առկա են իրավական բացեր, որոնք կարգավորման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես՝ սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրելով դատական պրակտիկան, համապատասխան օրենսդրական կարգավորումները՝ իրավական որոշակիության, ինչպես նաև գործատուի հայեցողության բացառման տեսանկյունից առաջարկում ենք ոլորտային օրենսդրությամբ հստակ սահմանել «ուսումնադաստիարակչական գործառույթ» եզրույթը: Մեր կողմից առաջարկվում է նշված եզրույթն ամրագրել հետևյալ կերպ՝ «ուսումնադաստիարակչական գործառույթը ուսումնական և դաստիարակչական գործառույթներ իրականացնող կազմակերպության աշխատողների կողմից իրականացվող այն գործառույթներն են, որոնք ուղղված են ուսումնական և դաստիարակչական գործընթացների մշակմանը, կազմակերպմանը, իրականացմանը և համակարգմանը, սովորողների մոտ պատշաճ վարքի ու վարվելակերպի, քաղաքացիական դիրքորոշման, հայրենասիրության ձևավորմանը, սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունված 09.11.2004 թ.՝ վերջին փոփոխություններով):
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.12.2012 թ. թիվ ԿԴ/0125/02/11 որոշում:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.10.2013 թ. թիվ ԵԿԴ/2600/02/10 որոշում:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.03.2019 թ. թիվ ԵԿԴ/4054/02/16 որոշում:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի 10.07.2020 թ. թիվ ՇԴ/2860/02/18 որոշում:
6. ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.10.2021 թ. թիվ ԵԱՔԴ/3661/02/17 որոշում:
7. **Սարգսյան Ժ., Հայրապետյան Ա.,** «Աշխատանքային օրենսգրքի մեկնաբանություններ»: Եր., «Պրոքս» ՍՊԸ , Մաս 1, 248 էջ:

ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ПРЕКРАЩЕНИЯ ТРУДОВОГО ДОГОВОРА ПО ИНИЦИАТИВЕ РАБОТОДАТЕЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Аннотация

Устанавливая основания для прекращения трудовых отношений, законодатель установил так же особенности исполнения каждого из них, которые являются важной гарантией защиты трудовых прав работодателя и работника.

Цель настоящей статьи - показать особенности прекращения трудового договора по инициативе работодателя в случае периодического невыполнения без уважительной причины обязанностей, отведенных работнику трудовым договором или правилами внутреннего распорядка, или в случае утраты доверия к работнику.

Дополнительное правовое регулирование, предусмотренное другими статьями трудового кодекса в связи с прекращением трудового договора по инициативе работодателя, описывают характеризующие подобные случаи признаки, проявления или условия и направлены на наиболее точное описание особенностей прекращения трудового договора в случае каждого из них. Но анализ имеющегося правового регулирования показывает, что тем не менее имеются пробелы в праве, которые нуждаются в урегулировании. В частности, изучив в рамках настоящего исследования судебную практику, соответствующее законодательное регулирование, с точки зрения правовой определенности, а так же исключения инициативы работодателя, предлагается отраслевым законодательством четко определить термин “учебно-воспитательная функция”.

Ключевые слова: трудовые отношения, трудовой договор, прекращение трудового договора, трудовой кодекс, работник, работодатель, судебная практика.

PECULIARITIES OF THE LEGAL REGULATION OF TERMINATING AN EMPLOYMENT CONTRACT AT THE EMPLOYER'S INITIATIVE IN THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

By defining the grounds for the termination of employment relations, the legislator has also established the specific implementation procedures for each of them, which are important safeguards for protecting the labor rights of both the employer and the employee.

The purpose of this article is to highlight the specific features of terminating a labor contract at the initiative of the employer in cases where the employee regularly fails to fulfil the obligations reserved for him or her by the labor contract or the internal regulatory rules, with no good reason, or in cases where the employer has lost confidence in the employee.

The additional legal regulations provided by other articles of the Labor Code regarding the termination of a labor contract at the initiative of the employer on the above-mentioned grounds describe the characteristics, manifestations, or conditions that define such cases and aim to further clarify the specific procedures for terminating the labor contract in each instance. However, analysis of the existing legal framework reveals that there are still legal gaps that require regulation.

Specifically, within the scope of this study, by analyzing judicial practice and relevant legislative regulations, and considering the perspectives of legal certainty and the limitation of employer discretion, it is proposed that the term "educational-pedagogical function" be explicitly defined in sector-specific legislation.

Keywords: labor/employment relations, labor contract, termination of labor contract, Labor Code, employee, employer, judicial practice.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 12.06.2025 թ., տրվել է գրախոսության 12.06.2025 թ., ընդունվել է տպագրության 15.06.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.2-147

ՍԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամփոփագիր

Իրավունքի տեսության մեջ ավանդաբար իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոններ են համարում իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերության որոնումը, իրավական կարգավորման միասեռությունը, իրավական կարգավորման ամբողջականությունը, իրավունքի ճյուղի ճիշտ ընտրությունը, իրավական ձևի ընտրությունը, իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, որոնք որպես իրավական ակտերի մշակման, ձևակերպման, խմբագրման գործընթացին ուղղված կոնկրետ պահանջներ կոչված են ապահովելու իրավական ակտերի հստակությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը և կիրարկելիությունը: Սակայն իրավաբանական տեխնիկայի բովանդակային բաղադրիչները պետք է ապահովեն նաև իրավունքի պահանջների (կամ իրավունքի գերակայության համաիրավական սկզբունքի պահանջների) կենսագործումը:

Հետևաբար, իրավական օրինականության սկզբունքի հայեցակարգի դիրքերից ելնելով՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությանը ներկայացվող և իրավունքի գերակայությունն ապահովող պահանջներից են նաև՝ մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան. մարդու ազատությունը, իրավահավասարությունը և արժանապատվությունն իրավական կարգավորման նպատակն են. մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են.

մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է. պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք. մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք հարգվում ու պաշտպանվում է պետության կողմից. բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև. հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել պետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները. Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով ու միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքները և ազատությունները. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ. օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին. իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով. վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը և այլն:

Հիմնաբառեր. իրավաբանական տեխնիկա, կառուցվածք, բովանդակային կանոն, իրավունքի գերակայություն, իրավական օրինականություն, պահանջներ, սկզբունքներ:

Գործիքները, որոնք իրավաբաններն օգտագործում են ըստ իրենց մասնագիտության բնույթի, բավականին շատ են: Դրանք անհրաժեշտ է կիրառել՝ առաջնորդվելով որոշակի կանոններով, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր նպատակին հասնել իրավական գործունեության ընթացքում: Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող կանոնները վերաբերում են իրավական դրույթների ձևակերպման տրամաբանական կառուցվածքին, բովանդակության հստակությանը և իրացման արդյունավետությանը:

Ըստ Տ.Վ. Կաշանինայի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը բնույթով և ձևով տարբեր՝ իրավաբանական աշխատանք կատարելու կանոն-

ների ամբողջություն է[1]: Այս բնորոշման համաձայն հանրաճանաչ է այն մոտեցումը, որ իրավաբանական տեխնիկայի կանոնները իրավական գիտության և պրակտիկայի կողմից առաջադրված իրավական ակտերի մշակման, ձևակերպման, խմբագրման գործընթացին ուղղված կոնկրետ պահանջներ են: Դրանք ապահովում են իրավական ակտերի հստակությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը և կիրարկելիությունը:

Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող կանոնների դասակարգման վերաբերյալ արտահայտվել են մի շարք տեսակետներ: Այսպես, Ս. Ս. Ալեքսեևը բոլոր իրավական գործիքները բաժանում է երկու խմբի (օրենսդրի (կամ անհատական ակտի սուբյեկտի) կամքի արտահայտման միջոցներ և հնարքներ, իրավական ակտերի՝ որպես փաստաթղթերի արտաքին ձևին վերաբերող միջոցներ և հնարքներ)[2], Ա.Ֆ. Չերդանցևն առաջարկում է իրավաբանական տեխնիկայի կանոնները բաժանել երեք խմբի (փաստաթղթերի արտաքին ձևավորմանը վերաբերվող կանոններ, ակտերի բովանդակությանը և կառուցվածքին վերաբերվող կանոններ, իրավական փաստաթղթերի շարադրման կանոններ և հնարքներ (ըստ հեղինակի՝ լեզվական կանոններ))[3], Ն.Ա. Վլասենկոն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի ընդհանուր կանոնների (պահանջների) հինգ խումբ (ռեկվիզիտային պահանջներ (ըստ հեղինակի՝ ներքին ձևակերպման կանոններ), բովանդակային կանոններ, կառուցվածքային կանոններ, լեզվական պահանջներ, տրամաբանական պահանջներ)[4]:

Տ.Վ. Կաշանինան առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի կանոնների (ըստ հեղինակի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը կազմող բաղադրատարրերի) վեց խումբ՝ բովանդակային կանոններ[5],

[1] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 111:

[2] Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. Т. 2. – М., 1982, էջ 272:

[3] Տե՛ս **Черданцев А.Ф.** Теория государства и права. – М., 1999, էջ 371:

[4] Տե՛ս **Власенко Н.А.** Правила законодательной техники в нормативных правовых актах субъектов Российской Федерации / В кн.: Законодательная техника современной России: состояние, проблемы, совершенствование. Т. 1. – Н. Новгород, 2001, 176-183 էջեր:

[5] Տ.Վ. Կաշանինայի կարծիքով՝ սրանք այն կանոններն են, որոնք հնարավորություն են տալիս իրավաբանական գործողությունների կատարումը փոխկապակցել այն իրավիճակի հետ, որում իրավաբանը պետք է աշխատի: Դա պայմանավորված է նրանով, որ իրավաբանի մասնագիտությունը խիստ սոցիալական է: Այն ուղղված է մարդկանց և իրականացվում է նրանց միջոցով (ներգրավվածությամբ): Մի խոսքով, ցանկացած իրավական գործունեություն պետք է լինի սոցիալապես համարժեք: Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 112:

տրամաբանական կանոններ, կառուցվածքային կանոններ, լեզվական կանոններ, ձևական (ռեկվիզիտային) կանոններ և ընթացակարգային կանոններ[1]:

Հիմնախնդրին նույն կերպ է մոտեցել Վ.Ա. Տոմինը[2]: Իրավաբանական տեխնիկայի բովանդակությունը հանդիսացող գործիքակազմը նա դասակարգում է վեց խմբերի՝ բովանդակային կանոններ (սրանք այն կանոններն են, որոնք հնարավորություն են տալիս իրավաբանական գործողությունների կատարումը փոխկապակցել այն իրավիճակի հետ, որում իրավաբանը պետք է աշխատի), տրամաբանական կանոններ (իրավաբանի կողմից մասնագիտական աշխատանք կատարելու գործընթացում նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհը տրամաբանական կանոնների պահպանումն է ինչպես ընդհանուր աշխատանքային պլանի կառուցման, այնպես էլ դրա առանձին փուլերի կատարման ժամանակ), կառուցվածքային կանոններ (դրանց իրացումը նպաստում է աշխատանքի ամբողջականության ապահովմանը, որն արտաքուստ արտահայտվում է իրավական փաստաթղթերի կառուցվածքում), լեզվական կանոններ (սրանք հատկապես վերաբերում է օրենսդրությանը, սակայն պակաս կարևոր չէ լեզվական կանոնների պահպանումն իրավունքի նորմերի իրացման գործընթացում, օրինակ՝ պայմանագիր կազմելիս, դատարանի որոշումներ ու դատավճիռներ կազմելիս), ձևական (ռեկվիզիտային) կանոններ (գործնականում իրականացվում են իրավական հետևանքներ առաջացնող գործողություններ և կազմվում են իրավաբանական փաստաթղթեր, որոնք երբեմն կարող են էապես փոխել ոչ միայն իրավունքի սուբյեկտի իրավական կարգավիճակը, այլև նրա ճակատագիրը, ուստի չափազանց կարևոր է իմանալ, թե ով է կազմել իրավաբանական փաստաթուղթը, որը ձևակերպում է իրավական որևէ գործողություն) և ընթացակարգային կանոններ (ընթացակարգին վերաբերող իրավաբանական տեխնիկայի կանոնների պահպանումն օգնում է կանխարգելել չարաշահումներն իրավական նշանակություն ունեցող գործողությունների ընթացքում առաջին հերթին պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից)[3]:

[1] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд., - М., 2011, էջ 112:

[2] Ըստ Վ.Ա. Տոմինի՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակությունն իրավաբանական աշխատանք իրականացնելու բնույթով և ձևով տարբեր կանոնների արտահայտություն է: Տե՛ս **Томин В.А.** Юридическая техника: учебное пособие. - Санкт-Петербург, 2015, էջ 20:

[3] Տե՛ս **Томин В.А.** նշվ. աշխ., 20-21 էջեր:

Վ.Ա. Տոմինն առանձնացնում է իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոնների հետևյալ շրջանակը՝ իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերությունների որոնումը, իրավական կարգավորման միասեռությունը, իրավական կարգավորման ամբողջականությունը[1]: Նրա կարծիքով՝ իրավական կարգավորման ամբողջականությանը հասնելու միջոցներ են հանդիսանում իրավունքի ճյուղի, իրավական ձևի ճիշտ ընտությունը և իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին:

Տ.Վ. Կաշանինայի կարծիքով՝ իրավաբանական տեխնիկայի բովանդակային կանոններն են (ըստ հեղինակի՝ սոցիալական ադեկվատության հասնելու կանոններ)՝ իրավական կարգավորման ոլորտում հասարակական հարաբերության որոնում, իրավական կարգավորման միասեռություն, իրավական կարգավորման ամբողջականություն, իրավունքի ճյուղի ճիշտ ընտրություն, իրավական ձևի ընտրություն, իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովում միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին[2]:

Ակնհայտ է, որ նշված երկու հեղինակների մոտ բովանդակային կանոնների շրջանակը գրեթե նույնական է, միայն այն տարբերությամբ, որ Վ.Ա. Տոմինն իրավունքի ճյուղի, իրավական ձևի ճիշտ ընտրությունը և իրավական փաստաթղթերի համապատասխանության ապահովումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին ընդգրկում է մեկ ընդհանուր կանոնի՝ իրավական կարգավորման ամբողջականության մեջ:

Իրավական կարգավորման ոլորտն այն հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք օբյեկտիվորեն պետք է կարգավորված լինեն իրավունքի կողմից: Մասնագիտական իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ իրավական կարգավորման ոլորտն ընդգրկում է առավել կարևոր, կայուն այնպիսի հարաբերություններ սոցիալական ընդհանրությունների, առանձին անհատների միջև, որոնք կարող են կարգավորվել իրավունքով և գիտակցվել մարդկանց կողմից՝ ձևավորելով վերջիններիս կամքն ու վարքագիծը:

Ընդհանուր տեսակետի համաձայն՝ իրավական կարգավորման ոլորտ մտնում են այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են,

[1] Տե՛ս **Томин В.А.** նշվ. աշխ., 21-22 էջեր:

[2] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, 114-122 էջեր:

պետք է և կարգավորված են, ինչպես նաև նրանք, որոնք կարող են, պետք է, սակայն կարգավորված չեն: Հարաբերությունները, որոնք չպետք է կարգավորվեն և կարգավորված չեն օրենքով, չեն մտնում իրավական կարգավորման ոլորտ:

Ն.Ա. Պյանովը գտնում է, որ իրավական կարգավորման ոլորտն ամենաընդհանուր կերպով ընդգրկում է այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք՝ 1) կայուն են, 2) կամային են, 3) ենթարկվում են արտաքին վերահսկողության, 4) առավել կարևոր են պետության, հասարակության և առանձին անհատների համար[1]:

Տ.Վ. Կաշանինան առանձնացնում է իրավական կարգավորման ոլորտ մտնող հասարակական հարաբերությունների հինգ հատկանիշներ՝

1. կրում են կամային բնույթ և սուբյեկտներին ընձեռեն վարքագծի կամ գործողության ընտրության հնարավորություն,
2. ենթարկվում են արտաքին վերահսկողության,
3. դրանց խախտման դեպքում հնարավոր է կիրառել պետական հարկադրանք,
4. արտահայտում են հասարակության զարգացման պահանջմունքները,
5. դրանց իրացման համար անհրաժեշտ են նյութական և այլ միջոցներ[2]:

Թվարկված հատկանիշներից անգամ մեկի բացակայությունը կհանգեցնի իրավունքի գործողության անարդյունավետության:

Իրավաբանական տեխնիկայի բովանդակային հաջորդ կանոնն **իրավական կարգավորման միասեռությունն է**: Խոսքն այն մասին է, որ իրավական փաստաթուղթը պետք է սահմաններ ունենա, հակառակ դեպքում կնվազի դրա արդյունավետությունը: Նորմատիվ ակտը պետք է հաշվարկված լինի միասեռ հասարակական հարաբերությունների կարգավորման վրա: Միևնույն ակտում տարբեր տիպի և սեռի հարաբերությունների կարգավորումը խոսում է արհեստավարժության պակասի մասին: Նույնը վերաբերում է նաև իրավակիրառ ակտերին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 9-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

[1] Տե՛ս **Пьянов Н.А.** Государственное регулирование и его предмет / Н.А. Пьянов // Сибирский юридический вестник. – № 1 (52). – 2011. 20–24 էջեր:

[2] Տե՛ս **Кашанина Т.В.** Юридическая техника: учебник. 2-е изд. - М., 2011, էջ 115:

Այս առումով պետք է համաձայնվել Գ. Դանիելյանի այն տեսակետի հետ, որ գործնականում շատ դժվար է կանխորոշել նորմատիվ իրավական ակտի կարգավորման հստակ շրջանակները, ավելին՝ գրեթե հնարավոր չէ առանձնացնել որևէ օրենսդրական ակտ, որում անվիճելիորեն ներառված լինեն միայն տվյալ իրավական ակտի կարգավորման առարկային վերաբերող հարաբերությունները: Պարզապես հաճախ «կարգավորման առարկայի շրջանակ» հասկացության մեջ ներառվում են այնպիսի նորմեր, որոնք առավել ամբողջական ու կանխատեսելի են դարձնում իրավական կարգավորումը, ինչն իրավաչափ է[1]:

Հիշյալ սկզբունքից ոչ իրավաչափ շեղում կարող է համարվել այն մոտեցումը, երբ միևնույն նորմատիվ իրավական ակտում անհարկի ներառվում են միմյանց հետ որևէ անմիջական առնչություն չունեցող իրավական նորմեր: Այսպիսի կարգավորումը ոչ միայն պարզապես հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին, այլև գործնականում բարդացնում է իրավակիրառ պրակտիկան, քանզի դժվար է լինում կիրառման համար փնտրելու տվյալ հարաբերության կարգավորման համար անհրաժեշտ իրավական նորմը[2]:

Իրավական կարգավորման ամբողջականությունը, որպես իրավաբանական տեխնիկայի ընդհանուր կանոն, վերաբերում է ինչպես իրավաստեղծագործությանը, այնպես էլ իրավունքի կենսագործմանն ու կիրառմանը:

Երբ հասարակական հարաբերությունը կարգավորված չէ նորմատիվ իրավական ակտերով, սակայն կարող էր և պետք է կարգավորված լիներ, ընդունված է փաստել իրավունքի բացի առկայությունը, երբ խոսքը վերաբերում է իրավակիրառմանը, ապա՝ իրավիճակի ոչ ամբողջական կարգավորվածության մասին:

Լ.Ա. Մորոզովան իրավունքի բացերի տակ հասկանում է գործող օրենսդրության մեջ այն նորմի բացակայությունը, որին համապատասխան իրավական կարգավորում պահանջող խնդիրը պետք է լուծվի[3]: Վ.Վ. Լազարևի կարծիքով՝ իրավունքի բաց է համարվում այն նորմատիվ կարգադրագրերի լրիվ կամ մասնակի բացակայությունը, որոնց

[1] Տե՛ս **Դանիելյան Գ.** Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր., 2021. 138-139 էջեր:

[2] Տե՛ս **Դանիելյան Գ.** նշվ. աշխ., էջ 139:

[3] Տե՛ս **Морозова Л.А.** Теория государства и права: учебник. - М.: Норма: ИНФРА-М, 2017, էջ 331:

անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ և վեճերի լուծման գործնական անհրաժեշտությամբ, հիմնական սկզբունքներով, քաղաքականությամբ, գործող օրենսդրության իմաստով ու բովանդակությամբ, ինչպես նաև իրավական ներգործության ոլորտում կենսական փաստերի կարգավորմանն ուղղված պետական կամքի այլ դրսևորումներով[1]:

Քանի դեռ իրավական բացը վերացված չէ իրավաստեղծ մարմնի կողմից, անհրաժեշտ է իրավակիրառ գործընթացում այն ժամանակավորապես հաղթահարել: Օրենսդրությամբ նախատեսված են հաղթահարման երկու եղանակներ՝ օրենքի անալոգիա, այսինքն՝ համանման հարաբերություն կարգավորող նորմի հիման վրա որոշման կայացում, և իրավունքի անալոգիա, երբ կիրառվում են իրավունքի համընդհանուր, ճյուղային կամ ինստիտուցիոնալ սկզբունքները:

Իրավունքի բացերի հիմնախնդրին անդրադարձած հեղինակներից Ա. Ասատրյանն իրավացիորեն նշում է, որ դրանց լրացման[2] լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է: Սակայն, իրավունքի կիրառմանը ներկայացվող պահանջներից մեկն էլ օպերատիվությունն է: Իրավաստեղծագործության ճանապարհով բացի վերացումը շատ դանդաղ գործընթաց է, որը նվազեցնում է իրավակիրառման արդյունավետությունը:

[1] Տե՛ս **Лазарев В.В.** Пробелы в праве и пути их устранения: монография. Репр. изд. - М.: Норма: ИНФРА-М, 2021, էջ 37:

[2] Ըստ Ա. Ասատրյանի՝ պետք է ամբողջությամբ բացառել «բացը վերացնելու», «բացը լրացնելու» տերմինները նույնացնելու հնարավորությունը: Հեղինակի կարծիքով, այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանրապես բացերը վերացնելուն, այլ ուղղակիորեն դատահրավական համակարգի ունեցած դերին այդ բացերը լրացնելու գործընթացում, պետք է օգտագործել «բացերը լրացնել» տերմինը: «Բացերը լրացնել» ասելով նկատի է առնվում իրավասու պետական մարմնի (դատարանի) կողմից վիճահարույց իրավահարաբերությունների վերաբերյալ հատուկ որոշման ընդունումը՝ օրենսդրության կամ իրավունքի բացը բացահայտելու պայմաններում: «Բացերի վերացում» հասկացությունը, որը ենթադրում է դրանց ամբողջական վերացում իրավունքի և օրենքի համակարգում, պետք է ճանաչվի որպես առավել համարժեք այն գործառույթների համար, որոնք իրականացնում են իրավասու իրավաստեղծ մարմինները՝ օրենսդիր, գործադիր և այլն: Բացերի վերացումը կատարվում է լրացումների միջոցով: Բացի լրացումը իրավաստեղծ մարմինների լիազորությունն է և իրավունքի չբավականացնող նորմի մշակումը: Ինչ վերաբերում է «բացերի հաղթահարում» տերմինին, ապա այն ունի իր կիրառման ոլորտը. սա իրավասու պետական մարմինների գործունեությունն է (գրանցման մարմիններ, գերատեսչական կոմիտեներ և այլն), որոնք ստիպված են լինում հաճախ իրենց գործունեության ընթացքում լուծել այն հարցը, թե ինչպես պետք է վարվել իրավական կարգավորման բացերի հայտնաբերման դեպքում (տե՛ս **Ասատրյան Ա.** Իրավունքի բացերի լրացման, վերացման հասկացությունը և դրանց հաղթահարման եղանակները., Բանբեր Երևանի Համալսարանի. Իրավագիտություն. - 2023. № 1., էջ 3):

Քանի դեռ իրավունքի բացը իրավաստեղծ մարմնի կողմից չի վերացված, իրավակիրառ գործունեության ընթացքում ժամանակավոր ծագում է դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Իրավունքի կիրառման օպերատիվությունն ու արդյունավետությունն ապահովելուն է ուղղված հենց իրավաբանական անալոգիայի միջոցով իրավունքի բացի հաղթահարման՝ օրենքներով նախատեսված հնարավորությունը[1]:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված է կարգավորում առ այն, որ կոլեկտիվ աշխատանքային վեճերի պարագայում դատական պաշտպանության առարկա կարող է հանդիսանալ միայն կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ վեճը, ինչի արդյունքում չի նախատեսվել մինչ պայմանագրի կնքումը ձևավորված օրինական շահերի դատական պաշտպանության հնարավորություն:

Սույն աշխատանքով ներկայացվել է առաջարկ առ այն, որ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվ աշխատանքային այն վեճերով, որոնք վերաբերում են կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում դեռևս գոյություն չունեցող իրավունքների ձևավորմանը, այսինքն՝ օրինական շահերին, նույնպես դատական պաշտպանության իրավունք տրամադրել (օրինակ՝ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի

կնքման կամ փոփոխման հետ կապված տարաձայնություններ)՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, տվյալ տարաձայնության չլուծման դեպքում գործադուլի հայտարարման պարագայում առաջացող իրավական պատնեշի հանգամանքը:

Հիմնաբառեր. կոլեկտիվ աշխատանքային իրավունքներ, օրինական շահ, կոլեկտիվ աշխատանքային վեճ, դատական պաշտպանություն, գործադուլ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ընդունվելով՝ աշխատողները ձեռք են բերում ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ աշխատանքային իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանվում են սոցիալական գործընկերության տարբեր մակարդակներում կնքվող կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերով:

Այնուամենայնիվ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի կնքման, կատարման, փոփոխման և լուծման գործընթացները միշտ չէ, որ հարթ են ընթանում, և առաջանում են կոլեկտիվ աշխատանքային տարաձայնություններ: Նման վեճերի խաղաղ, արագ, արդար և քիչ ծախսատար եղանակով կանխարգելումը և լուծումը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի սոցիալական խռովությունների առավելագույնս կանխարգելման և աշխատավայրում ներդաշնակ հարաբերությունների ապահովման: Ըստ այդմ՝ վերջին տարիներին տարբեր պետությունների կառավարությունների մոտ աճում է պահանջարկը՝ ստանալու Աշխատանքի համաշխարհային կազմակերպության կողմից աշխատանքային վեճերի խաղաղ կարգավորման համար նախատեսված նորաստեղծ մարմինների ինստիտուցիոնալ և կարողությունների զարգացմանն ուղղված տեխնիկական աջակցություն:

Սույն հետազոտությունը նվիրված է կոլեկտիվ աշխատանքային վեճերի դատական պաշտպանության հիմնախնդիրներին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման տարբեր գործիքակազմերի մեջ առանձնանում է դատական պաշտպանության իրավունքը, սակայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կոլեկտիվ աշխատանքային վեճերից դատական պաշտպանության ենթակա է միայն կոլեկտիվ պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ տարաձայնությունը:

Հետազոտության կատարման համար հիմք են հանդիսացել գիտական ուսումնասիրության որոշակի ընդհանուր մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկական, տրամաբանական, քննադատական, վերլուծական, համակարգային-կառուցվածքային մեթոդները: Բացի վերոնշյալից՝ հետազոտության կատարման ժամանակ կիրառվել են գիտական ուսումնասիրության մասնավոր մեթոդները՝ ձևական-տրամաբանական, իրավական նորմերի քերականական, տրամաբանական, համակարգային մեկնաբանման մեթոդները: Հետազոտությունում լայնորեն կիրառվել է համեմատական-իրավական մեթոդը:

Կոլեկտիվ հարաբերությունն արհմիությունների և գործատուների (գործատուների միությունների) միջև աշխատանքային կոլեկտիվ իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, դրանք իրականացնելու և աշխատանքային կոլեկտիվ իրավունքները պաշտպանելուն ուղղված գործընթաց է, որի հիմքը կամ վերջնարդյունքը կոլեկտիվ աշխատանքային պայմանագիրն է:

Կոլեկտիվ հարաբերությունները հիմնված են, ի թիվս այլնի, կոլեկտիվ բանակցությունների իրավունքի ճանաչման վրա, որը միջազգային հանրության կողմից ճանաչված, մի շարք միջազգային պայմանագրերում տեղ գտած և ներպետական օրենսդրություններում իմպլեմենտացված սկզբունք է: Կոլեկտիվ բանակցությունն այս համատեքստում կարևոր մեխանիզմ է, որն ապահովում է աշխատողների և գործատուների կոլեկտիվ իրավունքների, շահերի և պարտականությունների սահմանումը և պաշտպանությունը՝ նպաստելով աշխատանքային հարաբերությունների կայուն և կառուցողական զարգացմանը:

Կոլեկտիվ բանակցությունը աշխատողների ներկայացուցիչների և գործատուների կամ արհեստակցական միության և գործատուների միության միջև ընթացող համաձայնեցված գործընթաց է, որի միջոցով կողմերը փորձում են ձեռք բերել համաձայնություն աշխատանքային պայմանների, վարձատրության, սոցիալական ապահովության, առողջապահական և իրենց շահերի վերաբերյալ այլ հարցերի շուրջ, ինչպես նաև լուծել կոլեկտիվ աշխատանքային վեճերը՝ կոլեկտիվ պայմանագրի կնքման կամ հաշտեցման միջոցով: Կոլեկտիվ բանակցությունները հիմնականում ուղղված են կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների ձևավորմանը:

Վերոնշյալ մեխանիզմի կարևորությանն անդրադարձ է կատարվել միջազգային մի շարք փաստաթղթերով, օրինակ՝ «Միավորվելու և կոլեկտիվ

բանակցությունների իրավունքի մասին» 1949 թվականի համար 98 կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսված կարգավորման համաձայն՝ անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկվեն ազգային պայմաններին համապատասխան միջոցառումներ՝ խրախուսելու և խթանելու գործատուների կամ գործատուների կազմակերպությունների և աշխատողների կազմակերպությունների միջև կամավոր բանակցությունների մեխանիզմների լիարժեք զարգացումը և օգտագործումը կոլեկտիվ պայմանագրերի միջոցով աշխատանքի պայմանների կարգավորման նպատակով:

Այնուամենայնիվ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունները միշտ չէ, որ հարթ են ընթանում, որի արդյունքում առաջ են գալիս տարաձայնություններ ինչպես կոլեկտիվ պայմանագրի կնքման փուլում, այդպես էլ պայմանագրի պայմանների կատարման և պայմանագրի լուծման ու փոփոխման շրջանակներում, որպիսի տարաձայնությունները բնութագրվում են որպես կոլեկտիվ աշխատանքային վեճեր:

Միջազգային մի շարք փաստաթղթերում ամրագրված է այն մոտեցումը, որ կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման ընթացակարգերը պետք է մշակվեն այնպես, որ կոլեկտիվ բանակցությունները խթանվեն, և բանակցությունների ընթացքն այնպես իրականացվի, որ բանակցությունները պատնեշի չհանդիպեն և չմտնեն փակուղի: Դրա մասին է վկայում նաև «Կոլեկտիվ գործարքների մասին» 1981 թվականի թիվ 154 կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ե) կետում նշված դրույթը, ըստ որի՝ աշխատանքային վեճերի կարգավորման մարմիններն ու ընթացակարգերը պետք է ստեղծվեն այնպես, որ խթանեն կոլեկտիվ բանակցությունները:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը նույնպես սահմանել է ինչպես կոլեկտիվ աշխատանքային վեճ հասկացությունը, այդպես էլ նախատեսել է կարգավորումներ՝ ապահովելու կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման գործընթացի իրականացումը:

Այսպես. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը «կոլեկտիվ աշխատանքային վեճ» հասկացության ներքո ներառել է արհեստակցական միության և գործատուի կամ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունք ունեցող կողմերի ներկայացրած և չբավարարված պահանջների վերաբերյալ հետևյալ տարաձայնությունները՝

1) աշխատողների աշխատանքի սոցիալ-տնտեսական պայմանների սահմանման, փոփոխման առիթով բանակցությունների հետ կապված տարաձայնություններ,

2) կոլեկտիվ պայմանագրի կնքման կամ փոփոխման առիթով բանակցությունների հետ կապված տարաձայնություններ,

3) օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված պայմանների փոփոխման, դադարեցման կամ աշխատանքի նոր պայմանների սահմանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման և կատարման ընթացքում, այդ թվում՝ կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում առաջացած, սակայն կողմերի համաձայնությամբ նախօրոք չկարգավորված հարաբերությունների կամ կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում չկարգավորված հարաբերությունների հետ կապված տարաձայնություններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ կոլեկտիվ պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ կոլեկտիվ աշխատանքային վեճի դեպքում հաշտեցման հանձնաժողովում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերը տարաձայնությունների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց և վեճը չլուծվելու ու հաշտեցման գործընթացն ավարտելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող են դիմել դատարան:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում կոլեկտիվ աշխատանքային վեճերի շրջանակներում ներառվել են, ի թիվս այլնի, աշխատողների աշխատանքի սոցիալ-տնտեսական պայմանների սահմանման, փոփոխման առիթով բանակցությունների հետ կապված տարաձայնությունները, կոլեկտիվ պայմանագրի կնքման կամ փոփոխման առիթով բանակցությունների հետ կապված տարաձայնությունները, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրի կնքման, կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում չկարգավորված հարաբերությունների հետ կապված տարաձայնությունները, սակայն կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերը կարող են դիմել դատարան միայն կոլեկտիվ պայմանագրի դրույթների կատարման վերաբերյալ վեճը լուծելու նպատակով: Այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 64-րդ հոդվածում նշված մյուս բոլոր տարաձայնությունները դուրս են դատական պաշտպանության շրջանակից, որը հանգեցնում է սահմանադրորեն ամրագրված դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման:

Սույն խնդրի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ *արդյո՞ք կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի կնքման կամ փոփոխման հետ կապված տարա-*

ձայնությունների՝ որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի դատական պաշտպանության ենթակա չլինելը չի հանգեցնում դատական պաշտպանության իրավունքի ոչ արդարացված և անհամաչափ միջամտության՝ ստեղծելով միջազգային իրավակարգավորումների խախտման նախադրյալներ:

Կոլեկտիվ աշխատանքային վեճն այն տարաձայնությունն է, որը ծագում է կոլեկտիվ պայմանագրի կնքման բանակցությունների ընթացքում, կամ այն, որը կապված է պայմանագրի մեկնաբանման և կիրառման հետ[1]:

Կոլեկտիվ աշխատանքային վեճը կարող է ծագել կոլեկտիվ բանակցությունների փուլում և կրել «նախապայմանագրային բնույթ»: Համաձայն ընդունված միջազգային դասակարգման՝ նման վեճը համարվում է շահերի վերաբերյալ վեճ, այսինքն՝ վեճ, որը ծագում է շահերի բախումից, երբ կողմերից ոչ մեկը դեռ ձեռք չի բերել օրինական իրավունքներ: Երբեմն նման վեճերը կոչվում են տնտեսական՝ ընդգծելով դրանց ոչ իրավական բնույթը:

Կոլեկտիվ աշխատանքային վեճերի մեկ այլ կատեգորիա են իրավունքի վերաբերյալ վեճերը: Սրանք չլուծված տարաձայնություններ են՝ կապված կնքված կոլեկտիվ պայմանագրի, պայմանագրի պայմանների կատարման հետ[2]:

Շահերի վերաբերյալ վեճերի և իրավունքների վերաբերյալ վեճերի հասկացությունները տեղ են գտել շատ երկրների օրենսդրություններում: Որոշ երկրներում նրանց տրվում է նույն իրավական գնահատականը, սակայն ավելի տարածված է, որ տարբեր իրավակարգավորումներ են կիրառվում երկու դեպքերի նկատմամբ: Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման փորձագիտական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) արձանագրել է, որ տարբերակումը միշտ չէ, որ հեշտությամբ է իրականացվում, և որ գործնականում իրավունքների վերաբերյալ վեճերը կարող են վերածվել շահերի վերաբերյալ վեճերի[3]:

[1] Տե՛ս Professional conciliation in collective labour disputes: a practical guide / Kevin Foley, Maedhbh Cronin; ILO Decent Work Technical Support Team and Country Office for Central and Eastern Europe. - Budapest: ILO, 2015, 9-րդ էջ,
URL:https://www.ilo.org/sites/default/files/wcmsp5/groups/public/@europe/@ro-geneva/@sro-budapest/documents/publication/wcms_486213.pdf (18.05.2025 թվական):

[2] Տե՛ս **Куренной А.М.** Правовое регулирование коллективных трудовых споров. - М.: Юстицинформ, 2010, 21–22-րդ էջեր:

[3] Տե՛ս General Survey concerning labour relations and collective bargaining in the public service Report of the Committee of Experts, on the Application of Conventions and Recommendations (articles 19, 22 and 35 of the Constitution), 168-169-րդ էջեր:

Կարևոր է իրավունքների և շահերի վերաբերյալ վեճերի կարգավորման առանձին ընթացակարգեր սահմանել: Թեև հնարավոր է որպես իրավունքների հետ կապված վեճերի կարգավորման գործընթաց նախատեսել հաշտեցումը, սակայն կողմերը պետք է կարողանան դիմել դատարան, երբ դա ձախողվում է[1]:

Կոմիտեն նշում է, որ տարբեր համակարգերով նախատեսված են շահերի վերաբերյալ վեճերի կարգավորման հետևյալ մարմինները.

1.Կոլեկտիվ պայմանագրերով ստեղծված մարմիններ, միասնական մարմիններ և եռակողմ մարմիններ,

2. աշխատանքային կազմակերպությունների կողմից նշանակված հաշտարարներ և միջնորդներ,

3. (մասնագիտացված) աշխատանքային դատարաններ, սովորական դատարաններ, երկկողմանի կամ եռակողմ դատարաններ և վարչական դատարաններ (պետական ծառայողների հետ կապված վեճերի համար),

4. անկախ կամ չեզոք անձանցից կազմված մարմիններ,

5. կիսադատական, կիսակառավարչական մարմիններ (աշխատանքային հանձնաժողովներ),

6. աշխատանքի տեսչական ծառայություններ[2]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հարկ ենք համարում արձանագրել, որ միջազգային փաստաթղթերով ճանաչվում է, որ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերի կնքման կամ փոփոխման ընթացքում կարող են բանակցության կողմերի միջև ծագել վեճեր առավելապես իրենց օրինական շահերի վերաբերյալ, որոնք պետք է ենթակա լինեն, ի թիվս այլնի, դատական պաշտպանության: Սակայն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ինչպես արդեն իսկ նշվել է վերոգրյալում, առկա չէ այսպիսի վեճերով դատարան դիմելու հնարավորություն նախատեսող օրենսդրական կառուցակարգ:

Այս խնդրին անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման տարբերակներից մեկին՝ գործադուլին,

[1] Տե՛ս Professional conciliation in collective labour disputes: a practical guide / Kevin Foley, Maedhbh Cronin; ILO Decent Work Technical Support Team and Country Office for Central and Eastern Europe. - Budapest: ILO, 2015, 12-րդ էջ,
URL:https://www.ilo.org/sites/default/files/wcmsp5/groups/public/@europe/@ro-geneva/@sro-budapest/documents/publication/wcms_486213.pdf (18.05.2025 թվական):

[2] Տե՛ս General Survey concerning labour relations and collective bargaining in the public service Report of the Committee of Experts, on the Application of Conventions and Recommendations (articles 19, 22 and 35 of the Constitution), 173-րդ էջ:

վերագրվող առանձնահատկությունների և առկա կարգավորումների պայմաններում դրա արդյունավետությունը բացառող պայմանների վերացման տեսանկյունից:

Այսպես. աշխատանքի պաշտպանության արդյունավետ միջոցներից է նաև գործադուլը: Գործադուլի իրավունքը Աշխատանքի միջազգային կազմակերպության մարմինների կողմից դիտարկվում է որպես Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 87 կոնվենցիայով երաշխավորված միավորման ազատության իրավունքի իրականացման ուղղակի հետևանք[1]: Գործադուլի իրավունքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ, որի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասով տրվել է «գործադուլ» հասկացության սահմանումը, ըստ որի գործադուլը մեկ կամ մի քանի գործատուների մոտ աշխատողների կոլեկտիվի կամ աշխատողների որոշակի խմբի՝ կոլեկտիվ գործողությունների միջոցով աշխատանքների լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է աշխատողների տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով, այդ թվում՝

1) աշխատանքային վեճն աշխատողի և գործատուի համաձայնությամբ չլուծվելու դեպքում.

2) կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու դեպքում.

3) գործատուի կողմից հաշտեցման գործընթաց իրականացնելուց խուսափելու դեպքում.

4) հաշտեցման հանձնաժողովի՝ նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ընդունած որոշումը գործատուի չկատարելու դեպքում.

5) նախօրոք կնքված կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները գործատուի չկատարելու դեպքում.

6) կոլեկտիվ բանակցություններ վարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստացած գործատուի՝ նույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված

[1] Տե՛ս **Պետրոսյան Գ., Մելքոնյան Ա., Սաքունց Ա., Մանասերյան Է., Թոքմաջյան Վ., Մարգարյան Ք.,** «Աշխատանքային իրավահարաբերություններ և օրենսդրություն. խնդիրներ և լուծումներ»: Երևան, 2021, էջ 13:

ժամկետում կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին չտեղեկացնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսվել են նաև գործադուլն անօրինական ճանաչելու, ինչպես նաև գործադուլի դադարեցման հիմքերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործադուլն անօրինական է ճանաչում, եթե գործադուլի նպատակները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, այլ օրենքներին, կամ եթե գործադուլը հայտարարվել է նույն օրենսգրքով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված պահանջների և կարգի խախտմամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործադուլը դադարեցվում է, եթե՝

1) բավարարվում են առաջադրված պահանջները.

2) գործադուլի ընթացքում կողմերը ձեռք են բերում համաձայնություն՝ համապատասխան պայմաններով գործադուլի դադարեցման մասին.

3) գործադուլ հայտարարած արհեստակցական միությունն ընդունում է գործադուլի հետագա շարունակման աննպատակահարմարությունը.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով գործադուլը ճանաչվել է անօրինական:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.02.2007 թվականի ՍԴՈ-677 որոշմամբ արձանագրել է, որ գործադուլի իրավունքը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման միջոց, որպես իրավական ինստիտուտ, ունի հանրային-իրավական բնույթ, քանի որ առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Միջազգային իրավական փաստաթղթերով այդ իրավունքի երաշխավորումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատավորական կոլեկտիվների ընդհանուր շահերի իրացումով:

Գործադուլը, ի թիվս այլնի, ունի ժամանակավոր բնույթ կրելու առանձնահատկություն, որով այն տարբերվում է քաղաքացիների կողմից իրականացվող այլ միջոցառումներից[1]:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Հատուկ մաս/ Գ.Վ. Պետրոսյան; ԵՊՀ. - Եր.: «Հայրապետ» հրատ., 2018, էջ 68:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կոլեկտիվ աշխատանքային վեճի կողմերին տալիս է կոլեկտիվ վեճերի լուծման մի քանի մեխանիզմներ: Այնուամենայնիվ այն դեպքերում, երբ վեճը մնում է չլուծված, կամ գործատուն և (կամ) նրա ներկայացուցիչները չեն կատարում ձեռք բերված պայմանավորվածությունները, աշխատողները դեռևս հնարավորություն ունեն իրականացնելու գործադուլ: Գործադուլը՝ որպես կոլեկտիվ աշխատանքային վեճը լուծելու միջոց, թույլատրվում է միայն հաշտեցման ընթացակարգերի անբավարար արդյունքի, դրանց մասնակցելուց գործատուի հրաժարվելու կամ հաշտարար հանձնաժողովում կամ միջնորդի միջոցով վեճի լուծման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների չկատարման դեպքում: Գործադուլի իրավունքը կարող է օգտագործվել նաև այնպիսի կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայության դեպքում, երբ աշխատողները պահանջում են, որ գործատուն կնքի աշխատողների պահանջները բավարարող պայմանագիր:

Գործադուլն աշխատողների կոլեկտիվի կամ աշխատողների որոշակի խմբի՝ կոլեկտիվ գործողությունների միջոցով աշխատանքների լրիվ կամ մասնակի դադարեցումն է, և դրա կարևորագույն հատկանիշներից մեկը ժամանակավոր բնույթ կրելն է, և այն կարող է դադարեցվել, եթե պահանջները բավարարվել են, կամ կողմերը ձեռք են բերել համաձայնություն, արհեստակցական միությունն ընդունում է գործադուլի հետագա շարունակման աննպատակահարմարությունը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով գործադուլը ճանաչվել է անօրինական:

Այսպիսով՝ ողջ վերոգրյալի համատեքստում կարելի է եզրահանգել, որ աշխատողների կոլեկտիվը կարող է ներկայացնել պահանջներ կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր կնքելու համար, սակայն գործատուի կողմից համաձայնության բացակայության դեպքում օրինական գործադուլ կազմակերպվելու պարագայում հնարավոր է, որ տվյալ գործադուլը հարատև ընթանա, քանի որ աշխատողների կոլեկտիվը Հայաստանի Հանրապետությունում զրկված է դիմելու դատարան կոլեկտիվ աշխատանքային այնպիսի վեճերի լուծման համար, որոնք վերաբերում են աշխատողների՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում ձևավորվող օրինական շահերին, այլ ոչ թե՝ ձևավորված իրավունքներին:

Արդյունքում եզրակացնում ենք, որ հետևելով նաև միջազգային փորձին և դոկտրինալ աղբյուրներում արտահայտված դիրքորոշումներին՝ անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվ աշխատանքային այն

վեճերով, որոնք վերաբերում են կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում դեռևս գոյություն չունեցող իրավունքների ձևավորմանը, այսինքն՝ օրինական շահերին, նույնպես դատական պաշտպանության իրավունք տրամադրվի (օրինակ՝ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի կնքման կամ փոփոխման հետ կապված տարաձայնությունների դեպքում)՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, փվյալ տարաձայնության չլուծման դեպքում գործադուլի հայտարարման պարագայում առաջացող իրավական պատնեշի առկայությունը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թվականին, ուժի մեջ է մտել 22.12.2015 թվականին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ.1118:
2. «Միավորվելու և կոլեկտիվ բանակցությունների իրավունքի մասին» համար 98 կոնվենցիա, ընդունվել է 1949 թվականին:
3. «Կոլեկտիվ գործարքների մասին» թիվ 154 կոնվենցիա, ընդունվել է 1981 թվականին:
4. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 14.12.2004 թվականին, ուժի մեջ է մտել 21.06.2005 թվականին, ՀՀՊՏ 2005.12.21/79(451) Հոդ.1385:

Գրականություն

1. **Պետրոսյան Գ., Մելքոնյան Ա., Սաքունց Ա., Մանասերյան Է., Թոքմաջյան Վ., Մարգարյան Ք.,** «Աշխատանքային իրավահարաբերություններ և օրենսդրություն. խնդիրներ և լուծումներ»: Երևան, 2021:
2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: Հատուկ մաս/ Գ.Վ. Պետրոսյան; ԵՊՀ. - Եր., «Հայրապետ» հրատ., 2018, 784 էջ:
3. Professional conciliation in collective labour disputes: a practical guide / Kevin Foley, Maedhbh Cronin; ILO Decent Work Technical Support Team and Country Office for Central and Eastern Europe. - Budapest: ILO, 2015.
4. **Куренной А.М.** Правовое регулирование коллективных трудовых споров. - М.: Юстицинформ, 2010.
5. General Survey concerning labour relations and collective bargaining in the public service Report of the Committee of Experts, on the Application of Conventions and Recommendations (articles 19, 22 and 35 of the Constitution).

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СУДЕБНОЙ ЗАЩИТЫ КОЛЛЕКТИВНЫХ ТРУДОВЫХ СПОРОВ

Аннотация

В период трудовых отношений работники имеют как индивидуальные, так и коллективные трудовые права и обязанности, которые определяются коллективными трудовыми договорами. Однако в процессах заключения, исполнения, изменения и расторжения коллективного трудового договора между сторонами часто возникают разногласия, механизмы разрешения которых исчерпывающим образом предусмотрены Трудовым кодексом Республики Армения.

Трудовой кодекс Республики Армения устанавливает, что в случае коллективных трудовых споров предметом судебной защиты может быть только спор относительно реализации положений коллективного трудового договора, в результате чего возможность судебной защиты законных интересов, сформированных на преддоговорной стадии, не предусмотрена.

Высказано мнение о необходимости предоставления в Республике Армения права на судебную защиту коллективным трудовым спорам, которые касаются формирования прав, еще не существующих в рамках коллективных трудовых отношений, то есть законных интересов (например, споры, связанные с заключением или изменением коллективного трудового договора), учитывая, в том числе, и правовое препятствие, возникающее в случае забастовки, если спор не будет урегулирован.

Ключевые слова: коллективные трудовые права, законный интерес, коллективный трудовой спор, судебная защита, забастовка.

THE MAIN ISSUES OF THE JUDICIAL PROTECTION OF COLLECTIVE LABOR DISPUTES

Annotation

During employment relations, employees have both individual and collective labor rights and obligations, the scope of which is defined by collective labor

agreements. However, in the processes of concluding, executing, amending, and terminating a collective labor agreement, disagreements often arise between the parties, the mechanisms for the resolution of which are exhaustively provided for by the Labor Code of the Republic of Armenia.
The Labor Code of the Republic of Armenia provides for a regulation that in the case of collective labor disputes, only the dispute regarding the execution of the provisions of the collective labor agreement may be the subject of judicial protection, as a result of which the possibility of judicial protection of legitimate interests formed at the pre-contractual stage was not provided for.
It has been suggested that it is necessary to provide the right to judicial protection in collective labor disputes in the Republic of Armenia that relates to the formation of rights that do not yet exist within the framework of collective labor relations, that is, legal interests (for example, disputes related to the conclusion or amendment of a collective labor agreement), taking into account, among other things, the legal obstacle that arises in the event of a strike if the dispute is not resolved.
Keywords: collective labor rights, legal interest, collective labor dispute, judicial protection, strike.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 23.06.2025 թ., տրվել է գրախոսության 23.06.2025 թ., ընդունվել է տպագրության 25.06.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.2-191

РОЗА АМИРОВА
Юрист в офисе Примирителя финансовой системы Республики Армения, преподаватель кафедры Гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского университета

БАНКОВСКИЕ УСЛУГИ, ПРЕДОСТАВЛЯЕМЫЕ ПОТРЕБИТЕЛЯМ

Аннотация

Современная банковская система Республики Армения играет важнейшую роль в обеспечении устойчивого экономического развития, предоставляя широкий спектр финансовых услуг гражданам и юридическим лицам.

Предметом исследования в данной статье является правовая природа и содержание понятий «банковская деятельность» и «банковская услуга» в контексте регулирования финансового сектора Республики Армения. Цель исследования заключается в комплексном анализе действующего законодательства, доктринальных подходов и практических аспектов, связанных с определением и классификацией банковских услуг, а также в выработке предложений по их более точному и функциональному разграничению.

Основные положения исследования включают:

1) анализ законодательства, регулирующего банковскую деятельность в Республике Армения;

2) выявление недостатков текущего определения банковской деятельности;

3) рассмотрение банковских услуг как видового понятия по отношению к банковской деятельности с выделением их характерных черт;

4) классификацию потребительских банковских услуг в РА по различным критериям;

5) предложение комплексного подхода к определению банковской деятельности и банковских услуг, учитывающего экономические, юридические и социальные аспекты.

Исследование подчеркивает необходимость конкретизации законодательных определений для обеспечения эффективного регулирования и адаптации к инновациям в банковской сфере.

Ключевые слова: банковская деятельность, банковские услуги, лицензирование, классификация услуг, Центральный банк.

1. Введение

Актуальность исследования обусловлена динамичным развитием банковского сектора, внедрением технологических инноваций, цифровизацией и появлением новых финансовых инструментов, таких как криптовалюты, что требует совершенствования законодательной базы и уточнения ключевых понятий. Отсутствие четких и современных определений «банковской деятельности» и «банковской услуги», а также пробелы в их правовом регулировании создают сложности в правоприменительной практике и препятствуют эффективному надзору за банковским сектором.

Цель исследования — комплексный анализ правовой природы и содержания понятий «банковская деятельность» и «банковская услуга» в контексте законодательства РА, разработка авторских определений этих понятий и предложений по совершенствованию нормативной базы. Основные задачи:

- изучить доктринальные и законодательные подходы к определению понятий «банковская деятельность» и «банковская услуга», предложить их авторские определения;
- исследовать классификацию потребительских банковских услуг;
- выявить недостатки действующего законодательства и разработать рекомендации по его совершенствованию.

Новизна работы заключается в разработке авторских определений указанных понятий, учитывающих экономические, юридические и социальные аспекты, а также в предложении практических рекомендаций по оптимизации законодательной базы и правоприменительной практики для адаптации к современным вызовам банковского сектора.

2. Понятие банковской деятельности

Прежде чем говорить о роли банковской деятельности для различных секторов рынка экономического развития, важно понять, как законодательство и доктрина определяют и регулируют данное понятие.

Регулирование деятельности банков, действующих на территории Республики Армения, осуществляется в соответствии с законом РА «О банках и банковской деятельности». Данный закон устанавливает порядок и условия регистрации, лицензирования создаваемых и действующих банков, их филиалов и филиалов иностранных банков, представительств, порядок регулирования и прекращения деятельности, а также проведения надзора за банковской деятельностью. Закон определяет такие ключевые понятия, как «банк» и «банковская деятельность». В банковскую систему Республики Армения включены Центральный Банк РА, банки, действующие на территории РА, их филиалы, представительства, оперативные офисы, а также действующие на территории РА филиалы и представительства иностранных банков. Деятельность банков и кредитных организаций, действующих на территории Республики Армения, подлежит регулированию не только Законом РА «О банках и банковской деятельности», но также Гражданским кодексом Республики Армения, законами РА «О Центральном банке», «О переводе средств платежными поручениями», «О валютном регулировании и валютном контроле», «О банковской тайне», а также другими применимыми законами и нормативно-правовыми актами.

Статья 4 Закона РА «О банках и банковской деятельности» определяет понятие банковской деятельности как прием вкладов или обращение с предложением принять вклады и от имени и с риском принимающего вклад разместить их путем предоставления кредитов, вкладов, депозитов и (или) осуществления инвестиций[1].

В большинстве стран, включая Республику Армения, лицензирование на осуществление банковской деятельности является обязательным требованием. Регулирование банковской сферы и выдача лицензий обычно осуществляются Центральным Банком или другим регулирующим органом.

[1] Закон РА «О банках и банковской деятельности» от 30.06.1996 г. (с посл. измн. от 09.06.2022 г.).

В некоторых юрисдикциях, например в Швейцарии, законодательство может не содержать формального определения банковской деятельности, но устанавливать требования к осуществлению такой деятельности. Обязательное наличие лицензии от регулирующего органа является одним из таких ключевых требований[1].

В РФ банковская деятельность также не имеет легального определения, помимо указания федерального законодателя на ее источники регулирования и перечня банковских операций, что довольно странно, учитывая название федерального закона[2].

Банковская деятельность представляет собой объект исследования многих ученых, которые пытаются дать развернутое определение данному понятию. Необходимость точного определения банковской деятельности обусловлена желанием обеспечить не только справедливые и эффективные условия для всех участников банковского процесса, но и безопасность и надежность банковских операций для клиентов и системы в целом.

Определение банковской деятельности, представленное в статье 4 Закона РА «О банках и банковской деятельности», содержит несколько общих и обширных формулировок. Несмотря на то что оно охватывает основные аспекты банковской деятельности, такие как прием вкладов, размещение кредитов и инвестиций, по нашему мнению, оно может считаться несовершенным в некоторых аспектах. Во-первых, определение включает в себя общие термины, такие как «размещение кредитов» и «осуществление инвестиций», которые могут оставаться нечеткими и поддаваться различным интерпретациям. К примеру, термин «размещение кредитов» может включать как предоставление займов юридическим и физическим лицам, так и кредитование в различных формах (овердрафт, кредитные линии, ипотечные займы и т. д.). Однако без конкретизации трудно определить, охватывает ли это понятие, например, лизинговую деятельность или предоставление кредитов в рамках партнерских программ. Это может создавать путаницу при применении закона и осуществлении контроля над банковской деятельностью. Во-вторых, определение не охватывает все

[1] Ст. 3 Швейцарского Федерального закона «О банках и сберегательных кассах» от 08.11.1934 г. Доступно по ссылке: https://assets.kpmg.com/content/dam/kpmg/ch/pdf/ch-banking-act-en.pdf (дата обращения: 03.05.2025 г.).

[2] Федеральный закон от 2 декабря 1990 г. № 395-1 «О банках и банковской деятельности» // Собрание законодательства Российской Федерации. 1996, № 6. - Ст. 492.

возможные виды банковской деятельности, такие как операции с ценными бумагами, управление активами и др. Кроме того, учитывая технологические изменения в банковской сфере, определение может быть устаревшим и не охватывать новые формы банковских услуг, такие как криптовалюты, цифровизация и другие инновационные формы предоставления финансовых услуг. Отсутствие в определении четких указаний относительно этих аспектов может приводить к юридическим пробелам и усложнять регулирование новых финансовых инструментов.

В различных определениях банковской деятельности её основой признаются банковские операции[1]. Операции, осуществляемые банками на территории РА, регулируются Законом РА «О банках и банковской деятельности». В соответствии с ним банки могут осуществлять следующие операции: расчетные операции, депозитные операции, кредитные операции, операции с ценными бумагами и другими платежными инструментами, валютные операции, дополнительные операции (например, предоставление банковских гарантий и аккредитивов, покупка, продажа и управление банковскими слитками драгоценных металлов и памятными монетами, лизинг и т.д.). Считаем, что определение сущности банковской деятельности только на основании банковских операций является неэффективной и не отражает в полном объеме содержание банковской деятельности. Некоторые исследователи включают в данное понятие и другие сделки, которые тоже могут осуществлять банки, и при этом также называют их банковскими[2]. В то же время по своей сути такие «банковские сделки» могут совершаться также другими участниками финансового рынка. Так,

[1] **Маркунцов С.А.** О необходимости законодательного закрепления понятия «банковская деятельность» // Российская юстиция. 2006, № 4; **Хоменко Е.Г.** Банк России в национальной платежной системе Российской Федерации // Актуальные проблемы российского права. 2016, № 8. - С. 76-83; **Трофимов К.Т.** Проблемы правоспособности банка // Хозяйство и право. 2005, №4. - С. 89-95; **Кучера Ю.В.** Административно-правовое регулирование банковской деятельности в Российской Федерации/ Ю.В. Кучера. – Омск, 2000; **Саркисян А.Ж.** Незаконная банковская деятельность: уголовно-правовые аспекты / А.Ж. Саркисян. - Ростов-на-Дону, 2007. - С.60; **Олейник О.М.** Основы банковского права: курс лекций. - М., 1997; **Тедеев А.А.** Банковское право: учебник. 4-е издание, переработанное и дополненное. - М.: МПСИ; - Воронеж: МОДЭК, 2011. - С. 34; **Осипова М.А.** О понятии банковской деятельности в РФ / М.А. Осипова // Право и законодательство, 2012. - С. 161-166; **Пыхтин С.В.** Лицензирование банковской деятельности // Законность. 2000, № 11. - С. 44-46.

[2] **Братко А. Г.** Банковское право (теория и практика). - М., 2000. - С. 25; **Костькова О. В.** Комментарий к Федеральному закону от 2 декабря 1990 г. № 395-1 «О банках и банковской деятельности», 2007 г.

например, операции по хранению и управлению ценными бумагами на основании лицензии могут осуществлять профессиональные участники рынка ценных бумаг.

М. М. Агарков разбивает все сделки, совершенные банками, на две группы: к первой относит договоры, составляющие непосредственно предмет деятельности банка (банковские сделки или банковские операции), ко второй – сделки, имеющие вспомогательное значение, служащие материальной предпосылкой работы последних[1]. Такого же мнения придерживаются и другие авторы[2].

В юридической доктрине банковскую деятельность рассматривают также как разновидность предпринимательской деятельности, представляющей собой совокупность постоянно или систематически проводимых операций разных видов, объединенных общей целью, объектом которых являются деньги или иные финансовые инструменты[3].

В целом термин «банковская деятельность» может быть определен как деятельность финансовых посредников, обладающих лицензией на осуществление банковских операций. В то же время этот термин может быть трактован как деятельность банков, включающую в себя также деятельность банков на рынке ценных бумаг и другие виды деятельности, не запрещенные законодательством к совмещению с банковской деятельностью. Как справедливо отмечал Тавасиев А.М., банковская деятельность — это разрешенная законами и иными правоустанавливающими документами специфическая или исключительная деятельность кредитных организаций[4].

Проанализировав основные определения банковской деятельности, приходим к выводу, что для достижения максимальной точности и полноты ее определения необходимо включить в рассмотрение как экономические, так и юридические и социальные аспекты данного понятия. Такой подход позволит сформировать комплексное

[1] **Агарков М.М.** Основы банковского права: курс лекций. Учение о ценных бумагах. Научное исследование. 2- е. изд. - М.: БЕК, 1994. - С. 46.

[2] **Братко А.Г.** Банковское право (теория и практика). - М., 2000. - С. 25; **Тосунян Г., Викулин А.** Исключительная правоспособность банка // Хозяйство и право. 1999, № 5. - С. 58-63.

[3] **Олейник О.М.** Основы банковского права: курс лекций. - М: Юристъ, 1999; **Жуков Е. Ф.** Банковское дело / Е. Ф. Жукова, Ю. А. Соколова. - М.: Издательство Юрайт, 2015. - С. 591; **Трофимов К.Т.** Проблемы правоспособности банка // Хозяйство и право. 2005, № 4. - С. 89-95.

[4] **Тавасиев А.М.** Банковское дело: учебник для бакалавров / А.М. Тавасиев. - М.: Изд-во Юрайт, 2013. - С. 647.

представление, отражающее многогранный характер банковской деятельности. Исходя из вышесказанного, под понятием «банковская деятельность» следует понимать осуществление разнообразных банковских операций при наличии соответствующей лицензии на данный вид деятельности, основной целью которой является получение доходов, а также выполнение функций в соответствии с законодательством.

3. Понятие банковских услуг

Определение и классификация банковских услуг имеет большое практическое значение. В первую очередь, банковские услуги устанавливают пределы предпринимательской деятельности банка. Во-вторых, данный вопрос имеет существенное значение для процесса лицензирования банковской деятельности и разграничения банковской и небанковской деятельности в имущественном обороте. В-третьих, без четкого определения и классификации банковских услуг и банковской деятельности в целом, без явного разграничения от других видов деятельности, невозможно осуществлять их правового регулирования.

Необходимо также исходить из того, что понятие «банковская деятельность» является родовым, а понятие «банковская услуга» соответственно видовым по отношению к первому понятию. Среди характерных черт банковских услуг следует выделить:

- в основном их длящийся характер[1]. Однако ряд банковских услуг можно отнести к реальным договорам, не имеющим длительный характер действия, например купля-продажа валюты;
- фактическое неравенство банковского предприятия и его клиента;
- доверительный характер, который проявляется в доверии клиента к выбранному банку при открытии счета, хранении денежных средств и других аспектах сотрудничества;
- преимущественно стандартные формы банковских услуг, что объясняется их массовым и унифицированным характером.

Большинство авторов, среди которых Ю. В. Головин, И. С. Диденко, Д. Е. Швед, О. Х. Гагиева, А. Г. Гамзунов, склонны рассматривать банковскую

[1] **Оробинский С.С.** Взаимосвязь понятий «банковская услуга» и «банковский продукт» // Вестник Омского университета. Серия «Экономика». 2007. №. 3. - С. 95-98.

услугу как совокупность или разновидность банковских операций[1]. Например, И. С. Диденко утверждает, что «банковская услуга — взаимосвязанная совокупность банковских операций, которые реализуются банком клиенту на договорной основе и направлены на удовлетворение потребностей клиента в банковском обслуживании»[2]. А. Г. Гамзунов рассматривает банковскую услугу как совокупность фактических или/и юридических действий банка, направленных на удовлетворение потребностей клиента. При этом он замечает, что «банковская услуга может состоять из одной или нескольких банковских операций. В случае предоставления банковской услуги путем осуществления одной операции содержание и название будут совпадать»[3].

На наш взгляд, такой подход к определению понятия «банковская услуга» является несколько суженным, поскольку такие банковские услуги, как сбережения ценностей, консультативно-информационное обеспечение не включаются в данную концепцию. Важно учесть, что банковский сектор постоянно развивается и появляются новые виды услуг, которые могут не подпадать под традиционные определения.

Некоторые ученые трактуют банковскую услугу как разновидность банковского продукта[4].

В современной юридической литературе существует концепция, согласно которой банковская услуга рассматривается в качестве соглашения, которое осуществляется кредитными учреждениями в установленных законодательством пределах. Сторонниками данного

[1] **Діденко І.С.** Еволюція поглядів на тлумачення поняття «банківська послуга» та сучасне її визначення/ І.С. Діденко// Інноваційна економіка. 2012. №11 С. 253–257; **Гагиева О. Х.** Организация и управление маркетинговой деятельностью коммерческого банка: автореф. на соиск. уч. степени канд. экон. наук: 08.00.10/ Гагиева Ольга Хасанбекова. Владикавказ, 2005. - С. 21; **Головин Ю. В.** Комплекс социально-ориентированных банковских услуг и его роль в решении социальных проблем экономики: автореф. дис. на соиск. уч. степени док. экон. наук: 08.00.10/ Головин Юрий Викторович; Санкт-Петербургский государст. универ. экономики и финансов. Санкт-Петербург, 2000. - С. 34; **Швед Д. Е.** Управление маркетинговой деятельностью финансовой организации: автореферат дис. на соиск. уч. степени канд. экон. наук:08.00.05/ Швед Дмитрик Евгеньевич. - М. 2011. - С. 23.

[2] **Діденко І.С.** Еволюція поглядів на тлумачення поняття «банківська послуга» та сучасне її визначення/ І.С. Діденко// Інноваційна економіка. 2012. №11. - С. 253–257.

[3] **Гамзунов А.Г.** Банковская услуга, как предмет деятельности банка. Доступно по ссылке: http://www.rusnauka.com/11_NPRT_2007/Economics/21947.doc.htm (дата обращения 03.05.2025г.).

[4] **Лаврушин О.И.** Банковский менеджмент: учебник / Кол. авторов. 2-е изд. перераб. и доп. — М.: КНОРУС, 2009. - С. 560; **Калистратов Н. В.** Банковский розничний бізнес/ Н.В Калистратов, В. А Кузнєцов., А.В Пухов. - М.: Изд. группа “БДЦ Пресс”, 2006. - С. 213.

подхода выступают Д. К. Исаев, А. Ю. Викулин, Г. А. Тосунян, Б. И. Топорин, А. Ю. Никелин, А. М. Екмалян и другие. Раскрывая сущность понятия «банковская услуга», они предлагают понимать под банковскими услугами совокупность соглашений, направленных на удовлетворение потребностей клиентов и получения прибыли, при этом исключительное право на осуществление таких соглашений предоставляется кредитным организациям[1].

Проанализировав основные точки зрения о сущности понятия «банковская услуга», считаем, что банковская услуга является более широким понятием, чем банковский продукт или же банковская операция, где акцент делается не только на самом продукте (например, на кредите), но также на процессах и взаимодействии между банком и клиентом.

На наш взгляд, имеет место различение между понятиями «банковская услуга», «банковская операция» и «банковский продукт», так как они представляют собой разные аспекты банковской деятельности.

- **Банковская услуга** может рассматриваться как конечный результат, предоставляемый банком клиенту. Это включает в себя не только сами банковские продукты, но и уровень обслуживания, предоставляемый банком в процессе взаимодействия с клиентом.
- **Банковская операция** чаще всего относится к конкретным действиям или транзакциям, совершаемым банком в рамках предоставления услуги или продукта. Это может быть, например, перевод средств, открытие счета и т.д.

Понятие банковской операции, используемое в банковском праве, не следует смешивать с понятиями гражданско-правовой сделки или гражданского договора. Оно не имеет определенного гражданско-правового содержания и вводится прежде всего в целях определения финансово-экономического существа банковской деятельности и ее разграничения от других видов деятельности на финансовом рынке. Понятие банковской операции изначально было разработано германскими правоведами в первой четверти XX в. и включено в немецкий Закон о кредитном деле (*Kreditwesengesetz*)[2].

[1] **Діденко І.С.** Еволюція поглядів на тлумачення поняття «банківська послуга» та сучасне її визначення/ І.С. Діденко// Інноваційна економіка. 2012. №11 [37]. - С. 253–257.

[2] **Карапетов А.Г., Байбак В.В., Иванов О.М., Любимова М.А., Махалин И.Н., Павлов А.А. Сарбаш С.В., Ястржембский И.А.** Заем, кредит, факторинг, вклад и счет: Постатейный

▪ **Банковский продукт —** это конкретное «финансовое изделие», предоставляемое банком. Он может включать кредиты, депозиты, кредитные карты и другие финансовые инструменты.

Вместе с тем мы разделяем мнение тех авторов, которые обосновывают существование тесной взаимосвязи между ними[1].

Таким образом, тесная связь понятий «банковская услуга» и «банковская деятельность» с экономическим развитием подчеркивает его динамичный характер, а многочисленные интерпретации свидетельствуют о постоянных изменениях в данной области. Важно учитывать эту сложность при разработке методологий и стратегий в сфере банковского обслуживания.

4. Классификация потребительских банковских услуг в РА

Банковский сектор предоставляет широкий круг услуг, число которых продолжает расти в условиях современной конкуренции и глобализации. Эта динамика обусловлена разнообразием потребностей клиентов, технологическими инновациями и стремлением банков адаптироваться к изменяющемуся финансовому окружению. Наиболее распространенными потребительскими банковскими услугами являются банковские счета, кредитные продукты, дебетовые и кредитные карты, электронные и мобильные банковские услуги и т.д.

Классификация потребительских банковских услуг оказывает непосредственное влияние на процесс лицензирования и деятельность банков в целом. Неоправданная конкретизация банковских услуг может создать ненужные ограничения для банков, затрудняя их предпринимательскую деятельность и сужая сферу их действий. С другой стороны, расширительное определение содержания банковской услуги будет препятствовать реализации принципа специализации на определенных видах банковской деятельности, что создаст трудности для процесса эффективного управления. Предложение сгруппировать банковские услуги по какому-либо существенному признаку, учитывая как исключительно банковские, так и другие разрешенные операции, является логичным подходом для более гибкого и адаптивного

комментарий к статьям 807–860.15 Гражданского кодекса Российской Федерации. - М-Логос, 2019. - С. 568.

[1] **Перехожев В.А.** Конкурентоспособность банковского продукта на региональном рынке: автореф. дис. на соиск. уч. степени канд. экон. наук: 08.00.10/; Оренбур. государ. универ. - Санкт-Петербург, 2003. - С. 24.

лицензирования, учитывая разнообразие услуг и операций в современном банковском секторе. В то же время определение конкретной банковской услуги как принадлежащей к определенному типу является спорным вопросом.

Классификация потребительских банковских услуг в РА может различаться в зависимости от банка. Как отмечается в литературе, она может выражаться в перечне банковских услуг, который рассматривается и принимается на этапе создания банка, с учетом какой-либо политики банка и при определении его миссии[1].

Услуги, предоставляемые банками в РА, можно условно классифицировать по разным критериям.

1. По специфике банковской деятельности – специальные, неспециальные и промежуточные услуги.

- ***Специальные (традиционные) услуги*** – это те, которые вытекают из самой природы деятельности банка и непосредственно связаны с основными функциями банков. *Депозитные, кредитные, расчетные и кассовые операции* считаются специальными услугами.
- ***К промежуточным операциям*** относятся *операции с иностранной валютой, ценными бумагами, банковскими слитками из драгоценных металлов и другие операции*. Такие услуги не относятся к основным, но играют значимую роль в деятельности банка.
- ***К неспецифическим услугам*** относятся, например, *предоставление банковских гарантий и аккредитивов, предоставление финансовых и инвестиционных консультаций, посреднические услуги, управление ценными бумагами и инвестициями других лиц, факторинг, финансовый лизинг, предоставление банковских ячеек и т. д.* Эти услуги являются дополнительными к основным услугам.

2. *По субъектам-получателям услуг* – услуги, оказываемые юридическим и физическим лицам, или же услуги, предоставляемые клиентам, имеющим банковский счет, и услуги, предоставляемые без наличия банковского счета.

3. По тарифам за оказание услуг – платные услуги и бесплатные. Банки самостоятельно определяют перечень платных и бесплатных услуг, а также размер комиссий и тарифов.

[1] **Едронова В.Н., Крючков О.А.** Анализ подходов к классификации банковских услуг // Финансы и кредит. 2004, № 26.

4. По формам привлечения и размещения средств банка – активные, пассивные и активно-пассивные операции.

О. И. Лаврушин впервые предложил классификацию банковских услуг, разделяя их на три основные группы: привлечение средств, размещение средств и расчетно-кассовые услуги. Все операции коммерческого банка условно делятся на три группы, с чем согласны многие ученые и специалисты:

1) пассивные операции (*привлечение средств*);

2) активные операции (*размещение средств*);

3) активно-пассивные (*посреднические, трастовые и прочие*) операции[1].

К пассивным операциям относятся операции по привлечению средств, такие как прием вкладов и выпуск облигаций. Банк же формирует свои средства, прежде всего, через предоставление кредитов с использованием чужих средств, что довольно типично для банковской деятельности. Банки привлекают ресурсы через различные механизмы, такие как привлечение депозитов от клиентов и кредитование в других банках. Пассивные операции банков делятся на две группы: операции, приводящие к образованию собственных средств или капитала банка, и операции, приводящие к образованию привлеченных средств или обязательств банка.

Активные операции включают в себя широкий спектр договоров, и их объединение в одну группу обусловлено тем, что они направлены на обеспечение клиента необходимыми финансовыми средствами. Это может включать предоставление кредитов, покупку долговых требований, гарантийные операции и другие виды активных финансовых взаимодействий. ИХ целью является обеспечение клиентам доступа к средствам, которые им необходимы.

Ըստ Դիմողի՝ օրենսդրական նոր կարգավորումներով, անկախ որևէ հանգամանքից, այդ թվում՝ բավարար առողջական վիճակի առկայությունից, թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, որոշակի տարիքային շեմով պայմանավորված, զրկվում են վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունից՝ չնայած որ, անկախ տարիքային շեմի բավարարման հանգամանքից, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացումը հնարավոր է միայն համապատասխան բժշկասոցիալական ցուցումների առկայության կամ այլ կերպ՝ համապատասխան առողջական վիճակի առկայության ու հակացուցումների բացակայության պայմաններում:

Դիմողի կարծիքով՝ օրենսդրական նոր կարգավորումներով ևս ոչ իրավաչափ եղանակով միջամտություն է կատարվում անձի վերարտադրողական ինքնավարությանը՝ ներառյալ երեխա ունենալու կամ չունենալու որոշումների կայացմանը: Հետևաբար՝ օրենսդրական նոր կարգավորումների պայմաններում օրենսդրի մոտեցումը չի վերանայվել՝ ամրագրելով այնպիսի լուծում, որը հակասում է Սահմանադրությամբ ամրագրված մասնավոր կյանքի անձեռն-

մխելիության իրավունքին և այդ համատեքստում՝ խտրականության արգելքի սկզբունքին:

Ըստ այդմ՝ Դիմողն ընդգծել է, որ իր դիմումում և դիրքորոշման մեջ բարձրացված խնդիրներն արդիական են և՛ Օրենքի, և՛ Փոփոխված օրենքի պարագայում:

Ամփոփելով՝ Դիմողը խնդրել է քննարկել Փոփոխված օրենքի համապատասխանությունը Սահմանադրության 29, 31, 78 և 81-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) նշել է, որ Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ տարիքային սահմանափակում նախատեսելը թույլ կտա խուսափել ավելի բարձր տարիքի կանանց մոտ հղիության հետ կապված հավանական ռիսկերից՝ նկատի ունենալով, որ տարիքին զուգահեռ՝ բարձրանում է կնոջ առողջության և կյանքի համար վտանգ ներկայացնող թե՛ մանկաբարձական, թե՛ ուղեկցող ախտաբանությունների առաջացման հավանականությունը, որոնք կարող են հանգեցնել հղիության անբարենպաստ, ընդհուպ՝ մահացու ելքի:

Հղում անելով Սահմանադրության, Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի վերաբերելի դրույթներին, ինչպես նաև վերաբերելի «փափուկ իրավունքի» նորմերին՝ Պատասխանողը նաև նշել է հետևյալը.

«... գրեթե ցանկացած իրավունք անսահմանափակ չէ: Սահմանափակումների իրավաչափության հիմքերը, ընդհանուր առմամբ, հանգում են պետական և հանրային շահի, անվտանգության և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այսինքն՝ հաշվի առնելով նախևառաջ հենց իրավունքն իրացնողի և այլ անձանց այլ իրավունքները՝ դրանք երբեմն կարող են սահմանափակվել: Սակայն, ամեն դեպքում, իրավական կարգավորումները պետք է հավասարակշռեն հանրային առողջության շահերը անձնական ազատությունների և իրավունքների հետ»:

Պատասխանողի դիտարկմամբ՝ բազմաթիվ բժշկական հետազոտությունների արդյունքում արձանագրվել է, որ ավելի մեծ տարիքում երեխա ունենալու դեպքում կա ավելի մեծ հավանականություն և հնարավոր ռիսկ, որ երեխան կունենա առողջական խնդիրներ: Հետևաբար՝ տարիքային սահմանափակումները հիմնված են բժշկական անվտանգության, ինչպես նաև երեխայի և մոր առողջության հետ կապված ռիսկերի վրա:

Պատասխանողը դիրքորոշում է հայտնել, որ Օրենքի վիճարկվող դրույթներով սահմանվել է այն տարիքը, որի ժամանակ անձանց մոտ հիվանդությունների հավանականությունն ավելի բարձր է և ռիսկային (տարի-

քային սահմանափակումների վերաբերյալ որոշումները հաճախ հիմնված են գիտական ապացույցների, բժշկական փորձաքննությունների վրա):

Վերոնշյալի հիման վրա Պատասխանողը պնդում է, որ տարիքային սահմանափակումը խտրական չէ, եթե դա հիմնավորված է հանրային քաղաքականության օրինական նպատակներով, կիրառվում է հավասարապես և համաչափ է:

Պատասխանողը վիճարկվող օրինադրույթները խնդրահարույց չի համարել նաև մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Մասնավորապես՝ ըստ Պատասխանողի՝ տարիքային սահմանափակումն ինքնանպատակ չէ. օրենսդրական սահմանափակումներն էական նշանակություն ունեն հանրային առողջության պահպանման համար և կարող են ձևակերպված լինել այնպես, որ չխախտեն մասնավոր իրավունքը՝ միաժամանակ ապահովելով հավասարակշռությունը հանրային առողջության կարիքների ապահովման և անձնական ազատությունների միջև: Հետևաբար՝ ըստ Պատասխանողի՝ վիճարկվող դրույթները համապատասխանում են համաչափության սկզբունքին. դրանցով նախատեսված սահմանափակումը հետապնդում է առողջության պաշտպանության իրավաչափ նպատակ, իսկ ընտրված միջոցը պիտանի և անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար:

Պատասխանողը նշել է նաև, որ 2024 թվականի հուլիսի 12-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «[Օրենքում] լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում կատարվել է փոփոխություն, այն է՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը վերապահվել է մինչև 55 տարեկան թե՛ տղամարդուն և թե՛ կնոջը, իսկ հղիությունը կրելու դեպքում՝ մինչև 53 տարեկան կնոջը:

Պատասխանողը 17.09.2024 թ. ներկայացրած լրացուցիչ դիրքորոշմամբ վիճարկվող իրավադրույթները դիտարկել է նաև երեխայի լավագույն շահի սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Մասնավորապես՝ վկայակոչելով Սահմանադրության, ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի, Ընտանեկան օրենսգրքի (այսուհետ նաև՝ ԸՕ), Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի, ինչպես նաև Եվրոպական միության «Հիմնական իրավունքների մասին» խարտիայի վերաբերելի դրույթները՝ Պատասխանողը գտել է, որ երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում և, մասնավորապես, երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները բավարարելու համար ծնողները պետք է հաշվի առնեն իրենց առողջական վիճակը, հնարավոր սոցիալական ու տնտեսական խնդիրներն ու այն միջոցառումները, որոնք կարող են բարելավել երեխայի կյանքի որակը:

Ըստ Պատասխանողի՝ տարիքային սահմանափակումները նպաստում են ոչ միայն երեխայի, այլ նաև ծնողների ակնկալվող կյանքի և երեխայի բարեկեցության ապահովմանը: Բարձր տարիքում երեխաներ ունենալու դեպքում վերջիններիս համար կարող են առաջանալ երկարաժամկետ հոգատարության և ֆինանսական ապահովման խնդիրներ: Հնարավոր սահմանափակումները կարող են փորձել կանխատեսել ծնողների կենսակերպի և առողջության հնարավոր հետևանքները: Ընդ որում՝ տարիքային սահմանափակումները երաշխավորում են երեխայի զարգացման ընթացքում կայուն միջավայր: Ավելի երիտասարդ կամ առավել տարեց ծնողները կարող են հանդիպել տարբեր մարտահրավերների, որոնք կարող են ազդել երեխայի կարիքները բավարարելու նրանց կարողության վրա: Տարիքային սահմանափակումներն օգնում են հավասարակշռել սույն գործոնները՝ հնարավորություն տալով ծնողներին երկարաժամկետ հեռանկարում ֆիզիկապես բավարարել երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսական պահանջները, այն է՝ կարողանալ պլանավորել երեխայի ապագան, ապահովել կրթությամբ, տրամադրել էմոցիոնալ աջակցություն:

Պատասխանողը պնդում է, որ տարիքային սահմանափակումները լուծում են նաև սոցիալական մի շարք խնդիրներ. տարեց ծնողները մոտենում են կենսաթոշակային տարիքին, ինչը կարող է բարդացնել եկամուտների պլանավորումը և երեխաների կարիքների պատշաճ բավարարումը:

Միաժամանակ, Պատասխանողն ընդգծում է, որ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար տարիքային սահմանափակում սահմանելու առավել էական նշանակություն ունեցող հիմքը երեխայի հնարավոր առողջական ռիսկն է:

Պատասխանողը հավելում է նաև, որ վերոթվարկյալ հանգամանքներն ունեն բժշկասոցիալական բնույթ, կարող են վրա հասնել որոշակի ժամանակի ընթացքում, ուստի՝ որոշակի հստակ ժամանակահատվածում դրանց ռացիոնալ գնահատում իրականացնել հնարավոր չէ:

Ամփոփելով՝ Պատասխանողը պնդում է, որ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար տարիքային սահմանափակումը հիմնավոր է, այն նպատակ է հետապնդում բացառապես ապահովելու երեխայի լավագույն շահը, բխում է որոշակի բժշկասոցիալական երաշխիքների ապահովման սկզբունքներից և համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակումը՝ որպես Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին պետության միջամտություն, համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին այնքանով, որքանով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքն իրացնելու օրենսդրական այլ պայմանների համեմատությամբ անձի տարիքի պայմանը կանխորոշող է:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի (...) անձեռնմխելիության իրավունք»:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»:

Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը ժողովրդավարական պետությունում իրավական հասարակարգի առանցքային բաղադրիչներից է, որն ընդգծում է իրավական պետության մարդակենտրոն բնույթը: Այն կառուցված է պետության կողմից մարդու ներքին ազատության իրավաբանական ճանաչման վրա՝ մի կողմից պատնեշելով պետաիշխանական կամայական որևէ միջամտություն, իսկ մյուս կողմից՝ պետությանը պարտավորեցնելով ձեռնարկել պոզիտիվ գործողություններ մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը երրորդ անձանց ոտնձգություններից գործնականում երաշխավորելու և պաշտպանելու ուղղությամբ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում անդրադարձել է մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական էությանը: Մասնավորապես՝ 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը միտված է անձի համար և անձի շուրջ այնպիսի շրջանակի (տարածության) երաշխավորմանը, որում նա, զերծ մնալով պետության կամ հանրության կողմից որևէ ուղղորդումից կամ առավել ևս հարկադրանքից, կկարողանա ազատորեն դրսևորել և զարգացնել իր անհատականությունը՝ իր արժանապատվության և ընդհանուր և հատուկ ազատությունների և իրավունքների՝ պետության, հանրության և այլ մասնավոր անձանց կողմից հարգանքի պայմաններում: Հետևապես՝ անձի մասնավոր տարածության անձեռնմխելիությունը՝ այլ հիմնական իրավունքների և ազատությունների համակցության մեջ, հնարավորություն է

տալիս ապահովելու թե՛ *մարդու անհատական ներքին ինքնորոշումը*՝ իր կենսական շահերին համապատասխան, թե՛ *այլ մասնավոր անձանց հետ* նրա մասնավոր-կենսական *կապերի գաղտնիությունը*՝ պետությունից, հասարակությունից և երրորդ անձանցից, և այդ իմաստով է Սահմանադրությունը երաշխավորում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

(…)

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է **ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը,** այլև **պետության պոզիտիվ պարտականությունը**՝ *անհրաժեշտ* և *արդյունավետ* օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես՝ պետությունը, նախ՝ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից *արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր*, և, վերջապես, պարտավոր է նաև *գործնականում ապահովել* այս հիմնական իրավունքի պաշտպանությունը երրորդ անձանցից»:

Ընդգծելով մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ներանձնային բնույթը՝ Սահմանադրական դատարանը հատկապես կարևորում է մարդու կենսագործունեության և կենսակերպի ընտրության ազատությունը՝ որպես իր ինքնության բնորոշման, ներքին ինքնորոշման, անհատական զարգացման ուղենիշների որոշման և դրանցից բխող՝ անձնական և ընտանեկան կարգավիճակի ընտրության անխոչընդոտ հնարավորություն: Վերջինս՝ որպես այդպիսին, նորմատիվ փոխազդեցության մեջ է մարդու ազատ գործելու սահմանադրական իրավունքի հետ, որը երաշխավորված է Սահմանադրության 39-րդ հոդվածով:

Վերոնշյալի լույսի ներքո սահմանադրահիրավական նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք վերարտադրողականությունը մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի բաղկացուցիչ մաս է և պաշտպանված է այդ իրավունքի համար նախատեսված սահմանադրական երաշխիքներով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առանձնացրել է մարդու վերարտադրողական իրավունքը որպես մարդու անձնական իրավունք: Վերջինս ամրագրված է Օրենքի 1-ին հոդվածում: Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշյալ իրավունքը մանրամասնված է՝ հնարավորություն տալով անձին ինքնուրույն տնօրինելու իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությունը:

Այսինքն՝ պետությունն Օրենքի մակարդակում ճանաչել է մարդու վերարտադրողական իրավունքը, ինչից բխում է այդ իրավունքի ապահովման

ուղղությամբ համարժեք պոզիտիվ պարտականությունների ստանձնումը, որոնք տեղ են գտել Օրենքի հետագա շարադրանքում, ինչպես նաև նեգատիվ պարտականությունը՝ անհարկի չմիջամտել անձի սեռական ու վերարտադրողական կյանքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը համապարփակ կերպով անդրադարձել է մարդու վերարտադրողական իրավունքին՝ որպես ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի ծավալում ընդգրկված իրավունքի:

Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը սահմանել է, որ «մասնավոր կյանք» հասկացությունը ներառում է ծնող դառնալու կամ ծնող չդառնալու որոշումների նկատմամբ հարգանքի իրավունքը (Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Evans v. The United Kingdom) գործով ՄԻԵԴ-ի 2007 թվականի ապրիլի 10-ի վճիռ, կետ 58): Ընդ որում՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի վերլուծությունից հետևում է, որ ծնող դառնալ-չդառնալու (վերարտադրողականության) իրավունքի հիմքում դրվել է գենետիկ ծնող դառնալու կամ չդառնալու հանգամանքը՝ ըստ էության, առանց նախանշելու գենետիկ վերարտադրման եղանակը՝ բնական, թե «արհեստական», այդ թվում՝ օժանդակ տեխնոլոգիաների օգնությամբ գենետիկ վերարտադրությունը (Էմ.Էլ.-ն ընդդեմ Լեհաստանի (M.L. v. Poland)) գործով ՄԻԵԴ-ի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ, կետ 91):

Արձանագրելով մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի ներառվածությունը մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ծավալում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում համալիր վերլուծել վիճարկվող օրինադրույթները որպես մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքին հանրային իշխանության միջամտություն՝ վերջինիս համաչափության առումով:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է

համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ անդրադարձել է համաչափության սահմանադրական սկզբունքին՝ նշելով հետևյալը. «(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

(...)

(...) Սահմանադրական դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (expressis verbis):

Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն:

Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանա-

դրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:

Վերոնշյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաչափության սահմանադրական սկզբունքը մի շարք փոխկապակցված նորմատիվ տարրերի համակցություն է, որոնց միաժամանակյա ապահովման դեպքում է հիմնական իրավունքին պետության միջամտությունը սահմանադրաչափ:

Տվյալ պարագայում անհրաժեշտ է պարզել՝ ո՞րն է այն սահմանադրաչափ նպատակը, որի կենսագործմանն են ուղղված Օրենքի վիճարկվող դրույթները՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալում ընդգրկվող մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման համար տարիքային սահմանափակում նախատեսելով:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սպառիչ և հստակ (expressis verbis) սահմանված են անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմք հանդիսացող նպատակները (արժեքները), որոնց պաշտպանությունը կարող է արդարացնել (հիմնավորել) նշյալ իրավունքի սահմանափակումը: Դրանք են՝ պետական անվտանգությունը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը, հասարակական կարգը, առողջությունը և բարոյականությունը կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքին պետաիրավական միջամտությամբ հետապնդվող նպատակի սահմանադրաչափությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը վերաբերելի է համարում միայն առողջության և այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները:

Փոփոխված օրենքի համաձայն՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի տարիքային սահմանափակում է նախատեսվել տղամարդկանց համար (55 տարեկան), կանանց համար (53 տարեկան), ինչպես նաև կանանց համար նշյալ իրավունքից օգտվելու տարիքային շեմը տարբերակվել է՝ ելնելով հղիությունը փաստացի կրելու հանգամանքից (53 տարեկան, եթե կինն է փաստացի կրում հղիությունը, և 55 տարեկան, եթե կինը հղիությունը փաստացի չի կրում):

Օրենքի 1-ին հոդվածը սահմանում է Օրենքի կարգավորման առարկան (նպատակը): Ըստ նշյալ հոդվածի՝ սույն օրենքով կարգավորվում են մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է վերարտադրողական առողջության հասկացությունը և այն կազմող բաղադրատարրերը, որոնց համակցված առկայությունը հնարավորություն է տալիս պարզել անձի վերարտադրողական գործառույթի իրացման համար անհրաժեշտ առողջական վիճակը: Մասնավորապես՝ ըստ նշյալ օրինադրույթի՝ մարդու վերարտադրողությունը մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար

բարեկեցության վիճակն է՝ կապված վերարտադրողական համակարգի, դրա գործառույթների ու կենսընթացների հետ:

Նշյալ օրինադրույթից հետևում է, որ օրենսդիրը մարդու վերարտադրողական առողջությունը բնորոշել է որպես երեք փոխկապակցված բաղադրիչների լիակատար բարեկեցության վիճակ, որը պայմանավորում է վերարտադրողական գործառույթի բնականոն իրացումն ու դրա հետ կապված բնականոն կենսաբանական գործընթացները: Ընդ որում՝ ինչպես պարզորոշվում է քննարկվող օրինադրույթի բովանդակությունից, օրենսդիրը վերարտադրողական առողջությունը պայմանավորող գործոնների շարքում տարիքը չի նշել, ինչից հետևում է, որ Օրենքի կարգավորման առարկայի և նպատակի իմաստով վերարտադրողական առողջության լիարժեքությունը ենթակա է գնահատման մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության տեսանկյունից, որտեղ տարիքը ոչ թե վերարտադրողական առողջության վիճակը կանխորոշող, այլ ընդամենը ուշադրության արժանի գործոն է՝ ի թիվս մարդու հոգեֆիզիոլոգիական և սոցիալական վիճակի վրա ազդող այլ գործոնների:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տարիքով պայմանավորված՝ վերարտադրողականության վրա ազդող հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխություններն իրենց բնույթով բացարձակ և անվերապահ չեն, հետևաբար՝ a priori բոլորին բնորոշ չեն և յուրաքանչյուր դեպքում ենթակա են մասնագիտական առանձին գնահատման:

Վերոնշյալի հետ մեկտեղ՝ հնարավոր ֆիզիոլոգիական պատճառներով պայմանավորված ռիսկերն արդյունավետորեն կառավարելու նպատակով սահմանված է համապատասխան օրենսդրական կառուցակարգ՝ Կառավարության 2013 թվականի մարտի 7-ի «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» № 214-Ն որոշումը, որով նախատեսված են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հակացուցումները, դրանց ախտորոշման կարգը և համապատասխան վարչարարությունը: Սրանով ինստիտուցիոնալ հիմքեր են ստեղծվում, այդ թվում՝ տարիքով պայմանավորված՝ այն ֆիզիոլոգիական խնդիրների բացահայտման համար, որոնք անհամատեղելի են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ, ըստ այդմ՝ նման խնդիրների առկայության դեպքերում կանխելով «արհեստական» ճանապարհով վերարտադրողականությունը: Միաժամանակ, եթե մարդը չունի հակացուցումներ, ապա տարիքը, ինքնին, «արհեստական» ճանապարհով վերարտադրողականության համար սահմանադրաչափ սահմանափակում լինել չի կարող:

Վերոնշյալից հետևում է, որ Որոշմամբ վերատադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման գործընթացը կառուցակարգված է այնպես, որ վեր հանվեն վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման

համար դիմած անձի առողջական հնարավոր խնդիրները, որոնք համակցված կարող են դիտարկվել որպես վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորության սահմանափակման իրավաչափ (սահմանադրաչափ) պայման:

Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Որոշմամբ սահմանված իրավական գործիքակազմով առողջության պաշտպանության հանրային շահն արդյունավետորեն հավասարակշռված է, ինչը թույլ է տալիս համակողմանի ախտորոշմամբ պարզել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի մոտ համապատասխան բժշկական հակացուցումների առկայությունը՝ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով նպատակազուրկ դարձնելով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքին՝ որպես մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ծավալում ընդգրկված իրավունքին, տարիքային անվերապահ սահմանափակման միջոցով պետության միջամտությունը:

Ավելին՝ հղիությունը փաստացի կրող կնոջ մոտ, տարիքով պայմանավորված, կարող են տեղի ունենալ ֆիզիոլոգիական անդառնալի փոփոխություններ, կամ մեծ տարիքում առողջական վիճակից ելնելով, հղիությունը կրելը կարող է լինել ռիսկային, ինչը ենթակա է համարժեք մասնագիտական քննության և գնահատականի, մինչդեռ տղամարդկանց և հղիությունը փաստացի չկրող կանանց պարագայում տարիքով պայմանավորված ֆիզիոլոգիական փոփոխությունները հղիության բնականոն ընթացքի հետ պատճառահետևանքային կապի մեջ չեն գտնվում: Մասնավորապես՝ տղամարդկանց կենսաբանական և ֆիզիոլոգիական կառուցվածքն ու ֆունկցիոնալ հատկանիշները նախատեսում են վերարտադրողական գործառույթի իրացման հնարավորություն՝ անկախ տարիքից: Յուրաքանչյուր դեպքում, սակայն, տղամարդու փաստացի ֆիզիոլոգիական և առողջ պտուղ սաղմնավորելու կարողունակությունը կախված է հոգեֆիզիոլոգիական տարաբնույթ պատճառներից և, այդ թվում՝ օրգանիզմում կատարվող տարիքային փոփոխություններից: Վերջիններս իրենց բնույթով անհատական են, հետևաբար՝ դրանք ընդհանուր միտումներով կանխորոշելը չի կարող արդարացված համարվել:

Նմանապես՝ փաստացի հղիություն չկրող կնոջ բեղմնավորման տարիքային բացարձակ արգելքի սահմանումը ևս չի բխում կնոջ վերարտադրողական առողջության ընդհանուր միտումներից և հատկանիշներից, որոնք, թեև ունեն տարիքային առանձնահատկություններ, սակայն ինչպես տղամարդու պարագայում, կնոջ բեղմնավորման և պտղի առողջության՝ տարիքով պայմանավորված անվերապահ բացասական ցուցիչներ չեն պարունակում:

Հետևաբար՝ բացակայում է հղիության հետևանքով նշյալ կատեգորիայի անձանց առողջության պաշտպանության սահմանադրաչափ նպատակը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող դրույթները՝ որպես մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին պետության միջամտություն, չեն հետապնդում [այլոց] առողջության պաշտպանության սահմանադրաչափ նպատակ:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ մի շարք պետություններում, ինչպիսիք են Հունաստանը, Իսպանիան, Դանիան, Պորտուգալիան, Չեխիան, Շվեդիան, Մեծ Բրիտանիան, գործում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բեղմնավորման տարիքային սահմանափակումներ:

Սրա հետ մեկտեղ Սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ բարձր տարիքի անձինք, ինչպիսիք նշված են վիճարկվող օրինադրույթներում, ընդհանուր առմամբ, ավելի խոցելի են ներքին տարաբնույթ ֆիզիոլոգիական գործընթացների և ախտաբանական երևույթների հանդեպ, հետևապես՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների միջոցով վերարտադրողականության համար դիմելիս բարձր տարիքային խմբի անձանց նկատմամբ պետք է առանձնահատուկ մոտեցում ցուցաբերվի՝ հնարավորինս բացառելու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների միջոցով բեղմնավորմամբ պայմանավորված՝ նրանց կյանքին, առողջությանը և պտղի բնականոն զարգացմանն սպառնացող վտանգները՝ միաժամանակ չհանգեցնելով տարիքի հիմքով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման բացարձակ արգելքի:

Ինչ վերաբերում է Փոփոխված օրենքի քննարկվող օրինադրույթներով ենթադրաբար հետապնդվող այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրաչափ նպատակին, ապա Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ինչպես վերը նշվեց, ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայով ճանաչվում է անձի՝ ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու իրավունքը՝ որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնարար իրավունքի ծավալում ընդգրկված իրավունք: Հետևապես՝ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման՝ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակի առկայության հարցը քննարկելու համար հարկավոր է բացահայտել ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու կոնվենցիոն (սահմանադրական) իրավունքի հետ մրցակցող սահմանադրական այլ իրավունք: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ իրավունքը Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված երեխայի լավագույն շահի իրավունքն է՝ ներառյալ երեխայի կյանքի իրավունքը, որն ամրագրված է նաև ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա)

6-րդ հոդվածի 1-ին մասում[1], «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում և Ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասում:

Քննարկվող հարցի համատեքստում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ «երեխա» հասկացությանը: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի իմաստով երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ:

Համապատասխանաբար՝ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1.1-ին հոդվածի 1-ին կետի և Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք:

Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ երեխան Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված իրավունքների լիարժեք սուբյեկտ է դառնում ծնվելու փաստի ուժով: Հետևապես՝ նախքան երեխայի ծնունդը վերջինիս անձնական, գույքային, սոցիալական և այլ շահերի վերագրումը և դրանցով անձի՝ ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու իրավունքի հավասարակշռումը կամ հակակշռումը չի բխում երեխայի՝ որպես սահմանադրական իրավունքի սուբյեկտի հասկացությունից: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով բացակայում է Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված իրավունքի սուբյեկտը՝ երեխան, բացակայում է նաև Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման՝ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակը:

Սահմանադրական դատարանը ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու իրավունքին պետության միջամտությանը վերաբերելիս հարկ է համարում զուգահեռ անցկացնել բնական ճանապարհով անձի վերարտադրողական գործառույթի իրացման հետ: Ըստ էության, թե՛ վերջինիս և թե՛ պտղի «արհեստական» սաղմնավորման պարագայում տեղի է ունենում պտղի սաղմնավորում, որն առողջական հակացուցումների կամ որևէ պատճառով հղիության ընդհատման բացակայության պայմաններում ավարտվում է երեխայի ծնունդով:

Հանրահայտ փաստ է, որ բնական ճանապարհով անձի վերարտադրողական գործառույթի իրացումը, լինելով մարդու անձնական և ընտանեկան կյանքի անքակտելի տարր և ընդգրկված լինելով ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու կոնվենցիոն (սահմանադրական) իրավունքի ծավալում, ծնողի տարիքի հիմքով պետության միջամտությանը

[1] Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:

ենթակա չէ: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանն անընդունելի է համարում, առանց սոցիալական բացարձակ անհրաժեշտության (սահմանադրաչափ նպատակի), բնական և «արհեստական» ճանապարհներով անձի վերարտադրողականության՝ իրենց էությամբ նույնական գործընթացների նկատմամբ պետության տարբերակված մոտեցումը, որը բնական ճանապարհով անձի վերարտադրողականության դեպքում չեզոք է, իսկ «արհեստական» ճանապարհով անձի վերարտադրողական գործառույթի իրացման դեպքում՝ առանց սահմանադրաչափ հիմքի սահմանափակող:

Վերոնշյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը հարկ է համարում զուգահեռներ անցկացնել նաև վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխա ունենալու և որդեգրման միջև՝ հաշվի առնելով օրենսդրական կարգավորումներով նշյալ երկու դեպքում էլ տարիքային սահմանափակման առկայությունը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում մատնանշել 2025 թվականի հունվարի 14-ի ՍԴՈ-1766 որոշումը, որի համաձայն՝ Ընտանեկան օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր այն մասով, որ որդեգրելու նախապատվության իրավունք չունեցող անձի և որդեգրվողի միջև տարիքային առավելագույն տարբերությամբ պայմանավորված որդեգրման արգելք սահմանելով, այդ արգելքից որևէ բացառություն չի նախատեսում՝ իրավակիրառին զրկելով յուրաքանչյուր կոնկրետ գործի բոլոր հանգամանքները՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու հնարավորությունից:

Նշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն իրավական վերլուծության է ենթարկել երեխայի լավագույն շահի և որդեգրման՝ որպես ծնող դառնալու իրավաբանական եղանակի և երեխայի խնամքի ու դաստիարակության կազմակերպման ձևի, փոխազդեցությունը որդեգրողի առավելագույն տարիքի սահմանման սահմանադրաչափության գնահատման համատեքստում:

Վերահաստատելով և զարգացնելով նշյալ որոշումը՝ Սահմանադրական դատարանն այն վերաբերելի է համարում սույն գործին այնքանով, որքանով ինչպես որդեգրումը, այնպես էլ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխա ունենալը մի կողմից՝ ծնող դառնալու, իսկ մյուս կողմից՝ ապագա կենսաբանական երեխայի կամ որդեգրված երեխայի խնամքի ու դաստիարակության միջոց-երաշխիքներ են, որոնց հավասարակշված և բոլոր լեգիտիմ շահերը նկատի առնող գործադրումը պահանջում է յուրաքանչյուր դեպքի համակողմանի ուսումնասիրություն և բոլոր վերաբերելի փաստական հանգամանքների վերլուծություն:

Համապատասխանաբար՝ թե՛ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման, թե՛ որդեգրման թույլատրման (հաստատման) համար

անհրաժեշտ է քննության առարկա դարձնել առողջական և սոցիալական տարաբնույթ գործոններ, որոնց շարքում ծնողի կամ որդեգրողի տարիքն ուշադրության արժանի հանգամանքներից է, սակայն գնահատման ենթակա է մյուս գործոնների հետ համակցության մեջ՝ առանց նախապատվության: Ավելին՝ որդեգրման պարագայում պետությունը, ի դեմս իրավասու պետական մարմինների, փաստացի հանդես է գալիս առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի կարգավիճակում և ուղղակի պատասխանատվություն է կրում երեխայի հետ կենսաբանական առնչություն չունեցող անձանց միջից երեխայի լավագույն շահը պաշտպանելուն ունակ անձին որոշելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը նրան հանձնելու (վստահելու) համար, ինչը պետության վրա է դնում որդեգրողի սոցիալ-հոգեբանական, ընտանեկան, ֆինանսական, առողջական և այլ հատկանիշները գնահատելու պոզիտիվ պարտականություն: Այսինքն՝ որդեգրման գործընթացում երեխայի լավագույն շահերի երաշխավորման սկզբունքից բխող գործողությունների շրջանակն ամբողջապես պետության իրավասության ներքո է և հիմնված է երեխայի գոյության՝ որպես իրավաբանական փաստի ճանաչման վրա: Փոխարենը՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը ենթադրում է անձի վերարտադրողական-կենսաբանական հատկությունների կիրառման հատուկ ռեժիմ և կարգ, որը, սակայն, որևէ կերպ չի կարող նսեմացնել կենսաբանական ծնող դառնալու անձի ինքնավար իրավունքը, այդ թվում՝ տարիքի մասով, եթե բացակայում են առողջական հակացուցումները: Ըստ այդմ՝ սույն դեպքում երեխայի լավագույն շահը, երեխայի ծննդյան իրավաբանական փաստից ածանցված լինելով, ածանցվում է նաև ծնող դառնալու մարդու իրավունքից, հետևապես՝ վերջինս ապահովելու՝ պետության պոզիտիվ պարտականությունը պետք է հետևողականորեն կատարվի:

Հանրագումարում Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմանը պետության միջամտության սահմանները որդեգրման համեմատությամբ էապես ավելի նեղ են, ինչը նաև պայմանավորում է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման տարիքային սահմանափակման հաղթահարման՝ ՍԴՈ-1766 որոշման համեմատությամբ առավել միանշանակ միջոցի անհրաժեշտությունը:

Հետևապես՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքին պետության միջամտության՝ [այլոց] առողջության պահպանման կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակների պահպանվածությունը պետք է գնահատվի՝ հիմք ընդունելով նաև ծնելիության և բնակչության թվի աճի սահմանադրաչափ նպատակը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդուն վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու

իրավունքի տարիքային սահմանափակումը՝ որպես միջամտություն մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին, չի հետապնդում սահմանադրաչափ նպատակ, հետևաբար՝ չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ իրավասահմանափակման համաչափության սկզբունքին: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը նպատակահարմար չի գտնում անդրադառնալ համաչափության սահմանադրական սկզբունքի մյուս բաղադրատարրերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փոփոխված օրենքով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի տարիքային սահմանափակումն արդեն գործում է ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց նկատմամբ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ չի համարում վիճարկվող օրինադրույթները քննության առնել խտրականության արգելքի սահմանադրական իրավունքի շրջանակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

1 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1775

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1775 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի ապրիլի 1-ին ընդունել է ՍԴՈ-1775 որոշումը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1775 որոշմանը՝ ես՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման եզրափակիչ մասի և դրա հիմքում դրված պատճառաբանությունների վերաբերյալ:

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2024 թվականի հունիսի 10-ի Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է: 2024 թվականի հունիսի 18-ի ՍԴԱՈ-100 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴԱՈ-147 աշխատակարգային որոշմամբ վերոնշյալ գործի դատաքննությունը հետաձգվել է և նշանակվել այլ օր:

Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 22-ի նիստում առաջարկվել է գործի վարույթի կարճման մասին որոշման նախագիծ, որը սակայն չի հավաքել բավարար ձայներ, և ՍԴԱՈ-181 աշխատակարգային որոշմամբ վերոնշյալ գործով զեկուցող դատավորը փոխարինվել է, իսկ

ՍԴԱՈ-182 աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է, գործի դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է այլ օր:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի հունվարի 21-ի ՍԴԱՈ-13 աշխատակարգային որոշմամբ նշված գործի վարույթը կասեցվել է, այնուհետև 2025 թվականի մարտի 11-ի ՍԴԱՈ-37 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործի դատաքննությունը նշանակվել է 2025 թվականի մարտի 25-ին: 2025 թվականի մարտի 25-ի ՍԴԱՈ-44 աշխատակարգային որոշմամբ նշված գործի դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 2025 թվականի ապրիլի 1-ին: Այդ օրը կայացած նիստում Սահմանադրական դատարանն ընդունել է որոշում, որով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչվել են Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. ԴԻՄՈՂԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2.1. Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Դիմող) գտնում է, որ կանանց համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու տարիքային սահմանափակումը սահմանվել է ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի ՀՕ-264-Ն օրենքով: Ըստ Դիմողի՝ խնդրո առարկա կարգավորմամբ ոչ իրավաչափ միջամտություն է նախատեսվել կանանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին. վիճարկվող կարգավորումը հանգեցրել է ինչպես սեռի, այնպես էլ տարիքի հիմքով խտրականության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության խախտման:

Դիմողը, մասնավորապես, նշում է. *«(…) օրենսդրական կարգավորումների համաձայն՝ անկախ որևէ հանգամանքից, այդ թվում՝ բավարար առողջական վիճակի առկայությունից, կանայք, տարիքային շեմի չհաղթահարմամբ պայմանավորված, զրկվում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ, անկախ տարիքային շեմի բավարարման հանգամանքից՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացումը հնարավոր է միայն համապատասխան բժշկասոցիալական ցուցումների առկայության կամ այլ կերպ՝ համապատասխան առողջական վիճակի առկայության ու հակացուցումների բացակայության պայմաններում»*:

Դիմողը գտնում է, որ *«(…) այն հիմնավորումը, որ տարիքային սահմանափակումը թույլ կտա խուսափել ավելի բարձր տարիքի կանանց մոտ*

հղիության հետ կապված հավանական ռիսկերից, բավարար չափով պատճառաբանված չէ: Նախ՝ հստակեցված չեն, թե որոնք են այն հնարավոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ հղիության հետ կապված (օրինակ՝ առողջական, սոցիալական կամ այլ ռիսկեր): Հիմնավորումներում ներկայացված չէ որևէ հետազոտություն կամ ուսումնասիրություն, որով կբացահայտվեն, թե առանց օժանդակ տեխնոլոգիաների կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու արդյունքում հղիության հետ կապված ի՞նչ ռիսկեր են առաջանում հենց 53 տարեկանից բարձր կանանց վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դեպքում: Բացի այդ, վիճարկվող դրույթներով 53 տարեկանից բարձր կանանց համար սահմանված է վերարտադրողականության բոլոր օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու բացարձակ արգելք, և օրենսդրական փոփոխությունների հիմնավորումներով հստակեցված չէ նաև այն հարցը, թե արդյոք վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների բոլոր տեսակների կիրառումը ռիսկային է 53 տարեկանից բարձր բոլոր կանանց համար՝ անկախ առողջական վիճակից ու այլ հանգամանքներից»:

Դիմողը եզրահանգում է, որ խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից խնդրահարույց է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման համար ՀՀ օրենսդրությամբ ամուսնության մեջ գտնվող 53 տարին լրացած, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող 53 տարին լրացած կանանց համար բացարձակ արգելքի սահմանումը, որով տարբերակված մոտեցում է ցուցաբերվում մինչև 53 տարեկան և 53 տարեկանը լրացած կանանց, ինչպես նաև կանանց և տղամարդկանց միջև:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող կարգավորումները խնդրահարույց են նաև մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ ոչ իրավաչափ եղանակով են միջամտում անձի վերարտադրողական ինքնավարությանը, ներառյալ՝ երեխա ունենալու կամ չունենալու որոշումների կայացմանը: Դիմողի դիտարկմամբ՝ օրենսդրական կարգավորումների ընդունման հիմնավորումներում պատշաճ ու բավարար կերպով բացահայտված չէ, թե կանանց համար տարիքային շեմի սահմանմամբ օրենսդիրն ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդել:

Դիմողը գտնում է, որ տվյալ պարագայում կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա չէ արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չափից ավելի խիստ է և շրջանցում է այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները՝ հատկապես նկատի ունենալով այն, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար, բացի տարիքից, անհրաժեշտ է նաև այլ գործոնների, այդ թվում՝ բժշկասոցիալական ցուցումների առկայությունը՝

առանց որոնց վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվել հնարավոր չէ:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը խնդրում է. «(…) «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 29-րդ, 30-րդ, 31-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին հակասող այնքանով, որքանով վիճարկվող դրույթով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի համար սահմանվում է բացարձակ արգելք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող 53 տարին լրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող 53 տարին լրացած կանանց համար»:

2.2. Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) նշում է, որ *«(…) 2021 թվականի հունիսի 4-ի N-264-Ն օրենքի հեղինակը ՀՀ առողջապահության նախարարությունն է: Այդ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշված է, որ տարիքային սահմանափակում նախատեսելը թույլ կտա խուսափել ավելի բարձր տարիքի կանանց մոտ հղիության հետ կապված հավանական ռիսկերից, նկատի ունենալով, որ տարիքի հետ զուգահեռ բարձրանում է կնոջ առողջության և կյանքի համար վտանգ ներկայացնող թե մանկաբարձական, թե ուղեկցող ախտաբանությունների առաջացման հավանականությունը, որոնք կարող են հանգեցնել հղիության անբարենպաստ, ընդհուպ մինչև մահացու ելքի»*:

Ըստ Պատասխանողի՝ վերոշարադրյալի համար հիմք են հանդիսացել բազմաթիվ բժշկական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում արձանագրվել է, որ ավելի մեծ տարիքում երեխա ունենալու դեպքում կա ավելի մեծ հավանականություն և հնարավոր առողջական խնդիրների ռիսկ երեխայի համար: Հետևաբար՝ տարիքային սահմանափակումները հիմնված են բժշկական անվտանգության, ինչպես նաև երեխայի և մոր առողջության հետ կապված ռիսկերի վրա: Ըստ էության, Օրենքի վիճարկվող դրույթով սահմանվել է այն տարիքը, որի ժամանակ անձանց մոտ հիվանդությունների հավանականությունն ավելի բարձր է և ռիսկային (տարիքային սահմանափակումների վերաբերյալ որոշումները հաճախ հիմնված են գիտական ապացույցների, բժշկական փորձաքննությունների հիման վրա): Այս առումով Պատասխանողը պնդում է, որ տարիքային սահմանափակումը խտրական չէ, եթե այն հիմնավորված է հանրային քաղաքականության օրինական նպատակներով, կիրառվում է հավասարապես և համաչափ է:

Պատասխանողի գնահատմամբ՝ խնդրո առարկա սահմանափակումն ինքնանպատակ չէ: Օրենսդրական սահմանափակումներն էական նշանակություն ունեն հանրային առողջության պահպանման համար և ձևակերպված են

այնպես, որ «չեն խախտում մասնավոր իրավունքը, միաժամանակ ապահովելով հավասարակշռությունը հանրային առողջության կարիքների ապահովման և անձնական ազատությունների միջև»:

Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը դիտարկելով համաչափության սկզբունքի համատեքստում՝ Պատասխանողը գտնում է, որ դրանով նախատեսված սահմանափակումը հետապնդում է առողջության պաշտպանության իրավաչափ նպատակ, իսկ ընտրված միջոցը պիտանի և անհրաժեշտ է նպատակին հասնելու համար:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը որպես մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի տարր դիտարկելը

ՍԴՈ-1775 որոշման մեջ Սահմանադրական դատարանը որդեգրել է այն մոտեցումը, որ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը համարվում է Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի տարր: Որոշման այդ մասն աչքի է ընկնում իր պատճառաբանությունների ընդհանուր բնույթով, զուրկ է կոնկրետացումից՝ գործի փաստահիրավական հանգամանքներից ելնելով: Այստեղ առկա են մեթոդաբանական, տրամաբանական բացթողումներ, որոնց հաղթահարման դեպքում եզրակացությունները կլինեին լրիվ հակառակ:

Առաջին հերթին անհրաժեշտ է հստակ տարբերակում դնել վերարտադրողական իրավունքի և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի միջև: Սահմանադրական տրամաբանության տեսանկյունից մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակային ծավալի մեջ անվերապահորեն կարող է ներառվել միայն բնական ճանապարհով վերարտադրման իրավունքը:

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը, այսպես կոչված, համալիր իրավունք է, հետևաբար՝ ամբողջովին չի կարող ներառվել մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոլորտ, քանի որ հիմնականում տեղակայված է առողջության պահպանման ոլորտի սահմանադրական դրույթների կարգավորման տիրույթում:

Բնական ճանապարհով վերարտադրման իրավունքն իրապես մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունից բխող հնարավորությունն է, որը ենթադրում է ծնող դառնալու կամ չդառնալու մարդու ազատ,

կամավոր ընտրությունը, հետևաբար՝ այս դեպքում հարաբերությունների այդ տիրույթն անձեռնմխելի է բոլորի համար, ներառյալ՝ պետության, որը պարտավոր է պահպանել անձեռնմխելիության պահանջները: Այսինքն՝ վերարտադրման բնական իրավունքի՝ որպես մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի տարրի դեպքում սահմանադրական հիմնական իրավունքից տառացիորեն բխում է չմիջամտելու այլոց նեգատիվ պարտավորությունը, և պետության ողջ դերակատարությունն այս դեպքում ուղղված է դրա երաշխավորմանը:

Մինչդեռ, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը՝ որպես վերարտադրման արհեստական եղանակ, իր բնույթով ենթադրում է հակառակը՝ պետության «միջամտություն» (օգնություն, նյութական ու իրավական ապահովում, օժանդակություն), ինչն իր բնույթով ենթադրում է ոչ թե նեգատիվ, այլ պոզիտիվ պարտավորություններ:

Հետևաբար՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը՝ որպես վերարտադրման հավակնության արհեստական ճանապարհ, գտնվում է Սահմանադրության 1-ին հոդվածի՝ «սոցիալական պետության» սկզբունքի, ինչպես նաև Սահմանադրության 3-րդ գլխի որոշ հիմնադրույթների կարգավորման տիրույթում, մասնավորապես՝ 86-րդ հոդվածի (պետության քաղաքականության հիմնական նպատակները) 4-րդ կետի (ծնելիության և բազմազավակության խթանումը), 7-րդ կետի (բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը), 8-րդ կետի (հաշմանդամության կանխարգելումը):

Արված վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի երկու ձևերից (բնական և արհեստական) մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակային ծավալի մեջ մտնում է միայն առաջինը, հետևաբար՝ երկրորդը, դուրս մնալով այդ ծավալից, չունի սահմանադրական պաշտպանության այն ռեժիմը, ինչ առաջինը: Այսինքն՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը ոչ թե Սահմանադրությամբ ամրագրված կամ դրա որոշակի դրույթներից ուղղակիորեն բխող հիմնական իրավունք է, այլ ընդամենը օրենքով կարգավորված անձնական իրավունք:

3.2. Հիմնական իրավունքի սահմանափակման համատեքստում համաչափության թեստի կիրառումը

Արձանագրելով մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի ներառվածությունը մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ծավալում՝ Սահմանադրական դատարանը վերլուծել է վիճարկվող օրինադրույթները որպես

մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքին հանրային իշխանության միջամտություն՝ վերջինիս համաչափության առումով: ՍԴՈ-1775 որոշման մեջ տեղ է գտել Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ նախանշված համաչափության սահմանադրական սկզբունքի և դրա պահանջների վերացական վերլուծությունը:

Հետագա շարադրանքում համաչափության սկզբունքի պահանջներից (1. սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, 2. սահմանափակման համար ընտրված միջոցների՝ ա) պիտանիությունը. բ) անհրաժեշտությունը. գ) համարժեքությունը) սույն գործի հանգամանքների հետ կապված վերլուծվել է միայն սահմանափակման նպատակի լեգիտիմությունը:

Վերլուծության արդյունքում կատարվել է եզրահանգում, որ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքին պետաիրավական միջամտությամբ հետապնդվող նպատակի սահմանադրաչափությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը վերաբերելի է համարում միայն առողջության և այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները: Այս համատեքստում լեգիտիմ նպատակ է դիտարկվել միայն օժանդակ տեխնոլոգիաներով վերարտադրվելու ցանկություն ունեցող կնոջ նախնական առողջությունը, որը, ըստ որոշման, համարվել է ստուգելի: Մյուս կողմից՝ տարիքով պայմանավորված՝ վերարտադրողականության վրա ազդող հնարավոր ֆիզիոլոգիական փոփոխությունները ՍԴՈ-1775 որոշմամբ համարվել են իրենց բնույթով ոչ բացարձակ և ոչ անվերապահ, հետևաբար՝ a priori բոլորին ոչ բնորոշ և յուրաքանչյուր դեպքում ենթակա են մասնագիտական առանձին գնահատման:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ քննարկվող իրավիճակում կնոջ մինչև օժանդակ տեխնոլոգիայով հղիության շրջանի առողջ լինելու հավանականությունից բացի, առկա են նաև պաշտպանության ենթակա այլ լեգիտիմ նպատակներ, մասնավորապես՝ հենց նաև իր՝ հղիություն կրող կնոջ հետագա առողջությունը, ծնվող երեխայի առողջ ծնվելու հավանականությունը, վերարտադրման օժանդակ տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունների պատասխանատվությունը, Սահմանադրության 86-րդ հոդվածի (պետության քաղաքականության հիմնական նպատակները) 7 և 8-րդ կետերից բխող հանրային իշխանության պատասխանատվությունը, քննարկվող իրավահարաբերության մասնակիցների բարոյական պատասխանատվությունը գործընթացի դրամական արժեքի և առողջապահական ռիսկերի բավականին մեծ հավանականության համատեքստում և այլն:

Այնուհետև համեմատելով բնական և արհեստական ճանապարհով վերարտադրությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օժանդակ տեխնոլոգիաներով վերարտադրվելու տարիքային սահմանա-

փակումը որպես մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին պետության միջամտություն, չի հետապնդում [այլոց] առողջության պաշտպանության սահմանադրաչափ նպատակ, հետևաբար՝ չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին:

Հիմք ընդունելով այս եզրակացությունը՝ ՍԴՈ-1775 որոշումը, նպատակահարմար չգտնելով անդրադառնալու համաչափության սահմանադրական սկզբունքի մյուս բաղադրատարրերին, եզրակացնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին:

3.3. Երեխայի լավագույն շահ սահմանադրական արժեքի մեկնաբանումը

ՍԴՈ-1775 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ երեխան «Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված իրավունքների լիարժեք սուբյեկտ է դառնում ծնվելու փաստի ուժով: Հետևապես՝ նախքան երեխայի ծնունդը վերջինիս անձնական, գույքային, սոցիալական և այլ շահերի վերագրումը և դրանցով անձի՝ ծնող դառնալու և ծնող չդառնալու որոշումները հարգելու իրավունքի հավասարակշռումը կամ հակակշռումը չի բխում երեխայի՝ որպես սահմանադրական իրավունքի սուբյեկտի հասկացությունից: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով բացակայում է Սահմանադրության 37 հոդվածի 2-րդ մասով երաշխավորված իրավունքի սուբյեկտը՝ երեխան, բացակայում է նաև Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման՝ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակը»:

Նման սահմանափակ մեկնաբանությունը հակասում է նախ՝ երեխայի կարգավիճակի վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերին, ինչպես նաև ներպետական իրավունքի որոշակի մոտեցումներին, ինչպես նաև չծնված երեխայի իրավունքների ճանաչման համաշխարհային միտումներին: Մյուս կողմից՝ «երեխա» հասկացության սահմանադրական մեկնաբանությունը կառուցվում է օրենքով ամրագրված «երեխա» հասկացության բնորոշման վրա, ինչը մեթոդաբանական տեսանկյունից անընդունելի է:

Այն, որ չծնված երեխան ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ ճանաչված է իրավունքի սուբյեկտ որոշակի իրավահարաբերություններում, ակնհայտ է: Բացի դրանից, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի նախաբանը սահմանում է. *«երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգա-*

փարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո»:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը սահմանում է.

«1. *Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:*

2. Այն միջոցները, որոնք այդ իրավունքի իրականացման համար պետք է ընդունվեն սույն դաշնագրին մասնակցող պետությունների կողմից, ընդգրկում է միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են հանուն

ա) մեռելածնության և մանկական մահացության կրճատման ապահովման և երեխայի առողջ զարգացման, (...)»:

3.4. Վերարտադրության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման միջոցով երեխա ունենալու և որդեգրման միջև զուգահեռների անցկացումը

2025 թվականի հունվարի 14-ի ՍԴՈ-1766 որոշմամբ Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է «*Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր այն մասով, որ որդեգրելու նախապատվության իրավունք չունեցող անձի և որդեգրվողի միջև տարիքային առավելագույն տարբերությամբ պայմանավորված որդեգրման արգելք սահմանելով, այդ արգելքից որևէ բացառություն չի նախատեսում՝ իրավակիրառին զրկելով յուրաքանչյուր կոնկրետ գործի բոլոր հանգամանքները՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու հնարավորությունից*»:

Երկու տարաբնույթ հասարակական հարաբերությունների միջև համեմատության իրականացումը և որդեգրման դեպքում ընդունված որոշումը պայմանավորող մեթոդաբանության կիրառումն օժանդակ տեխնոլոգիաների միջոցով երեխա ունենալու նկատմամբ իրավաբանորեն անընդունելի է, քանզի դրանք որպես հասարակական հարաբերություններ իրենց բնույթով իրարից էականորեն տարբերվում են: Որդեգրումը՝ որպես հասարակական հարաբերություն, ունի առկա (պոզիտիվ) սոցիալական հիմքեր, հետևաբար՝ այն կանխատեսելի և վերահսկելի է, ենթակա է բացասական հետևանքների շտկման, կարող է նաև ճանաչվել անվավեր՝ երեխայի լավագույն շահերից ելնելով: Մինչդեռ օժանդակ տեխնոլոգիաների միջոցով երեխա ունենալու տարիքային սահմանափակման հիմքում ընկած են տարիքով պայմանավորված բժշկաֆիզիոլոգիական, բնական օրինաչափություններ, որոնք չունեն լրիվ վերահսկելիություն, հավաստիություն, իսկ շատ դեպքերում անդառնալի ու անուղղելի են: Այս պարագայում տարիքային սահմանափակումը կանխորոշիչ միջոց է որոշակի անդառնալի հետևանքների համար:

3.5. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին կատարված հղումները

ՍԴՈ-1775 որոշման պատճառաբանական մասում հղում է արվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին: ՄԻԵԴ-ը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի համատեքստում անդրադարձել է մարդու վերարտադրողական իրավունքին:

ՍԴՈ-1775 որոշումը վկայակոչում է երկու գործ, որոնցից **առաջինից** վերցվել է այն միտքը, որ «մասնավոր կյանք» հասկացությունը ներառում է ծնող դառնալու կամ ծնող չդառնալու որոշումների նկատմամբ հարգանքի իրավունքը[1], իսկ երկրորդից՝ ծնող դառնալ-չդառնալու (վերարտադրողականության) իրավունքի հիմքում դրվել է գենետիկ ծնող դառնալու կամ չդառնալու հանգամանքը՝ առանց նախանշելու գենետիկ վերարտադրման եղանակը՝ բնական, թե «արհեստական», այդ թվում՝ օժանդակ տեխնոլոգիաների օգնությամբ գենետիկ վերարտադրությունը[2]:

Սակայն երկու գործերին կատարված հղումները, կտրված գործի փաստական և իրավական հանգամանքների ընդհանուր համատեքստից, չեն կարող ամփոփել ՄԻԵԴ-ի ողջ պրակտիկան և ուղեցույց դառնալ սույն գործով ելքային լուծման համար, որովհետև, օրինակ՝ մեկ այլ գործով անդրադառնալով երեխայի և ծնողների փոխհարաբերություններին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որ իշխանությունները երեխայի և ծնողների շահերի միջև գտնեն արդար հարաբերակցություն և այդ շահերը հավասարակշռելիս հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին, որոնք, կախված իրենց բնույթից և լրջությունից, կարող են գերակշռել ծնողների շահերը: Մասնավորապես՝ 8-րդ հոդվածի համաձայն **ծնողին չի կարող տրամադրվել այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունք, որոնք վնաս են հասցնում երեխայի առողջությանը և զարգացմանը**[3]:

[1] Տե՛ս Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Evans v. The United Kingdom) գործով ՄԻԵԴ-ի 2007 թվականի ապրիլի 10-ի վճիռ, կետ 58:

[2] Տե՛ս Էմ.Էլ.-ն ընդդեմ Լեհաստանի (M.L. v. Poland)) գործով ՄԻԵԴ-ի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ, կետ 91:

[3] Տե՛ս Ռուշչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Rytchenko v. Russia) գործով ՄԻԵԴ-ի 2011 թվականի հունվարի 20-ի վճիռ, § 39:

Վերարտադրողական գենետիկայի ոլորտում ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի ամփոփումը ցույց է տալիս, որ այդ **դատարանի պրակտիկայում վերարտադրողական իրավունքի տարիքային սահմանափակումները երբեք չեն դարձել քննարկման առարկա:** Բացի դրանից, ՄԻԵԴ-ն իր նախադեպային մոտեցումները կառուցել և կառուցում է հետևյալ մոտեցումների վրա՝

1) պետությունների հայեցողությանը բավականին լայն տեղ տալը, որը ենթադրում է ՄԻԵԴ-ի ընդհանուր վերահսկողություն և դատական վերահսկողության ցածր ինտենսիվություն[4],

2) զգուշորեն արտահայտված անհամաձայնությունը՝ ազգային դատական մարմինների օժանդակ վերարտադրողական ու գենետիկ տեխնոլոգիաների հարցերով իրավակիրառումը գնահատելիս[5],

3) ազգային դատական մարմինների որոշումների կամ սահմանված իրավակարգավորումների հետ կատեգորիկ անհամաձայնությունը: Այս դեպքերում ՄԻԵԴ-ը պահանջում է ազգային դատական մարմինների որոշումները կամ սահմանված իրավակարգավորումները համապատասխանեցնել իր արտահայտած իրավական դիրքորոշումներին: Սակայն այդ նախադեպային որոշումների մեջ չկան սույն գործի հիմքում ընկած տարիքային սահմանափակման համատեքստերը[6],

[4] Այս մոտեցման հիմնական հատկանիշներն են օժանդակ վերարտադրողականության ու գենետիկ տեխնոլոգիաների կիրառման հարցերով համաեվրոպական փոխզիջումների բացակայությունը, օրենսդրի ընտրած կարգավորման տեսլականի վճռորոշ նշանակությունը, ազգային դատական մարմինների որոշումների նկատմամբ հարգանքը, սահմանափակ մեկնաբանումը:

[5] Մասնավորապես՝ այդպիսի հարցերից են բժշկական սխալները, օժանդակ վերարտադրողականության ու գենետիկ տեխնոլոգիաների կիրառման հասանելիության ապահովման կազմակերպումից հրաժարվելը, ծնողներին ու ծնված երեխային բարոյական տառապանքների համար նվազագույն հատուցում տալու ծավալը: Այդ գործերից են՝ 1) A.K. v. Latvia № 33011/08. Judgment of 24 June 2014. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-145005, 2) Eryiğit v. Turkey № 18356/11). Judgment of 10 April 2018. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-196747, 3) R.R. v. Poland № 27617/04. Judgment of 26 May 2011. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-104911, 4) Draon v. France № 1513/03. Judgment of 6 October 2005. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-75905, 5) Maurice v. France № 11810/03. Judgment of 21 June 2006. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-185571.

[6] Օրինակ՝ Դիկսոնն ընդդեմ Միացյալ թագավորության գործը, որում դիմողներից մեկը ցմահ ազատազրկման դատապարտված անձ էր, որին օրենսդրությունը արգելում էր հասանելիությունը օժանդակ տեխնոլոգիաներով վերատարդրվելու (Dickson v. the United Kingdom № 44362/04. Judgment of 4 December 2007. URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-83788): Մեկ այլ գործով՝ S.H. and Others v. Austria № 57813//00. Judgment of 3 November 2011. (URL: https://hudoc.echr.coe.int/fre?i=002-309) ՄԻԵԴ-ը ոչ իրավաչափ ճանաչեց Ավստրիայի օրենսդրությունը, որն արգելում էր օժանդակ տեխնոլոգիաներով վերատարդրությունը: Կոստան և Պավանն ընդդեմ Իտալիայի գործով (Costa and Pavan v. Italy № 54270/10. Judgment of 28 August 2012. (URL: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-112993) ՄԻԵԴ-ի որոշումը ազգային օրենսդրության արգելող նորմերը ճանաչեց Կոնվենցիայի 8-րդ հոդվածը խախտող:

4) ազգային իրավական կարգավորումների համար հատուկ խորհրդատվական հրահանգների մշակումը, որոնց շրջանակներում ՄԻԵԴ-ը սահմանել է մասնակից պետությունների օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի հետագա զարգացման ուղղությունները[7]:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնդրո առարկա գործով վարույթը ենթակա էր կարճման՝ ելնելով դիմումի հիմնավորումներից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջները՝ ներքոշարադրյալ պատճառաբանություններով.

1. Վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտը, բարձրացվող սահմանադրաիրավական վեճի առարկան և շրջանակը մատնանշելով, պետք է հստակ հիմնավորի վիճարկվող նորմերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին ուղղակիորեն հակասելու պատճառահետևանքային կապը՝ դիմումի շրջանակներում ներկայացնելով վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը փաստող բազմաբովանդակ պատճառաբանություններ՝ զերծ մնալով միակողմանի դիրքորոշումներ և դատողություններ վկայակոչելուց: Ելնելով իրենց սահմանադրաիրավական կարգավիճակից՝ հիշատակված սուբյեկտները պետք է ցուցաբերեն առավել բարձր մակարդակի փութաջանություն և, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի/դրույթների սահմանադրականությունը՝ պատշաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը:

2. Վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի կողմից ներկայացված փաստարկները վկայում են, որ դրանց վերաբերյալ Դիմողի եզրահանգումները հիմնավոր պատճառաբանված չեն և չեն կարող Դիմողի կողմից բարձրացված հարցին սահմանադրաիրավական վեճի բովանդակություն հաղորդել: Այսպես՝

ա) Դիմողը պնդում է, որ Օրենքի՝ վիճարկվող դրույթով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար կանանց տարիքային

[7] Այսպես՝ ՄԻԵԴ-ը, 2014 թ. քննելով արտասահմանում փոխնորդ մորից ունեցած երեխաների իրավունքների հետ կապված երկու գործ, կայացրեց որոշումներ, որոնք էականորեն փոխեցին ֆրանսիական օրենսդրությունը (տե՛ս Mennesson v. France № 65192/11. Judgment of 26 June 2014. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-145389, Labassee v. France № 65941/11. Judgment of 26 June 2014. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-155606): Արտասահմանցի փոխնորդ մոր հետ կապված մեկ այլ գործով (Laborie v. France № 44024/13. Judgment of 19 January 2017. URL: https://hudoc.echr.coe.int/?i=001-151104) Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը դիմել է ՄԻԵԴ-ին՝ խորհրդատվական եզրակացություն ստանալու համար, և այդ եզրակացությունը դարձավ նրա դատական պրակտիկայի մաս՝ էականորեն խթանելով ազգային օրենսդրության զարգացումը:

շեմի սահմանումը հանգեցնում է Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման: Սակայն այս առնչությամբ Դիմողի ներկայացրած փաստարկներն առավելապես վերաբերելի են Օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի հունիսի 4-ի թիվ ՀՕ-264-Ն օրենքի նախագծի հիմնավորվածությանը: Այսպիսով Դիմողն իր անհամաձայնությունն է հայտնում կատարված օրենսդրական փոփոխություններին՝ առավելապես մատնանշելով դրանց ոչ պատճառաբանված լինելը, որպիսի հանգամանքն ինքնին դեռևս չի հիմնավորում վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը,

բ) Դիմողի կողմից ներկայացված պատճառաբանությունները, որ վիճարկվող կարգավորումներն անհամաչափորեն միջամտում են անձի՝ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին, խիստ սահմանափակ են և միակողմանի, հաշվի չեն առնում երեխայի լավագույն շահերը: Հետևապես՝ պնդումներն առ այն, որ վիճարկվող դրույթն անհամաչափ միջամտում է վերոնշյալ հիմնական իրավունքին և չի համապատասխանում Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին՝ անհիմն է, որովհետև Դիմողն իր տեսակետը հիմնավորելիս չի ներկայացրել որևէ հիմնավոր փաստարկ օրենսդրի կողմից իրավահարաբերությունների սուբյեկտների միջև հավասարակշռության անհամաչափ պահպանման առնչությամբ, բավարարվել է միայն պնդումներով առ այն, որ վիճարկվող դրույթները խախտում են կանանց սահմանադրական իրավունքները՝ դրանց անհամաչափ միջամտությամբ,

գ) Դիմողը պնդում է, որ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար կանանց տարիքային շեմի սահմանումը խախտում է խտրականության արգելքի և կանանց ու տղամարդկանց միջև իրավահավասարության սկզբունքները: Սակայն տարիքային շեմի առկայությունը միայն կանանց համար պայմանավորված է կնոջ՝ մի շարք ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, մասնավորապես՝ հղիությունը կրելու: Ուստի՝ Օրենքի կարգավորման ոլորտի յուրահատկությունից և հանրային լրջագույն կարևորությունից ելնելով՝ օրենսդրի հայեցողությունն է կանանց և երեխաների պաշտպանության և առողջության նկատառումներից ելնելով՝ տարբերակված կարգի սահմանումը, որպիսի պարագայում Դիմողի կողմից չի հիմնավորվում կանանց և տղամարդկանց իրավահավասարության խախտումը, այդ թվում՝ սեռով պայմանավորված խտրականության առկայությունը,

դ) Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթով առկա է տարիքային հիմքով խտրական մոտեցում կանանց միջև: **Սակայն տարիքը որոշակի պայմաններում օբյեկտիվ հիմքերով տարբերակման իրավաչափ հիմք է:** Մյուս կողմից՝ Օրենքով նախատեսված է տարբերակված իրավակար-

գավորում այն կանանց համար, որոնք վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու արդյունքում կրում են հղիությունը և այն կանանց համար, որոնք վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվում են այլ կնոջ (փոխնակ մոր) միջոցով:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դիմողը չի ներկայացրել վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավոր փաստարկներ, իսկ նրա մտահոգություններն ու վիճարկվող կարգավորումների նախագծային հիմնավորումների հետ անհամաձայնություններն ինքնին չեն կարող դիտվել իբրև վիճարկվող դրույթների հակասահմանադրականության հիմնավորումներ: Հետևաբար՝ Դիմողը չի հաղթահարել Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հիմնավորված դիմում ներկայացնելու օրենսդրական նախապայմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

10 ապրիլի 2025 թվականի

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 ապրիլի 2025 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահ՝ Արման Դիլանյանի,
դատավորներ՝ Վահե Գրիգորյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ սույն որոշման մեջ նաև՝ Դիմող),

ներկայացուցիչ՝ Դավիթ Հարությունյանի,

պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ սույն որոշման մեջ նաև՝ Պատասխանող),

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող օրենքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Վարույթը Սահմանադրական դատարանում

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-240-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2020 թվականի ապրիլի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2020 թվականի մայիսի 11-ին և ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 23-ին:

2. Ընդունումից ի վեր՝ վիճարկվող Օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ 2021 թվականի մարտի 3-ին ընդունված ՀՕ-91-Ն, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-334-Ն, 2022 թվականի հունիսի 9-ին ընդունված ՀՕ-159-Ն, 2022 թվականի հունիսի 9-ին ընդունված ՀՕ-270-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված ՀՕ-578-Ն, 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված ՀՕ-396-Ն և 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված ՀՕ-196-Ն օրենքներով:

3. Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

4. Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՈ-47 աշխատակարգային որոշմամբ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության: Որոշվել է գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով, իսկ սույն գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել նշված օրենքն ընդունած մարմնին՝ Ազգային ժողովին:

5. Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-115 աշխատակարգային որոշմամբ սույն գործով վարույթը կասեցվել է՝ մինչև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի»՝ սույն աշխատակարգային որոշման մեջ նշված հարցերի կապակցությամբ խորհրդատվական կարծիքն ստանալը: Նշված աշխատակարգային որոշմամբ խորհրդատվական կարծիք (*amicus curiae*) ստանալու նպատակով ներկայացվել են հետևյալ հարցերը.

1) արդյո՞ք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը համատեղելի է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտին առաջադրվող՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական կիրառելի ստանդարտներին,

2) արդյո՞ք դատաքննության իրավունքի և իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության նպատակով արդյո՞ք առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթում կողմերի միջև ապացուցման բեռի արդարացի բաշխման և ապացուցման ստանդարտների հարցում համեմատական սահմանադրական իրավունքի դիտանկյունից «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» անդամակցող պետություններում լավագույն փորձը,

3) հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 23-ին, արդյո՞ք մինչև այդ ձեռք բերված գույքի ծագման օրինականությունն ապացուցելու դատավարական պարտականությունը համատեղելի է օրենքի հետադարձ կիրառության արգելքի վերաբերյալ եվրոպական հնարավոր ստանդարտների հետ,

4) արդյո՞ք մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգերի հարուցման և իրականացման համար «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով ամրագրված առավելագույն ժամկետի սահմանված չլինելը համատեղելի է իր գույքից օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական ստանդարտի հետ:

6. 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ստացվել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) 2022 թվականի դեկտեմբերի 19-ի CDL-AD(2022)048 կարծիքը (թիվ 1108/2022) (այսուհետ նաև՝ Խորհրդատվական կարծիք):

7. Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 7-ի ՍԴԱՈ-83 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է, քանի որ 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-115 աշխատակարգային որոշմամբ սահմանված հիմքերը վերացել են:

8. Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 7-ի ՍԴԱՈ-84 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է՝ մինչև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից նույն աշխատակարգային որոշմամբ պահանջվող տեղեկությունների և այլ ապացույցների ստացումը: Դատախազության պատասխանն ստացվել է 2023 թվականի օգոստոսի 18-ին:

9. Զեկուցող դատավորի կողմից 2022 թվականի մայիսի 11-ի ՍԴԴ-57, 2023 թվականի հուլիսի 11-ի ՍԴԴ-44 գրություններով տեղեկություններ են պահանջվել նաև գլխավոր դատախազից, որոնց պատասխաններն ստացվել են համապատասխանաբար՝ 2022 թվականի հունիսի 1-ին և 2023 թվականի օգոստոսի 17-ին:

10. Զեկուցող դատավորի կողմից 2022 թվականի մայիսի 11-ի ՍԴԴ-58 գրությամբ տեղեկություններ են պահանջվել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահից, որի պատասխանն ստացվել է 2022 թվականի հունիսի 2-ին և 7-ին:

11. Զեկուցող դատավորի կողմից 2022 թվականի մայիսի 11-ի ՍԴԴ-59 գրությամբ տեղեկություններ են պահանջվել նաև Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչից, որի պատասխանն ստացվել է 2022 թվականի հունիսի 6-ին:

12. Զեկուցող դատավորի կողմից պահանջվել են նաև տեղեկություններ Դատական դեպարտամենտից՝ 2023 թվականի հուլիսի 11-ի ՍԴԴ-43 գրությամբ, որի պատասխանն ստացվել է 2023 թվականի օգոստոսի 14-ին:

13. Սահմանադրական դատարանի՝ 2025 թվականի մարտի 25-ի ՍԴԱՈ-46 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է:

14. 2025 թվականի մարտի 25-ի ՍԴԱՈ-45 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է, որ Սահմանադրական դատարանի դատավոր Հրայր Թովմասյանի մասնակցությունը գործի քննությանն անհնարին է:

15. 2025 թվականի մարտի 26-ի ՍԴԱՈ-47 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել է գործով զեկուցող դատավորի պահանջով Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտից ստացված նյութերը՝ դրանցում պարունակվող տեղեկությունների՝ գործով հնարավոր որևէ ելքի համար նշանակություն չունենալու, ինչպես նաև դրանցում հիշատակված անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության՝ Սահմանադրության 31 և 34-րդ հոդվածներով երաշխա-

վորված հիմնական իրավունքներին առանց իրավաչափ նպատակի անհամաչափ միջամտությունը բացառելու նկատառումներով չճանաչել գործի նյութեր:

I. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԻ ՇՐՋԱՆԱԿԸ

16. Սույն դիմումը ներկայացվել է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից, որով Դիմողը վիճարկում է ողջ Օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Դիմումում ներկայացված հիմնավորումները, թեպետ որոշ դեպքերում պարունակում են Օրենքի կոնկրետ դրույթների հիշատակումներ, սակայն բարձրացված հարցերի՝ գլխավորապես հայեցակարգային բնույթ ունենալու պայմաններում ընդհանրական են:

17. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում սահմանադրական արդարադատություն հայցող հանրային իշխանության մարմինների, այդ թվում նաև՝ Դիմողի կողմից Սահմանադրական դատարանին հասցեագրվող դիմումներին առաջադրվող հիմնավորվածության պահանջի բովանդակությունը բացահայտող դիրքորոշումներ է արտահայտել:

18. Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշմամբ նշել է.

> «Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող համապատասխան պետական մարմինների և պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրել այն հարցին, որ սահմանադիրը վերջիններիս իրավունք է վերապահել հայցել սահմանադրական արդարադատություն բացառապես սահմանադրաիրավական բովանդակություն ունեցող վեճերով, այն է՝ Սահմանադրության 168-րդ հոդվածով եզրագծված այն հարցերով, որոնց առարկան անմիջականորեն կապված է Սահմանադրության նորմերի մեկնաբանման և կիրառման, պետական իշխանության օրինական հաջորդականության երաշխավորման, իրավական անվտանգության, սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հետ և այլն:
>
> Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտները պարտավոր են դիմումի շրջանակներում հիմնավորել բարձրացված հարցի՝ Սահմանադրական դատարանում քննության ենթակա լինելու, այն է՝ սահմանադրաիրավական վեճ հանդիսանալու հանգամանքը[1]»:

19. Մեկ այլ՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴԱՈ-251 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը շեշտադրել է.

[1] Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշում, կետ 3.1:

«(…) Սահմանադրական դատարան դիմող այնպիսի սուբյեկտների պարագայում, որպիսիք են, օրինակ, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը և այլն, օրենսդրի մոտեցումը՝ սահմանափակվել Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին առաջադրվող ընդհանուր ձևական բնույթի պահանջների շարադրմամբ, ամենևին չի վկայում դիմումում վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պատշաճ հիմնավորումներ ներկայացնելու՝ Դիմողների պարտականության բացակայության մասին[2]»:

20. 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՈ-46 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է.

«(…) սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտների կողմից ներկայացվող համապատասխան դիմումը պետք է բավարարի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածով ամրագրված պահանջները՝ բովանդակելով, ի թիվս այլնի, նաև սահմանադրաիրավական վեճի էությունը և տվյալ վեճի առկայությունը հավաստող փաստարկները, ընդ որում՝ *որպիսիք չեն կարող դիտարկվել հանրային իշխանության այս կամ այն մարմնի կայացրած որոշումների հետ անհամաձայնությունը կամ տվյալ մարմնի գործունեության քննադատությունը*[3]»:

21. 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴԱՈ-105 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է.

«Գնահատման առարկա դարձնելով խնդրո առարկա վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի կողմից ներկայացված փաստարկները՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Դիմողի դատողությունները որևէ կերպ պատճառաբանված չեն, հիմնված են խիստ վերացական ենթադրությունների, իրավակիրառ պրակտիկայում հնարավոր հակասական մեկնաբանության և կիրառման վրա, որպիսի հանգամանքը Սահմանադրական դատարանին թույլ է տալիս արձանագրել, որ Դիմողն առաջնորդվում է *իրավակիրառի՝ վիճարկվող դրույթների հակասահմանադրական մեկնաբանման և կիրառման չհիմնավորված կանխավարկածով,* ինչը չի կարող ինքնին ներկայացված ենթադրյալ վեճին սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդել:

(…)

(…) Սահմանադրական դատարանը կրկին անգամ ընդգծում է, որ Օրենսդրի հայեցողության տիրույթում է իրավական նորմերը ձևակերպել, այդ թվում նաև՝ անորոշ իրավական հասկացությունների օգտագործմամբ՝ իրավակիրառին տալով, դրա կենսագործման ընթացքում կոնկրետ իրավիճակից և գործի փաստական

[2] Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴԱՈ-251 աշխատակարգային որոշում, կետ 4:

[3] Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՈ-46 աշխատակարգային որոշում, կետ 3.4:

հանգամանքներից ելնելով, նորմին իրավաչափ բովանդակություն/մեկնաբանություն հաղորդելու հնարավորություն: Ըստ այդմ՝ անորոշ իրավական հասկացությամբ պայմանավորված՝ նորմի՝ ապագայում ձևախեղված հնարավոր մեկնաբանության և կամայական կիրառման վերաբերյալ վերացական ենթադրությունները, ինքնին սահմանադրական վերահսկողության առարկա չեն կարող դառնալ:

(…)

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը չի ներկայացրել վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավոր փաստարկներ, իսկ վերջինիս մտահոգությունները՝ կապված իրավակիրառ պրակտիկայում դրանց հնարավոր հակասահմանադրական մեկնաբանության և կիրառման հետ, *կարող են սահմանադրական վերահսկողության առարկա դառնալ այն պարագայում, երբ իրավակիրառ պրակտիկան իրապես զարգանա Դիմողի կողմից վկայակոչված հակասահմանադրական հունով:*

(…)

Սահմանադրական արդարադատություն հայցելիս օրենսդրական բարձր գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում ենթադրյալ հակասահմանադրական իրավակարգավորումները Բարձր դատարանի առջև բարձրացնելու նպատակային գործիքակազմը մշտապես պետք է ծառայի հանրային կյանքի բոլոր ոլորտներում Սահմանադրության գերակայության հաստատմանն ու ամրապնդմանը:

Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումներն իրենց բովանդակությամբ պետք է բարձրացնեն հասարակական կյանքի տարաբնույթ ոլորտների վիճելի իրավակարգավորումների սահմանադրականության խնդիրներ, ուստի՝ յուրաքանչյուր դեպքում բարձր կարգավիճակ ունեցող սուբյեկտները պարտավոր են դիմումի շրջանակներում ձգտել առավելագույնս բացահայտել վիճարկվող օրինադրույթների հակասահմանադրականությունը՝ ինչպես իրավական, այնպես էլ մեթոդաբանական ու մեկնաբանողական ճիշտ գործիքակազմի կիրարկմամբ՝ պայմանավորված նաև իրողությամբ առ այն, որ սահմանադրաիրավական վեճ պարունակող դիմումի ընդունելիությունը բխում է, նախևառաջ, բացառապես հանրային շահով առաջնորդվող Դիմողի շահերից[4]»:

22. Սահմանադրական դատարանի վերը թվարկված դիրքորոշումները հավասարապես վերաբերելի են սույն գործին: Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտների կողմից ներկայացվող համապատասխան դիմումը պետք է բավարարի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածով ամրագրված պահանջները՝ բովանդակելով, ի թիվս այլնի, նաև սահմանադրական վեճի էությունը և տվյալ վեճի առկայությունը

[4] Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴԱՈ-105 աշխատակարգային որոշում, կետ 3:

հավաստող փաստարկները, համապատասխան նորմատիվ իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրականությունը պայմանավորող կոնկրետ դրույթների՝ Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող դատողությունների տրամաբանական շղթան, որպիսիք չեն կարող դիտարկվել լոկ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող դրույթի հակասահմանադրական մեկնաբանման և կիրառման վերաբերյալ տեսական ենթադրություններն ու մտահոգությունները: Ավելին, իրավական դրույթի սահմանադրականության վերացական ստուգման շրջանակում այդ դրույթի տարակերպ մեկնաբանության հնարավորությունն ինքնին դրա՝ Սահմանադրությանը համապատասխանության իմաստով խնդրահարույց համարվելու համար բավարար լինել չի կարող:

23. Սույն սահմանադրական վեճի շրջանակում գործի քննությունը վերաբերելու է միայն Դիմողի կողմից ներկայացված հիմնավորումների սահմաններում Օրենքի դրույթ(ներ)ի սահմանադրականության ստուգմանը, և Սահմանադրական դատարանը Դիմողի կողմից չառաջադրված հարցերին չի անդրադառնալու հետևյալ պատճառներով.

24. *Առաջին*՝ Սահմանադրական դատարանը քննում է հատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումը, որի կազմում ներգրավված պատգամավորների՝ օրենսդրական գործունեության մեջ ներգրավվածության բերումով ունեցած որակներն առավել քան բավարար են, որպեսզի վերացական վերահսկողության շրջանակում Սահմանադրական դատարանը լիովին վստահի ներկայացված հիմնավորումների՝ Դիմողի համար սպառիչ լինելուն: Սահմանադրական դատարանը Դիմողի կամ այլ սուբյեկտի փոխարեն չի կարող հիմնավորումներ առաջադրել և վերացական ստուգման շրջանակում անդրադառնալ դրանց: Հակառակ մոտեցումը կարող է թույլատրելի լինել անհատական դիմումի քննության դեպքում, ինչպես Սահմանադրական դատարանը բազմիցս վարվել է, սակայն ոչ՝ հանրային իշխանության մարմին հանդիսացող դիմող սուբյեկտների պարագայում:

25. *Երկրորդ*՝ սույն գործով ներկայացված դիմումն աննախադեպ է նրանով, որ դրանով վիճարկվում է ամբողջ Օրենքը, այլ ոչ Օրենքի որևէ կոնկրետ դրույթ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը Դիմողի փոխարեն չի կարող առանձնացնել իրավական դրույթների այն հավանական շրջանակը, որը վերջինս մտադիր էր վիճարկել: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ դիմումում առհասարակ չկա անդրադարձ այն հարցին, թե Օրենքի կոնկրետ ո՛ր դրույթներն են վիճարկվում, և որոնք՝ ոչ, իսկ Սահմանադրական դատարանի կողմից մինչ այս պահը ձևավորված պրակտիկան եղել է նման դիմումներով գործի քննությունը մերժելու մասին որոշում կայացնելը:

26. *Երրորդ*՝ անհատական դիմումներով նույն հարցերը Սահմանադրական դատարանի կողմից քննվելու դեպքում դրանց նկատմամբ հետագայում ընդունելիության և հնարավոր ըստ էության որոշումների կայացման բարձր շեմից խուսափելու նպատակով սույն սահմանադրական վեճի շրջանակում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով *հարցեր* են դիտարկվելու միայն Դիմողի կողմից առաջադրված հիմնավորումների այն սահմաններում, որոնցում քննարկվել են սույն որոշմամբ: Հետևաբար՝ որևէ անհատական դիմումի շրջանակում Օրենքի նույն դրույթի վերաբերյալ այլ բովանդակության իրավական *հարց* Սահմանադրական դատարանի առջև բարձրացվելու պարագայում անհատական դիմում ներկայացրած անձանց նկատմամբ չի կիրառվելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ որոշումների ընդունման կարգը:

27.Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև սույն գործով ներկայացված դիմումը բովանդակում է Օրենքի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ ընդհանուր բնույթի հիմնավորումներ, որոնք չեն որոշակիացվել և մասնավորեցվել Օրենքի կոնկրետ նորմերի առնչությամբ, այնուամենայնիվ, հաշվի առնելով սահմանադրականության ամրապնդման և զարգացման շարունակական հանձնառությունը՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճով իրականացվելիք վերացական ստուգման շրջանակում կանդրադառնա Դիմողի կողմից առաջադրված իրավական հարցադրումներին՝ բացառապես դրանցում պարունակվող հիմնավորումների սահմաններում:

II. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

28. Դիմողը նշում է, որ Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծվել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգ (*civil forfeiture* կամ *non conviction based confiscation*), որի համաձայն՝ որոշակի ազդակների դեպքում Դատախազությունն սկսում է անձի (նրա հետ փոխկապակցված անձանց) գույքի օրինականության ուսումնասիրություն և այն դեպքում, երբ անձին (նրա հետ փոխկապակցված անձանց) պատկանող գույքի արժեքը գերազանցում է նրանց օրինական եկամուտները, դիմում է դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով այդ գույքը բռնագանձելու համար: Դատավարության ընթացքում, եթե անձը կամ անձինք չեն կարողանում ապացուցել, որ գույքի ծագումը հաստատվում է

օրինական եկամուտներով, ապա այն բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության:

29. Դիմողը հայտնում է, որ չնայած առանձին երկրներում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգին վերաբերող կարգավորումների տարբերություններին՝ դրանք բոլոր դեպքերում մշակվում են լուծելու համար նույն խնդիրը՝ կապված նրա հետ, որ մեղադրական դատավճռի վրա հիմնված բռնագանձումը ոչ բոլոր դեպքերում է իրավապահ և դատական մարմինների համար ծառայում որպես արդյունավետ գործիքակազմ՝ հանցագործության արդյունքում ստացված գույքի բավարար չափով բռնագանձման համար:

30. Ըստ Դիմողի՝ միջազգային փորձից հետևում է, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգը բացառիկ միջոց է, որը նախատեսվում է այն դեպքերում, երբ օբյեկտիվորեն հնարավոր չէ գույքի բռնագանձումն իրականացնել քրեական դատավարության միջոցով (մասնավորապես, երբ մեղադրյալի անձեռնմխելիության, մահվան, փախուստի կամ հիվանդության պատճառներով ենթադրյալ հանցանքի համար դատապարտումն անհնար է, կամ որոշակի դեպքերում շատ դժվար է լինում գույքի և հանցագործության միջև պատճառահետևանքային կապի հաստատումը) և այնքանով, որքանով դա թույլատրելի է պետությունների ներքին օրենսդրությամբ սահմանված հիմնարար սկզբունքների տեսանկյունից:

31. Միջազգային փորձի լույսի ներքո դիտարկելով Օրենքով նախատեսվող կարգավորումները՝ Դիմողը նշում է, որ աչքի է զարնում Օրենքի նպատակի անհստակությունը:

32. Այս կապակցությամբ Դիմողը նախ նշում է, որ Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե ո՛ր գույքն է նախատեսվում բռնագանձել, «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացությունը սահմանում է որպես օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք, ինչպես նաև ելնում է այն կանխավարկածից, որ գույքն ապօրինի է միմիայն այն բանի ուժով, որ առկա չեն դրա օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ, և «գույքի ապօրինի ծագումը» որևէ կերպ չի պայմանավորում քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարման կամ վարչական իրավախախտման հետ:

33. Դիմողը նշում է, որ Օրենքով հետապնդվող նպատակի անհստակությունն ընդգծվում է նաև Օրենքի դրույթները և Ազգային ժողով ներկայացված նախագծի հիմնավորումները համադրելիս. հիմնավորումներում նշվում է, որ առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը կարևորագույն գործիք է կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար (նույնը նշված է նաև Հանրապետության նախագահի կողմից Օրենքի ստորագրմանը զուգահեռ արված հայտարարությամբ), մինչդեռ Օրենքով նախատեսված չէ որևէ հստակ կարգավորում, որը «ապօրինի ծագում ունեցող գույքը»

պատճառահետևանքային առումով (ուղղակի կամ անուղղակի) կկապի հանցագործության հետ, ընդհակառակը՝ Օրենքով նախատեսված որոշ դրույթների արդյունքում այդ կապը բացարձակապես խզվում է:

34. Ըստ Դիմողի՝ Օրենքի նախագծի Հիմնավորումը պատասխան չի տալիս այն հարցին, թե ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդում Օրենքով նախատեսված՝ քրեական գործի քննությանը զուգահեռ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթի իրականացման հնարավորությունը: Հարց է առաջանում, թե ինչու՞ և ի՞նչ իրավաչափ հիմնավորմամբ նշված գործընթացը չի կարող իրականացվել հենց քրեական վարույթի շրջանակներում՝ քրեադատավարական երաշխիքների պահպանմամբ: Դիմողը նշում է, որ միջազգային պրակտիկայում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգը հանդես է գալիս ոչ թե որպես քրեական վարույթին այլընտրանք, այլ միայն որպես բացառիկ միջոց այն դեպքերի համար, երբ որոշակի օբյեկտիվ խոչընդոտներով պայմանավորված հնարավոր չէ քրեական դատավարության միջոցով հանցագործության արդյունքում ստացված գույքի բռնագանձումը:

35. Դիմողը գտնում է նաև, որ Օրենքով հետապնդվող նպատակի իրավաչափության տեսանկյունից մեկ այլ խնդրահարույց հանգամանք է այն, որ Օրենքով նախատեսված հանցատեսակների և բռնագանձման ենթակա գույքի միջև պատճառահետևանքային կապի խզման արդյունքում անձի գույքի ուսումնասիրման ժամանակահատվածը կարող է տարածվել նաև հանցանքի կատարմանը նախորդող ժամանակահատվածի և անձանց չափազանց լայն շրջանակի վրա:

36. Դիմողը պնդում է, որ չնայած այն հանգամանքին, որ Օրենքը հստակորեն չի սահմանում դրանով հետապնդվող սահմանադրական նպատակը, իսկ որոշ դեպքերում առկա են հակասություններ Օրենքի նախագծի Հիմնավորման և արդեն իսկ ընդունված Օրենքի դրույթների միջև, այնուամենայնիվ, հաշվի առնելով միջազգային փորձը՝ Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության համար որպես լեգիտիմ հիմք կարող է ծառայել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանությունը:

37. Ըստ Դիմողի՝ Օրենքով նախատեսված կարգավորումների արդյունքում սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը կունենա սահմանադրորեն արդարացված լեգիտիմ նպատակ, այսինքն՝ կհամապատասխանի Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային շահի պաշտպանությանը միայն այն դեպքում, երբ առկա են հանրորեն վտանգավոր արարք կամ դրա կատարման վերաբերյալ հիմնավոր կասկած և պատճառահետևանքային կապ արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի միջև:

38. Սեփականության իրավունքի միջամտության սահմանադրական լեգիտիմ նպատակը պետք է հստակեցվի համապատասխան օրենքի դրույթներում: Մինչդեռ սեփականության իրավունքին միջամտությամբ հետապնդվող նպատակի լեգիտիմության տեսանկյունից, ըստ Դիմողի, Օրենքում խնդրահարույց են Օրենքով գույքի օրինականության ստուգման համար նախատեսված հիմքերը և Օրենքով նախատեսված գործընթացները գործի դնելու համար հիմք հանդիսացող հանցատեսակների չափազանց լայն շրջանակը:

39. Դիմողը նշում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են հինգ հիմքեր, որոնց առկայության դեպքում իրավասու մարմինը պետք է սկսի անձի գույքի օրինականության ստուգում: Ըստ Դիմողի՝ որոշ հիմքերի դեպքում ուսումնասիրություն սկսելը չի կարող հետապնդել Սահմանադրությամբ նախատեսված լեգիտիմ նպատակ, այլ կերպ ասած՝ այդ հիմքերը չեն բավարարում հանրային շահի պաշտպանությանն ուղղված լինելու սահմանադրական պահանջը:

40. Նշվում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է Օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերում կան բավարար հիմքեր կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով:

41. Հղում կատարելով Քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածին և Քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին՝ Դիմողը նշում է, որ եթե հարուցված քրեական գործի շրջանակներում բացահայտվում է հանցագործության արդյունքում ստացված (կամ այլ կերպ փոխարկված) գույք, ապա այն պետք է (և հնարավոր է) բռնագանձել քրեական դատավարության շրջանակներում:

42. Դիմողը գտնում է, որ քրեական վարույթի շրջանակներում գույքը չբռնագանձելը կարող է պայմանավորված լինել երկու այնպիսի գործոնով, որոնք անմիջականորեն ազդում են գույքի բռնագանձմամբ հետապնդվող նպատակի լեգիտիմության վրա: Մասնավորապես, երբ վարույթն իրականացնող մարմինը ժամանակին չի բացահայտել և դատարանին չի ներկայացրել նման գույքի մասին տեղեկություններ, և, երբ այդ տեղեկությունները եղել են ոչ բավարար, որի պայմաններում դատարանը չի գտել կապ հանցագործության և այդ գույքի միջև:

43. Առաջին դեպքում ստացվում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը հնարավորություն է ընձեռում անձի իրավունքների պաշտպանության համար շատ ավելի ցածր պաշտպանություն նախատեսող վարույթի

միջոցով իրականացնել գույքի բռնագանձում այն պարագայում, երբ քրեական գործի նյութերում առկա են եղել հանցագործության արդյունքում ստացված գույքի մասին տեղեկություններ, և դրանք չեն ներկայացվել դատարանին՝ վարույթն իրականացնող մարմնի անփութության կամ նման այլ պատճառով: Դրանով իսկ, ըստ Դիմողի, բռնագանձումը ձեռք է բերում պատժիչ բնույթ, ինչը չի կարող իրականացվել քաղաքացիական դատավարության շրջանակներում, ավելին՝ առանց անձի մեղքն ապացուցելու: Ուստի՝ Օրենքով նախատեսված այս հիմքով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ սկսելու համար որպես ազդակ կարող են պիտանի լինել ոչ թե «քրեական գործի նյութերը», այլ միայն վերջնական դատական ակտը, որում դատարանը, նկատի ունենալով քրեական դատավարության համար պահանջվող ապացուցման բարձր չափանիշները, չի կարողացել ապացուցված համարել, որ գույքը ծագում է տվյալ հանցագործությունից:

44. Դիմողը նշում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ուսումնասիրություն սկսելու համար ազդակ կարող է հանդիսանալ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված ցանկացած հանցագործությունը հաստատող վերջնական դատական ակտը: Քանի որ սահմանված հանցատեսակներից ոչ բոլորն ունեն հանրային մեծ վտանգավորություն, և դրանց կատարման արդյունքում ողջամտորեն հնարավոր չէ էական շահույթի գեներացումը, ըստ Դիմողի՝ այդ հանցատեսակների պարագայում բացակայում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ նախատեսելու համար իրավաչափ նպատակը:

45. Ըստ Դիմողի՝ հիմնական իրավունքներին միջամտության համաչափության տեսանկյունից մեկ այլ լրջագույն խնդիր է այն, որ Օրենքով նախատեսված այս հիմքը չունի որևէ ժամանակային սահմանափակում: Պարզ չէ, թե մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ինչ ժամկետների ընթացքում կարող է բարձրացվել գույքի ծագման օրինականության կասկած և գործի դրվել Օրենքով նախատեսված կառուցակարգերը: Այս առումով, Օրենքը բռնագանձման վարույթ իրականացնող մարմնի համար որևէ ժամանակային սահմանափակում չի նախատեսում, ինչը նշանակում է, որ գործընթացը կարող է հարուցվել դատապարտումից և անգամ պատժի կրումից շատ տարիներ անց:

46. Նշվում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել այն դեպքում, երբ հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել Օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք: Այս մասով Դիմողը նշում է, որ ուսումնասիրություն սկսելու դեպքի հետ փոխկապակցված պետք է դիտարկել նաև Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ օրենքով նախատեսված վարույթին

զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը, հիմք չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար: Համադրելով նշված երկու դրույթները՝ Դիմողը եզրահանգում է, որ բռնագանձման գործընթացը կարող է տեղի ունենալ անգամ այն պարագայում, երբ ապացուցվի, որ որևէ հանցագործություն տեղի չի ունեցել: Դիմողը նշում է, որ կարող է ստեղծվել իրավիճակ, երբ սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը չունենա որևէ լեգիտիմ նպատակ, քանի որ արդարացնող հիմքերով կարճվի քրեական գործի վարույթը կամ դատական վերջնական ակտով հերքվի անձի որևէ առնչակցությունն այն հանցագործությանը, որից ենթադրաբար ստացվել էր ապօրինի ծագում ունեցող գույքը: Մինչդեռ, եթե չկա հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպք կամ նման հանցագործություն իրականացված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկած, ապա չի կարող լինել նաև սեփականության իրավունքը սահմանափակելու համար լեգիտիմ նպատակ:

47. Դիմողը նշում է նաև, որ Օրենքը լռում է այն հարցի վերաբերյալ, թե ի՞նչ հարաբերակցություն են ունենալու միմյանց զուգահեռ ընթացող Օրենքով նախատեսված վարույթը և քրեական գործի վարույթը: Այս առումով պարզ չէ նաև, թե ի՞նչ սկզբունքով է որոշվելու՝ ո՞ր վարույթի շրջանակներում իրականացնել գույքի բռնագանձումը՝ քրեական, թե՞ Օրենքով նախատեսված, քանի որ դեպքերի հիմնական մասում բռնագանձման առարկան նույնանալու է:

48. Նշվում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է գույքի բռնագանձման վարույթ սկսել այն դեպքում, երբ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

49. Դիտարկելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ուսումնասիրություն սկսելու հիմքերը՝ Դիմողը նշում է, որ 1-4-րդ կետերով նախատեսված բոլոր հիմքերն ուղղակիորեն կապված են հանցագործության դեպքի հետ, իր հերթին ուսումնասիրություն սկսելու համար որպես լեգիտիմ հիմք կարող է լինել միայն հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպքը, քանի որ միայն այդ ժամանակ կարելի է ողջամտորեն ենթադրել, որ դրա արդյունքում ստացվել է մեծ չափերի հասնող շահույթ:

50. Ի տարբերություն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի՝ նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի դեպքում որպես նախապայման չի պահանջվում ոչ

հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպքի առկայություն և ոչ էլ՝ անգամ դրա իրականացման վերաբերյալ հիմնավոր կասկած: Հետևաբար, ըստ Դիմողի, եթե չկա հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության դեպք, ապա չի էլ կարող ուսումնասիրության ենթարկվող գույքը որևէ պատճառահետևանքային (ուղղակի կամ անուղղակի) կապ ունենալ հանցագործության հետ: Նման պարագայում բացակայում է սեփականությանը միջամտության լեգիտիմ նպատակը, ուստի սեփականության սահմանադրական իրավունքի նկատմամբ Օրենքով նախատեսված նման լայն միջամտությունը չի հետապնդում Սահմանադրությամբ պաշտպանված որևէ լեգիտիմ նպատակ: Իսկ այն դեպքում, եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հարուցվի քրեական գործ, և առկա լինի անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար ապացույցների բավարար համակցություն, ապա ուսումնասիրություն սկսելու հիմքը կհամընկնի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի հետ:

51. Իրականացնելով օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենսդրության վերաբերելի նորմերի վերլուծություն՝ Դիմողը նշում է, որ մինչև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի փոփոխությունները (2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված ՀՕ-250-Ն օրենք), օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում անձի վերաբերյալ ձեռք բերված «կողմնակի» (որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ) տեղեկությունները կարող էին օգտագործվել միայն, եթե դրանք առնչվում էին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններին: Իսկ ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրմամբ պայմանավորված հիշյալ փոփոխությունների արդյունքում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների հետ նույն նժարի վրա է դրվել նաև գույքի բռնագանձման գործընթացը, և ձեռք բերված օպերատիվ տվյալները հնարավոր է դառնում օգտագործել բռնագանձման վարույթ սկսելու համար: Արդյունքում առաջացել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով անձի հիմնական իրավունքներին միջամտության լայն դաշտ և դրանից բխող ռիսկեր, որոնք խնդրահարույց են անձի հիմնական իրավունքներին միջամտության համաչափության տեսանկյունից:

52. Դիմողը նշում է, որ Օրենքով նախատեսված բռնագանձման գործընթացները գործի դնելու համար Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է հանցագործությունների բավական լայն շրջանակ, որոնք սեփականության սահմանադրական իրավունքի նկատմամբ միջամտության չափազանց լայն դաշտ են բացում՝ կասկածի տակ դնելով ինչպես ընտրված միջոցով հետապնդվող նպատակի լեգիտիմությունը, այնպես էլ նպատակին հասնելու միջոցների համաչափությունը:

53. Ըստ Դիմողի՝ Օրենքով նախատեսված հանցատեսակների ցանկն ընդգրկում է այնպիսիք, որոնք որևէ եզր չունեն միջազգային պրակտիկայում սովորաբար թույլատրելի այն հանցատեսակների հետ, որոնց պարագայում հիմնավորված է համարվում գույքի բռնագանձման այս արտակարգ մեխանիզմի կիրառումը, այդ թվում՝ ընտրողներին կաշառք տալը, վարկը ոչ նպատակային օգտագործելը, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը, արհեստավարժ մարզամրցումներին և հանդիսավոր առևտրային մրցումների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը:

54. Դիմողը գտնում է, որ Օրենքով նախատեսված հանցատեսակների այնպիսի լայն շրջանակը, որոնց արդյունքում ողջամտորեն հնարավոր չէ էական շահույթի ստացումը, չի բխում Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված լեգիտիմ նպատակից (հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործությունների արդյունքում ստացված գույքի բռնագանձում), ի շահ որի մարդու հիմնական իրավունքի նկատմամբ այդպիսի ինտենսիվ միջամտությունը կարող է համարվել իրավաչափ:

55. Դիմողը գտնում է, որ Օրենքի տեսանկյունից անձի սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը կարող է ծառայել հանրային շահի պաշտպանությանը և լինել հավասարակշռված միայն այն դեպքում, երբ առկա կլինի այնպիսի մեծ վտանգավորություն ներկայացնող քրեորեն պատժելի արարք կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկած, որն ի վիճակի է գեներացնել էական շահույթ:

56. Դիմողը նշում է, որ գույքի բռնագանձման վերաբերյալ վերջնական դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ է միայն, որպեսզի ապացուցվի, որ անձն իր գույքը չի հիմնավորել օրինական եկամուտներով: Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում, այլ հակառակը՝ խզում է պատճառահետևանքային կապը (ուղղակի կամ անուղղակի) հանցագործության և ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքի միջև: Ըստ Դիմողի՝ վերոնշյալ տրամաբանությամբ Օրենքն ինքնին, ընդհանուր առմամբ Սահմանադրությանը հակասող է դառնում՝ հաշվի առնելով Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումները:

57. Դիմողը գտնում է, որ եթե անգամ անձին պատկանող գույքի օրինականությունը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, դա ինքնին դեռ բավարար չէ եզրահանգելու համար, որ այն ձեռք է բերվել հանցագործության կատարման արդյունքում: Այդ փաստը կարող է հաստատվել միայն այն դեպքում, երբ կներկայացվեն բավարար հիմնավորումներ, որոնցով կապացուցվի հանցագործության և բռնագանձվող գույքի միջև պատճառահետևանքային կապը:

58. Դիմողի համոզմամբ՝ Օրենքով նախատեսված հանցատեսակների և բռնագանձման ենթակա գույքի միջև պատճառահետևանքային կապի խզման և դրանով իսկ Օրենքով հետապնդվող նպատակի իրավաչափության

տեսանկյունից մեկ այլ խնդրահարույց հանգամանք է այն, որ անձի գույքի ուսումնասիրության ժամանակահատվածն առանց որևէ բացառության կարող է տարածվել նաև նրան մեղսագրվող հանցագործությանը նախորդող ժամանակահատվածի վրա: Խնդիրն էլ ավելի է ընդգծվում, երբ անձին մեղսագրվում է, կամ անձը դատապարտվում է այնպիսի հանցատեսակի կատարման համար, որի հանցակազմի պարտադիր հատկանիշ է հատուկ սուբյեկտը, օրինակ, քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով սահմանված հանցագործության դեպքում՝ հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն պաշտոնատար անձը: Հետևաբար՝ եթե անձը դատապարտվել է կամ կասկածվում է այնպիսի հանցագործության կատարման մեջ, որի հանցակազմի պարտադիր հատկանիշ է հատուկ սուբյեկտը, ապա, ըստ Դիմողի, չի կարող լինել որևէ պատճառահետևանքային և տրամաբանական կապ նշված հանցատեսակի և անձին պատկանող այն գույքի միջև, որն անձը ձեռք է բերել ենթադրվող հանցագործությանը նախորդող ժամանակահատվածում:

59. Նշվածով պայմանավորված՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի այն տրամաբանությունը, որի արդյունքում հաշվի չի առնվում պատճառահետևանքային կապը Օրենքով նախատեսված արարքների կատարման և բռնագանձման ենթակա գույքի միջև, չի կարող համարվել անհրաժեշտ միջոց՝ անձի սեփականության իրավունքին Օրենքով նախատեսված ինտենսիվ միջամտության տեսանկյունից:

60. Դիմողը նշում է. «Չնայած այն հանգամանքին, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը ուսումնասիրվող ստանդարտ ժամանակահատված է համարում [ուսումնասիրությունը սկսելուն նախորդող] 10 տարին, ուսումնասիրություն իրականացնող մարմնին բացարձակ հայեցողություն է վերապահում այդ ժամանակահատվածը տարածել մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը՝ չսահմանելով որևէ օբյեկտիվ չափանիշ»: Դիմողը գտնում է, որ Օրենքի կիրարկումը նման երկար հետադարձ ժամանակահատվածով զգալիորեն բարդացնում է անձի կողմից իր գույքի օրինականությունն ապացուցելու գործընթացը, ընդհուպ մինչև՝ նրան զրկելով այդ հնարավորությունից:

61. Դիմողը, անդրադառնալով սեփականության իրավունքին միջամտության համաչափության վերաբերյալ պատասխանողի ներկայացրած դիրքորոշումներին, նշում է, որ սեփականության հիմնական իրավունքին միջամտության լեգիտիմության գնահատման տեսանկյունից առանցքային հարց է այն, թե սեփականության իրավունքը սահմանափակող օրենքի ընդունման համար որպես արդարացում ինչ նպատակ է վկայակոչվում, և Օրենքի փաստացի կարգավորումները կամ դրանց կիրառումը գործնականում համընկնում են օրենսդրի կողմից մատնանշված այդ նպատակի հետ: Դիմողը չի ժխտում, որ միջազգային պրակտիկայում գործում են հանցագոր-

ծությունների կանխարգելման և ապօրինի ծագում ունեցող գույքի տնտեսական շրջանառության դեմ պայքարի տարբեր կառուցակարգեր, ինչպես նաև այն, որ նման կառուցակարգերը կարող են հետապնդել լեգիտիմ նպատակներ:

62. Դիմողը նշում է՝ որպեսզի սեփականության իրավունքին նման ինտենսիվ միջամտություն նախատեսող Օրենքի կառուցակարգերն արդարացված լինեն հանրային շահի պաշտպանության լեգիտիմ նպատակի տեսանկյունից, անհրաժեշտ է հանրորեն վտանգավոր արարքի ու դրա կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայություն և պատճառահետևանքային կապ՝ արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի միջև:

63. Մինչդեռ Օրենքով նախատեսված հիմքերը, ինչպես նաև Օրենքով նախատեսված գործընթացները գործի դնելու համար հիմք հանդիսացող հանցանքների ոլորտը չափազանց լայն է, դուրս է գալիս Պատասխանողի կողմից որպես լեգիտիմ նպատակ վկայակոչվող հանցագործությունների կանխարգելման և ապօրինի ծագում ունեցող գույքի տնտեսական շրջանառության դեմ պայքարի շրջանակից, ինչպես նաև նախատեսված կառուցակարգերում խզված է հանրորեն վտանգավոր արարքի և ապօրինի ծագում ունեցող գույքի միջև կապը: Արդյունքում, ըստ Դիմողի՝ Օրենքը չի բավարարում սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման համաչափության սահմանադրաիրավական պահանջը:

64. Դիմողը նշում է, որ ուսումնասիրություն սկսելու համար կասկածի ձևավորման կառուցակարգի առկայությունն ինքնին դեռևս բավարար չէ պնդելու համար, որ հիմնավորված է գույքի ապօրինի ծագումը, և առկա է գույքի բռնագանձման իրավաչափ հիմք: Նշվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նույնպես կարևորում է «ողջամիտ հիմնավորումների առկայությունն առ այն, որ գույքը մեծ հավանականությամբ հանցավոր ծագում ունի» և՛ անձի գույքի օրինականության ուսումնասիրություն սկսելու համար, և՛ նման գույքի բռնագանձման համար:

65. Դիմողը քննադատության է ենթարկում այն, որ իր կարծիքով, Օրենքով ուսումնասիրություն սկսելու հիմքերի նախատեսումը Պատասխանողի կողմից ներկայացվում է որպես զուտ ձևականություն՝ ընդգծելով, որ օրենսդրական մակարդակում առհասարակ չի ենթադրվում, որ ուսումնասիրության մեկնարկը պետք է կանոնակարգված լինի: Ըստ Դիմողի՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերը որևէ պարագայում չեն կարող դիտվել որպես զուտ ձևականություն և ամրագրված չլինել օրենքով:

66. Դիմողը գտնում է, որ Օրենքով սահմանված է փոխկապակցված անձանց չափազանց լայն շրջանակ: Արդյունքում հնարավոր է, որ ինտենսիվ միջամտություն տեղի ունենա անձանց լայն շրջանակի իրավունքների նկատմամբ անգամ այն պարագայում, երբ այդ անձինք ունենան բավական հեռավոր կապ որևէ պաշտոնատար անձի կամ որևէ գործարքի հետ:

67. Դիմողն անհիմն է համարում Պատասխանողի այն պնդումը, որ Բուլղարիայի օրենսդրական մեխանիզմները, որոնք ՄԻԵԴ-ի գնահատմամբ ոչ թե առանձին, այլ համակցության մեջ ծանր բեռ էին դնում պատասխանողի վրա, առկա չեն Հայաստանում: Այս առումով, Դիմողը գտնում է, որ Պատասխանողի կողմից բերված փաստարկները ոչ միայն չեն բացառում Դիմողի կողմից ներկայացված մտահոգությունները, այլ նաև ակնհայտ են դարձնում, որ *Թոդորովի* գործով ՄԻԵԴ-ի արտահայտած դիրքորոշումներն առավել քան կիրառելի են վիճարկվող օրենքի դեպքում:

68. Դիմողը լրացուցիչ բացատրություններում հայտնել է նաև, որ մի կողմից՝ գույքի բռնագանձման վարույթի սկիզբն օրենսդիրը կապում է Օրենքով նախատեսված հանցատեսակների կատարման կասկածի հետ, սակայն մյուս կողմից՝ Օրենքի վերնագրից սկսած, ամբողջ Օրենքում օգտագործում է «ապօրինի ծագում ունեցող գույք» հասկացությունը, ինչը նույնական չէ «հանցավոր ճանապարհով ստացված գույք» հասկացության հետ, և պետք է այս երկու հասկացությունները միմյանցից հստակ տարբերակել:

69. Դիմողը գտնում է, որ մի շարք միջազգային փաստաթղթերի դեպքում ակնհայտ է, որ խոսքը հանցագործության արդյունքում ստացված գույքի մասին է: Նման ձևակերպման օգտագործումը, ըստ Դիմողի, պատահական չէ, քանի որ հանրային շահի պաշտպանության համար որպես լեգիտիմ նպատակ կարող է ծառայել միմիայն հանցավոր կամ այլ կերպ ասած՝ հանցագործության արդյունքում ստացված գույքի բռնագանձումը: Հակառակ պարագայում, ըստ Դիմողի, հնարավոր է մի իրավիճակ, երբ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքը հավասարեցվի հանցագործության արդյունքում ստացված գույքին:

70. Դիմողի դիրքորոշմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ Պատասխանողի կողմից միայն միջազգային փորձի վկայակոչումը չի կարող լինել իրավական փաստարկ Օրենքի սահմանադրականության վերաբերյալ, այնուամենայնիվ, անգամ այդ վկայակոչումը չի հիմնավորում նրա եզրահանգումները:

71. Անդրադառնալով Պատասխանողի կողմից վկայակոչված՝ *Գոգիտիձեի* և *Թոդորովի* գործերի համեմատությանը՝ Դիմողը նշում է, որ *Թոդորովի* գործով ՄԻԵԴ-ն ավելի է կոնկրետացրել հանցագործության և բռնագանձվող գույքի միջև կապի առկայությունը: Եթե *Գոգիտիձեի* գործում ՄԻԵԴ-ը որպես «ընդհանուր եվրոպական և համընդհանուր իրավական չափանիշ» շեշտադրել է այն «գույքի բռնագրավումը, որը կապված է լուրջ հանցագործությունների հետ (...)», ապա *Թոդորովի* գործով ՄԻԵԴ-ը, հետևելով Բուլղարիայի գերագույն դատարանի դիրքորոշմանը, կոնկրետացրել է հանցագործության և բռնագանձվող գույքի միջև կապը՝ ընդգծելով, որ «(...) միջամտության համաչափությունը գնահատելիս, Դատարանը կհետևի Բուլղարիայի Գերա-

գույն դատարանի դիրքորոշմանը, որը 2014 թ. իր մեկնաբանական որոշման մեջ, պայմանավորված մինչ այդ 2005 թ. օրենքով տարբեր նախադեպային իրավունքով, նշել էր, որ ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ պետք է հաստատվեր կամ պետք է ենթադրելի լիներ բռնագրավման ենթակա գույքի և հանցավոր գործունեության միջև»:

72. Դիմողի դիրքորոշումն այն է, որ Օրենքով նախատեսված հանցատեսակների այնպիսի լայն շրջանակը, որոնցով ողջամտորեն հնարավոր չէ էական շահույթի ստացումը, չի բխում Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված լեգիտիմ նպատակից, ի շահ որի՝ մարդու հիմնական իրավունքի նկատմամբ այդպիսի ինտենսիվ միջամտությունը կարող է համարվել իրավաչափ: Դիմողի կողմից նման ընդգծումը կատարվել է նախ՝ ակնառու դարձնելու համար, թե ինչպիսի հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցատեսակների պարագայում է, որ պատմականորեն առաջ է եկել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի անհրաժեշտությունը, և երկրորդ՝ որպեսզի ընդգծվի, որ նման վարույթների համար որպես ազդակ կարող է հանդես գալ միայն այնպիսի հանցագործությունը, որի արդյունքում ողջամտորեն հնարավոր է էական շահույթի գեներացում: Ըստ Դիմողի՝ այն հանգամանքը, որ Օրենքով նախատեսված գործիքակազմերը «ենթակա են կիրառման բացառիկ դեպքերում», մատնանշվում է նաև հենց Պատասխանողի կողմից:

2. Պատասխանող

73. Պատասխանողը նշում է, որ չնայած առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման՝ Օրենքով ներդրված մեխանիզմը չի պահանջում, որ հաստատվի հանցագործության որևէ դեպք և ներկայացվի գույքի կապն այդ հանցագործության հետ, դա չի կարող մեխանիկորեն բերել այն եզրահանգման, որ Օրենքը չի հետապնդում հանցագործությունների կանխարգելման և նվազեցման, հանցավոր գույքի շրջանառության դեմ պայքարի նպատակ: Հետևաբար՝ Պատասխանողը պնդում է, որ Օրենքը հետապնդում է հանրային շահերից բխող նպատակ, այն է՝ հանցագործությունների կանխարգելումը և ապօրինի ծագում ունեցող գույքի տնտեսական շրջանառության դեմ պայքարը, ուստի՝ Օրենքը համապատասխանում է սեփականության իրավունքի սահմանափակման համար Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հանրային շահով պայմանավորված նպատակի առկայության պահանջին:

74. Պատասխանողը նշում է, որ Հայաստանում առկա խնդիրները՝ կապված քրեական ենթամշակույթի տարածվածության, կոռուպցիայի բարձր մակարդակի հետ, բազմիցս արձանագրվել են թե՛ ներպետական, թե՛ միջազգային տարբեր ինստիտուտների կողմից, և պետությունն ունի քաղաքական կամք՝ ամրապնդելու հանցավորության դեմ պայքարի ներպետական

գործիքակազմը՝ քրեական ենթամշակույթի և կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության սոցիալական մթնոլորտի ձևավորման, ինչպես նաև ամուր և առաջադեմ օրենսդրական մեխանիզմների ներդրման միջոցով: Ըստ Պատասխանողի՝ պետության համար հանրային շահերի պաշտպանությունը կոռուպցիայի, կազմակերպված հանցավորության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զենքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ինչպես նաև թրաֆիքինգի դեմ պայքարի տեսանկյունից շարունակում է մնալ գերակա նպատակ:

75. Պատասխանողը նշում է, որ հանցավորության դեմ պայքարի բոլոր և, հատկապես, վերոնշյալ ուղղություններով պետության կողմից հանրային շահի պաշտպանության գաղափարը, ի թիվս այլնի, արտահայտվում է Օրենքի 5-րդ հոդվածի նորմերում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նախաձեռնման հնարավորությունը հինգ դեպքերից չորսում կապվել է վերոնշյալ հանցագործությունների կանխարգելման հետ, իսկ մեկ դեպքում՝ հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության հետ:

76. Ըստ Պատասխանողի՝ «Գոգիտիձեն ընդդեմ Վրաստանի» գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Վրաստանում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձում նախատեսող օրենսդրությունն ընդունվել է որպես հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ամրապնդմանն ուղղված օրենսդրական փաթեթի մաս և ունի ինչպես վերականգնողական, այնպես էլ կանխարգելիչ նպատակ:

77. Անդրադառնալով Օրենքի կարգավորումների՝ համաչափության սկզբունքին համապատասխանելիության հարցին՝ Պատասխանողը նշում է, որ Օրենքը նախատեսում է գույքի ապօրինի ծագում ունենալու վերաբերյալ կասկածի ձևավորման ողջամիտ կառուցակարգ, այն է՝ էական անհամապատասխանության հաստատումն անձի գույքի և եկամուտների միջև այն դեպքում, երբ այդպիսի անձի առնչությամբ առկա է Օրենքով նախատեսված հանցատեսակների հետ կապված քրեական գործ, կամ երբ այդպիսի անձը հանդիսանում է կամ հանդիսացել է հանրային պաշտոն զբաղեցնող անձ:

78. Պատասխանողի դիտարկմամբ՝ Օրենքի իմաստով անձինք օժտված են բավարար դատավարական երաշխիքներով իրենց դիրքորոշումը քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգով ներկայացնելու համար, ինչն էլ պետք է պատշաճ քննարկման առարկա դառնա գործը քննող դատարանի կողմից:

79. Պատասխանողը նշում է նաև, որ անձը դատական գործընթացում կարող է ներկայանալ իր ընտրած փաստաբանի միջոցով, իսկ փաստաբան ներգրավելու անհնարինության դեպքում երաշխավորված է անձի՝ պետական միջոցների հաշվին անվճար փաստաբանական օգնություն ստանալու իրավունք:

80. Ամփոփելով՝ Պատասխանողը հանգում է եզրակացության, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ներկայացված չափանիշների լույսի ներքո Օրենքն ապահովում է ինչպես գույքի ապօրինի ծագման վերաբերյալ ողջամիտ կասկածի ձևավորման համար անհրաժեշտ հանգամանքների հաստատման պահանջի առկայությունը, այնպես էլ բավարար հնարավորություններ է ստեղծում անձանց համար՝ իրականացնելու իրենց պաշտպանությունը քաղաքացիական դատավարության բոլոր երաշխիքների պահպանմամբ:

81. Պատասխանողը գտնում է, որ Օրենքը համապատասխանում է Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքին, քանզի նախատեսում է նախապայմաններ, որոնք պետք է բավարարվեն իրավասու մարմնի կողմից գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մեծ հավանականության հիմնավորման համար, և միայն այդ դեպքում կգործի Օրենքով նախատեսված կանխավարկածը, որը կարող է հերքվել անձի կողմից քաղաքացիական դատավարության բոլոր երաշխիքների պահպանմամբ:

82. Պատասխանողը նշում է, որ Օրենքն ընդունվել է որպես առանց մեղադրական դատավճռի անհրաժեշտության հանցավոր գույքի շրջանառության դեմ պայքարի գործիքակազմ: Պատասխանողը գտնում է, որ դիմումում առկա քննադատությունները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Օրենքով նախատեսված ռեժիմը գործում է ոչ միայն քրեական գործի քննության անհնարինության դեպքում՝ ըստ այդմ հակասելով միջազգային փորձին, տեղին չեն: Պատասխանողը գտնում է, որ գույքի հանցավոր շրջանառության դեմ պայքարի գործիքները բովանդակային առումով կարող են տարբեր լինել, և միայն այն, որ Դիմողի կողմից նշված գործիքը գոյություն ունի որպես առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման դասական մոդել, չի նշանակում, որ դրա գոյությունը բացառում է այլ, միջազգայնորեն ընդունելի գործիքների առկայությունը և դրանց կիրառման իրավաչափությունը:

83. Ամփոփելով միջազգային փորձը՝ Պատասխանողն առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման դասական մոդելին զուգահեռ վկայակոչում է ընդունված այլ մոդելներ ևս՝ «Ընդլայնված բռնագրավում», «In rem վարույթ», «Չհիմնավորվող հարստություն»:

84. Մասնավորապես՝ «Չհիմնավորվող հարստություն» մոդելը նկարագրվում է, որպես այնպիսին, երբ անձի ձեռք բերած փաստացի գույքը համեմատվում է նրա եկամուտների հետ՝ անհամապատասխանություն բացահայտելու նպատակով, իսկ նախորդող հանցագործության հետ ուղղակի կամ անուղղակի կապ հաստատելն անհրաժեշտ չէ:

85. Պատասխանողը նշում է, որ Օրենքով ներդրված մեխանիզմը թե՛ Միավորված ազգերի կազմակերպության, թե՛ Եվրոպական միության

փաստաթղթերում դասակարգվում է առանց մեղադրական դատավճռի բռնագանձում նախատեսող մոդելների շարքին:

86. Անդրադառնալով քրեական դատավարական երաշխիքներին՝ Պատասխանողը նշում է, որ քրեական դատավարական երաշխիքների պահպանման կարևորությունը վերաբերելի է այն դեպքերին, երբ քննարկվում է անձի մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչը կարող է հանգեցնել պատժիչ միջոցների կիրառման: Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մեխանիզմները չեն պարունակում այդպիսի հատկանիշներ և, ըստ Պատասխանողի, չեն ենթադրում նույն երաշխիքների կիրառելիություն:

87. Անդրադառնալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի՝ քրեական վարույթին այլընտրանք չդառնալու վերաբերյալ Դիմողի մտահոգություններին՝ Պատասխանողը նշում է, որ քննարկվող ինստիտուտը որևէ դեպքում չի կարող գնահատվել որպես հանցագործությունների բացահայտման, հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու պետության պարտականության իրագործման այլընտրանք: Պատասխանողը նշում է, որ քրեական հետապնդման մարմինները, անկախ երկրում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի գոյությունից ու կիրառությունից, մշտապես պարտավոր են բարեխղճորեն իրականացնել հանցագործությունների բացահայտման և կանխարգելման իրենց գործառույթները: Մյուս կողմից՝ Պատասխանողը գտնում է, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման գործիքակազմը միտված է հասնելու հանցավոր գույքի շրջանառության դեմ պայքարի գերակա նպատակին ոչ թե անձանց պատասխանատվության ենթարկելու, այլ ապօրինի ծագում ունեցող գույքը տնտեսական շրջանառությունից դուրս բերելու և ֆինանսական բնույթի հանցագործությունների գրավչությունը նվազեցնելու միջոցով: Հետևաբար՝ Պատասխանողը գտնում է, որ պետություններում կարող են գոյություն ունենալ միանգամայն տարբեր գործիքակազմերի միջոցով միևնույն գերակա նպատակին հասնելուն ծառայող տարբեր ինստիտուտներ, և դրանց միաժամանակյա գոյության փաստը միայն չի կարող վկայել դրանցից որևէ մեկի՝ մյուսին այլընտրանք հանդիսանալու հանգամանքի մասին:

88. Վերոգրյալի հաշվառմամբ պատասխանողը եզրահանգում է, որ Օրենքով նախատեսված ուսումնասիրություն սկսելու հիմքերը խնդրահարույց չեն միջոցի համաչափության կամ դրա լեգիտիմ նպատակի քննարկման տեսանկյունից:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

89. Սահմանադրության 1-ին հոդված.

«Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է»:

90. Սահմանադրության 3-րդ հոդված՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները».

«(...)

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

91. Սահմանադրության 60-րդ հոդված՝ «Սեփականության իրավունքը».

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

(...)»:

92. Սահմանադրության 78-րդ հոդված՝ «Համաչափության սկզբունքը».

«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

93. Սահմանադրության 79-րդ հոդված՝ «Որոշակիության սկզբունքը».

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

94. Սահմանադրական դատարանը հարկ է համարում Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված սեփականության հիմնական իրավունքին Օրենքի դրույթների համապատասխանության հարցի վերաբերյալ իր վերլուծությունն սկսել՝ վերահաստատելով սույն վեճին վերաբերելի իր՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմամբ արտահայտած հետևյալ դիրքորոշումը.

«5.2. Սահմանադրական դատարանը վերահաստատում է սեփականության իրավունքի վերաբերյալ իր՝ նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ սեփականության իրավունքը, որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատու-

թյունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ, ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն (Սահմանադրական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ-1432 որոշում, կետ 4.1):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության իրավակարգում ունեցած ընդգծված կարևորությունն արձանագրված է առաջին հերթին Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ գլխի 10-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սեփականության հիմնական իրավունքի պաշտպանության նպատակով սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներն ամրագրվել են նաև Սահմանադրության 60-րդ հոդվածում:

Վերը նշվածից բացի, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ սեփականության հիմնական իրավունքը, թեպետ որոշ բովանդակային փոփոխություններով, սակայն որպես հիմնական իրավունքի իրավական ամրագրում 1995 թվականից մինչ այժմ կայուն հետևողականությամբ տեղ է գտել Սահմանադրության մեջ և դրանում կատարված բոլոր փոփոխություններում:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սեփականության իրավունքի պաշտպանության հանրային իշխանության պարտականությունը Հայաստանի Հանրապետության իրավակարգի կարևոր բաղադրիչ է նաև մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով, մասնավորապես, սակայն չսահմանափակվելով միայն՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (հոդված 17, ընդունված և հռչակված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևով), 1950 թվականի նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրության 1-ին հոդվածով:

Ելնելով սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բաղադրիչ լինելու հիմնարար սահմանադրական արժեքից՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսվել են սեփականության իրավունքին միջամտությունների՝ (1) սեփականության իրավունքի ընդհանուր սահմանափակումների, (2) սեփականությունից զրկման և (3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման նպատակները, իրավական հիմքը և պայմանները:

(…)

Արձանագրելով սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի համար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սեփականության իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանադրաչափ սահմանափակումների, այսինքն՝ որ սեփականության իրավունքի սահմանափակման ձևով

որևէ միջամտություն պետք է բավարարի Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հետևյալ ընդհանուր պայմանները.

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող օրենքով,
- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների կամ ազատությունների պաշտպանության նպատակով,
- սեփականության իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սահմանադրական սկզբունքին,
- սեփականության իրավունքի սահմանափակումը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

5.3. Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմը գործում է որպես սեփականության իրավունքին հանրային իշխանության կողմից միջամտության ընդհանուր կանոն (lex generalis):

Միաժամանակ, սեփականության իրավունքի առավել խիստ միջամտության երկու հատուկ ձևերի՝ սեփականությունից զրկելու և հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությունը օտարելու իրավահարաբերությունների կարգավորման նպատակով Սահմանադրության, համապատասխանաբար, 60-րդ հոդվածի 4-րդ մասով և 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել են հատուկ նորմեր, որոնք Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (*lex specialis*), որոնք, դրանցով նախատեսված միջամտության խստության աստիճանով և իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված, նախատեսել են սեփականության իրավունքին միջամտության սահմանադրաչափության հատուկ և պարտադիր այլ պայմաններ:

Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր պայմանների հետ մեկտեղ սեփականությունից զրկվելու ձևով միջամտության սահմանադրաչափության անհրաժեշտ պայման է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «դատական կարգի» ապահովումը, ինչպես նաև սեփականությունից զրկվելու դեպքի «օրենքով սահմանված» լինելը[5]»:

95. Վիճարկվող Օրենքով նախատեսված ընթացակարգերը գործադրելու և կառուցակարգերը կյանքի կոչելու արդյունքում գույքը, համապատասխան պայմանները բավարար լինելու դեպքում, անձից բռնագանձվում է (Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մաս), ինչը հանգեցնում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով սեփականությունից զրկելուն: Նման միջամտության համար Սահմանադրության նույն դրույթով նախատեսված են

[5] Սահմանադրական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշում, կետեր 5.2-5.3:

հատուկ պահանջներ, մասնավորապես անձը սեփականությունից կարող է զրկվել (**1**) դատական կարգով՝ (**2**) օրենքով սահմանված դեպքում:

96. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի դադարեցման իրավասությունը վերապահված է բացառապես դատարանին, որը համապատասխան վճռին հանգում է Օրենքով նախատեսված և քաղաքացիական, քաղաքացիական դատավարության օրենսգրքերով և վերաբերելի այլ օրենքներով նախատեսված ընթացակարգերի միջոցով (Օրենքի 2-րդ հոդված): Հետևաբար՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ «*դատական կարգով*» հատուկ պահանջը բավարարված է:

97. Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ «*օրենքով սահմանված դեպքի*» հատուկ պահանջն Օրենքով նույնպես բավարարված է, քանի որ դրանով նախատեսված են խնդրո առարկա գույքի բռնագանձում կիրառելու պայմանները, որոնք ավելի մանրամասն քննարկվում են սույն որոշման հետագա հատվածներում:

98. Ինչպես վերը մեջբերված ՍԴՈ-1699 որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ նշել է, Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված են Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ սեփականության իրավունքին սահմանադրաչափ միջամտության ընդհանուր պայմանները լրացնող հատուկ պայմաններ: Այսինքն՝ հաջորդաբար Սահմանադրական դատարանը պետք է հավաստիանա, թե արդյո՞ք բավարարված են նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանները, մասնավորապես՝ արդյո՞ք սեփականության իրավունքին միջամտությունը հետապնդում է սահմանադրաչափ նպատակ, արդյո՞ք այն տեղի է ունենում «*օրենքի*» հիման վրա, և արդյո՞ք սեփականության իրավունքին միջամտությունը համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին:

1. Արդյո՞ք Օրենքով նախատեսված միջամտությունը հետապնդում է սահմանադրաչափ նպատակ(ներ)

99. Ըստ Պատասխանողի՝ Օրենքն ընդունվել է որպես կոռուպցիայի կանխարգելման և հանցավորության նվազեցմանն ուղղված համակարգային բարեփոխումների բաղադրիչ: Համապատասխանաբար՝ Օրենքն ուղղված է ձեռքբերումն օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի բռնագանձմանն այն անձանց վերաբերող դեպքերում, որոնք Օրենքի իմաստով հանդիսանում են պաշտոնատար անձ կամ ում վերաբերյալ առկա է Օրենքով նախատեսված հանցանքներին առնչվող քրեական վարույթ:

100. Սահմանադրական դատարանն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 11-րդ կետերի, 5-րդ և 24-րդ հոդվածների համակցված ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Պատասխանողի կողմից նշված նպատակներն իրենց արտացոլումն ունեն Օրենքով նախատեսված կառուցակարգերում:

101. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի հիման վրա սեփականության իրավունքին՝ գույքի բռնագանձման միջոցով միջամտությամբ օրենսդրի հետապնդած նպատակներն են (**1**) կոռուպցիայի դեմ պայքարը և (**2**) հանցավորության դեմ պայքարը: Նման պայմաններում սեփականության իրավունքին Օրենքի համապատասխանության վերաբերյալ իր վերլուծությունը Սահմանադրական դատարանն սկսում է այս երկու՝ կոռուպցիայի դեմ պայքարի և հանցավորության դեմ պայքարի նպատակների քննարկումից:

102. Թեպետ նշված երկու նպատակներն էլ ինքնուրույն են, և յուրաքանչյուրն իրենով հետապնդվող շահի տեսանկյունից՝ ծանրակշիռ, դրանք Օրենքով նախատեսված կառուցակարգերի և ընթացակարգերի կիրառմամբ միմյանց բացառող չեն և կարող են հանդես գալ ինչպես միմյանց համընկնելով կամ փոխլրացնելով (օրինակ՝ կոռուպցիոն բնույթի հանցանքներին առնչվող անձանց գործերով, որոնք Օրենքի իմաստով պաշտոնատար անձ են), այնպես էլ՝ առանձին-առանձին:

103. Սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, այս երկու նպատակների բովանդակային տարբերության և դրանց կենսագործման համար ընտրվող միջոցների համաչափությանը վերաբերող առանձնահատկությունները հաշվի առնելով, դրանց կանդրադառնա առանձին-առանձին:

2. Նպատակ 1. Կոռուպցիայի դեմ պայքար

104. Սահմանադրական դատարանն ամբողջությամբ ընդունում է Հայաստանի Հանրապետության և դրա յուրաքանչյուր քաղաքացու համար կոռուպցիայի հետևանքով ստեղծված խնդիրների և մարտահրավերների լրջությունը, և այն, որ կոռուպցիան ի զորու է նսեմացնել ժողովրդավարական արժեքներն ու ինստիտուտները, հավասարապես նաև քայքայել և հեղինակազրկել իրավունքի գերակայության և մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ստեղծված ինստիտուտները: Կոռուպցիայի ազդեցությունն ի զորու է կաթվածահար անել տնտեսության զարգացման, պաշտպանական, ազգային անվտանգության, արտաքին, կրթական, առողջապահական, արդարադատական և իրավապահ քաղաքականությունները մշակող վերին իշխանական օղակներից մինչև դրանք իրականացնող հանրային իշխանության մարմինների համակարգի ստորին օղակների ողջ շղթայի արդյունավետությունը՝ հետևանքային

ազդեցությամբ վտանգելով մարդկանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, նրանց անվտանգությունը ներքին և արտաքին վտանգներից, նրանց տնտեսական և սոցիալական բարեկեցությունը, իրավահավասար և խտրականությունից զերծ մնալու միջավայրը, ինչպես նաև ի հայտ բերելով այլ բացասական գործոններ:

105. Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև հիշատակել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան[6], որի նախաբանում նշվում է.

«Սույն Կոնվենցիայի Մասնակից պետությունները,

անհանգստացած լինելով հասարակությունների կայունության և անվտանգության համար կոռուպցիայի առաջացրած խնդիրներով և սպառնալիքներով, որոնք խարխլում են ժողովրդավարական ինստիտուտներն ու արժեքները, բարոյական արժեքներն ու արդարությունը և վտանգում են կայուն զարգացումն ու օրենքի գերակայությունը,

անհանգստացած լինելով նաև կոռուպցիայի և հանցավորության այլ ձևերի միջև կապերով, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության և տնտեսական հանցավորության, ներառյալ՝ փողերի լվացման հետ,

այնուհետև անհանգստացած լինելով կոռուպցիայի դեպքերով, որոնք ներառում են արժեքների հսկայական ծավալներ, որոնք կարող են կազմել պետությունների միջոցների նշանակալից մասը, և որոնք վտանգում են այդ Պետությունների քաղաքական կայունությունը և կայուն զարգացումը,

համոզված լինելով, որ կոռուպցիան այլևս ոչ թե տեղական խնդիր է, այլ վերազգային երևույթ, որն ազդում է հասարակությունների և տնտեսությունների վրա, որը կենսական կարևոր է դարձնում դրա կանխարգելմանը և վերահսկմանն ուղղված միջազգային համագործակցությունը,

համոզված լինելով նաև նրանում, որ համապարփակ և համակողմանի մոտեցումն անհրաժեշտ է կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի համար,

այնուհետև համոզված լինելով նրանում, որ տեխնիկական աջակցության առկայությունը կարող է կարևոր դեր խաղալ Պետությունների հնարավորությունների ընդլայնման գործում, այդ թվում՝ կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում կարողությունների ուժեղացման և ինստիտուտների ստեղծման միջոցով,

համոզված լինելով նրանում, որ անձնական հարստության ապօրինի ձեռքբերումը կարող է ուղղակիորեն վնաս հասցնել ժողովրդավարական ինստիտուտներին, ազգային տնտեսություններին և օրենքի գերակայությանը,

վճռական լինելով ապօրինի ձեռք բերված արժեքների միջազգային փոխանցումները ավելի արդյունավետ ձևով կանխարգելելու, հայտնաբերելու և խափանելու և արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցությունն ամրապնդելու գործում

[6] Կոռուպցիայի դեմ կոնվենցիա՝ **ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնել 2007 թվականի ապրիլի 7-ին:**

(…)

համաձայնեցին հետևյալի մասին»:

106. Նույն կոնվենցիայի՝ «Նպատակները» վերտառությամբ 1-ին հոդվածում նշվում է.

«Սույն Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը»:

107. Հայաստանի Հանրապետության սահմանափակ տնտեսական հնարավորությունների, լուրջ մարտահրավերներով լի արտաքին քաղաքական և անվտանգային միջավայրում հանրային իշխանության մեջ կոռուպցիայի ոչ միայն առկայությունը, այլ նաև դրա դեմ արդյունավետ և ինտենսիվ պայքարի անընդհատ միջոցներ չձեռնարկելը հղի են առհասարակ Հայաստանի Հանրապետության՝ որպես Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և որակներին համապատասխան պետության գոյության և առավել ևս դրա զարգացման դեմ գոյութենական վտանգով: Այլ խոսքով՝ կոռուպցիայից զերծ հանրային իշխանության մարմիններ և հանրային ծառայության համակարգ ունենալը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության և Սահմանադրության գերակայության ապահովման անառարկելի նախապայման է:

108. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարը ոչ միայն պետք է արդյունավետորեն իրականացվի, այլ պետք է համոզիչ կերպով տեսանելի լինի նաև ողջ հանրության համար՝ հանգեցնելով հավաքականորեն հասարակության և դրա առանձին անդամի մոտ կոռուպցիայի հաղթահարման, ինչպես նաև հետագայում կոռուպցիոն դրսևորումների դեմ հստակ իրավական գործիքների առկայությամբ անմիջապես հակազդելու հարցերում վստահության ամրապնդմանը: Հասարակության և դրա յուրաքանչյուր անդամի մոտ կոռուպցիայի դեմ պայքարի գործում հանրային իշխանության մարմինների կամքի բացակայության, նման պայքարի անարդյունավետության վերաբերյալ ընկալումները հղի են այդ հարցում հանրային վստահության պակասի արմատավորմամբ, ինչն ինքնին հանրային գիտակցության մեջ կոռուպցիայի դեմ պայքարի անարդյունավետության մտայնության թելադրմամբ, կոռուպցիայի հետ գոյատևելու դատապարտվածության զգացումով՝ դրա նկատմամբ հանրային գիտակցության մեջ հանդուրժողականություն ծնող հիմնական պատճառներից է:

109. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության շուրջ աճող միջազգային համերաշխության միջավայրի առկայության մատնանշումը:

110. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընդունված միջազգային իրավական գործիքներից զատ, Եվրոպայի խորհրդի համակարգում նույն խնդրի լուծումը ևս կարևորվում է թե՛ դրա շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով, թե՛ Եվրոպայի խորհրդի մասնագիտական մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում: Մասնավորապես՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կառուցակարգի՝ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակին համապատասխանության իմաստով նշել է, որ «[Կ]ոռուպցիան խաթարում է իրավունքի գերակայությունը, նվազեցնում է հասարակության վստահությունը քաղաքական ինստիտուտների հանդեպ և բացասաբար է ազդում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման վրա: (...)[7]»: Նույն դիրքորոշումը Վենետիկի հանձնաժողովը վերահաստատել է նաև Խորհրդատվական կարծիքում[8]: Մեկ այլ կարծիքով՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումը համարվել է որպես կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր միջոց[9]:

111. Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով կոռուպցիայի ամբողջությունը կազմող դրսևորումների գերակշիռ մեծամասնության խիստ քողարկված բնույթը, ընդունում է նաև, որ հակակոռուպցիոն քաղաքականությունները շարունակաբար առերեսվում են կոռուպցիոն դրսևորումների բացահայտման և հետևանքները վերացնելու բարդությունների հետ[10]: Այս

[7] Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2022)029, Մոլդովայի Հանրապետություն - Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միացյալ խորհրդատվական կարծիքն ապօրինի հարստացման հանցակազմի վերաբերյալ, ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 132-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 2022 թվականի հոկտեմբերի 21-22) կետ 9:

[8] Վենետիկի հանձնաժողովի՝ Սահմանադրական դատարանի համար ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի որոշակի հարցերի վերաբերյալ» թիվ CDL-AD(2022)048 (թիվ 1108/2022) խորհրդատվական կարծիք (Amicus Curiae Brief for the Constitutional Court of Armenia on Certain Questions Relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin), 2022 թվականի դեկտեմբերի 19, էջ 5, կետ 13:

[9] Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2022)014, «Չհիմնավորված ակտիվների ստուգման և բռնագանձման պետական բյուրոյի մասին» Կոսովոյի Հանրապետության թիվ 08/L-121 օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, 2022 թվականի հունիսի 22, կետ 15:

[10] Խորհրդատվական կարծիք, կետ 12, տե՛ս նաև՝ Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2022)029, Մոլդովայի Հանրապետություն - Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միացյալ խորհրդատվական կարծիքն ապօրինի հարստացման հանցակազմի վերաբերյալ,

առնչությամբ Սահմանադրական դատարանը համամիտ է Օրենքի ընդունման հիմնավորումներում արտահայտված այն դիրքորոշման հետ, որ քրեական արդարադատության համակարգի միջոցով իրականացվող հակակոռուպցիոն պայքարը չի կարող ամբողջությամբ արդյունավետ լինել, եթե այն չզուգորդվի նաև այնպիսի վարույթներով և կառուցակարգերով, որոնք անկախ քրեական մեղադրանքով մեղքի հաստատման գործընթացից՝ ապահովում են կոռուպցիայի կանխարգելման և վնասի վերականգնման հնարավորություն[11]:

112. Վիճարկվող Օրենքով հետապնդվող նպատակներից է նաև քրեական արդարադատության համակարգի համար ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ այդ գույքի վերադարձի խնդրի անլուծելիության դեպքում դրա իրականացման ապահովումը քաղաքացիական դատավարության գործիքակազմի միջոցով: Այս իմաստով, հաշվի առնելով նաև, որ թեև կոռուպցիոն դրսևորումների արդյունքում հասարակությանը հասցված իրական գույքային վնասն իր տնտեսական արժեքով և այլ հետևանքային ազդեցությամբ անհամեմատ ավելի մեծ է դրանում ներգրավված անձանց կողմից ստացված գույքային օգուտից, պետք է նշել, որ նման դրսևորումների դեմ պայքարի բարձր արդյունավետություն ունեցող միջոց է հանրային իշխանության ներկայացուցչի մոտ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայությունն ստուգելը և դրա բռնագանձման միջոցով պետական կոռուպցիայի գրավչությունը վերացնելը: Ավելին, պետական կոռուպցիայի արդյունքում պատճառված վնասի վերականգնման արդյունավետ միջոց է դրա գույքային հետևանքների վերացումը, այդ թվում՝ առաջին հերթին (նախկին) պաշտոնատար անձին պատկանող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը:

113. Պաշտոնատար անձանց (ինչպես պաշտոնավարող, այնպես էլ՝ պաշտոնաթող) պատկանող ապօրինի ծագում ունեցող գույքի՝ Օրենքով նախատեսված բռնագանձման միջոցներ ձեռնարկելը Սահմանադրական դատարանի դիտարկմամբ խիստ ազդեցիկ կանխարգելիչ ուղերձ է հանրային ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց առ այն, որ նրանց կողմից գույքային բարեվարքության պահանջները չպահպանելն անխուսափելիորեն հանգեցնելու է օրենքով նախատեսված պատասխանատվության: Հակառակը՝ նախկինում ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման միջոցով պետական կոռուպցիայի գրավչությունը շեշտակի նվազեցնելուց ձեռնպահ մնալը մի կողմից թողնելու է անցյալում տեղ գտած կոռուպցիոն միջավայրի բարիքներից օգտվել շարու-

ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 132-րդ լիագումար նիստում (Վենետիկ, 2022 թվականի հոկտեմբերի 21-22), կետ 9:

[11] Այս մասով տե՛ս Հիմնավորումներ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների ընդունման մասին, կետեր 6-10, 15, 19-21:

նակելու հանգամանքով պայմանավորված՝ անարդարության և անհավասարության խորն ընկալում հանրության մոտ, մյուս կողմից՝ վտանգավոր ներգործություն կունենա Օրենքով հանրային ծառայությանն ուղղված հետագա սթափեցնող ազդեցության վրա՝ գույքային բարեվարքության պահանջների առկայության պայմաններում դրանց հետագայում հետամուտ չլինելու հույսի ձևավորման և փաստված անպատասխանատվության վերաբերյալ նախապատմության բերումով:

114. Սահմանադրական դատարանը նկատում է նաև, որ հանրային իշխանության նկատմամբ վստահության կարևոր պայման է դրանում ներգրավված անձանց գույքային բարեվարքության կարգապահության պահպանումը և, մասնավորապես այն, որ պաշտոնատար անձի մոտ իր պաշտոնավարման ընթացքում կամ դրանից հետո տեղի չի ունենում գույքի շեշտակի ավելացում նշանակալի ծավալով և այնպես, որ դրա ձեռքբերման օրինականությունը վերջինս հիմնավորել չի կարողանում: Հակառակը, նման հիմնավորումների բացակայությունը հասարակության մոտ ուղղակիորեն հակադիրի՝ կոռուպցիոն միջավայրի և դրա հովանավորչության մասին համոզմունքի ձևավորման ողջամիտ բացատրություն կարող է ծառայել:

115. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանությունում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ծրագրային առաջին քայլը Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկվել է դեռևս Հայաստանի անկախության հռչակմանը հաջորդող 1-ին տարում՝ 1992 թվականի սեպտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրված «Պաշտոնեական դիրքի չարաշահումների և կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին» ՆՀ-151 հրամանագրով[12]: Հանրապետության նախագահի հիշյալ հրամանագրում, մասնավորապես, նշվել էր.

> «Հանրապետությունում համակարգային արմատական վերափոխումների ներկա փուլում, երբ դեռևս անկատար է օրենսդրությունը և կազմավորման ընթացքում են նոր ժողովրդավարական կառույցները, երբ լուրջ վերափոխումների մեջ են հասարակական ողջ մտածողությունն ու հոգեբանությունը, պետության ու ժողովրդի համար առավել վտանգավոր են դառնում պաշտոնեական դիրքի չարաշահումներն ու կոռուպցիան:
>
> Այս երևույթները խանգարում են օրինականության սկզբունքների հաստատմանն ուղղված քայլերին, արգելակում տնտեսական բարեփոխումների ընթացքը, ոտնահարում քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը՝ հաճախ բացասական հասարակական կարծիք ստեղծելով պետական ապարատի գործունեության մասին:

[12] «Պաշտոնեական դիրքի չարաշահումների և կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 1992 թվականի սեպտեմբերի 1-ի ՆՀ-151 հրամանագիր, ուժը կորցրել է 2002 թվականի ապրիլի 12-ին:

Ստեղծված պայմաններում պաշտոնեական դիրքի չարաշահումների և կոռուպցիայի դեմ պայքարն ուժեղացնելը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այս խնդրի իրականացմանն ուղղված միջոցառումները, սահմանափակելով անբարեխիղճ պաշտոնատար անձանց սուբյեկտիվ մղումների շրջանակները, քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների, նրանց օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ են հանդիսանում:

Պաշտոնեական դիրքի չարաշահումները և կոռուպցիան կանխելու, դրանց դեմ տարվող պայքարն ուժեղացնելու նպատակով և մինչև «Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մասին» օրենքի ընդունումը, որոշում եմ.

(...)

2. Պետական ծառայության անցնելիս քաղաքացիները պարտավոր են ներկայացնել հայտարարագիր բոլոր տեսակի եկամուտների, շարժական և անշարժ գույքի, արժեթղթերի, բանկերում ունեցած ավանդների, ինչպես նաև ֆինանսական բնույթի այլ պարտավորությունների մասին:

Այդպիսի տեղեկություններ չներկայացնելը, ոչ լրիվ կամ խեղաթյուրված ներկայացնելը, այդ պաշտոնում անձի նշանակումը մերժելու կամ ազատման հիմք է հանդիսանում:

3. Պետական ծառայողներին արգելել՝

ա) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

բ) պաշտոնեական դիրքը օգտագործելով քաղաքացիներին և իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեության ասպարեզում որևէ աջակցություն ցույց տալ և դրա դիմաց ստանալ վարձատրություն կամ ձեռք բերել իրավունքներ կամ արտոնություններ.

գ) համատեղությամբ զբաղվել պաշտոնեական կարգավիճակով չնախատեսված գործունեությամբ (բացի գիտական, բժշկական, մանկավարժական, ստեղծագործական գործունեությունից) և ստանալ լրացուցիչ վարձատրություն, ձեռք բերել օրենքով չսահմանված իրավունքներ կամ արտոնություններ.

դ) միջնորդների միջոցով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

ե) ծառայության բերումով իրենց հայտնի դարձած տեղեկություններն օգտագործել անձնական շահ ստանալու նպատակով.

(...)

է) անձնական կարիքների համար օգտագործել ծառայական ավտոտրանսպորտը, տեխնիկական այլ միջոցներ.

(...):

4. Արգելել Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ծառայության բերումով առնչված հրավիրող կողմի հաշվին արտասահմանյան մասնավոր ուղևորություններ կատարել, բացառությամբ միջազգային պայմանավորվածությամբ նախատեսված դեպքերի և մերձավոր ազգականների հրավերներով կատարվող ուղևորությունների:

5. Պետական ծառայողները պետական և ոչ պետական ձեռնարկություններից, հիմնարկներից ու կազմակերպություններից, ինչպես նաև արտասահմանյան պետություններից, կազմակերպություններից, ֆիրմաներից պաշտոնի բերումով

ստացած արժեքավոր նվերները, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով, հանձնում են պետությանը:

6. Սույն հրամանագրի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված պահանջների խախտում թույլ տված պետական ծառայողները ենթակա են պաշտոնից ազատման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ պատասխանատվության:

(...)»:

116. Մինչ հիշյալ հրամանագրի ուժը կորցնելը և դրանից հետո ուժի մեջ էր մտել Սահմանադրությունը, ընդունվել էին մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնցով սահմանվել են հանրային իշխանության մարմիններում ներգրավված անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն իրավաչափ նպատակներից զատ այլ նպատակներով չօգտագործելու, շահերի բախումները կանխելու, գույքային բարեվարքության, միայն թույլատրելի աղբյուրներից եկամուտներ ստանալու և օգտագործելու, գույքի և եկամուտների հայտարարագրման վերաբերյալ կարգավորումներ[13]: Այսինքն՝ հանրային իշխանության համակարգում ներգրավված բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար առավել քան հստակ է եղել իրենց զբաղեցրած պաշտոնով պայմանավորված սահմանափակումների ծավալը, ինչպես նաև այդ սահմանափակումների խախտման համար պատասխանատվությունը:

117. Ամեն դեպքում, Օրենքի իմաստով պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունների իրականացման ողջ ընթացքում գույքային բարեվարքության պահանջները պահպանելը և կոռուպցիոն դրսևորումներով գույքային շահ հետապնդելուց և ստանալուց ձեռնպահ մնալու պարտականությունն ինքնին հենց հանրային ծառայության պաշտոնին ներհատուկ պատասխանատվության և պարտականությունների այն աստիճան անբաժանելի բաղադրիչներ են, որ նույնիսկ ոչ օրինական ճանապարհով գույք ձեռք բերելու՝ օրենքով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով նախատեսված հստակ արգելքի բացակայությունը չի կարող որևէ դեպքում դիտարկվել կամ մեկնաբանվել որպես պաշտոնատար անձի՝ ծառայության սահմանափակումներին հակառակ ձեռք բերված գույքի պաշտպանության հիմնավորում: Անկախ ամենից՝ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ

[13] Տե՛ս, մասնավորապես, 1995 թվականի Սահմանադրությունը, որով Ազգային ժողովի պատգամավորների, Կառավարության անդամների, դատավորների համար սահմանվել են անհամատեղելիության պահանջներ, «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» 1991 թվականի օգոստոսի 1-ի Ն-0367-Ի օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-75 օրենքը, «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» 2001 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-212 օրենքը, «Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքը, «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքը և այլն:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը երբևէ չի հանդուրժել կամ թույլատրելի համարել պաշտոնատար անձի կողմից ոչ օրինական ճանապարհով գույքի ձեռքբերումը. այդպիսի գույքի ձեռքբերումը չի կարող ներառվել Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «*սեփականություն*» հասկացության սահմանադրական բովանդակության ծավալի մեջ:

118. Այսպիսով, Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով Օրենքի իմաստով պաշտոնատար անձանց կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմամբ կոռուպցիայի կանխարգելումը և դրանով պատճառված վնասի վերականգնումը Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դասվում է «*հանրային շահի*» ներքո[14]:

3. Նպատակ 2. հանցավորության դեմ պայքար

119. Սահմանադրական դատարանի համար ընդունելի է Պատասխանողի կողմից ներկայացված դիրքորոշումն առ այն, որ Օրենքի ընդունմամբ հետապնդվում է հանցագործությունների կանխման նպատակ՝ ֆինանսական օգուտ առաջացող հանցագործությունների գրավչությունը նվազեցնելով: Սահմանադրական դատարանը, ընդհանուր առմամբ, ընդունելի է համարում նաև Պատասխանողի այն պնդումը, որ հանցագործությունների կանխարգելման նպատակ կարող են հետապնդել տարաբնույթ օրենսդրական մեխանիզմներ, ինչպես նաև այնպիսիք, որոնք չեն ենթադրում յուրաքանչյուր դեպքում քրեորեն հետապնդվող արարքի համար անձի դատապարտում:

120. Օրենքի ընդունման հիմնավորումներում, մասնավորապես, նշվում է.

> «1. Առանձնապես վտանգավոր որոշ հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների հիմնական շարժառիթը դրանցից ստացվող ֆինանսական միջոցներն են: Նման դեպքերում հանցագործները հաճախ նաև փորձում են թաքցնել այդ ֆինանսական միջոցների իրական աղբյուրները՝ դրանք «օրինականացնելով», իսկ ստացված միջոցներն արդեն օգտագործվում են քաղաքական ազդեցությունը ուժեղացնելու կամ նոր եկամուտներ ստանալու համար:
>
> 2. Այս հանցագործությունների, հատկապես փողերի լվացման դեմ արդյունավետ պայքարի միջոցներից է ֆինանսական ուսումնասիրությունների իրականացումը և հանցավոր ճանապարհով ստացված միջոցների սառեցումը և բռնագանձումը: Հանցավոր ծագում ունեցող ակտիվների բռնագանձման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ բացառելով տվյալ անձանց անհիմն հարստացման հնարավորությունը՝ այս գործիքը չեզոքացնում է հանցագործության կատարման հիմնական շարժառիթը:
>
> 3. Հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման կիրառումը վերահաստատում է կարևորագույն սկզբունք՝ ոչ ոք չպետք է եկամուտներ

[14] Տե՛ս նաև՝ Խորհրդատվական կարծիք, կետ 21:

ստանա հանցավոր ճանապարհով: Այս գործիքը մի կողմից ուղղված է հետագայում հանցագործությունների կանխարգելմանը, իսկ մյուս կողմից՝ հակաօրինական արարքով պատճառված վնասների փոխհատուցմանը և այլ անձանց խախտված իրավունքների վերականգնմանը:

4. Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը (non-conviction based asset forfeiture) կարևորագույն գործիք է կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար: Այս իրավական մեխանիզմը թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելանք կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման: Սա հատկապես կարևոր գործիք է, այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումն իրականացնելն անհնար է օբյեկտիվ պատճառներով[15]»:

121. Օրենքի ընդունման գործընթացում Կառավարության կողմից առաջադրված հիմնավորումներում ներկայացված՝ Օրենքով հանրային շահեր հետապնդվելու վերաբերյալ բացատրություններից զատ, մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունը, հանցագործությունների կանխարգելման ընդհանուր նպատակի ներքո, ստանձնել է առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների բռնագանձման արդյունավետ ընթացակարգ:

122. Մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2003 թվականին ընդունված՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (այսուհետ նաև՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2007 թվականի մարտի 8-ին՝ առանց որևէ վերապահման, «*ընդունվել է (...) կոռուպցիան կանխարգելելու և դրա դեմ ավելի արդյունավետ և ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսման և ուժեղացման, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսման, դյուրացման և օժանդակման, պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսման նպատակով*»[16]:

Սույն որոշման 105-րդ կետում մեջբերված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի նախաբանի 1-2-րդ և 7-8-րդ մասերն ուղղակիորեն վերաբերելի են նաև Օրենքով՝ հանցավորության դեմ պայքարի նպատակով սեփա-

[15] Հիմնավորումներ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների (նախագծերի) ընդունման մասին, էջեր 1-2:

[16] Տե՛ս 2006 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-641 որոշման 1-ին կետը:

կանության իրավունքին միջամտության համար հետապնդվող հանրային շահին[17]:

123. Նույն կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանվում է.

> «[Յ]ուրաքանչյուր Մասնակից պետություն, սույն Կոնվենցիայի 55-րդ հոդվածի համաձայն, գույքի առնչությամբ փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու նպատակներով, որը ձեռք է բերվել իրավախախտումներից որևէ մեկի կատարման հետևանքով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, կամ որոնք օգտագործվել են այդպիսի իրավախախտումները կատարելիս, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, պետք է (...)
>
> գ) քննարկի այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ այդպիսի գույքի բռնագրավման համար հնարավորություն ստեղծվի՝ առանց այնպիսի գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում»:

124. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը Սահմանադրական դատարանն ստուգել է 2006 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-641 որոշմամբ՝ դրանք ամբողջությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան Սահմանադրական դատարանի սույն որոշման կայացման պահին վավերացրել է 191 պետություն[18], հետևաբար՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով ստանձնված պարտավորությունները ձգտում են դեպի համընդհանուր բնույթի միջազգային պարտավորության:

125. Բացի դրանից, Եվրոպայի խորհրդի կողմից 2005 թվականին ընդունված՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով սահմանվել է, որ «[Կ]ողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու գործիքների և եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներին և լվացման ենթարկված գույքին համարժեք գույքի բռնագրավում» (3-րդ հոդվածի 1-ին մաս): Սույն միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը Սահմանա-

[17] Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, **ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնել 2007 թվականի ապրիլի 7-ին:**

[18] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրած և վավերացրած պետությունների մասին տեղեկությունները տե՛ս այստեղ:

դրական դատարանի կողմից ստուգվել է ՍԴՈ-730 որոշմամբ[19], իսկ միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին:

126. Նմանապես, ինչպես Վենետիկի հանձնաժողովը նշել է իր Խորհրդատվական կարծիքում, առանց մեղադրական դատավճռի միջոցների բռնագանձման նպատակը՝ հանցավոր կամ այլ ապօրինի ճանապարհով ստացված միջոցների բռնագանձմամբ հանցավոր գործունեության տնտեսական գրավչությունը նվազեցնելը, ուղղակիորեն մատնանշվել է մի շարք այլ՝ հակակոռուպցիոն և հանցավորության դեմ ուղղված պրակտիկայում ուղենշային միջազգային փաստաթղթերում[20]: Մասնավորապես՝ Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի՝ «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ» վերտառությամբ հանձնարարականները ներառում են, մասնավորապես, թիվ 4 հանձնարարականը, որը սահմանում է, որ պետությունները պետք է դիտարկեն առանց մեղադրական դատավճռի բռնագրավումը թույլատրող միջոցների ընդունումը, «եթե դա չի հակասում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին», և թիվ 38 հանձնարարականը, որը պետություններին կոչ է անում ապահովել, որ նրանք իրավասու լինեն արձագանքելու առանց մեղադրական դատավճռի բռնագրավման վարույթներով և հարակից նախնական միջոցների առնչությամբ կատարված հարցումներին, եթե դա չի հակասում իրենց ներպետական իրավունքի հիմնարար սկզբունքներին[21]:

127. ՄԻԵԴ-ի պրակտիկայում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների բռնագանձումը դիտարկվել է հանրային շահի ներքո, որպես կանխարգելիչ նախազգուշացում հանցավոր մտայնություն ունեցողներին, ինչպես նաև՝ երաշխիք, որ ոչ ոք չի վայելելու հանցավոր գործունեության պտուղները[22]: Նույնաբովանդակ դիրքորոշում է ունեցել նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը[23]:

[19] Սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-730 որոշում:

[20] Տե՛ս Խորհրդատվական կարծիք, կետեր 14-17:

[21] Տե՛ս ՖԱԹՀ-ի հանձնարարականներ՝ «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ», 2012 թվականի փետրվար (հայերեն թարգմանությամբ), հանձնարարականներ 4, 38:

[22] *Yordanov and others v. Bulgaria*, nos. 265/17, 26473/18, § 110, 26 September 2023, *Todorov and others v. Bulgaria*, nos. 50705/11 and six others, § 186, 13 July 2021:

[23] Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2010)010, «Ապօրինի ձեռք բերված գույքի՝ հօգուտ պետության բռնագանձման մասին» Բուլղարիայի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ միջանկյալ կարծիքը, կետեր 16, 22, Վենետիկի հանձնաժողով, CDL-AD(2022)014, «Չհիմնավորված ակտիվների ստուգման և բռնագանձման պետական բյուրոյի մասին» Կոսովոյի

128. Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Օրենքով հետապնդվող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դասվում է «*հանրային շահ*» հասկացության ներքո[24]:

4. Օրենքի որոշակիությունը

129. Դիմողի կողմից Օրենքով նախատեսված սահմանափակումների և միջամտությունների համար հիմք հանդիսացող դրույթների որոշակիության վերաբերյալ առաջադրված հարցադրումներին Սահմանադրական դատարանն անդրադառնալու է ստորև, ըստ Դիմողի կողմից դրանց ներկայացման հերթականության, սույն որոշման 7-րդ բաժնում:

5. Համաչափությունը 1-ին նպատակի շրջանակում

130. Մինչ համաչափության տարրերի և բաղադրիչների վերլուծությունը Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի կարևոր հատկանիշի, որն իր ազդեցությունն ունի սույն սահմանադրական վեճի լուծման համար՝ սեփականության իրավունքի, անձի կարգավիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքի և արդար դատաքննության իրավունքի առնչությամբ Դիմողի կողմից բարձրացված տարբեր հարցերի մասով:

131. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «[Յ]ուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»: Սահմանադրական սույն դրույթը նախատեսվել է 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ և բացակայում էր 1995 թվականի Սահմանադրության՝ սեփականության անհատական հիմնական իրավունքի վերաբերյալ 28-րդ հոդվածում, որը սահմանում էր, որ «[Յ]ուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք: (...)» և 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության սեփականության անհատական հիմնական իրավունքի պաշտպանության մասին 31-րդ հոդվածում, որը սահմանում էր, որ «[Յ]ուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: (...)»:

132. Սույն սահմանադրական վեճի շրջանակում վիճարկվող Օրենքի ազդեցության ժամանակագրական ընդգրկման առավելագույն հնարավոր սկզբնակետից մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը, այսինքն՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 1995 թվականի հուլիսի 13-ը,

Հանրապետության թիվ 08/L-121 օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք, 2022 թվականի հունիսի 20, կետ 18:

[24] Տե՛ս նաև՝ Խորհրդատվական կարծիք, կետ 21:

սեփականության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման հիմնական իրավական ակտը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» Ն-0178-1 օրենքն էր, որի 8-րդ հոդվածի համաձայն «[Ք]աղաքացիների սեփականությունը ստեղծվում և բազմապատկվում է հանրային արտադրությանը մասնակցելուց, ձեռնարկատիրական գործունեությունից, սեփական կամ կոլեկտիվ տնտեսություն վարելուց նրանց ստացած աշխատանքային եկամուտների և վարկային հիմնարկներում, բաժնետոմսերում և մյուս արժեթղթերում ներդրած միջոցներից ստացվող եկամուտների հաշվին, ժառանգաբար և օրենքով թույլատրվող այլ հիմքերով գույք ձեռք բերելու հաշվին»:

133. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև 1995 թվականին ընդունված Սահմանադրության կամ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ սեփականության հիմնական իրավունքին վերաբերող դրույթներն ուղղակի նշում չեն պարունակել Սահմանադրությամբ պաշտպանության ենթակա սեփականության ձեռքբերման օրինականության որակի մասին, այդուհանդերձ, Սահմանադրության համապատասխան դրույթների մեկնաբանության որևէ ընդունելի մեթոդ չի ընձեռում որևէ այլ եզրահանգման հնարավորություն, բացառությամբ նրանից, որ Հայաստանի Հանրապետությունում անկախության հռչակման պահից ի վեր իրավական պաշտպանության, իսկ 1995 թվականի հուլիսի 13-ից հետո՝ Սահմանադրության պաշտպանության ներքո եղել է բացառապես օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունը:

134. Այսպիսով, մինչև 2015 թվականի փոփոխությունները ևս Սահմանադրությամբ երբեք չի ճանաչվել ոչ օրինական հիմքով ձեռք բերված սեփականության իրավունքը, հետևաբար՝ այն զուրկ է եղել Սահմանադրության պաշտպանությունից: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը բացառում է ոչ օրինական հիմքով ձեռք բերված սեփականության նկատմամբ սահմանադրական պաշտպանության տարածումը: Ըստ էության՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման պահից ի վեր ոչ օրինական հիմքով ձեռք բերված գույքը երբևէ չի եղել իրավական պաշտպանության ներքո:

135. Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության մասին Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ, մասնավորապես, նշել է հետևյալը.

> «(...) համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող [մնացյալ] պահանջները հետևյալն են.

(…)

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) **պիտանիությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) **անհրաժեշտությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) **համարժեքությունը** սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

(…)

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, *ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:*

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով *օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին*, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի *անհրաժեշտությունն է*, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված *պիտանի և անհրաժեշտ միջոցը* համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության *սահմանադրական նշանակության* հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ *չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի* նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը:

(…)

Ինչ վերաբերում է միջոցների ընտրությանը, ապա, նախ օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է լինի պիտանի՝ այդ նպատակին հասնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը հիմնական իրավունք սահմանափակող օրենքով ընտրված միջոցի պիտանիության մասին է, ապա այն առաջին հերթին կախված է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին վերաբերող՝ Սահմանադրության այլ պահանջներին, հատկապես՝ որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության հանգամանքից[25]»:

136. Մինչ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի համար ընտրված միջոցների համաչափության հարցին անդրադառնալը՝ Սահմանադրական դատարանը *նախ* ցանկանում է հստակեցնել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դրույթները, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, վերաբերում են այն անձին, որն իր զբաղեցրած պաշտոնի ուժով ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ սույն որոշման կայացման պահին գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ կամ անձ, որն զբաղեցրել է այդպիսի պաշտոն կամ անձ, որն զբաղեցրել է այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթներին նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձն ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

137. Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք թվարկված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով, որով պաշտոնատար անձի, որի գույքին կարող են վերաբերել Օրենքով նախատեսված կարգավորումները, կարգավիճակային պարտադիր բաղադրիչը հստակեցված խմբին դասվող պաշտոն զբաղեցնելն է, այլ ոչ՝ առհասարակ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելը կամ զբաղեցրած լինելը: Պաշտոնատար անձանց այս խմբին դասվում են առավելապես պետական պաշտոն և համայնքային մի շարք պաշտոններ, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակների բարձրագույն (ղեկավար) և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, այսինքն՝ հանրային ծառայության ղեկավար կազմը, որով և սահմանափակված է այն պաշտոնատար անձանց շրջանակը, որոնք կարող են Օրենքի ազդեցության տիրույթում հայտնվել 1-ին նպատակի շրջանակում:

[25] Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում, կետ 4.4:

138. *Երկրորդ*՝ Օրենքով նախատեսված միջամտության՝ համաչափության սահմանադրական պահանջը բավարարելուն գնահատական տալու համար Սահմանադրական դատարանը նկատում է նաև, որ Օրենքով բռնագանձման ենթակա է բացառապես այն գույքը, որի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցել է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը (Օրենքի 24-րդ հոդվածի, 1-ին մաս): Այս հանգամանքը բացառում է Օրենքի կիրառումն այն անձանց նկատմամբ, որոնց գույքի համապատասխան արժեքը չի գերազանցում նշված շեմը, ինչով և առնչակից սուբյեկտների շրջանակի մասով Օրենքի ազդեցությունն էականորեն նվազեցված է՝ սահմանափակվելով Օրենքով նախատեսված կառուցակարգերի՝ միայն բարձր գումարային արժեք ունեցող գույքի նկատմամբ գործադրմամբ[26]:

139. Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական վիճակի պայմաններում 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ գումարի ունեցած արժեքը գնահատելու համար Սահմանադրական դատարանն ընդամենը արձանագրում է, որ այս գումարը սույն որոշման կայացման պահին գերազանցում է Հանրապետության նախագահի (Հանրապետության ամենաբարձրաստիճան պետական պաշտոնատար անձի) ամսական աշխատավարձի (հարկերից ազատ) գրեթե 38-ապատիկը, Հանրապետության վարչապետի (որպես գործադիր իշխանության բարձրագույն պաշտոնատար անձի) ամսական աշխատավարձի (հարկերից ազատ) ավելի քան 43-ապատիկը, Հանրապետության Ազգային ժողովի նախագահի (որպես օրենսդիր իշխանության ամենաբարձր վարձատրվող պաշտոնատար անձի) ամսական աշխատավարձի (հարկերից ազատ) ավելի քան 45-ապատիկը և Սահմանադրական դատարանի նախագահի (որպես ամենաբարձր վարձատրվող դատավորի) ամսական աշխատավարձի (հարկերից ազատ) ավելի քան 27-ապատիկը[27]:

140. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնատար անձանց գերակշիռ մեծամասնության վարձատրությունն ավելի ցածր է, քան վերը նշված պաշտոնյաներինը, որպիսի պարագայում ամենաբարձրաստիճան պաշտոնատար անձի եկամտի հիմնական աղբյուրի՝ աշխատավարձի՝ ավելի քան 3 տարվա գումարը գերազանցող արժեքով՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի բռնագանձումը՝ վերը նշված նպատակների իրականացման համար համաչափության տեսանկյունից կարևոր հավասարակշռող գործոն է:

141. *Երրորդ*՝ ինչպես արդեն նշվեց սույն որոշման 115-116-րդ կետերում, պաշտոնեական դիրքի չարաշահման, շահերի բախման և կոռուպցիայի

[26] Տե՛ս Խորհրդատվական կարծիք, կետ 40:

[27] Տե՛ս «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց մասին» ՀՕ-157-Ն օրենքը, ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից:

կանխարգելման ուղղությամբ պայքարը Հայաստանում սկսվել է անկախության հռչակումից անմիջապես հետո, և այն բոլոր սահմանափակումները, որոնք կարող էին կիրառելի լինել Օրենքի իմաստով պաշտոնատար անձանց կողմից գույք ձեռք բերվելու և իրենց գույքը կառավարվելու հարցերում, Օրենքի ընդունմամբ չէ, որ սահմանվել են: Ինքնին Օրենքը կարգավորում է միայն վերը նշված սահմանափակումների հնարավոր խախտման գույքային հետևանքներին և դրանց կիրառման ընթացակարգերին վերաբերող հարցերը[28]:

142. Ամեն դեպքում Սահմանադրական դատարանը կրկին շեշտում է, որ ո՛չ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և ո՛չ որևէ այլ իրավական ակտ չի կարող մեկնաբանվել այնպես, որ ոչ օրինական աղբյուրներից գույքի ստացումն արգելված լինելու մասին առանձին դրույթի բացակայությամբ պայմանավորված՝ նման գույքի ձեռքբերումը համարվի թույլատրելի, և այդպիսի գույքը որակվի որպես օրինական հիմքով ձեռք բերված, երբ նման մեծ արժեքով (տե՛ս սույն որոշման 139 և 156-րդ կետերը) գույքի ծագման օրինականությունը հիմնավորելու համար բավարար ընթացակարգային երաշխիքների ապահովման պայմաններում պաշտոնատար անձն ի վիճակի չէ հիմնավորել դրա՝ օրինական եկամուտներով ձեռքբերումը:

143. *Չորրորդ*՝ վերը նշված բոլոր գործոնների համակցված գործողությունը համաչափության սահմանադրական պահանջի բավարարումն ապահովելու համար պետք է զուգորդվի նաև քաղաքացիական դատավարության կարգով տրամադրվող ընթացակարգային երաշխիքներով:

144. Այս առումով Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, Օրենքով որևէ հարցի վերաբերյալ հատուկ այլ կարգավորումներ նախատեսված չլինելու դեպքում, կիրառելի է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունների նկատմամբ: Հետևաբար՝ ի լրումն Օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքների՝ կիրառելի են նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր երաշխիքները, և պատասխանողը պետք է հնարավորություն ունենա ամբողջ ծավալով օգտվելու դատավարության կողմին տրամադրվելիք իրավունքներից՝ ներառյալ՝ դատական նիստերին արդյունավետ մասնակցությունը և դատական ակտերի բողոքարկումը:

145. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից կատարված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին վերաբերող հարցադրումներն արժանի են Սահմանադրական դատարանի

[28] Տե՛ս այս իմաստով *mutatis mutandis*, *Gogitidze and others v. Georgia*, no. 36862/05, §99, 12 May 2015:

առանձին անդրադարձին, դրանք, ըստ դիմումում շարադրված հերթականության, քննարկվում են ստորև՝ սույն որոշման 4-րդ և 5-րդ մասերում:

146. Վերը նշված գործոնները, այնուամենայնիվ, նույնիսկ իրենց ամբողջության մեջ չեն կարող ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով Օրենքով նախատեսված սահմանափակման համաչափությունը, եթե Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերին՝ համակցությամբ 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ տրված մեկնաբանությունը բռնագանձման ենթակա ապօրինի ծագում ունեցող գույքի շրջանակը չպայմանավորի այդպիսի գույքի ձեռքբերման՝ անձի պաշտոնավարման հետ ունեցած առնչությամբ: Մասնավորապես, ինչպես Սահմանադրական դատարանը նշել է սույն որոշման 104-118-րդ կետերում, Օրենքով կոռուպցիայի դեմ պայքարի նպատակն ունի ոլորտային թիրախավորում, այն է՝ հանրային ծառայության մեջ կոռուպցիայի դեմ պայքարը, ինչով պայմանավորված է նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված պաշտոնատար անձանց շրջանակը: Օրենքով նախատեսված նպատակի համար բռնագանձման ենթակա գույքի կազմը որոշակիացնելիս, հետևաբար, էական է, թե արդյոք այն ձեռք է բերվել համապատասխան պաշտոնի ստանձնումից առաջ, թե հետո:

147. Կոռուպցիոն դրսևորումների քողարկվածության և քրեական արդարադատության գործիքակազմի միջոցով, առանց զուգորդող քաղաքացիական բռնագանձման կառուցակարգերի կիրառման, դրանց դեմ պայքարի ոչ բարձր արդյունավետության պայմաններում (տե՛ս սույն որոշման 111-րդ կետը), Օրենքը կարող է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակում հետապնդել այնպիսի գույքի հայտնաբերման և բռնագանձման խնդիր, որը ձեռք է բերվել պաշտոնավարման մեկնարկից հետո, ներառյալ՝ պաշտոնավարման ավարտից հետո և չի հիմնավորվում օրինական եկամուտներով: Սակայն այն դեպքում, երբ գույքը ձեռք է բերվել պաշտոնեական լիազորություններն ստանձնելուց առաջ, դրա բռնագանձումը դուրս է գալիս հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակից, և հետևաբար՝ չի կարող համատեղելի համարվել համաչափության սկզբունքի հետ:

148. Այս իմաստով Սահմանադրական դատարանը հարկ է համարում հստակեցնել, որ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակին անհամապատասխանությունն առաջանում է ոչ թե պաշտոնավարման մեկնարկից առաջ ձեռք բերված գույքի և միջոցների ուսումնասիրմամբ, այլ այդ գույքի բռնագանձման դեպքում, քանի որ Օրենքով նախատեսված ուսումնասիրության առաջնային նպատակը ճանաչողական է այն իմաստով, որ առանց համապատասխան գույքի ձեռքբերման հանգամանքների շուրջ պատշաճ տեղեկացվածության՝ իրավասու մարմինն ի վիճակի չի լինելու արդյունավետորեն կայացնել Օրենքի 13-րդ հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված որոշումները, իսկ հետագայում՝ ձեռնարկել Օրենքի 18-20-րդ հոդվածներով նախատեսված գործո-

ղությունները: Հետևաբար՝ իրավասու մարմնի կողմից մինչև պաշտոնավարման մեկնարկն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե դրա նպատակն անձի գույքային դրության ստուգումն է, օրինակ, պարզելու համար, թե արդյոք նա ունեցել է բավարար միջոցներ արդեն պաշտոնավարման մեկնարկից հետո իր օրինական եկամուտներով գույքի ձեռքբերման համար կամ որևէ այլ՝ Օրենքի նպատակին համահունչ հանգամանքներ պարզելու նպատակով: Սակայն, եթե ընտրված ժամկետը նախորդում է անձի պաշտոնավարման մեկնարկի պահին, այդ ժամանակահատվածում (այսինքն՝ ուսումնասիրության այն ժամանակահատվածը, որը նախորդում է պաշտոնավարման մեկնարկին) Օրենքի իմաստով օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի հայտնաբերման դեպքում դրա նկատմամբ չի կարող ծագել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածն այն պատճառաբանությամբ, որ Օրենքով հետապնդվող հանրային շահը հանրային ծառայության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարն է՝ դրա կանխարգելման միջոցով: Հետևաբար՝ որպես բռնագանձման ենթակա գույք պետք է դիտարկվի բացառապես Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով այն գույքը, որը ձեռք է բերվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնի ստանձնման պահից հետո, քանի որ մինչ այդ ձեռք բերված գույքի բռնագանձումը դուրս է հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակից:

149. Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն Օրենքի վերը նշված դրույթների՝ նախորդ կետով նախատեսված մեկնաբանության տարբերակը դիտարկում է որպես համաչափության պահանջի բավարարման պարտադիր պայման՝ Օրենքով նախատեսված՝ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակում:

150. Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքով կոռուպցիայի դեմ պայքարի հանրային շահի հետապնդման դեպքում (**1**) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնատար անձից (**2**) հայցը ներկայացնելու պահի դրությամբ 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի արժեքը գերազանցող և (**3**) օրինական եկամուտներով չհիմնավորվող այն գույքի բռնագանձումը, որը ձեռք է բերվել պատասխանողի կողմից իր պաշտոնի ստանձնումից հետո և (**4**) տվյալ գույքի ձեռքբերման օրինականության հիմնավորման համար պատասխանողին արդար դատաքննության իրավունքի երաշխիքներն ապահովված լինելու պայմաններում, և վերջինս չի հիմնավորում իր գույքի ձեռքբերման օրինականությունը, խնդրահարույց չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ համաչափության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

151. Հետևաբար՝ սույն որոշման 146-149-րդ կետերում տրված՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի և 24-րդ հոդվածի 1-ին մասի

մեկնաբանությամբ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության պահանջն Օրենքով հետապնդվող իրավաչափ 1-ին նպատակի շրջանակներում պահպանված է:

6. Համաչափությունը 2-րդ նպատակի շրջանակում

152. Մինչ անդրադառնալը հանցավորության դեմ պայքարի նպատակի հետապնդման համար Օրենքով նախատեսված միջոցների համաչափության հարցին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վերահաստատել սույն որոշման 131-134-րդ կետերում նշված իր դիրքորոշումները՝ որպես այս հարցին վերաբերելի դիրքորոշումներ, որոնք պետք է նկատի ունենալ դրա կապակցությամբ հետագա վերլուծության ընթացքում:

153. *Նախ*՝ հանցագործության հետ առնչության բերումով գույքի ուսումնասիրության՝ Օրենքով սահմանված հիմքերը նախատեսված են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում, որոնց բոլորի դեպքում անձին ապօրինի ծագում ունեցող գույք պատկանելու վերաբերյալ կասկածը պայմանավորված է անձի՝ հանցանքին առնչությամբ: Մասնավորապես՝ իրավասու մարմինը կարող է սկսել հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն՝

1) Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, եթե առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով:

2) Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, եթե նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

3) Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, եթե առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. անձը համաներմամբ ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման,

բ. անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման,

գ. անձը մահացել է,

դ. անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքին:

4) Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

154. Հանցագործության հետ առնչության բերումով գույքի ուսումնասիրության՝ Օրենքով սահմանված հիմքերը նախատեսված են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում, որոնց բոլորի դեպքում անձին ապօրինի ծագում ունեցող գույք պատկանելու վերաբերյալ կասկածը պայմանավորված է անձի՝ հանցանքին առնչությամբ: Մասնավորապես՝ իրավասու մարմինը կարող է սկսել հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն. եթե Օրենքի իմաստով «*հանցանքը*» բնորոշվում է որպես բացառապես Քրեական օրենսգրքով նախատեսված՝ պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված, Քրեական օրենսգրքով նախատեսված արարքներից մեկը, որոնց ցանկը խիստ որոշակիորեն սահմանված է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:

155. Քրեական օրենսգրքի և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի և Անդրազգային հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիայի ու դրան կից արձանագրությունների համադրված վերլուծությունը հնարավորություն է ընձեռում արձանագրել, որ Օրենքում թվարկվող հանցանքները (1) գույքային օգուտ գեներացնելու հնարավորություն ընձեռող և/կամ (2) միջազգայնորեն հետապնդելի համարվող՝ կազմակերպված հանցավոր դրսևորում ունեցող (3) և/կամ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ են, որոնք գերակշիռ մասով հանդիսանում են առանձնապես ծանր[29] կամ ծանր[30] հանցագործություններ:

[29] Օրինակ՝ հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (հ. 318, 2-րդ մաս), մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, որը կատարվել է այլ պետություն տեղափոխելով (հ. 188, 2-րդ մաս), դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից կամ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալը (հ. 435, 3-րդ մաս):

[30] Օրինակ՝ քրեական ենթամշակույթ կրող խումբ ստեղծելը կամ ղեկավարելը (հ. 323, 1-ին մաս), հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ (հ. 335, 3-րդ մաս), մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությունը (հ. 183, 1-ին մաս):

156. *Երկրորդ՝* Սահմանադրական դատարանն ընդգծում է նաև վերը՝ 139-րդ կետում նկարագրված՝ սեփականության իրավունքին Օրենքով նախատեսված միջամտության համաչափության գնահատականի համար կարևոր գործոնն առ այն, որ Օրենքով բռնագանձման ենթակա է բացառապես այն գույքը, որի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցել է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը (Օրենքի 24 հոդված, մաս 1-ին): Նույն շեմի բավարարումը նաև նախապայման է Օրենքի իմաստով ուսումնասիրության արդյունքների ինչպես նախնական, այնպես էլ վերջնական ամփոփումից հետո գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար (Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մաս և 18-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս հանգամանքը, ինչպես արդեն նշվել է, բացառում է Օրենքի ազդեցությունն այն անձանց շրջանակի համար, որոնց գույքի համապատասխան արժեքը չի գերազանցում նշված շեմը, որով և էականորեն նվազեցված է Օրենքի ազդեցությունը սուբյեկտների ընդգրկվածության իմաստով՝ Օրենքով նախատեսված իրավական գործիքների գործադրումն ապահովելով միայն բարձր գումարային արժեք ունեցող գույքի նկատմամբ[31]: Ի հավելումն Սահմանադրական դատարանի կողմից սույն որոշման 139-րդ կետում բերված համեմատական տվյալների՝ հարկ է նկատել, որ սույն որոշման կայացման պահին առկա տվյալների համաձայն՝ 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ գումարը 33 անգամ գերազանցում է 2021 թվականի դրությամբ[32] Հայաստանում մեկ շնչին ընկնող տարեկան զուտ ազգային եկամուտի ամբողջ ծավալը[33]:

157. *Երրորդ՝* ինչպես նշվել է սույն որոշման 143-144-րդ կետերում, վերը նշված գործոնների համակցված գործողությունը համաչափության սահմանադրական պահանջը բավարարելու համար պետք է զուգորդվի նաև քաղաքացիական դատավարության կարգով անձին՝ իր գույքի ձեռքբերման օրինականությունը ներկայացնելու նպատակով տրամադրվող ընթացակարգային երաշխիքներով: Սույն որոշման նույն դրույթը հավասարապես վերաբերելի է նաև հանցավորության դեմ պայքարի նպատակի շրջանակում սեփականության իրավունքին միջամտության համաչափության գնահատմանը:

158. Հանցավորության դեմ պայքարի նպատակով ներդրված քաղաքացիական դատավարության կարգով գույքի բռնագանձման կառուցակարգերի համատեքստին վերաբերող իրավունքի զարգացմամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում միջամտության համաչափության պահանջի բաղադրիչ է դիտարկվել, մասնավորապես,

[31] Տե՛ս Խորհրդատվական կարծիք, կետ 40:

[32] Համաշխարհային բանկի՝ սույն որոշման կայացման պահին հայտնի վերջին տվյալը:

[33] Հայաստանում մեկ շնչին ընկնող տարեկան զուտ ազգային եկամուտի (net national income per capita) մասով Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները տե՛ս այստեղ:

բռնագանձման ենթակա գույքի և բռնագանձման վարույթի համար հիմք հանդիսացող հանցանքի միջև կապի առկայությունը, որի առնչությամբ, մասնավորապես՝ «Յորդանովն ընդդեմ Բուլղարիայի» գործով այս դատարանը նշել էր, որ որպեսզի գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը համապատասխանի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, ներպետական դատարանից ակնկալվում է, որ այն տրամադրի այն հանցանքի կամ զանցանքի վերաբերյալ որոշ տվյալներ, որի կատարման արդյունքում է ենթադրաբար ձեռք բերվել բռնագանձման առարկա գույքը, և ցույց տա, որ ողջամտորեն հնարավոր էր կապ այդ իրավախախտման և խնդրո առարկա գույքի միջև[34]:

159. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հիշեցնում է, որ իր՝ 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշմամբ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի վերաբերյալ նշել էր.

> «Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանադրական հիմնական իրավունքի կամ ազատության «սահմանափակման սահմանափակման» հիմնարար կանոնը նախատեսում է սահմանադրական հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման շրջանակը՝ որպես դրա առավելագույն սահման արձանագրելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված սահմանափակման չափը: Սահմանադրական սույն կանոնը տարածվում է յուրաքանչյուր սահմանադրական հիմնական իրավունքի կամ ազատության նկատմամբ և չի նախատեսում հիմնական իրավունքների և ազատությունների ցանկից որևէ բացառություն, որով հստակորեն սահմանագծում է հանրային իշխանության կողմից սահմանադրական որևէ իրավունքի կամ ազատության սահմանափակման կամ դրան միջամտության առավելագույն թույլատրելի սահմանը: Հետևաբար՝ մարդու սահմանադրական հիմնական իրավունքների կամ ազատությունների պաշտպանության հարցում Սահմանադրության և միջազգային իրավունքի հարաբերակցության այս հիմնարար սահմանադրական կանոնի ուժով Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով սահմանված որևէ հիմնական իրավունքի խախտում ինքնաբերաբար Սահմանադրությամբ նախատեսված համապատասխան հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման կամ այլ միջամտության առավելագույն թույլատրելի սահմանի խախտում է: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իրավունքի կամ ազատության պաշտպանության սահմանը համապատասխան հիմնական սահմանադրական իրավունքի կամ ազատության պաշտպանության «նվազագույն նշաձողն» է, որի խախտումը ոչ միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի, այլև Սահմանադրության խախտում է»[35]:

[34] *Yordanov and others v. Bulgaria*, nos. 265/17, 26473/18, § 124, 26 September 2023:

[35] Սահմանադրական դատարանի 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշում, կետ 58:

160. Հետևաբար՝ վերը նշված գործոնները, այնուամենայնիվ, սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման «*նվազագույն նշածողը*» ՄԻԵԴ վճռով սահմանված լինելու պայմաններում, նույնիսկ իրենց ամբողջության մեջ չեն կարող ապահովել Օրենքով հետապնդվող՝ հանցավորության դեմ պայքարի նպատակով դրանով նախատեսված միջամտության համաչափությունը, եթե Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի՝ 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, մեկնաբանությունը չպարունակի բռնագանձման ենթակա գույքի՝ համապատասխան հանցանքի հետ այնպիսի կապը հիմնավորելու պահանջ, որը ներառում է տվյալ անձին վերագրվող հանցանքի՝ իր համար տնտեսական օգուտ գեներացնելու հնարավորությունը:

161. Անձին վերագրվող հանցանքի՝ իր համար տնտեսական օգուտ գեներացնելու հնարավորությունն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերից մեկի հիմքում ընկած հանցանքի արդյունքում տնտեսական օգուտ ձեռք բերելու հնարավորությունն է: Ընդ որում, հաշվի առնելով Օրենքով նախատեսված գույքի բռնագանձման ընթացակարգի ներդրման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումները, մասնավորապես՝ հանցավոր գործունեության ընթացքում ձեռք բերվող գույքի բռնագանձման համար քրեական դատավարության ընթացքում պահանջվող բարձր ապացուցողական շեմի առկայությամբ պայմանավորված՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը շրջանառությունից դուրս բերելու և, հետևաբար, հանցավորության տնտեսական գրավչությունը նվազեցնելու նպատակներին հասնելու դժվարությունները[36]՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ հանցանքից տնտեսական օգուտ ստանալու հանգամանքի հիմնավորման համար քրեական դատավարությունում գույքի բռնագանձման նպատակով կիրառվող ապացուցողական շեմը կիրառելի չէ Օրենքով նախատեսված ընթացակարգերով գույքի բռնագանձման համար: Այսինքն՝ պատասխանողի գույքի՝ Օրենքի համաձայն բռնագանձման մասին եզրահանգման համար անհրաժեշտ չէ, որ այն հիմնված լինի հանցանքի հետ այնպիսի պատճառահետևանքային կապի վրա, որի առկայությունը պետք է հաստատված լինի «*հիմնավոր կասկածից անդին*» ապացուցողական շեմի բավարարմամբ, որովհետև Օրենքով նախատեսված ընթացակարգի նպատակը չէ հանցավոր վարքագծի հաստատումը քրեական իրավունքի նպատակների համար, այլ՝ որոշ հավաստիությամբ ցույց տալը, որ բռնագանձման ենթակա գույքը կարող էր գեներացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում[37]: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Օրենքով

[36] Տե՛ս Խորհրդատվական կարծիք, կետ 35:

[37] Տե՛ս համեմատության համար *Mandev and others v. Bulgaria, nos.* 57002/11 and 4 others, *§ 108, 21 May 2024:*

նախատեսված կառուցակարգի գործադրմամբ բռնագանձվելիք գույքի՝ հանցանքի հետ կապն անձի դրսևորած վարքագծի պայմաններում որոշակի ողջամիտ հավաստիությամբ խնդրո առարկա գույքի հանցանքի արդյունքում ստացված լինելու հավանականությունն է: Այսինքն՝ (**1**) քաղաքացիական դատավարության ընթացքում իր գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով հիմնավորելու՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր ընթացակարգային երաշխիքներն ապահովված լինելու և (**2**) գույքի նկատմամբ Օրենքով առաջադրվող նվազագույն արժեքային շեմի բավարարվածության պայմաններում, համապատասխան հանցանքից տնտեսական օգուտ ստանալու հնարավորությունն այն հանգամանքն է, որն ամրապնդում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ անաչառ և տեղեկացված դիտորդի աչքում ավելի հավանական դարձնելով այն, որ գույքը, որի ձեռքբերման օրինականությունը չի հիմնավորվել օրինական եկամուտներով, ունի ապօրինի, քան՝ օրինական ծագում: Արդյունքում՝ պատասխանողի կողմից՝ իր գույքի ձեռքբերման օրինականությունը չհիմնավորելու բացասական հետևանքները կրելը, Օրենքով նախատեսված մյուս պայմանների բավարարված լինելու դեպքում, համաչափ կլինի Սահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով:

162. Վերը նշված գործոնների հաշվառմամբ՝ Օրենքով նախատեսված՝ ապօրինի ծագում ունեցող գույքը քաղաքացիական դատավարության կարգով բռնագանձելու ընթացակարգը Սահմանադրական դատարանի գնահատմամբ պիտանի է հանցավորության դեմ պայքարի նպատակի համար, քանի որ այն էականորեն նվազեցնում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում թվարկված հանցանքների տնտեսական գրավչությունը և ազդեցիկ ուղերձ է պարունակում հանցավոր մտադրություն ունեցող անձանց առ այն, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքից օգտվելը նույնիսկ տարիներ անց դադարեցվելու է:

163. Օրենքով նախատեսված՝ քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգը, միաժամանակ, նաև անհրաժեշտ գործիքակազմ է՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը տնտեսական շրջանառությունից դուրս բերելու համար: Դրան զուգահեռ, քրեական դատավարության կարգով գույքի բռնագրավման և այլ կերպ բռնագանձման գործիքակազմերը, ինչպես արդեն նշվել է սույն որոշման 111-րդ կետում, չունեն արդյունավետության այն աստիճանը, ինչը միջազգային լավագույն փորձը վերագրում է ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական բռնագանձումների կառուցակարգերին:

164. Միաժամանակ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգը և դրա գործադրման համար նախատեսված համապատասխան ընթացակարգը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով (տե՛ս սույն որոշման 124-125-րդ կետերը)

ստանձնված պարտավորությունների իմաստով ուղղակիորեն որպես պիտանի և անհրաժեշտ գործիքակազմ են դիտվում նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի շրջանառությունը կանխելու և այն բռնագանձելու հարցերում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային համագործակցության շրջանակում ունեցած պարտավորությունների կատարման համար:

165. Ի վերջո, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքով հետապնդվող՝ հանցավորության դեմ պայքարի նպատակի շրջանակում (**1**) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հանցանքներից որևէ մեկին Օրենքի իմաստով առնչություն ունեցող անձից (**2**) հայցը ներկայացնելու պահի դրությամբ 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի արժեքը գերազանցող և (**3**) օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ պատասխանողին վերագրվող հանցանքին առնչվող այն գույքի բռնագանձումը, որի ձեռքբերման օրինականության հիմնավորման համար պատասխանողի արդար դատաքննության իրավունքն ապահովված լինելու պայմաններում՝ վերջինս չի հիմնավորում իր գույքի ձեռքբերման օրինականությունը, խնդրահարույց չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի տեսանկյունից:

166. Հետևաբար՝ սույն որոշման 160-161-րդ կետերում նախատեսված՝ Օրենքի 5-րդ հոդ-վածի 1-ին մասի 1-4-րդ կետերի և 24-րդ հոդվածի 1-ին մասի համակցված մեկնաբանությամբ համաչափության պահանջը 2-րդ նպատակի շրջանակներում պահպանված է:

7. Սեփականության իրավունքի ներքո այլ հարցեր

167. Կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով սեփականության իրավունքին միջամտության համաչափության առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենքով գույքի բռնագանձման թույլատրելիության ժամանակային սահմանափակում չի նախատեսվում: Այս իմաստով ինքնին հասկանալի է, որ սույն որոշման 104-118-րդ կետերում նկարագրված հանրային շահի հետապնդման նպատակով նման ժամանակային սահմանափակումների նախատեսումը մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը ձեռք բերված գույքի բռնագանձման հարցում կնշանակեր առհասարակ Օրենքը չտարածել մինչ դրա ուժի մեջ մտնելը ձեռք բերված գույքի նկատմամբ: Սակայն պետք է նկատել նաև, որ նման վաղեմության ժամկետ նախատեսված չէ նաև Օրենքի ուժի մեջ մտնելու մեկնակետից կամ հետագա որևէ պահից հաշվարկված:

168. Թեպետ Դիմողը սույն հարցը չի բարձրացրել իր հիմնավորումներում, սակայն այն ուղղակիորեն կապված է Դիմողի կողմից առաջադրված՝ ուսումնասիրվող ժամանակահատվածը մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը տարածելու՝ Դատախազության հայեցողական լիազորության հետ այն

իմաստով, որ Օրենքով ուսումնասիրություն սկսելու վաղեմության որևէ ժամկետ նախատեսված չլինելու պայմաններում Օրենքի գործողության ընթացքում շարունակաբար երկարելու է բռնագանձման ենթակա գույքի ձեռքբերման և դրա առնչությամբ Օրենքով նախատեսված իրավական վարույթների միջև ընկած ժամանակահատվածը[38]: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն որոշման 147-րդ կետով նախատեսված օբյեկտիվ չափանիշը, այսինքն՝ բռնագանձումը միայն պաշտոնավարման պահից հետո ձեռք բերված համապատասխան գույքի վրա տարածելն ինքնին սահմանափակում է հնարավոր կամայականությունների պատուհանը՝ կապված նրա հետ, որ պաշտոնատար անձի՝ բռնագանձման ենթակա գույքի շրջանակը կարող է սահմանագծվել դատախազի հայեցողությամբ՝ կախված ուսումնասիրվող ժամանակահատվածի վերաբերյալ վերջինիս որոշումից:

169. Այդուհանդերձ, սրանով չի լուծվում այն խնդիրը, թե Օրենքն ուժի մեջ մտնելու պահից ի վեր պաշտոնատար անձի գույքը դեռ որքան ժամանակ հետո կարող է Օրենքի իմաստով բռնագանձման ենթակա լինել: Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ժամանակի ընթացքին զուգահեռ նման ժամկետային վաղեմության բացակայությունը հղի է կոնկրետ անձի համար իր գույքի կազմի առնչությամբ անորոշության ձևավորման վտանգով, որը թեպետ վերացական ստուգման շրջանակում Սահմանադրական դատարանի կողմից քննարկել հնարավոր չէ կոնկրետ փաստական հանգամանքների նկատմամբ Օրենքի նորմերի կիրառման ընթացքում դրանց տրված մեկնաբանության բացակայության պատճառով, սակայն որքան ժամանակը հոսում է, այնքան անձի համար ավելի առարկայական են դառնալու իր գույքի առնչությամբ անորոշությունից բխող հետևանքները: Հետևաբար՝ սա մի հանգամանք է, որն ինքնին բավարար չէ Օրենքի համապատասխան դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ եզրակացության հանգելու համար, սակայն պետք է անմիջապես հայտնվի օրենսդրի ուշադրության կենտրոնում:

170. Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը պարտավոր է համաչափ և կանխատեսելի կարգավորումներով որոշակիացնել Օրենքով նախատեսված ժամանակահատվածը Օրենքի ընթացակարգերի կիրառման համար վաղեմություն սահմանելու նպատակով՝ ի միտն ունենալով ժամանակային երկու պայմանական ռեժիմները՝ (**1**) Օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ և (**2**) Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: Օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված գույքի առնչությամբ խոսքն այնպիսի կարգավորումների մասին է, որոնք անհրաժեշտ են այդ գույքի բռնագանձման վարույթ նախաձեռնելու համար ողջամիտ առավելագույն ժամկետ (սկսած Օրենքի ուժի մեջ մտնելու պահից) սահմանելու համար: Մյուս

[38] Տե՛ս նույն մտահոգության մասին նաև Խորհրդատվական կարծիքում, կետ 53:

դեպքում՝ Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքի առնչությամբ հարկ է նախատեսել կարգավորումներ, որոնք կսահմանեն այն հնարավոր առավելագույն և ողջամիտ ժամկետը (հաշված, օրինակ, գույքի ձեռքբերման և/կամ պաշտոնատար անձի պաշտոնավարման ավարտի պահից), որը լրանալուց հետո տվյալ գույքի նկատմամբ Օրենքով նախատեսված ընթացակարգերի կիրառման վաղեմություն պետք է գործի:

171. Ինչ վերաբերում է Դիմողի այն հարցադրմանը, որ անորոշ է, թե Օրենքի ուժի մեջ մտնելու պահից հետո որքան ժամանակահատվածում Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով կարող է սկսվել ուսումնասիրությունը, ապա Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դիմողի առաջադրած խնդիրն իր լուծումն ստանում է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի համակցված ուսումնասիրությամբ, որի արդյունքում ակնհայտ է դառնում, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ուսումնասիրությունը Դատախազության համապատասխան ստորաբաժանումը կարող է սկսել միայն մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի տեղեկացումը և դրա առնչությամբ համապատասխան փաստաթղթերն ստանալու պահից: Իր հերթին, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի մոտ, Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով, նման պարտականությունը ծագում է, եթե Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված հիմքն առկա է Օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելու դրությամբ մինչդատական կամ դատական վարույթում գտնվող գործով կամ ի հայտ է եկել նույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո: Այսինքն՝ Օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելու դրությամբ մինչդատական կամ դատական վարույթում գտնվող գործով մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ուղարկած նյութերի հիման վրա իրավասու մարմինը 10-օրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին:

172. Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Օրենքով սահմանված է փոխկապակցված անձանց չափազանց լայն շրջանակ, որով և հնարավորություն է ստեղծվում անձանց լայն շրջանակի հիմնական իրավունքների ինտենսիվ միջամտության համար նույնիսկ նրանց և որևէ պաշտոնատար անձի կամ որևէ գործարքի հետ հեռավոր կապի պայմաններում, ապա Սահմանադրական դատարանն իրավական դրույթի՝ կոնկրետ գործով կիրառման հանգամանքների բացակայության պայմաններում Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-10-րդ կետերում թվարկված անձանց շրջանակի վերաբերյալ Դիմողի զուտ պնդումը չի կարող բավարար համարել իրավական

դրույթի՝ Սահմանադրությանն անհամապատասխանության եզրահանգման համար:

III. ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐԳԵԼՔԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

173. Դիմողը նշում է, որ Օրենքն անձի վրա դնում է իր գույքի ձեռքբերումն օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորելու այնպիսի պարտականություն, որը չի եղել նախկինում՝ մինչև վիճարկվող Օրենքի ընդունումը: Քանի որ օրենքի ընդունումից առաջ ավարտված փաստակազմի վրա (գույքի ձեռքբերումը) տարածվում են նոր իրավական հետևանքներ, ապա առկա է օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում: Դիմողի համոզմամբ՝ որպեսզի անձն Օրենքով նախատեսված պահանջների հաշվառմամբ կարողանա հիմնավորել իր եկամուտները, նա պետք է պահպանած լինի դրանց վերաբերյալ փաստաթղթեր կամ այլ հիմնավորող տեղեկություններ, ինչը նախկինում որևէ նորմատիվ իրավական ակտով պահանջված չի եղել:

174. Իր լրացուցիչ բացատրություններում Դիմողը նշում է, որ իր կողմից բարձրացվում է Օրենքի հետադարձ գործողության վերաբերյալ հստակ խնդիր, որը ոչ թե վերաբերում է ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ օրենքի հետադարձ ուժով կիրառությանը, այլ նրան, որ Օրենքով անձի վրա դրվում է գույքի ձեռքբերման օրինականությունն ապացուցելու պարտականություն, որը նախկինում որևէ իրավական ակտով անձը չի ունեցել: Ամփոփելով՝ Դիմողը գտնում է, որ Օրենքը ոչ միայն ունի հետադարձ ուժ, այլ նաև նախկինում ավարտված փաստակազմի հետ կապված անձի վրա դնում է նոր պարտավորություններ և վատթարացնում է անձի իրավական վիճակը:

2. Պատասխանող

175. Պատասխանողը կարծում է, որ Օրենքն ինքնին չի ստեղծել պատասխանատվության նոր տեսակ անձի կողմից ապօրինի ճանապարհով գույքի ձեռքբերման համար և դրանով իսկ չի վատթարացրել անձի իրավական վիճակը, այլ ընդամենը փոփոխել է գույքի բռնագանձման դատավարական գործիքները: Այսինքն՝ տվյալ պարագայում, ըստ Պատասխանողի, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումն ավելի շուտ դատավարական, ընթացակարգային փոփոխություն է, քան նյութական:

176. Ամփոփելով վերոգրյալի առնչությամբ իր դիրքորոշումները՝ Պատասխանողը գտնում է, որ Օրենքի կիրառելիությունը ժամանակի մեջ համապատասխանում է միջազգային չափանիշներին, իսկ դրա դրույթները չունեն հետադարձ ուժ Սահմանադրության 73-րդ հոդվածի իմաստով և վերաբերում են չնայած նախկինում ծագած, բայց բացառապես Օրենքի ընդունման պահին շարունակվող իրավահարաբերություններին:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

177. Օրենքի՝ Դիմողի կողմից վկայակոչած դրույթների՝ Սահմանադրությանն անհամապատասխանության վերաբերյալ փաստարկներ ներկայացված են Սահմանադրության 73-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի ներքո, համաձայն որի՝

> «1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:
>
> 2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

178. Սահմանադրությամբ սահմանված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերի հետադարձ իրավական ուժի արգելքի՝ Օրենքների դրույթների նկատմամբ կիրառելիության հարցի վերլուծությունը Սահմանադրական դատարանն սկսում է սույն որոշման 131-134-րդ կետերում արտահայտված դիրքորոշումներից, որոնք հավասարապես վերաբերելի են Դիմողի կողմից Սահմանադրության 73-րդ հոդվածի ներքո ներկայացրած հիմնավորումներին:

179. Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արգելքի նպատակն է կանխել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժը: Վիճարկվող Օրենքով սահմանված կառուցակարգերն ու ընթացակարգերն այն մասին են, որ ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության, այսինքն՝ դրանով նախատեսված միջամտությունը կատարվում է այն գույքի հանդեպ, որի նկատմամբ սեփականության իրավունքը չի ծագել օրինական հիմքով, ինչն իր հերթին չի վերացնում այդպիսի գույքի նկատմամբ սահմանադրական պաշտպանությունը հետադարձորեն, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքը, ինչպես նշվեց վերը, առհասարակ Սահմանադրության կամ այլ իրավական պաշտպանության ներքո երբևէ չի գտնվել:

180. Վիճարկվող Օրենքով սահմանված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով ապացուցման պարտականության վերաբերյալ

դրույթներն ունեն ընթացակարգային բնույթ և չեն պարունակում այնպիսի նյութական իրավունքի սահմանափակում, որը մինչ Օրենքն ուժի մեջ մտնելն ունեցել է սահմանադրական պաշտպանություն: Օրենքի վիճարկվող դրույթները միտված են սահմանելու այն կանոնները, որոնց հիման վրա յուրաքանչյուր գործով իրավակիրառը պետք է եզրահանգի սեփականության հիմնական իրավունքի համար հիմք հանդիսացող «*օրինական*» որակի առկայության կամ բացակայության մասին: Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքով կանոնակարգվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգը:

181. Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն Օրենքի՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցի համատեքստում գտնում է, որ ապացուցման բեռին վերաբերող Օրենքի դրույթները ոչ թե անձի համար նախատեսում են Օրենքի ընդունմանը նախորդող որևէ ժամանակահատվածին վերաբերող նյութական պարտականություններ, այլ կարգավորում են այն փաստական հանգամանքների հաստատման կանոնները, որոնց հետ Օրենքը կապում է գույքի ձեռքբերման օրինականության հարցը:

182. Օրենքի հետադարձ ուժին վերաբերող հարցի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը Խորհրդատվական կարծիքում նշել է.

> «Խորհուրդ է տրվում տարբերակել հետադարձ ուժի հետևյալ տեսակները. Օրենքներ, որոնցով նախատեսվում է միջամտություն նախկինում տեղի ունեցած իրադարձություններին, և օրենքներ, որոնցով նախատեսվում է միջամտություն նախկինում սկիզբ առած և ներկայումս ընթացքի մեջ գտնվող իրավիճակներին: Առաջին դեպքում հետադարձ ուժի արգելքն ավելի խիստ է, մինչդեռ երկրորդի դեպքում հնարավոր է ցուցաբերել առավել ճկուն մոտեցում, եթե միջամտությունը չափազանցված չէ:
>
> (...) Խնդրո առարկա Օրենքը նախատեսում է միջամտություն ոչ թե բացառապես անցյալում տեղի ունեցած, այլ ներկայումս ընթացող իրադարձություններին. ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է անցյալում, բայց դեռ շարունակում է գործել: Ապօրինի կերպով ձեռք բերված գույքից չզրկվելու ակնկալիքն առավել նվազ նշանակություն ունի, քան անարդար հարստացման հանգամանքը «շտկելու» հանրային շահը[39]»:

183. Անդրադառնալով առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրության՝ մինչև դրա ընդունումը ձեռք բերված գույքի նկատմամբ տարածման հարցին ՄԻԵԴ-ը «*Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի*» (*Gogitidze and others v. Georgia*) գործով նշել է, մասնավորապես, հետևյալը.

> «Կոնվենցիայի 1-ին արձանագրության [1-ին] հոդվածը սովորաբար չի կարող այնպես մեկնաբանվել, որ խոչընդոտի օրենսդրին շարունակվող փաստական իրավիճակները կամ իրավահարաբերությունները հետադարձորեն գործող

[39] Տե՛ս նույն տեղում, էջ 11, կետեր 45, 48:

դրույթներով նորովի կարգավորելու միջոցով վերահսկողություն իրականացնել սեփականության օգտագործման նկատմամբ կամ այլ կերպ միջամտել գույքային իրավունքներին[40]»:

184. Ներկայացված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անկախ այն հանգամանքից, որ գույքը ձեռք է բերվել մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը, այն ինչքան հանդիսացել է ոչ օրինական հիմքով ձեռք բերված՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող մինչև Օրենքի ընդունումը, այնքան էլ շարունակվելու է այդպիսին հանդիսանալ Օրենքի ընդունումից հետո: Հետևաբար՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքն անձին պատկանելու իրավիճակը կարող է սկսել տեղ գտնել մինչև Օրենքի ընդունումը, սակայն շարունակվել նաև Օրենքի ընդունումից հետո:

185. Այսպիսով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ Օրենքը ոչ թե միջամտում է անցյալում տեղի ունեցած, այլ դրա ընդունումից հետո էլ շարունակվող՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքն անձին պատկանելու դրությանը: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Օրենքը, միջամտելով թեև նախկինում սկսված, սակայն դրա ընդունումից հետո շարունակվող և առկա դրությանը, Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հետադարձ գործողության հատկանիշ չունի:

186. Վերը հիշատակված «*Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի*» գործով ՄԻԵԴ-ն առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վերաբերյալ օրենսդրության՝ մինչև դրա ընդունումը ձեռք բերված գույքի նկատմամբ տարածման հարցի առնչությամբ նշել է նաև, որ «[Ք]ննարկման առարկա փոփոխությունը երկրում ընդունված առաջին օրինագիծը չէր, որը պահանջում էր հանրային ծառայողներին պատասխանատվության ենթարկել իրենց հարստության չհիմնավորված ծագման համար: Հետևաբար՝ դեռևս 1997 թվականից (...) օրենքը կարգավորում էր այնպիսի հարցեր, ինչպիսիք են կոռուպցիոն հանցագործությունները և հանրային ծառայողների պարտականությունը հայտարարագրելու և հիմնավորելու իրենց և իրենց մերձավոր շրջապատի ունեցվածքի աղբյուրները (...): Այսպիսով 2004 թվականի փետրվարի 13-ի փոփոխությունն ուղղակի նորովի է կարգավորել արդեն իսկ գոյություն ունեցող հակակոռուպցիոն իրավական չափանիշների գույքային կողմը»[41]:

187. Վկայակոչելով սույն որոշման 115-116-րդ կետերում Սահմանադրական դատարանի վերլուծությունները և դրանց հիմքում ընկած հանգամանքները, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապե-

[40] Տե՛ս *Gogitidze and others v. Georgia*, no. 36862/05, §99, 12 May 2015:

[41] Տե՛ս նույն տեղում:

տությունում Օրենքի իմաստով պաշտոնատար անձինք մշտապես պարտավորված են եղել զերծ մնալ ոչ օրինական հիմքով եկամուտներ ստանալուց, ինչպես նաև ժամանակի կոնկրետ պահից հիմնավորել և հայտարարագրել իրենց եկամուտները և դրանց աղբյուրները: Հետևաբար՝ Օրենքի ընդունմամբ չէ, որ սահմանափակվել է պաշտոնատար անձանց և իրենց մերձավոր շրջապատի անձանց՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի պաշտպանությունը: Օրենքով ընդամենը ներդրվել են ընթացակարգեր, որոնք ուղղված են ոչ օրինական հիմքով ձեռք բերված գույքը սույն որոշման 101-րդ կետում նշված հանրային շահերից մեկի բավարարման նպատակով բռնագանձմանը:

188. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը պաշտոնատար անձանցից կամ նրանց հետ փոխկապակցված անձանցից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ եզրակացնում է, որ Օրենքով ընդամենը կարգավորվում է օրինական ծագում չունեցող գույքը վերջիններիս պատկանելու ոլորտում գոյություն ունեցող իրավական պահանջների գույքային կողմը՝ նախատեսելով, որ ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության:

189. Սահմանադրական դատարանը շեշտում է, որ ասվածը լիովին տարածելի է նաև Օրենքով նախատեսված կառուցակարգերի գործադրմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման հարցի նկատմամբ. Օրենքի ընդունմամբ չէ, որ դադարեցվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ունենալու իրավունքը: Այդպիսի իրավունք Հայաստանի Հանրապետությունում երբևէ ճանաչված և պաշտպանված չի եղել:

190. Վերոգրյալ պատճառաբանություններով Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից ներկայացած հիմնավորումների շրջանակում Օրենքը համապատասխանում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին:

IV. ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

191. Իրականացնելով վիճարկվող կարգավորումների վերլուծություն՝ Դիմողը գտնում է, որ իրավասու մարմնի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը և Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելը խախտում է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

192. Անդրադառնալով Պատասխանողի՝ դատարանում ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու իրավական հնարավորության վերաբերյալ պնդմանը՝ Դիմողը նշում է, որ Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում, որով կհաստատվեր, որ դատական քննության փուլում դատարանն իրավասու է անդրադառնալու ուսումնասիրություն սկսելու մասին կամ ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ որոշումներին և գնահատելու դրանց իրավաչափությունը:

193. Դիմողի համոզմամբ՝ գործի նյութերին ծանոթանալու համար սահմանված ժամկետի ավարտից հետո Օրենքն իրավասու մարմնի համար չի նախատեսում դատարան դիմելու համար որևէ ժամկետային սահմանափակում, ինչի արդյունքում անձը երկու տարվա ընթացքում զրկված է լինում ուսումնասիրություն սկսելու որոշման և ուսումնասիրության ժամկետի երկարաձգման մասին որոշման իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից:

2. Պատասխանող

194. Պատասխանողը նշում է, որ ուսումնասիրության ամբողջ ընթացքը բովանդակային առումով ներկայացնում է հայցի նախապատրաստում, որպիսի գործընթացը, ի տարբերություն այլ հայցատեսակների նախապատրաստման գործընթացների, կանոնակարգված է օրենքով: Միևնույն ժամանակ հայցի նախապատրաստման գործընթացի՝ օրենքով ամրագրված լինելը չի նշանակում, որ իրավասու մարմինն ստանձնում է քրեական արդարադատության կամ վարչարարության իրականացման գործառույթ:

195. Պատասխանողի կարծիքով՝ ոչինչ չի խանգարում քաղաքացիական դատավարության շրջանակներում պատասխանողի կարգավիճակ ունեցող անձին դատարանում վիճարկել ցանկացած ապացույցի թույլատրելիությունը, հետևաբար՝ անձանց համար օրենսդրությամբ երաշխավորված են իրավասու մարմնի կողմից օրենքի խախտումները դատական կարգով վիճարկելու բավարար հնարավորություններ, ուստի՝ Օրենքի դրույթները չեն հակասում Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ պաշտպանության իրավունքին:

Բ. Կիրառելի սահմանադրական իրավունքը

196. Սահմանադրության 61-րդ հոդված՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը».

> « 1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:
> (...)»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

197. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը (ուսումնասիրությունը) սահմանում է որպես «ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն»: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը սահմանում է, որ «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ՝ (…), որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով»: Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ ուսումնասիրությունը սահմանափակվում է (**1**) անձին պատկանող գույքի, դրա գտնվելու վայրի, ձեռքբերման աղբյուրների, (**2**) դրա ձեռքբերման պահի և ուսումնասիրության իրականացման դրությամբ գույքի շուկայական արժեքի, (**3**) գույքի՝ այլ տեսակի գույքի վերափոխմանը և գույքի օգտագործումից ստացվածի, (**4**) գույքը ձեռք բերողի եկամուտների և ծախսերի, ներառյալ՝ ապրուստի միջին ամսական ծախսերը, (**5**) գույքի առնչությամբ կնքված գործարքների, (**6**) այլ անձանց իրավունքներով գույքի ծանրաբեռնվածության հարցերի առնչությամբ նյութերի հավաքագրմամբ:

198. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցանկացած քաղաքացիական գործի հարուցմանը կարող են նախորդել նախապատրաստական գործողություններ, որոնք առաջին հերթին ուղղված են հայցվոր կողմի մոտ հայցի հարուցման նպատակահարմարության վերաբերյալ համոզմունքի ձևավորմանը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ և հետագա հայցի հիմքում դրվելիք տվյալների/նյութերի ձեռքբերմանը, և գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցման դեպքն այս առումով բացառություն չէ:

199. Սահմանադրական դատարանը փաստում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ունի քաղաքացիական դատավարական բնույթ, և Դատախազությունը, հանդիսանալով հայցվոր կողմ, ինչպես քաղաքացիական հայց հարուցող ցանկացած այլ սուբյեկտ, իրականացնում է նախապատրաստական գործողություններ՝ միտված հայցի հարուցման նպատակահարմարության գնահատականի ձևավորմանը և հայցը հիմնավորելու համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելուն, որին միայն հաջորդում է հայցի հարուցումը և դրա պաշտպանությունը դատարանում: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ի տարբերություն այլ հայցերի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման

հայցի նախապատրաստման գործընթացն ստացել է օրենսդրական կարգավորում, այսինքն՝ սահմանվել է հայցի նախապատրաստման ընթացակարգը:

200. Սահմանադրական դատարանը նկատում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության իրավական կարգավորումը և դրանով իսկ այդ գործընթացին իրավական ձևականություն հաղորդելը չեն փոխում դրա բնույթը, այն է՝ քաղաքացիական հայցի նախապատրաստումը: Դատախազությունը, ուսումնասիրության շրջանակներում բացառապես իրականացնելով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հավաքագրում, նախապատրաստում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը՝ այն դատարան ներկայացնելու և դատարանում պաշտպանելու նպատակով: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի նախապատրաստմանը, հաշվի առնելով հայցվոր կողմի պետական մարմին հանդիսանալու հանգամանքը, ընթացակարգային կարգավորում տալը մի կողմից՝ միտված է պետական մարմնի գործունեության կանոնակարգմանը, մյուս կողմից՝ շահագրգիռ անձանց համար գործընթացի կանխատեսելիության և նրանց՝ այս համատեքստում ուշադրության արժանի շահերի հաշվառման ապահովմանը: Սակայն ամեն դեպքում, ինչպես արդեն իսկ նշվեց, Դատախազությունն ուսումնասիրության միջոցով, ինչպես քաղաքացիական հայց ներկայացնող ցանկացած այլ սուբյեկտ, իրականացնում է հայցի հարուցման նախապատրաստում:

201. Անդրադառնալով Դիմողի պնդմանն առ այն, որ Օրենքը չի նախատեսում ուսումնասիրություն սկսելու որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ինքնին ուսումնասիրություն սկսելու որոշումը չունի անհատական իրավունքին կամ ազատությանը միջամտության ազդեցություն: Այս որոշման կայացմամբ մեկնարկում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը (այլ կերպ՝ հայցի հարուցման նախապատրաստումը), ինչը կարող է ավարտվել թե՛ հայցի հարուցմամբ, թե՛ հայցի հարուցումից հրաժարումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրություն սկսելու մասին որոշումն ինքնին չի միջամտում շահագրգիռ անձանց իրավունքներին կամ ազատություններին, Օրենքի հիման վրա քննվող վարույթի շրջանակներում այդ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի կարող հանգեցնել անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտմանը:

202. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ուսումնասիրություն սկսելուց հետո անձանց իրավունքների դատական

պաշտպանության մեխանիզմներին: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը նախ՝ նշում է, որ Օրենքով նախատեսված վարույթի նպատակն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումն է, որպիսի միջամտության իրավաչափության հարցին Սահմանադրական դատարանը վերն արդեն անդրադարձել է (տե՛ս սույն որոշման բաժին 2): Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենքով նախատեսված՝ գույքի բռնագանձման իրավաչափության պայմանների ամբողջ ծավալով ստուգումը հանդիսանում է դատական քննության առարկա, և միայն այդ պայմանների առկայության դեպքում է, որ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատությունն իրականացնելով միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, դատարանը վճռում է բավարարել հայցը: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ «*ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի*», իսկ օրենքով սահմանված դեպքերի առկայությունն ստուգում է դատարանը:

203. Հաջորդիվ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վերը ներկայացվեց, ուսումնասիրության իրականացումն ուղղված է բացառապես Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցերի առնչությամբ նյութերի (ապացույցների) ձեռքբերմանը և դրանց հիման վրա հայց հարուցելու հարցում եզրահանգմանը (տե՛ս սույն որոշման 198-201-րդ կետերը): Իր հերթին, Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է գործով ապացույցների օգտագործման արգելքին նվիրված սահմանադրական պահանջ, այն է՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է. նշված սահմանադրական արգելքը նույնությամբ արտացոլվել է նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասում: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքը երաշխավորում է Սահմանադրությամբ նախատեսված աստիճանի պաշտպանություն այն իմաստով, որ ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմնի կողմից հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները դատարանում կգնահատվեն որպես անթույլատրելի և չեն կարող դրվել գույքի բռնագանձման մասին վճռի հիմքում:

204. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պաշտպանության աստիճանից բարձր պաշտպանության նախատեսումը գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում, իսկ այդ առնչությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «*ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը կանոնակարգող՝ սույն օրենքով նախատեսված*

ընթացակարգային պահանջների խախտումներն առաջացնում են միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով»:

205. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում իրավասու մարմինը համապատասխան օրենքով դատարանի որոշման հիման վրա ապացույց պահանջելու դեպքերում դիմում է ներկայացնում դատարան, և միայն ապացույցը պահանջելու մասին դատարանի որոշման հիման վրա դիմում և ստանում է այն տիրապետող անձից: Միաժամանակ, ապացույց պահանջելու մասին որոշումը, համաձայն նույն հոդվածի 8-րդ մասի, կարող է բողոքարկվել վերաքննիչ, ապա նաև Վճռաբեկ դատարան այն անձի կողմից, որի տվյալների ստացման առնչությամբ կայացվել էր դատարանի որոշումը: Ներկայացվածից հետևում է, որ Օրենքով նախատեսված որոշ ապացույցների ձեռքբերումը հանդիսանում է նաև դատական վերահսկողության առարկա:

206. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Դիմողի այն պնդմանը, որ Օրենքով բացակայում է 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Օրենքի վերոհիշյալ 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը»: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը կրկին շեշտում է, որ ցանկացած գույք բռնագանձելու պահանջի իրավաչափությունը յուրաքանչյուր գործով հանդիսանում է դատական քննության առարկա (տե՛ս սույն որոշման 202-րդ կետը), որպիսի պայմաններում ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությունն ինքնին չի խախտում անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

207. Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Օրենքն իրավասու մարմնի համար չի նախատեսում դատարան դիմելու համար որևէ ժամկետային սահմանափակում, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ժամկետային սահմանափակումների բացակայության բերումով անհատի իրավական վիճակի անորոշության հարցը կարող է հիմնավոր գնահատականի արժանանալ կոնկրետ գործի հանգամանքների

հաշվառմամբ: Հետևաբար՝ առանց եռաստիճան դատական համակարգի կողմից Օրենքի՝ Դիմողի կողմից բարձրացված խնդրի նկատմամբ կիրառելի դրույթների մեկնաբանության և կիրառության, բացառապես Դիմողի կողմից համապատասխան մտահոգության բարձրաձայնումը բավարար չէ սահմանադրական վեճին բնորոշ որոշակիության աստիճանը բավարարված համարելու համար: Այս իմաստով Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի բարձրաձայնած խնդիրը դեռ չի հասունացել սահմանադրական վեճի աստիճանի, և, հետևաբար, չի ներառվում սույն սահմանադրական վեճի շրջանակում:

V. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

208. Դիմողի գնահատմամբ՝ վարույթի իրականացման և դատական պաշտպանության՝ Օրենքով նախատեսված կարգավորումներն անձի վրա դնում են ապացուցման անհամաչափ մեծ բեռ, որի արդյունքում խախտվում է անձի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսացող գործի արդարացի քննության իրավունքը:

209. Ըստ Դիմողի՝ արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից Օրենքում խնդրահարույց են ապացուցման բեռի անհամաչափ բաշխման, անհավասար մրցակցային դատավարական կանոնների և գործի նյութերին ծանոթանալու սահմանափակ ժամկետների մասով առկա կարգավորումները:

210. Դիմողը նշում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածը կարող է տարածվել ընդհուպ մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը, որի արդյունքում անձն ստիպված պետք է լինի ապացուցել Օրենքի ընդունումից անգամ երեսուն տարի առաջ ձեռք բերված գույքի օրինականությունը:

211. Ըստ Դիմողի՝ Օրենքը որևէ կերպ հաշվի չի առել նաև այն տնտեսական տրանսֆորմացիաները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականից ի վեր, և որոնք կրել են մասսայական բնույթ, այդ թվում՝ լայնածավալ մասնավորեցման գործընթացի, գործարքների իրավական ձևի, դրանց փաստաթղթավորման հետ կապված առանձնահատկությունները:

212. Դիմողը նշում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, ինչը նշանակում է, որ իրավասու մարմինը կարող է հենվել միայն գույքի և օրինական եկամտի անհամապատասխանության վրա՝ անգամ չներկայացնելով որևէ ապացույց,

որ անձն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված է եղել որևէ հանցագործության կատարման մեջ:

213. Դիմողը գտնում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասն ուղղակիորեն վատթարացնում է անձի իրավական վիճակը՝ նրա վրա հետին թվով դնելով ցանկացած ապացույց պահպանելու պարտականություն, իսկ դրանք չպահպանելու դեպքում՝ բացասական հետևանքները թողնելով նրա վրա: Միաժամանակ նշվում է, որ նույնիսկ այն դեպքում, եթե մինչև կոնկրետ փաստի կամ իրադարձության պահին օրենքով սահմանված չի եղել, որ փաստը պետք է հաստատվի «միայն որոշակի ապացույցներով», ապա անձը միևնույն է ինքն է կրում ապացուցման բեռը:

214. Դիմողը նշում է, որ Օրենքի համաձայն՝ վարույթը դատարանում իրականացվում է քաղաքացիական դատավարության կարգով, մինչդեռ մինչև դատավարությունը և բուն դատավարության ընթացքում որպես կողմ հանդես է գալիս իշխանական լիազորություններով օժտված իրավասու մարմինը (Դատախազությունը), որին Օրենքը վերապահում է նաև մի շարք առավելություններ: Արդյունքում Օրենքը պարունակում է բազմաթիվ դրույթներ, որոնք ակնհայտ հակամրցակցային վիճակի մեջ են դնում «քաղաքացիական» համարվող դատավարության կողմերին:

215. Դիմողը նշում է՝ քանի որ Օրենքով նախատեսված գործընթացն իր բնույթով քաղաքացիական է և իրականացվում է քաղաքացիական դատավարության շրջանակներում, վարույթը պետք է երաշխավորի կողմերի հավասարությունը ու մրցակցությունը: Հետևաբար՝ անձը պետք է ունենա ուսումնասիրությունից և դրա արդյունքում ներկայացվող հայցից պաշտպանվելու համար այնպիսի գործիքներ, որոնք իրեն հնարավորություն կտան հակադարձելու պետական մարմնին: Ըստ Դիմողի՝ այս համատեքստում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման արգելքն անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

216. Դիմողը նշում է, որ Օրենքով անձի համար նախատեսված չէ դրա 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գաղտնիք պարունակող տեղեկություններն ստանալու համար դատարան դիմելու հնարավորություն: Դատախազությունն ապացուցման ավելի լայն գործիքակազմից օգտվելու հնարավորություն ունի, կարող է ապացույցներ ձեռք բերել այնպիսի միջոցներով, ինչպիսիք են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից տեղեկություններ (իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ) պահանջել և ստանալը, պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին մասնագետ կամ փորձագետ ներգրավելը, մինչդեռ վարույթի մյուս կողմը զրկված է նման հնարավորություններից:

217. Ըստ Դիմողի՝ Օրենքով նախատեսված վարույթում չի գործում Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հակընդդեմ ապահովման մեխանիզմը, որը վարույթի մյուս կողմի համար ստեղծում է երաշխիքներ հայցի ապահովման արդյունքում իրեն պատճառված վնասների հատուցման համար և դրանով միաժամանակ զսպող ազդեցություն է գործում հայցի ապահովում պահանջող կողմի վրա՝ իրավունքի չարաշահման տեսանկյունից:

218. Դիմողը նշում է, որ Օրենքով անձին տրված է ընդամենը մեկ ամիս ժամանակ ուսումնասիրությունների համար հավաքված նյութերին ծանոթանալու և դիրքորոշում հայտնելու համար այն դեպքում, երբ իրավասու մարմինն այդ նյութերը կարող է հավաքել երկու, իսկ որոշ դեպքերում երեք տարվա ընթացքում:

219. Դիմողը գտնում է, որ Օրենքի հիման վրա իրականացվող գործընթացը «քվազիքրեական» է, հետևաբար՝ այս դեպքում անձը պետք է ունենա Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ մասին համարժեք՝ իրեն ներկայացված մեղադրանքներից լիարժեք պաշտպանության իրավունք:

220. Դիմողը գտնում է, որ Օրենքով նախատեսված գործընթացներով անցնող անձին պետք է տրվի ողջամիտ ժամկետ, որպեսզի վերջինս ունենա բավարար ժամանակ և հնարավորություն Դատախազության «հայցից» պաշտպանվելու համար՝ նշելով, որ Օրենքով նախատեսված կարգավորումն արդար դատաքննության իրավունքի խախտումից զատ անհամաչափորեն սահմանափակում է Սահմանադրության 64-րդ հոդվածով սահմանված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

221. Դիմողը նշում է նաև, որ անձն իրեն վերաբերող տվյալների ստացման առնչությամբ կայացված դատական ակտերը վերաքննության կարգով կարող է բողոքարկել հիշյալ մեկ ամսվա մեջ ներառվող յոթնօրյա ժամկետներում, իսկ վճռաբեկության կարգով՝ վերաքննիչ դատարանի որոշումն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում: Արդյունքում ստացվում է իրավիճակ, որ անձն ունենում է ընդամենը մեկ ամիս ժամանակ՝ ծանոթանալու իրավասու մարմնի կողմից երկու (որոշ դեպքերում նաև երեք) տարիների ընթացքում հավաքագրված ամբողջ տեղեկատվությանը և այդ ամբողջ ծավալի մեջ՝ ընդամենը յոթնօրյա ժամկետ (որը ներառվում է մեկամսյա ժամկետի մեջ) ինչպես վերաքննության, այնպես էլ վճռաբեկության կարգով այդ որոշումները բողոքարկելու համար:

222. Պատասխանողի ներկայացրած բացատրության վերաբերյալ իր առարկություններում Դիմողը նշում է, որ արդար դատաքննության հիմնական իրավունքի խախտումը վիճարկվում է ապացուցման բեռի անհամաչափ բաշխման, անհավասար մրցակցային դատավարական կանոնների և գործի նյութերին ծանոթանալու սահմանափակ ժամկետի տեսանկյուններից՝ նշելով, որ հայցի նախապատրաստման փուլում հավաքված նյութերի հասանելիու-

թյան վերաբերյալ իր ներկայացրած պնդումները վերաբերում են ոչ թե իրավասու մարմնի կողմից բոլոր շահագրգիռ անձանց՝ դրանք հասանելի դարձնելու պարտականությանը, այլ անձի կողմից դրանց հրապարակման արգելքի պահանջին: Այսինքն, ըստ Դիմողի, անձը զրկվում է ուսումնասիրության վերաբերյալ տվյալները հրապարակելու հնարավորությունից, ինչը ոչ միայն խորթ է քաղաքացիական դատավարությանը, այլ նաև կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ անձի պաշտպանության մարտավարության վրա:

223. Անդրադառնալով մինչև հայց ներկայացնելն ապացույցներ ստանալու լիազորություն Դատախազությանը վերապահելու վերաբերյալ Պատասխանողի դիրքորոշումներին՝ Դիմողը գտնում է, որ նման հնարավորություն ընձեռելով Դատախազությանը՝ Օրենքը համանման որևէ հնարավորություն չի նախատեսում վարույթի մյուս կողմին, ինչը բնորոշ է քաղաքացիական վարույթին: Ըստ Դիմողի՝ սրանով ուղղակիորեն խախտվում է քաղաքացիական դատավարության համար առանցքային նշանակություն ունեցող մրցակցության սկզբունքը:

224. Անդրադառնալով նյութերին ծանոթանալու սեղմ ժամկետների վերաբերյալ Պատասխանողի դիրքորոշմանը՝ Դիմողը նշում է, որ Օրենքով նախատեսված գույքի բռնագանձման ինստիտուտը քաղաքացիական դատավարության կարգով իրականացվող դասական վարույթ չէ, այլ հատուկ ընթացակարգ՝ բացառիկ դեպքերի համար, ուստի նման պայմաններում գործի նյութերին ծանոթանալու ժամկետները չեն կարող համեմատելի լինել դասական քաղաքացիական դատավարությունում կիրառելի ժամկետների հետ:

3. Պատասխանող

225. Պատասխանողը գտնում է, որ Օրենքը գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի կիրառման համար նախատեսում է իրավասու մարմնի կողմից բարձր կասկածի շեմի հաղթահարման պահանջ, որպիսի պարագայում անձը միայն կարիք կունենա հերքելու գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը քաղաքացիական դատավարությամբ նախատեսված կարգով:

226. Պատասխանողը նշում է, որ Օրենքով նախատեսված ուսումնասիրվող ժամանակահատվածն ուսումնասիրությանը նախորդող տասը տարուց ավելի ժամկետի վրա տարածելու համար անհրաժեշտ է ինչպես ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ողջամիտ կասկածների առկայություն, այնպես էլ այդ գույքի ձեռքբերմանը վերաբերող ապացույցների պահպանված լինելու հանգամանքի հաստատում: Վերջին նախապայմանը նախատեսված է անձանց համար փաստաթղթերի պահպանման հետ կապված մեծ բեռի չառաջացումը երաշխավորելու համար:

227. Պատասխանողը գտնում է՝ Օրենքի համապատասխան դրույթը չի սահմանափակում այն հանգամանքները, որոնց հաշվառմամբ դատարանը կարող է արձանագրել, որ փաստաթղթերի կորուստը կամ ոչնչացումը տեղի է ունեցել ոչ անձի մեղքով: Այս առումով, ըստ Պատասխանողի՝ Դիմողի համար ընդունելի մեկնաբանությունն առ այն, որ փաստաթղթերի կորստի կամ ոչնչացման դեպքում պետք է բավարար լինի, որ անձը դատարանին ներկայացնի ողջամիտ հիմքեր այն մասին, թե ինչու փաստաթղթերն առկա չեն, կարող է ձևավորվել նաև դատական պրակտիկայում, և նորմն ինքնին չի բացառում փաստերի ողջամիտ և արդարացի գնահատումը դատարանի կողմից:

228. Պատասխանողը նշում է, որ ուսումնասիրությունը՝ որպես գործընթաց, հայցի նախապատրաստում է, և որպես այդպիսին, քաղաքացիական հայցի նախապատրաստման ժամանակ թե՛ մասնավոր անձանց, թե՛ պետական մարմինների կողմից պոտենցիալ պատասխանողին նախապես հայցի նյութերը չտրամադրելը չի խախտում ու չի կարող խախտել արդար դատաքննության իրավունքը, քանի որ քաղաքացիական դատավարության շրջանակներում պատասխանողին հայցի նյութերը մինչև հայցի ներկայացումը հասանելի դարձնելը չի հանդիսանում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր:

229. Անդրադառնալով մինչև հայցի ներկայացումը դատարանի որոշման հիման վրա ապացույցներ ստանալու Դատախազության հնարավորությանը՝ Պատասխանողն ընդգծում է, որ Դատախազությանը բովանդակային առումով չեն վերապահվել այլ կամ նոր դատավարական հնարավորություններ, քան վերապահված են դատավարության մյուս կողմերին: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը թույլ է տալիս յուրաքանչյուր կողմի գործի համար էական նշանակություն ունեցող ապացույցներ պահանջելու և ստանալու միջնորդությամբ դիմելու դատարան:

230. Պատասխանողը նշում է, որ Օրենքը չի հետապնդում հանցանքների հաստատման նպատակ և չի օգտագործում որևէ գործիքակազմ, որը հատուկ է քրեական հետապնդմանը: Դատական վարույթի ընթացքում անձն օգտվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված արդար դատաքննության բոլոր երաշխիքներից:

231. Ամփոփելով Պատասխանողը եզրահանգում է, որ Օրենքի կարգավորումները համատեղելի են Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հետ:

Բ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

232. Սահմանադրական դատարանն Օրենքի՝ հետադարձ ուժի սահմանադրական արգելքին համապատասխանության հարցին նվիրված հատվածում

արդեն իսկ արձանագրել է, որ սահմանված ապացուցման կանոններն ընդամենը Օրենքով նախատեսված բռնագանձման կառուցակարգի ընթացակարգային կողմի տարրեր են և սահմանում են այն կարգը, որոնցով դատարանը պետք է ղեկավարվի գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելիս: Բացի դրանից, օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք ձեռք բերելու և որպես սեփականություն ունենալու հնարավորությունը երբևէ չի ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում. Օրենքի ընդունմամբ չէ, որ անձինք այլևս չունեն նման գույքի նկատմամբ սեփականության պաշտպանության իրավաչափ ակնկալիք (տե՛ս սույն որոշման 115-116-րդ և 187-189-րդ կետերը): Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ընթացակարգային, այն է՝ ապացուցման կանոնների սահմանումն ինքնին նյութահիրավական բովանդակություն չունի:

233. Սահմանադրական դատարանը շեշտում է նաև, որ սույն որոշման 146-149-րդ, 160-161-րդ կետերում ներկայացված դիրքորոշումների պայմաններում Օրենքով նախատեսված բռնագանձման մեխանիզմի գործադրումը պետք է կապ ունենա որոշակի հանցանքի հետ կամ առնչվի անձի՝ որոշակի պաշտոն զբաղեցնելու ընթացքին, ինչպիսի պահանջը ապահովում է մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը տարածելի ուսումնասիրության ժամանակահատվածի որոշակիացման օբյեկտիվ չափանիշ:

234. Սահմանադրական դատարանը նշում է, որ Օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված ապացուցման կանոնները, ըստ էության, հանգում են հետևյալին.

> **1.** Իրավասու մարմինն առաջնահերթորեն պետք է ապացուցի, որ անձին պատկանող գույքը չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների մասին տվյալներով:
>
> **2.** Գույքի ձեռքբերումն օրինական եկամուտների աղբյուրների մասին տվյալներով չհիմնավորվելը ձևավորում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, որի չհերքվելու պայմաններում դատարանն իրավասու է վճիռ կայացնել գույքի բռնագանձման մասին:
>
> **3.** Անձը հնարավորություն ունի հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:
>
> **4.** Երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

235. ՄԻԵԴ-ը նշել է, որ «[Յ]ուրաքանչյուր իրավական համակարգ ճանաչում է փաստի կամ իրավունքի կանխավարկածներ և սկզբունքորեն

Կոնվենցիան դրանք չի արգելում[42]»: Այսինքն՝ փաստի կամ իրավունքի մասին կանխավարկածների սահմանումն ինքնին ՄԻԵԿ-ով նախատեսված որևէ, ներառյալ արդար դատաքննության, իրավունքի խախտման չի հանգեցնում:

236. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքը մեքենաբար չէ, որ սահմանում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը. այն ձևավորվում է, երբ իրավասու մարմինն ապացուցում է, որ գույքը չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է՝ գույքն օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով չհիմնավորվելը, վերը նշված որևէ հանրային շահի շրջանակում իրականացվող միջոցառումների համատեքստում, արդեն իսկ ծանրակշիռ գործոն է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկած ձևավորելու համար:

237. Գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի ձևավորման անհրաժեշտ շեմի հաղթահարումից հետո Օրենքը պատասխանողին, միևնույն է, հնարավորություն է ընձեռում ներկայացնելու ապացույցներ, որոնք կհիմնավորեն գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով, որպիսի պարագայում կանխավարկածը կհերքվի: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը կարևորում է նաև Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, որի համաձայն՝ փաստը միայն որոշակի ապացույցով հաստատելու պահանջի առկայության դեպքում անձն ազատվում է այն չապացուցելու բացասական հետևանքները կրելուց, եթե ապացուցի, որ համապատասխան ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով: Սա նշանակում է՝ եթե գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հերքող ենթադրյալ փաստը կարող էր, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի համաձայն, ապացուցվել միայն այն ապացույցով, որը կորել կամ ոչնչացել է ոչ անձի մեղքով, ապա համապատասխան հանգամանքի չապացուցված լինելու բացասական հետևանքը չի կարող դրվել պատասխանողի վրա:

238. Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մի կողմից՝ Օրենքը նախատեսում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի ձևավորման համար անհրաժեշտ՝ իրավասու մարմնի կողմից հաղթահարման ենթակա պահանջներ, մյուս կողմից՝ անձին հնարավորություն է ընձեռում հերքելու այդ կանխավարկածը: Զուգահեռաբար, եթե պատասխանող կողմի վկայակոչած փաստը կարող է հաստատվել միայն որոշակի ապացույցով, ապա անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով:

239. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքով նախատեսված կանխավարկածի սահմանումն ինքնին խնդրահա-

[42] *Yordanov and others v. Bulgaria*, nos. 265/17, 26473/18, § 118, 26 September 2023:

րույց չէ արդար դատաքննության իրավունքի ներքո՝ պատասխանողին այդ կանխավարկածը հերքելու համար քաղաքացիական դատավարության նկատմամբ կիրառելի՝ Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներն ապահովված լինելու պայմանով:

240. Դիմողը նշում է, որ Օրենքը հաշվի չի առնում Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականից ի վեր տեղի ունեցած «տնտեսական տրանսֆորմացիաները»: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողն ընդամենը իր որոշակիությունից զուրկ մտահոգությունն է ներկայացնում առ այն, որ անձինք գույքի օրինական ծագումն ապացուցելու հարցում կարող են բախվել որոշ դժվարությունների՝ առանց նշելու, թե դրանք առարկայական ինչ դրսևորում կարող են ունենալ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի վերացական ստուգման շրջանակներում Դիմողի բարձրացրած մտահոգությունները, որոնք կատարվում են առանց կոնկրետ հանգամանքների ներկայացման, արդյունավետ քննության առարկա դառնալ չեն կարող: Հակառակ պարագայում Սահմանադրական դատարանն ինքն ստիպված պետք է լինի առաջ քաշել որոշակիությունից զուրկ մտահոգություններից բխող պնդումներ՝ փորձելով հաջորդիվ դրանք հերքել կամ հաստատել:

241. Ինչ վերաբերում է Դիմողի արտահայտած այն մտահոգությանը, որ Օրենքը չի հաշվառում այնպիսի իրավիճակները, երբ գույքը ձեռք բերելիս որոշակի փաստն օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով, միգուցե չէր պահանջվում հաստատել միայն որոշակի ապացույցով, սակայն ներկայումս այդպիսի պահանջ առկա է, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապացուցման բեռի բաշխման, ստանդարտների և գնահատման հետ կապված հարցերը չեն կարգավորվում միայն Օրենքով, այլ նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքով և դրա դրույթների՝ եռաստիճան դատական համակարգում ստացված մեկնաբանություններով: Օրենքով որևէ հարաբերության կարգավորվածության բացակայությունը, առավել ևս այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են ապացուցման խնդիրներին, անհրաժեշտաբար և անխուսափելիորեն չի ստեղծում նման կարգավորման բացակայության հետևանքները հաղթահարելու անհնարինություն: Առավել ևս, իրավական դրույթների վերացական ստուգման շրջանակում՝ եռաստիճան դատական համակարգի կողմից խնդրի վերաբերյալ վերջնական դատական մեկնաբանության բացակայության պայմաններում, Սահմանադրական դատարանը նման մտահոգությունները չի կարող գնահատել որպես իրավական դրույթի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ եզրահանգման համար բավարար:

242. Սահմանադրական դատարանը սույն որոշման համապատասխան հատվածներում անդրադառնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում Դատախազության դերին (սույն

որոշման 387-398-րդ կետեր), ինչպես նաև գույքի բռնագանձման հայցի հարուցմանը նախորդող ուսումնասիրության փուլի նպատակներին (սույն որոշման 198-201-րդ կետեր): Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դատախազությունը, սույն դեպքում հանդես գալով որպես քաղաքացիական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցող սուբյեկտ, դատավարության ընթացքում բացառապես օգտվում է բոլոր այն իրավունքներից ու պարտականություններից, որոնք վերապահված են հայցվոր կողմին, իսկ Դատախազության՝ հանրային իշխանության մարմին հանդիսանալու հանգամանքը քաղաքացիական դատավորության ընթացքում ինքնին իր դատավարական կարգավիճակի վրա որևէ ազդեցություն չունի: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը չի տեսնում որևէ պատճառ առ այն, որ Դատախազությունը, ընդհանուր կարգով հանդես գալով որպես հայցվոր, գործի՝ դատարանում քննության փուլում որևէ մրցակցային առավելություն ունի պատասխանող կողմի նկատմամբ:

243. Ինչպես արդեն իսկ ներկայացվել է՝ ուսումնասիրության փուլի նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների ձեռքբերումն է և դրա հիման վրա հայց հարուցելու հիմքերի պարզումն ու հայցի նախապատրաստումը (սույն որոշման 198-201-րդ կետեր): Ուսումնասիրության ընթացքում Դատախազության լիազորությունները սահմանված են Օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով, որոնք ուղղված են գույքի ձեռքբերման օրինականությանն առնչվող հարցերի պարզմանը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև համեմատական անցկացնել Դատախազության լիազորությունների և «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանին վերապահված իրավունքների միջև.

1) Բացառությամբ գաղտնիք պարունակող տեղեկությունների տրամադրման, Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից տեղեկություններ պահանջելու և ստանալու, ծառայողական նպատակներով օգտագործվող տեղեկատվական տվյալների բազայից անվճար օգտվելու իրավասու մարմնի լիազորությանը համապատասխանում է «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու փաստաբանի իրավունքը:

2) Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետի կամ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության) ներգրավելու լիազորությանը համապատասխանում է «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական

գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու կամ թարգմանություն կատարելու համար պայմանագրային հիմունքներով մասնագետ կամ թարգմանիչ ներգրավելու փաստաբանի իրավունքը:

3) Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով գործով տեղեկություններ ունեցող անձանց հարցման ենթարկելու իրավասու մարմնի լիազորությանը համապատասխանում է «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի՝ համաձայնության դեպքում անձանց, որոնք տիրապետում են գործին կամ վարույթին վերաբերող տեղեկատվությանը, հարցման ենթարկելու իրավունքը: Պետք է նշել նաև, որ հարկադիր կերպով անձին հարցման ենթարկելու կառուցակարգեր Օրենքը չի նախատեսում:

244. Սահմանադրական դատարանը նշում է նաև, որ ապացույցները, որոնք չեն կարող ձեռք բերվել «Փաստաբանության մասին» օրենքի հիման վրա, կարող են ստացվել գործի դատական քննության փուլում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույց պահանջելու կառուցակարգերի գործադրմամբ՝ դատարանին համապատասխան միջնորդություն ներկայացնելով: Այս առումով Սահմանադրական դատարանը նշում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է.

«1. Գործին մասնակցող անձը կարող է գործին մասնակցող այլ անձից ապացույց պահանջելու միջնորդությամբ դիմել գործը քննող առաջին ատյանի դատարան:

2. Գործին մասնակցող անձը, որին օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրվել համապատասխան ապացույցը, կամ այդ ապացույցի տրամադրումն առանց դատարանի որոշման արգելված է օրենքով, կարող է գործին մասնակից չհանդիսացող անձից այդ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել առաջին ատյանի դատարան:

(...)»:

245. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված է իրավասու մարմնի՝ իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (բացառությամբ նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանվածների) իրականացնել հանձնարարելու լիազորությունը: Օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված է իրավասու մարմնի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով անհրաժեշտ տվյալներ պարունակող առցանց բազաներից օգտվելու և օտարերկրյա պետության իրավասու մարմիններին տեղեկատվության տրամադրման խնդրանք ուղարկելու լիազորությունը:

246. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գույքի ծավալի, դրա իրական շահառուների, փոխկապակցված անձանց վերաբերյալ Օրենքի

11-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված լիազորություններն ուղղված են դրանցով նշված տեղեկությունների ձեռքբերմանը, որոնց շահագրգիռ անձինք արդեն իսկ ի սկզբանե և բարձր հավանականությամբ կարող են տիրապետել:

247. Ողջ վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դատախազությունն Օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում հանդես է գալիս որպես հայցվոր կողմ՝ ընդհանուր հիմունքներով, իսկ ուսումնասիրությունն ուղղված է հայցի հիմքերի առկայության պարզմանը և նախապատրաստմանը, որոնց շրջանակներում Դատախազության լիազորությունների գործադրումը չի հանգեցնում քաղաքացիական դատավարությունում մրցակցության խախտմանը:

248. Հաշվի առնելով, որ Օրենքով նախատեսված ուսումնասիրությունն ընթացակարգ է, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն, և որի ավարտից հետո միայն իրավասու մարմինը, գտնելով, որ առկա են համապատասխան հիմքեր, հարուցում է հայց, Սահմանադրական դատարանը նշում է, որ ուսումնասիրությանը վերաբերող ցանկացած հարց չէ, որ ինքնին կարող է դիտարկվել արդար դատաքննության իրավունքի համատեքստում: Ուստի՝ ուսումնասիրության նյութերն այլ (շահագրգիռ անձանցից զատ) անձանց միայն իրավասու մարմնի համաձայնությամբ հասանելի դառնալու սահմանափակումն ինքնին արդար դատաքննության սահմանադրական իրավունքի հետ հակադրության մեջ չի գտնվում:

249. Դիմողի այն պնդման կապակցությամբ, որ անձը զրկված է ուսումնասիրության վերաբերյալ տվյալները հրապարակելու հնարավորությունից, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ սույն հարցին անդրադարձը վերաբերում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ներքո Դիմողի բարձրացրած հարցերի համախմբին, և, համապատասխանաբար, կքննարկվի սույն որոշման այդ հատվածում:

250. Դիմողը նշում է, որ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու համար անձին տրվում է մեկ ամիս ժամանակ, իսկ իրավասու մարմինն այդ նյութերը կարող է հավաքել երկու, իսկ որոշ դեպքերում՝ երեք տարվա ընթացքում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն իրավասու մարմնի՝ անձինք ի սկզբանե արդեն իսկ մեծապես տիրապետում են այն տեղեկություններին, որոնք իրավասու մարմինն ուսումնասիրության շրջանակներում պետք է ձեռք բերի և վերլուծի: Նման պայմաններում Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու ու դիրքորոշում հայտնելու համար ժամկետների՝ ուսումնասիրության ժամկետների հետ ուղիղ համադրման արդյունքում դրանց միջև զգալի տարբերության վերհանումն

ինքնին կողմերի հավասարության ապահովման տեսանկյունից խնդրահարույց դիտվել չի կարող, եթե յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ՝ դա չի հանգեցրել պատասխանող կողմի մոտ իր գործը ներկայացնելու այնպիսի խոչընդոտի, որը կարող է կասկածի տակ առնել քաղաքացիական դատավարությունում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքների պահպանումը: Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն իրականացվող վերացական վերահսկողության շրջանակներում չի տեսնում որևէ պատճառ ուսումնասիրության ժամկետի և ուսումնասիրության նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու նպատակով անձանց տրված ժամկետի միջև էական տարբերությունն ինքնին արդար դատաքննության իրավունքի խախտում դիտելու համար:

251. Դիմողը նաև նշում է, որ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու և դիրքորոշում հայտնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը, ինչպես նաև անձին վերաբերող տվյալների ստացման առնչությամբ կայացված դատական ակտերի ինչպես վերաքննության, այնպես էլ վճռաբեկության կարգով բողոքարկման՝ այդ մեկ ամսվա մեջ ներառված յոթնօրյա ժամկետները բավարար չեն նշված իրավունքները պատշաճ իրականացնելու համար: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի վերացական ստուգման շրջանակներում, ինչպես նաև այն պայմաններում, երբ Դիմողի կողմից բարձրացված հիշյալ հարցի առնչությամբ վերջինս կոնկրետ հանգամանքներ չի ներկայացնում, Սահմանադրական դատարանը չի կարող դատողություններ կատարել ուսումնասիրության նյութերին ծանոթանալու ու դիրքորոշում ներկայացնելու, ինչպես նաև համապատասխան դատական ակտերը բողոքարկելու համար օրենսդրի կողմից նախատեսված ժամկետների ողջամտության և բավարարության հարցի վերաբերյալ: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու, ինչպես նաև անձին վերաբերող տվյալների ստացման առնչությամբ կայացված դատական ակտերը բողոքարկելու համար Օրենքով նախատեսված ժամկետների՝ Սահմանադրությանն անհամապատասխանության հիմքերը բացակայում են:

VI. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

252. Դիմողը նշում է, որ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց

դիրքորոշումը ներկայացնելու փուլում (Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված ծանուցման արդյունքում) Օրենքը չի նախատեսում որևէ կարգավորում անձի շահերն իրավաբանի միջոցով պաշտպանելու հնարավորության մասին:

253. Իր լրացուցիչ բացատրություններում Դիմողը նշում է, որ իր կողմից ուշադրության արժանացված հանգամանքն այն է, որ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու փուլում Օրենքը չի նախատեսում անձի շահերն իրավաբանի միջոցով պաշտպանելու հնարավորության մասին որևէ կարգավորում:

254. Դիմողի կարծիքով՝ Պատասխանողի կողմից վկայակոչված «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնության հնարավորությունը վերաբերում է միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի դատական քննության փուլին, մինչդեռ բաց է մնում գործի նյութերին ծանոթանալու փուլը: Ըստ Դիմողի՝ խնդիրը վերաբերում է ոչ միայն անվճար իրավաբանական օգնության հասանելիությանը, այլ, ընդհանրապես, անձի շահերը նրա նախընտրած իրավաբանի միջոցով պաշտպանելու հնարավորության բացակայությանը:

2. Պատասխանող

255. Պատասխանողի կարծիքով՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում պատասխանողի կարգավիճակ ունեցող անձը դատարանում կարող է վիճարկել ցանկացած ապացույցի թույլատրելիությունը, հետևաբար՝ անձանց համար օրենսդրությամբ երաշխավորված են իրավասու մարմնի կողմից օրենքի խախտումները դատական կարգով վիճարկելու բավարար հնարավորություններ, ուստի՝ Օրենքի դրույթները չեն հակասում Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ պաշտպանության իրավունքին:

256. Պատասխանողը գտնում է, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորված է Սահմանադրության 64-րդ հոդվածով, և դրա իրագործման համար չի պահանջվում, որ յուրաքանչյուր իրավական ակտ դրանով կարգավորվող հարաբերությունների համար նախատեսի իրավաբանական օգնություն ստանալու անձանց իրավունքը, քանի որ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն:

257. Պատասխանողը նշում է, որ Օրենքում ամրագրված մի շարք կարգավորումների ուժով՝ իրավասու մարմնի հետ հարաբերություններում ներկայացուցչի մասնակցության հնարավորությունն Օրենքով արդեն իսկ հաշվի է առնված, իսկ վերջինիս իրացման հնարավորությունը, անմիջականորեն երաշխավորվում է Սահմանադրությամբ: Վերոնշյալի հիման վրա՝ Պատասխանողը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման որևէ

փուլի շրջանակներում որևէ կերպ սահմանափակված չեն անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու, ներկայացուցչի միջոցով հանդես գալու իրավունքները: Ըստ Պատասխանողի՝ Օրենքում նշված իրավունքի իրացման հնարավորության վերաբերյալ ուղղակի նշման բացակայությունը չի կարող հանգեցնել Օրենքի անհամատեղելիությանը Սահմանադրության 64-րդ հոդվածով նախատեսված իրավունքի պաշտպանության հետ:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

258. Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝

> «1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

259. Իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի համատեքստում Դիմողի առաջադրած՝ Օրենքի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները վերաբերում են անձի՝ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ իր ընտրած փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ստանալու և պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին: Հետևաբար՝ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովվածության տեսանկյունից Օրենքի համապատասխան նորմերի սահմանադրականության ստուգման նպատակով Սահմանադրական դատարանը դրանց անդրադառնում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ նախադասություններում պարունակվող նորմերից յուրաքանչյուրի բովանդակության առանձին վերլուծությամբ:

260. Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրապնդված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին Սահմանադրական դատարանն անդրադարձել է 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 և 2016 թվականի ապրիլի 5-ի ՍԴՈ-1263 որոշումներում՝ մասնավորապես՝ նշելով հետևյալը.

> «(…) [իրավաբանական օգնություն ստանալու] իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության **լիարժեքություն,** ինչը պայմանավորված է պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության իրականացման **արդյունավետությամբ** (…): Ըստ այդմ էլ (…) դիտարկվող իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում երաշխավորել պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության արդյունավետ իրականացումը, իսկ որևէ խոչընդոտ առաջանալու դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

(...) սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ»[43]:

«(...) միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է **որակյալ** իրավաբանական օգնություն (...):

(...) պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը»[44]:

261. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փաստաբանն իրավապաշտպան գործունեություն իրականացնող այն մասնագետն է, որն իրավաբանական խորհրդատվություն է տրամադրում իր վստահորդին, ներկայացնում վստահորդի շահերը և օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով ապահովում է նրա իրավունքների պաշտպանությունը՝ այդպիսով նրան տրամադրելով անհրաժեշտ իրավաբանական օգնություն: Ըստ էության՝ Սահմանադիրը հենց փաստաբանին է վերապահել պետության կողմից երաշխավորվող իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի գործնական իրացումն ապահովող գլխավոր սուբյեկտի դերը, որի գործունեության օրենսդրական կարգն ու երաշխիքները սահմանված են «Փաստաբանության մասին» օրենքով, դատավարական օրենսգրքերով և այլ օրենքներով:

262. Ողջ վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի օրենսդրական երաշխիքները պետք է մեկնաբանվեն իրավաբանական օգնության լիարժեքության սկզբունքի հիման վրա՝ նկատի ունենալով, որ իրավաբանական օգնությունը տրամադրվում է օրենքով չարգելված ցանկացած ձևով և եղանակով՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով իրավաբանական խորհրդատվությամբ և ներկայացուցչությամբ:

263. Դիմողը, որոշակիացնելով սահմանադրական այս իրավունքի առնչությամբ Օրենքի սահմանադրականության վերաբերյալ իր փաստարկները,

[43] Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 որոշում, կետ 5:
[44] Սահմանադրական դատարանի 2016 թվականի ապրիլի 5-ի ՍԴՈ-1263 որոշում, կետ 6:

սահմանափակվել է բացառապես մինչդատական ընթացակարգի շրջանակներում իրավաբանական օգնության հասանելիության հարցով, որի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի որևէ դրույթ ինքնին չի սահմանափակում իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը: Առհասարակ Օրենքը չի պարունակում որևէ կարգավորում, որը կսահմանափակեր իրավաբանական օգնություն ստանալու՝ անձի իրավունքը:

264. Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացման կառուցակարգերն ու ընթացակարգերն ամրագրված են «Փաստաբանության մասին» օրենքում և հաշվի առնելով սույն գործի հանգամանքները՝ նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես՝ «Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է փաստաբանության հասկացությունը, ըստ որի՝

> «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»:

265. Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

> «Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝
>
> 1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն).
>
> 2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն).
>
> 3) քրեական վարույթներով պաշտպանություն.
>
> 4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը»:

266. Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է.

> «1. Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:
>
> 2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքով սահմանված կանոնները»:

267. Իր հերթին, Օրենքի համալիր ուսումնասիրությունից բխում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում իրավաբանական օգնությանը (ներկայացուցչությանը) վերաբերող հատուկ կարգավորումներ նախատեսված են միայն Օրենքի 9-րդ հոդվածում (ուսումնասիրության գաղտնիությունը) և 19-րդ հոդվածի 6-րդ մասում (ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը): Հետևապես՝ իրավաբանական օգնության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթին վերաբերելի մնացյալ դրույթները սահմանված են «Փաստաբանության մասին» օրենքում և Քաղաքացիական դատավարության օրենսգրքում քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգավորումների համատեքստում: Մասնավորապես՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ գլուխն ամբողջովին նվիրված է քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտին՝ ներառյալ ներկայացուցիչների տեսակներին, ներկայացուցչի լիազորություններին, ներկայացուցչի գործողությունների իրավական հետևանքներին և այլն:

268. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում իրավաբանական օգնության իրավունքի իրացմանը վերաբերող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները պետք է մեկնաբանվեն «Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-2-րդ մասերի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-1119 որոշմամբ սահմանված՝ իրավաբանական օգնության լիարժեքության սկզբունքի հիման վրա, ինչը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, ապահովում է բավարար երաշխիքներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի լիարժեք կենսագործման համար:

269. Հետևաբար՝ իրավաբանական օգնության իրավունքի վերաբերյալ վերոհիշյալ ընդհանուր կանոնների գործողության և, միաժամանակ, դրանցից բացառություններ սահմանված չլինելու պայմաններում՝ Օրենքի սահմանադրականության վերացական ստուգման շրջանակում Սահմանադրական դատարանը չի տեսնում որևէ պատճառ, որը նույնիսկ տեսականորեն կբացառեր կամ կսահմանափակեր Օրենքով նախատեսված՝ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում ուսումնասիրության նյութերին ծանոթանալիս շահագրգիռ անձի՝ իր ընտրությամբ փաստաբանի կամ այլ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախանշված անձանց շրջանակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը:

270. Ինչ վերաբերում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ նախատեսված՝ պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության բացակայության մասին

Դիմողի պնդմանը, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն վերաբերում է հանրային պաշտպանության ինստիտուտի շրջանակին, որը կարգավորվում է «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ գլխի կանոններով և դրանց հետ փոխկապակցված՝ նույն օրենքի այլ դրույթներով:

271. Օրենքով նախատեսված ուսումնասիրության փուլում հանրային պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն չընձեռելը նախատեսված է «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ նույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական վարույթներով նախաքննության ընթացքում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում:

272. Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված՝ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու փուլում հանրային պաշտպանի միջոցով (պետական միջոցների հաշվին) իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության բացակայության հիմնախնդիրը սույն գործի շրջանակներում Դիմողի կողմից բարձրացվելու թույլատրելիությանն այնքանով, որքանով դիմումի առարկան վերաբերում է բացառապես Օրենքին, և դրանում անդրադարձ չկա ո՛չ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ո՛չ «Փաստաբանության մասին» օրենքի համապատասխան դրույթի սահմանադրականության հարցին:

273. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն պարագայում նշյալ հարցադրման պատասխանը պայմանավորված է դիմումի առարկայի շրջանակի որոշակիացման հարցում Սահմանադրական դատարանի իրավասության և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձի՝ իր պահանջի որոշակիացման հարցում տնօրինչականության միջև ճշգրիտ հարաբերակցության վերհանմամբ:

274. Սահմանադրական դատարանը նախկինում անդրադարձել է անհատական դիմումով ներկայացված ոչ սպառիչ կամ ոչ ճշգրիտ հիմնավորումների պայմաններում այդ հիմնավորումների շրջանակից իր հայեցողությամբ դուրս գալու (*iura novit curia*) Սահմանադրական դատարանի իրավասությանը, որը բխում է գործի հանգամանքներն ի պաշտոնե (*ex officio*) պարզելու լիազորությունից: Մասնավորապես՝ 2024 թվականի մայիսի 13-ի ՍԴԱՈ-76[45] աշխատակարգային որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է.

[45] Սահմանադրական դատարանի 2024 թվականի մայիսի 13-ի ՍԴԱՈ-76 աշխատակարգային որոշում, կետ 6.1:

«Սահմանադրական դատարանն ընդունում է, որ իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում սահմանադրական արդարադատություն հայցող անձի համար առանձին դեպքերում հնարավոր է դյուրին չլինի սպառիչ և ճշգրիտ հիմնավորումներ ներկայացնել վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանը հակասությունը հիմնավորելու համար: Դա, ամեն դեպքում, Սահմանադրական դատարանին չի կարող սահմանափակել գործի ի պաշտոնե (*ex officio*) քննության և արդարադատություն իրականացնող ատյանի կողմից կիրառվող իրավունքի հարցում հիմնավորումների, թեկուզև Դիմողի կողմից որևէ կերպ վկայակոչված չլինելու պայմաններում, շրջանակից դատարանի հայեցողությամբ դուրս գալու (*iura novit curia*) սկզբունքներին համապատասխան վիճարկվող նորմի հակասահմանադրականության այլ հիմնավորումների առկայությամբ շարունակել գործի քննությունը՝ արդարադատությունը չկաշկանդելով դրա էության հետ անհամատեղելի ձևապաշտությամբ (...):

Նույնը, սակայն, վերաբերելի չէ դիմումի առարկայի շրջանակի որոշակիացման հարցում Սահմանադրական դատարանի իրավասությանը, երբ Սահմանադրական դատարանի հայեցողությամբ (*proprio motu*) սահմանադրական արդարադատություն հայցելու վերաբերյալ դիմումի առարկայի շրջանակի փոփոխությունը դրանում վիճարկվող դրույթներից բացի այլ դրույթներ ներառելու միջոցով (բացառությամբ՝ Սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքի, որի նախադրյալները, սակայն, սույն գործում առկա չեն): Հակառակ դեպքում, (1) Սահմանադրական դատարանը սահմանադրական վեճ լուծող ատյանից վերածվելու է սահմանադրական վեճ նախաձեռնող կողմի, ինչն անհամատեղելի է Սահմանադրական դատարանի անկախ և անաչառ սահմանադրական արդարադատության ատյանի իր սահմանադրական կարգավիճակի հետ, ինչպես նաև (2) հակասելու է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձի՝ իր պահանջի որոշակիացման հարցում տնօրինչականության սկզբունքին կամ հանրային իշխանության մարմնի դեպքում՝ նրա համապատասխան իրավասության իրականացման հայեցողությանը»:

275. Սահմանադրական դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նշյալ աշխատակարգային որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, արձանագրում է, որ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվող իրավանորմերից զատ այլ իրավանորմերի սահմանադրականության ստուգման՝ Սահմանադրական դատարանի լիազորությունը վերաբերում է բացառապես վիճարկվող նորմատիվ իրավական ակտի այն իրավանորմերին, որոնք համակարգային առումով փոխկապակցված են դիմումում վիճարկվող իրավանորմերի հետ:

276. Տվյալ պարագայում դիմումով վիճարկվում է Օրենքի 16-րդ հոդվածը, մինչդեռ Դիմողի կողմից բարձրացված իրավական հարցը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ուսումնասիրության փուլում ուսումնասիրության նյութերին ծանոթանալիս շահագրգիռ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացումը, ինչպես վերը նշվեց, կանոնակարգվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքով և

«Փաստաբանության մասին» օրենքով՝ հիմք ընդունելով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի բլանկետային իրավանորմը:

277. Հետևաբար՝ Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված՝ ուսումնասիրության նյութերին ծանոթանալու փուլում ուսումնասիրության նյութերին ծանոթանալիս և դիրքորոշում ներկայացնելիս շահագրգիռ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին վերաբերող իրավական հարց սույն դիմումով բարձրացնելու թույլատրելիությունը պարզելու համար Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ բլանկետային իրավանորմի և բլանկետային իրավակարգավորման բովանդակային էությանը:

278. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բլանկետային իրավանորմը չունի ինքնաբավ գոյություն. այն չի կարող ինքնուրույն իրացվել կամ կիրառվել: Այսինքն՝ բլանկետային իրավանորմը հասարակական հարաբերությունների ինքնուրույն կարգավորիչ չի հանդիսանում և սոցիալական կարգավորչի գործառույթն իրականացնում է միայն այն իրավանորմի հետ համատեղ, որը վկայակոչված է բլանկետային իրավանորմում: Ըստ այդմ՝ բլանկետային իրավանորմի, ինչպես նաև վերջինիս նորմատիվ կարգավորման շրջանակում գործող (վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող) տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ նորմերի սահմանադրականությունը կարող է որոշվել միայն այն իրավանորմերի համաժամանակյա և համադրված վերլուծության միջոցով, որոնք վկայակոչված են բլանկետային իրավանորմում:

279. Սահմանադրական դատարանն ընդգծում է սակայն, որ բլանկետային իրավանորմում վկայակոչված իրավանորմերը, որոնք ամրագրված են նորմատիվ իրավական այլ ակտերում, դիմումում մատնանշված չեն և Դիմողի կողմից, որպես այդպիսին, չեն վիճարկվում, Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրականության ստուգման չեն ենթարկվում: Միևնույն ժամանակ, եթե բլանկետային իրավակարգավորմամբ պայմանավորված՝ Դիմողի կողմից վիճարկվող իրավանորմի սահմանադրական բովանդակությունը կարող է բացահայտվել միայն նորմատիվ իրավական այլ ակտում ամրագրված դրույթի (որին բլանկետային նորմը հղում է կատարում) վերլուծության միջոցով, նշյալ դրույթը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է վերլուծության միայն այն սահմաններում, որոնք անհրաժեշտ են Դիմողի կողմից վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու համար՝ հաշվի առնելով բացառապես վիճարկվող դրույթի բովանդակությունն ու դրա մեկնաբանմամբ պարզման ենթակա վերջինիս նորմատիվ համատեքստը:

280. Այլ կերպ՝ ներկայացված դիմումում չվիճարկվող, սակայն բլանկետային իրավակարգավորմամբ պայմանավորված՝ այլ նորմատիվ իրավական ակտում ամրագրված դրույթների՝ Սահմանադրական դատարանի կողմից հիշատակումն ու անհրաժեշտ չափով վերլուծությունը որևէ կերպ չի

նշանակում իրավական գնահատական տալ այդ իրավանորմերի սահմանադրականությանը: Հակառակ պարագայում կխախտվեն կոնկրետ և վերացական սահմանադրական ստուգման կառուցակարգերի նորմատիվ բովանդակությունն ու, համապատասխանաբար, Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա գործի քննության՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով որոշված առարկայական շրջանակը:

281. Տվյալ պարագայում Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն իրականացվում է Օրենքով, Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով: Այսինքն՝ նշյալ դրույթի ուժով՝ Օրենքի ողջ նորմատիվ կառուցակարգը գործում է նշյալ և այլ օրենքների հետ համակցության մեջ՝ պայմանով, որ եթե Օրենքով սահմանված են հատուկ կանոններ, ապա գերակայությունը տրվում է վերջիններիս (Օրենքի 2-րդ հոդված, 2-րդ մաս): Համապատասխանաբար՝ Օրենքի 16-րդ հոդվածում իրավաբանական օգնություն ստանալու վերաբերյալ կարգավորումներն առանձին ամրագրված չեն այնքանով, որքանով Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից ելնելով՝ դրանք ամրագրված են Քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Փաստաբանության մասին» օրենքում:

282. Հետևապես՝ Դիմողի կողմից բարձրացված հարցն առ այն, որ Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ուսումնասիրության փուլում ուսումնասիրության նյութերին ծանոթանալիս և դիրքորոշում ներկայացնելիս շահագրգիռ անձի՝ հանրային պաշտպանի միջոցով (պետական միջոցների հաշվին) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, կարող է լրիվ և բազմակողմանի քննության առնվել միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Փաստաբանության մասին» օրենքի սահմանադրականությանը՝ բարձրացված հարցի սահմաններում անդրադարձ կատարվելու դեպքում, ինչը, ելնելով վերը ներկայացված դիրքորոշումներից, սույն դիմումի քննության շրջանակից դուրս է:

VII. ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

283. Դիմողը նշում է, որ Օրենքը պարունակում է մի շարք անորոշ կարգավորումներ, որոնց մի մասը խնդրահարույց է Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքին ներկայացվող որոշակիության սկզբունքի, իսկ մյուսները՝ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված իրավական

պետության սկզբունքից բխող օրենքներին ներկայացվող որոշակիության պահանջի տեսանկյունից:

284. Ըստ Դիմողի՝ պարզ չէ, թե ինչպես կարող է մտավոր սեփականությունը դիտարկել Օրենքի իմաստով ապօրինի և բռնագանձել: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն Օրենքի իմաստով գույք է դիտարկում նաև կրիպտոարժույթը, սակայն Հայաստանի Հանրապետության որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ, թե ինչ է «կրիպտոարժույթը»:

285. Ըստ Դիմողի՝ Օրենքի կարգավորումից պարզ չէ «օրինական եկամուտ» հասկացության բովանդակությունը, քանի որ, եթե Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից դուրս բերենք Քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի վերաբերյալ կարգավորումը, որը կոլիզիոն նորմ է, կստացվի, որ «օրինական եկամուտը» եկամուտ է՝ արտահայտված դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներով: Քանի որ սահմանող հասկացությունը բացահայտ կրկնում է սահմանվող հասկացությունը, ապա այստեղ, ըստ Դիմողի, գործ ունենք նույնաբանության հետ:

286. Դիմողը նշում է նաև, որ Օրենքով օգտագործվող «այդ թվում» ձևակերպումից հետո ոչ սպառիչ կերպով թվարկվում են օրինական եկամտի առանձին տեսակները. որպես այդպիսին, մասնավորապես, ներկայացված են (գ) ստացված փոխառությունները և (ը) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը: Դիմողի համար պարզ չէ, թե «փոխառության» կամ «նվիրատվության» իրավահարաբերությունների առկայության կամ բացակայության փաստը գնահատելու համար հիմք են ընդունվելու Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթները, այդ թվում նաև՝ գործարքի ձևին ներկայացվող պահանջները, թե՞ Օրենքի իմաստով «փոխառությանը» կամ «նվիրատվությանը» տրվում է այլ բովանդակություն:

287. Դիմողը գտնում է, որ սեփականության իրավունքին միջամտող օրենքի որոշակիության պահանջի տեսանկյունից խնդրահարույց է այն հանգամանքը, որ որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ հաշվարկի այն ձևը կամ մեթոդաբանությունը, որի միջոցով իրավասու մարմինը պարզում է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված գույքը ձեռք բերողի հայտնի եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ ապրուստի միջին ամսական ծախսերը, որի արդյունքը համադրելով գույքի արժեքի հետ՝ գալիս է եզրահանգման դրանց ծագման օրինականության վերաբերյալ: Հաշվի առնելով Օրենքի կիրառման մասսայականությունը՝ եկամուտների և ծախսերի՝ առանց սահմանված ձևի և մեթոդաբանության հաշվարկը կարող է հանգեցնել նաև դրա ոչ միատեսակ կիրառելիության, ինչը, Դիմողի գնահատմամբ, խնդրահարույց է օրենքի

առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

288. Դիմողը նշում է, որ ուսումնասիրության ժամանակահատվածը մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը տարածելու համար ընդամենը բավարար են իրավասու մարմնի կասկածը և դրա վերաբերյալ որոշակի ապացույցների առկայությունը: Նշված երկու նախադրյալներն էլ, սակայն, ըստ Դիմողի, իրենց բնույթով գնահատողական են, և Օրենքը չի նախատեսում որևէ օբյեկտիվ չափանիշ կամ իրավասու մարմնի նշված որոշման դատական բողոքարկման միջոցով վերահսկողության հնարավորություն, ինչն էլ իրավասու մարմնին է վերապահում ոչնչով չկաշկանդված բացարձակ հայեցողություն՝ ուսումնասիրության ժամանակահատվածը երկարաձգելու համար:

289. Դիմողի դիրքորոշմամբ՝ Օրենքը որևէ կարգավորում չի նախատեսում երրորդ անձանց շահերի և իրավունքների պաշտպանության համար այն դեպքում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքն ստացվել է ի վնաս նրանց: Մասնավորապես՝ բացակայում է որևէ մեխանիզմ վերջիններիս վարույթի մասին տեղեկացնելու, վարույթին ներգրավվելու կամ որևէ այլ միջոց նրանց շահերի և իրավունքների պաշտպանության համար:

290. Դիմողը նշում է, որ բռնագանձման վարույթ հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելու համար նախատեսված պայմաններից մեկը (ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածը) ամբողջությամբ ներկայացնում է գնահատողական դատողություն: Օրենքով նախատեսված չէ որևէ օբյեկտիվ հատկանիշ, որը հնարավորություն կտա սահմանափակելու ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածների հիմքերը գնահատող անձի բացարձակ հայեցողությունը:

291. Դիմողը նշում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված բռնագանձման վարույթին առնչվող հիերարխիկ կանոններն ուղղակիորեն հանգեցնում են Սահմանադրության 5-րդ հոդվածի խախտման, քանի որ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմերի միջև նախատեսում են աստիճանակարգություն՝ Օրենքին տալով ավելի բարձ իրավաբանական ուժ: Բացի դրանից, առաջանում է անորոշություն, թե ո՛ր նորմերով պետք է առաջնորդվի իրավակիրառը, հատկապես, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանվում է. «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

292. Դիմողը նշում է, որ Օրենքը պատասխան չի տալիս այն առանցքային հարցին, թե կոնկրետ ո՞ր գույքն է ենթակա բռնագանձման: Եթե, օրինակ, իսկապես կա անհամապատասխանություն օրինական եկամուտների և ծախսերի միջև, ապա ո՞ր գույքն է ենթակա բռնագանձման և ի՞նչ չափով, ի՞նչ

անել այն դեպքում, օրինակ, եթե գույքը ձեռք է բերվել մասամբ օրինական և մասամբ ոչ օրինական միջոցներով:

293. Իր լրացուցիչ բացատրություններում Դիմողը նշում է, որ Պատասխանողի կողմից ներկայացված նախապայմաններից առաջինը (կասկածի առկայությունը) ամբողջությամբ գնահատողական դատողություն է, և ավելին, դրա առկայությունն ըստ Օրենքի հնարավոր չէ վիճարկել դատական կարգով: Որպես օբյեկտիվ չափանիշ չի կարող բավարար լինել միայն գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցների պահպանված լինելը, այլ առնվազն անհրաժեշտ են որոշակի օբյեկտիվ հիմքեր գույքի ապօրինի ծագման վերաբերյալ:

294. Անդրադառնալով օրինական եկամտի և ծախսի մեթոդաբանությանը՝ Դիմողը նշում է, որ այս հարցում անձի եկամտի և ձեռք բերված գույքի համադրման մաթեմատիկական հաշվարկը չի կարող կիրառելի լինել բազմաթիվ դեպքերում, օրինակ, երբ գույքը ձեռք է բերվել շատ ավելի ցածր արժեքով, քան ներկայումս դրա շուկայական արժեքն է:

2. Պատասխանող

295. Անդրադառնալով դիմումով ներկայացված փաստարկին առ այն, որ Օրենքով ամրագրված «գույք» հասկացությունն անորոշ է, և պարզ չէ, թե ինչպես կարող է մտավոր սեփականությունը դիտարկվել Օրենքի իմաստով ապօրինի և բռնագանձվել, Պատասխանողը նշում է, որ ինչպես Քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի, այնպես էլ Օրենքի իմաստով «գույք» հասկացությունը չի ներառում մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները և, հետևաբար, Օրենքում առկա չէ որևէ անորոշություն կամ անհստակություն այս կապակցությամբ:

296. Անդրադառնալով Օրենքում ամրագրված «կրիպտոարժույթ» եզրույթի անորոշությանը՝ Պատասխանողը նշում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են ակտերով սահմանված կամ հանրաճանաչ հասկացություններ և տերմիններ, իսկ «կրիպտոարժույթ» հասկացությունը բավականաչափ ընկալելի է հանրության համար, հատկապես այն խումբ անձանց համար, որոնք մասնակցում են կրիպտոարժույթով կատարվող գործառնություններին: Պատասխանողը նշում է նաև, որ տարբեր կրիպտոարժույթները և դրանց շրջանառությունը համաշխարհային մակարդակում լայն տարածում ունեն և համապատասխան մասնագետի օգնությամբ պետական մարմինները հնարավորություն կունենան պարզելու նշված հասկացության բովանդակությունը:

297. Անդրադառնալով «օրինական եկամուտ» հասկացությանը՝ Պատասխանողը նշում է, որ եկամտի օրինականության գնահատման շրջանակներում կիրառելի իրավունք կարող է հանդիսանալ ոչ միայն Հայաստանի Հանրապե-

տության իրավունքը, այլև այլ պետության իրավունքը, սակայն էական նշանակություն ունի այն, որ եկամուտը պետք է ստացված լինի կիրառելի նորմերի պահպանմամբ, և այս առնչությամբ քննարկվող կարգավորումը որևէ անորոշություն չի պարունակում:

298. Անդրադառնալով նաև Օրենքում հիշատակվող «փոխառություն» և «նվիրատվություն» հասկացություններին՝ Պատասխանողը նշել է, որ Օրենքում դրանց վերաբերող հատուկ սահմանումների բացակայության պայմաններում՝ այդ հասկացությունների կիրառման իմաստով հիմք պետք է ընդունվեն Քաղաքացիական օրենսգրքով և այլ կիրառելի իրավական ակտերով առկա սահմանումները և կարգավորումները:

299. Անդրադառնալով դիմումի շրջանակներում բարձրացված օրինական եկամտի և ծախսի հաշվարկի մեթոդաբանության բացակայության խնդրին՝ Պատասխանողը գտնում է, որ նման մեթոդաբանության ամրագրումն Օրենքով անհրաժեշտ չէ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի երաշխավորման համատեքստում. անձի եկամտի, հայտնաբերված ծախսերի և ձեռք բերված գույքի համադրումը, ընդհանուր առմամբ, կանխատեսելի և որոշակի ուղենիշ է, իսկ դրա իրականացման միակ հնարավոր մեխանիզմը նշված տվյալների համադրմամբ մաթեմատիկական հաշվարկն է: Հետևաբար՝ Պատասխանողը գտնում է, որ համապատասխան մեթոդաբանության բացակայությունը չի հանգեցնում Սահմանադրությամբ նախատեսված որոշակիության սկզբունքի խախտման:

300. Անդրադառնալով ուսումնասիրության ժամանակահատվածը մինչև 1991 թ. տարածելու հնարավորության «չկաշկանդված բացարձակ հայեցողություն» հանդիսանալու Դիմողի պնդումներին՝ Պատասխանողը նշում է, որ դրանք հիմնավորված չեն, քանի որ Օրենքը նախատեսում է հստակ նախապայմաններ, այն է՝ իրավասու մարմնի կասկածն ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ, ինչպես նաև այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցների պահպանված լինելը:

301. Պատասխանողը նշում է նաև, որ նշված պայմանների դատական վերահսկողության ենթակա չլինելու վերաբերյալ Դիմողի պնդումներն անհիմն են, քանի որ բոլոր ապացույցները դատարանի կողմից քաղաքացիական դատավարության կանոնների կիրառմամբ կարող են ճանաչվել անթույլատրելի:

302. Երրորդ անձի շահերի պաշտպանության մեխանիզմի բացակայության կապակցությամբ Դիմողի պնդումների վերաբերյալ Պատասխանողը նշում է, որ Օրենքը նախատեսում է ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված բոլոր շահագրգիռ անձանց ծանուցման պահանջ, ընդ որում՝ նաև հրապարակային կարգով, ինչը հնարավորություն է ընձեռում նույնիսկ իրավասու մարմնի կողմից չհայտնաբերված շահագրգիռ անձանց համար տեղեկանալու վարույթի առկայության մասին: Ինչ վերաբերում է գործի քննության դատական փուլին, ապա բոլոր շահագրգիռ անձինք, որոնք պատասխանող

չեն հանդիսանում, Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոններով կարող են մասնակցել հայցի քննությանը որպես երրորդ անձ և օգտվել համապատասխան դատավարական իրավունքներից: Հետևաբար՝ Պատասխանողը գտնում է, որ Օրենքը բավականաչափ որոշակիությամբ կարգավորում է երրորդ անձանց ծանուցման հետ կապված հարաբերությունները, և այդ առնչությամբ որոշակիության պահանջի խախտում ևս առկա չէ:

303. Անդրադառնալով նորմերի աստիճանակարգության մեջ կիրառման ենթակա օրենքի տեղին՝ Պատասխանողը նշում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը ոչ թե սահմանում է Օրենքի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ Քաղաքացիական օրենսգրքի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կամ այլ իրավական ակտերի նկատմամբ, այլ օրենսդրական մակարդակում ամրագրվում է վերաբերելի ընդհանուր նորմերի նկատմամբ Օրենքով սահմանված կարգավորումների՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում հատուկ նորմեր հանդիսանալու հանգամանքը: Այսինքն՝ ըստ Պատասխանողի՝ հակասություն կարող է առաջանալ ոչ թե իրավական ակտերի, այլ ընդհանուր և հատուկ նորմերի միջև, քանի որ Օրենքով սահմանված նորմերը կարգավորում են առանձնահատուկ իրավական ընթացակարգի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում առաջացող հարաբերությունները, որոնք ընդհանուր քաղաքացիաիրավական և դատահիրավական հարաբերությունների նկատմամբ հանդիսանում են հատուկ իրավահարաբերություններ:

304. Պատասխանողը նշում է, որ Դիմողի փաստարկն առ այն, որ պարզ չէ, թե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի արդյունքում կոնկրետ ո՞ր գույքն է հանդիսանում բռնագանձման առարկա, անհիմն է: Ըստ Պատասխանողի՝ իրավասու մարմինը պարտավոր է պարզել յուրաքանչյուր կոնկրետ գույքի ձեռքբերման համար օրինական միջոցների առկայությունը կամ բացակայությունը, ինչի արդյունքում պարզ է դառնում՝ արդյո՞ք կոնկրետ գույքը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող և ենթակա է բռնագանձման, թե՝ ոչ:

305. Պատասխանողը նշում է նաև, որ իրավասու մարմինը զրկված չէ համապատասխան գույքի բաժինն առանձնացնելու միջոցով այն բռնագանձելու հնարավորությունից, իսկ դրա օբյեկտիվ անհնարինության դեպքում կարող է բռնագանձվել նշված բաժնի շուկայական արժեքի չափով գումար:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

306. Սահմանադրության 1-ին հոդված.

«Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է»:

307. Սահմանադրության 79-րդ հոդված՝ «Որոշակիության սկզբունքը».

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

308. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջի բովանդակությանը՝ արձանագրելով, մասնավորապես, ներքոշարադրյալը.

- «[Օ]րենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը[46]»:

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը[47]»:

- «Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում[48]»:

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և

[46] 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշում, կետ 11:
[47] 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշում, կետ 9:
[48] 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշում, կետ 7:

ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է (The Sunday Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, § 49)[49]» (2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշում):

- «Որոշակիության սկզբունքի համատեքստում հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր-վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել հասարակական կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները[50]» (2021 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՈ-1610 որոշում):

- «(…) օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

- (…)

- (…) Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «…որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է[51]»:

- «(…) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրա-

[49] Սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270 որոշում, կետ 7:

[50] Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի ՍԴՈ-1610 որոշում, կետ 4.1.2:

[51] Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշում, կետ 4.3:

գրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը[52]» (2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշում):

- «(…) չնայած օրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջին, դրանք չեն կարող նախատեսել իրավահարաբերության բոլոր մանրամասները, քանի որ կոնկրետ իրավահարաբերության բնույթով պայմանավորված մի շարք հանգամանքներ պետք է իրենց մեկնաբանությունն ստանան հենց դատական քննության ընթացքում:

- (…)

- (…) Այդ իմաստով, հնարավոր չէ օրենսդրությունը կառուցել այն տրամաբանությամբ, որ դրանում առկա չլինեն գնահատողական կատեգորիաներ, մեկնաբանման ենթակա եզրույթներ կամ ձևակերպումներ, սակայն դա չի կարող հանգեցնել իրավական անորոշության, քանի որ այդպիսի ձևակերպումներն իրենց մեկնաբանությունն ու հստակեցումն են ստանում արդեն դատարանի կողմից կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ և գնահատվում են դատարանի իրավակիրառ հայեցողության լիազորությունների իրականացման շրջանակներում[53]» (2020 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-1561 որոշում):

- «(…) իրավական որոշակիության սկզբունքի ապահովման առումով ընդհանուր տրամաբանությունը հանգում է այն գաղափարին, որ թեև իրավական որոշակիությունն անհրաժեշտ է, այնուամենայնիվ, այդ սկզբունքը չի բացառում իրավական ակտերում այնպիսի ձևակերպումների կամ եզրույթների առկայությունը, որոնք գնահատողական բնույթ ունեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավել հստակեցվում են իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում[54]»:

- «(…) իրավական որոշակիությունը չպետք է բացարձականացնել: Գնահատողական եզրույթների առկայության պատճառով իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում որոշակիության ծավալը լրացնելու ու իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառողին[55]»:

- «(…) իրավական որոշակիությունը չպետք է բացարձականացնել, և անորոշության որոշակի տարրեր պարունակող իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում անհրաժեշտ որոշակիության ծավալը լրացնելու ու իրավական կարգավորման կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառին[56]»: (2022 թվականի նոյեմբերի 22-ի ՍԴՈ-1669 որոշում):

[52] Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշում, կետ 4.3:
[53] Սահմանադրական դատարանի 2020 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-1561 որոշում, կետ 4.2:
[54] Սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-1592 որոշում, կետ 4.3:
[55] Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշում, կետ 5.6:
[56] Սահմանադրական դատարանի 2022 թվականի նոյեմբերի 22-ի ՍԴՈ-1669 որոշում, կետ 5.3:

309. Վերահաստատելով վերը ներկայացված դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիությունը չի կարող բացարձակացվել, և անորոշության որոշակի տարրեր կամ գնահատողական եզրույթներ պարունակող իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, իսկ անհրաժեշտ որոշակիության ծավալը լրացնելու ու իրավական կարգավորման կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառին՝ առաջնահերթությամբ դատական մեկնաբանության միջոցով: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ իրավական որոշակիության սահմանադրական պահանջին համապատասխանության հիմքով անորոշության որոշակի տարրեր կամ գնահատողական եզրույթներ պարունակող իրավակարգավորումների սահմանադրականության հարցն առաջ է գալիս այն պարագայում, երբ դրանց մեկնաբանման միջոցով իրավակարգավորմանն անհրաժեշտ որոշակիություն հաղորդելը (ենթադրյալ անորոշությունը հաղթահարելը) հնարավոր չէ:

310. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ գույք է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գույքը, այդ թվում՝ կրիպտոարժույթը: Քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝ (1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, կրիպտոակտիվները, արժեթղթերը և գույքային իրավունքները, (2) աշխատանքները և ծառայությունները, (3) տեղեկատվությունը, (4) մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն) և (5) ոչ նյութական բարիքները: Անդրադառնալով Օրենքի նշված դրույթին՝ Դիմողը նշում է, որ պարզ չէ, թե ինչպես կարող է մտավոր սեփականությունն Օրենքի իմաստով դիտարկվել ապօրինի, ինչպես նաև, որ նույն դրույթի համաձայն գույք է համարվում նաև կրիպտոարժույթը, սակայն վերջինիս սահմանումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տրված չէ: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «գույք» հասկացության բովանդակությունը կարող է և պետք է բացահայտվի դատական մեկնաբանության միջոցով, որի հիման վրա պատասխան կտրվի այն հարցին, թե արդյոք մտավոր սեփականությունը ներառվում է «գույք» հասկացության բովանդակության մեջ, և ապա այն հնարավոր է բռնագանձել, թե՝ ոչ: Ի լրումն նշվածի՝ Սահմանադրական դատարանը նկատում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-394-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի նոյեմբերի 21-ին, Քաղաքացիական օրենսգիրքը լրացվել է «Կրիպտոակտիվը» վերտառությամբ 143.1-ին հոդվածով, որը, մասնավորապես, սահմանում է համանուն հասկացությունը: Միաժամանակ, 2024 թվականի նոյեմբերի 21-ին ուժի մեջ

մտած «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-336-Ն օրենքով Օրենքում «կրիպտոարժույթ» եզրույթը փոխարինվել է «կրիպտոակտիվ» եզրույթով (համապատասխան հոլովաձևով):

311. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ օրինական եկամուտ են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, կրիպտոակտիվով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներն առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում՝ ստացված փոխառությունները (վարկերը), նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները): Անդրադառնալով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2 և 3-րդ կետերին՝ Դիմողը նշում է, որ պարզ չէ «օրինական եկամուտ» հասկացության բովանդակությունը, «քանի որ սահմանող հասկացությունը կրկնում է սահմանվող հասկացությունը», ինչպես նաև փոխառության և նվիրատվության իրավահարաբերությունների առկայության հարցը գնահատելիս արդյո՞ք հիմք են ընդունվելու Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները, այդ թվում՝ նաև գործարքի ձևին ներկայացվող պահանջները, թե՞ Օրենքի իմաստով «փոխառությանը» կամ «նվիրատվությանը» տրվում է այլ բովանդակություն: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի նպատակների համար «փոխառություն» և «նվիրատվություն» հասկացությունների բովանդակությունը, դրանց վերաբերելի իրավական կարգավորումները պետք է և կարող են որոշվել իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում:

312. Անդրադառնալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին՝ Դիմողը գտնում է, որ ուսումնասիրություն սկսելու համար նախատեսված հիմքերից մեկը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածն ամբողջությամբ գնահատողական դատողություն է: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը: Անդրադառնալով ներկայացված դրույթին՝ Դիմողը գտնում է, որ դրանում նշված նախապայմանները ևս իրենց բնույթով գնահատողական են, իսկ Օրենքը չի նախատեսում որևէ օբյեկտիվ չափանիշ: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ (**1**) սույն որոշմամբ արտա-

հայտված դիրքորոշումների ուժով՝ ուսումնասիրության ժամկետների որոշակիացման խնդիրն ուղղակիորեն կապված է այնպիսի օբյեկտիվ չափորոշիչների հետ, ինչպիսիք են պաշտոնատար անձի պաշտոնավարման մեկնարկի պահը (տե՛ս սույն որոշման 146-149-րդ կետերը) կամ այն հանցանքը, որի առնչությամբ գույքի բռնագանձման վարույթ է իրականացվում (տե՛ս սույն որոշման 160-161-րդ կետերը): Այս պայմաններում, համաձայնելով Դիմողի դիրքորոշման հետ՝ Սահմանադրական դատարանը նույնպես արձանագրում է, որ ուսումնասիրության ժամանակահատվածի ընտրությունն իրավասու մարմնի կողմից հայեցողաբար որոշվող հարց է, այդուամենայնիվ չունի այլ նպատակ, քան արդեն իսկ օբյեկտիվորեն կանխորոշված ժամանակահատվածում ձեռք բերված գույքի օրինականության ստուգումը: Բացի դրանից, (**2**) այս պայմաններում ինքնին գնահատողական բնույթի եզրույթներ պարունակելու պատճառով իրավակարգավորումը որոշակիության սահմանադրական պահանջի տեսանկյունից խնդրահարույց համարվել չի կարող, իսկ այդ իրավակարգավորումների որոշակիության ծավալը լրացնելու ու դրանց բովանդակության հավելյալ պարզաբանման առաքելությունը վերապահված է իրավակիրառին: Հետևաբար՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 7-րդ հոդվածի 3-րդ մասում ենթադրյալ գնահատողական եզրույթների առկայությունն ինքնին խնդրահարույց չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրանց բովանդակությունը պետք է և կարող է առավել հստակեցվել իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում:

313. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը պարզելու նպատակով իրավասու մարմինը հավաքում է նյութեր, մասնավորապես, գույքը ձեռք բերողի եկամուտների և ծախսերի, այդ թվում՝ ապրուստի միջին ամսական ծախսերի առնչությամբ: Անդրադառնալով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին՝ Դիմողը գտնում է, որ սահմանված չէ հաշվարկի այն ձևը կամ մեթոդաբանությունը, որի միջոցով պարզվում են Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ անձի եկամուտները և ծախսերը, այդ թվում՝ ապրուստի միջին ամսական ծախսը, որոնց արդյունքը համադրելով գույքի արժեքի հետ՝ եզրակացություն է կատարվում դրա ծագման օրինականության վերաբերյալ: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի կողմից ներկայացվածը հարցեր են, որոնք առաջանում են և պետք է պատասխան ստանան Օրենքի կիրառման ընթացքում: Հետևաբար՝ թե ինչպես են հաշվարկվելու (որոշվելու) անձի եկամուտները և ծախսերը, պետք է հստակեցվի, և դրան առնչվող հարցերը ենթակա են հաղթահարման իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում:

314. Դիմողը նաև գտնում է, որ Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե կոնկրետ որ գույքն է ենթակա բռնագանձման և ինչ չափով: Օրենքի 3-րդ

հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ ապօրինի ծագում ունեցող գույք է՝ գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումն Օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները): Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը: Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքով ապօրինի ծագում ունեցող գույքը սահմանվում է որպես ձեռքբերումն օրինական եկամուտներով չհիմնավորվող մեկ միավոր գույքի բաժին կամ մեկ միավոր գույք կամ մի քանի միավոր գույք, ինչպես նաև նշյալի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները): Իր հերթին բռնագանձման է ենթակա ապօրինի ծագում ունեցող գույքը, որի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով Օրենքի հիման վրա բռնագանձման ենթակա գույքի կազմը կարող է և պետք է որոշակիացվի Օրենքի դրույթների մեկնաբանման և կիրառման միջոցով:

315. Դիմողը գտնում է, որ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին: Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին: Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է.

> «1. Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:
>
> 2. Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքով սահմանված կանոնները»:

316. Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը նվիրված է սահմանադրական օրենքների, օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի միջև իրավաբանական ուժի (աստիճանակարգության) հարցերի կարգավորմանը: Իր

հերթին, Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է օրենքների (ներառյալ՝ օրենսգրքերի) միջև իրավական հակասությունների առկայության դեպքում կիրառելի իրավունքի որոշման հարցին, ինչը ոչ թե օրենքի որևէ դրույթի սահմանադրականության, այլ օրենքների առանձին դրույթների միջև հնարավոր կոլիզիաների լուծման ընդհանուր սկզբունքներով որոշվող իրավական հարց է, որն առհասարակ չի կարող ներառվել սույն սահմանադրական վեճի շրջանակի մեջ:

317. Դիմողը նշում է նաև, որ առաջանում է անորոշություն՝ կապված նրա հետ, թե ո՛ր նորմերով պետք է առաջնորդվի իրավակիրառը՝ նկատի ունենալով, որ Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին: Սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում նշել, որ ենթադրյալ իրավական հակասությունների առկայությունն ինքնին չի խաթարում իրավական որոշակիությունը, եթե առկա են դրանց արդյունավետ հաղթահարման կանոններ: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը պնդում է իր այն մոտեցումը, որ Դիմողի կողմից առաջադրած իրավական հարցը լուծելու համար համապատասխան խնդրի՝ իրավակիրառ մարմինների առջև բարձրացումը և դրան՝ վերջիններիս կողմից իրավական դրույթների մեկնաբանության և կիրառման տիրույթում լուծում տալու իրավասությունը չեն կարող փոխարինվել Սահմանադրական դատարանի կողմից իրավական դրույթի սահմանադրականության ստուգման գործընթացում համապատասխան նորմերի մեկնաբանմամբ դրանց սահմանադրական բովանդակության բացահայտումով: Իրավական նորմերի մեկնաբանողական գործիքակազմերը ոչնչով անհնար չեն դարձնում Դիմողի կողմից բարձրացված իրավական հարցի լուծումը դատական մեկնաբանությամբ, եթե իրավակիրառ մարմինները հանգեն նման հակասության իրական առկայության:

318. Դիմողը գտնում է նաև, որ Օրենքը որևէ կարգավորում չի նախատեսում երրորդ անձանց շահերի և իրավունքների պաշտպանության համար այն դեպքում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքն ստացվել է՝ ի վնաս նրանց: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը սահմանում է, որ շահագրգիռ անձ է այն անձը, որի իրավունքների և պարտականությունների վրա առերևույթ կարող է ազդել գույքի բռնագանձումը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի իմաստով շահագրգիռ անձ կարող է դիտարկվել նաև ցանկացած երրորդ անձ, որն Օրենքով նախատեսված կարգով բռնագանձվելիք գույքի նկատմամբ առերևույթ կարող է ունենալ իրավունքներ, թեկուզև դրանք ճանաչված չլինեն: Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «(…) իրավասու մարմինը ծանուցում և հրավիրում է ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց՝ ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին ծանո-

թանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու համար»: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի համաձայն՝ իրավասու մարմնի կողմից ծանուցվում են, և վերջինիս իրենց դիրքորոշումը հայտնելու իրավունք ունեն նաև վերը նշյալ երրորդ անձինք, որոնք առերևույթ կարող են իրավունքներ ունենալ այն գույքի նկատմամբ, որի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ է ձեռնարկում իրավասու մարմինը: Ավելին, Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ Օրենքով նախատեսված կարգով չծանուցված շահագրգիռ անձինք կարող են մինչև դատարանում գործի հարուցումն օգտվել իրենց իրավունքներից, այն է՝ ծանոթանալու ուսումնասիրության արդյունքներով հավաքված նյութերին և ներկայացնելու ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը նույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում՝ սկսած այն պահից, երբ իմացել են կամ կարող էին իմանալ ուսումնասիրության առկայության մասին: Ներկայացվածի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքով նախատեսված են ուսումնասիրության նյութերով իրավասու մարմնին հայտնի բոլոր շահագրգիռ անձանց, ներառյալ՝ երրորդ անձանց, ուսումնասիրության մասին տեղեկացնելու և վերջիններիս կողմից իրենց դիրքորոշումը ներկայացնելու վերաբերյալ կառուցակարգեր:

319. Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի ներկայացրած հիմնավորումների սահմաններում Օրենքի հիման վրա հարուցված հայցի՝ դատարանում քննության փուլում նույնպես երրորդ անձանց իրավունքների պաշտպանության առումով կարգավորումներն Օրենքի դրույթների վերացական ստուգման արդյունքներով խնդրահարույց չեն:

VIII. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

320. Դիմողը գտնում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ամրագրված իրավանորմերը խնդրահարույց են, մասնավորապես, երկու տեսանկյունից.

1) Մատչելի են դարձվում անձանց լայն շրջանակի մասնավոր կյանքին և անձնական տվյալներին առնչվող տեղեկություններ: Պատասխան չի տրվում այն հարցին, թե արդյո՞ք իրավասու մարմնի ներկայացրած դիմումն առնչվում է միայն այն անձին, որի գույքի նկատմամբ հարուցվել է վարույթը, թե՞ նրա հետ փոխկապակցված անձանց կամ ցանկացած անձի, որի անձնական տվյալները վարույթ իրականացնող մարմինն անհրաժեշտ կհամարի ստանալ:

2) Հայցվող տվյալները վարույթի շրջանակներում հասանելի են դարձվում անորոշ շրջանակի անձանց, ինչի հետևանքով խնդրահարույց են ձեռք բերված անձնական տվյալների գաղտնիության պահպանման մեխանիզմները:

321. Վերլուծելով Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի սահմանափակման սահմանադրորեն արտոնված հիմքերը՝ Դիմողը պնդում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առնչությամբ սկսված ուսումնասիրության տեսանկյունից նպատակը կարող է, ըստ էության, վերաբերելի լինել հիմքերից միայն մեկին՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակին:

322. Այդպիսի կանխավարկածից է ելնում նաև Օրենքը, որի նախագծի հիմնավորման 77-րդ կետում նշված է, որ ուսումնասիրությունն սկսվում է քրեադատավարական որոշված ազդակների առկայության դեպքում, որից հետո ընթանում է քրեական ընթացակարգերից անկախ: Հետևաբար՝ ըստ Դիմողի՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը՝ քաղաքացիական դատարանին միջնորդելով ստանալ անձի վերաբերյալ բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություններ, պետք է որպես դրդապատճառ ունենա միմիայն հանցագործության կանխումը կամ բացահայտումը և պետք է հիմնավորի, որ նշված տեղեկությունների ստացումը կարող է լրջորեն նպաստել վերոգրյալ նպատակին:

323. Հաշվի առնելով հիշատակված քրեադատավարական ազդակների առկայությունն ու Օրենքի հիմնավորման տրամաբանությունը՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի բոլոր հինգ կետերն էլ պետք է կիրառելի լինեն կամ քրեական գործի հարուցումից հետո, կամ գույքի վերաբերյալ ուսումնասիրությանը հընթացս նախատեսեն քրեական վարույթի հարուցում: Վերոգրյալ պատճառահետևանքային կապն Օրենքով նախատեսված չէ, ուստի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով հարուցված վարույթների պարագայում ամբողջությամբ բացակայում է սահմանադրորեն նախատեսված լեգիտիմ նպատակը: Քանի որ օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով հարուցված վարույթների պարագայում էլ որոշ դեպքերում ուղղակիորեն խզված է պատճառահետևանքային կապը կատարված քրեորեն պատժելի արարքի և ապօրինի գույքի միջև, ուստի անձնական տվյալներ պարունակող տեղեկություններն իրավասու մարմնին տրամադրելը հանցագործությունների կանխման կամ բացահայտման պատճառաբանությամբ հիմնավորելը, ըստ Դիմողի, սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է:

324. Հաշվի առնելով, որ օրենսդիրն Օրենքի շրջանակներում չի հստակեցրել բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացման սուբյեկտների շրջանակը՝ Դիմողը գտնում է, որ համաչափության թեստի կու-

մուլյատիվ բաղադրիչներն այս դեպքում պահպանված համարելը խնդրահարույց է:

325. Ըստ Դիմողի՝ հանցագործության մեջ կասկածվող անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների սահմանափակման ծավալները չեն կարող լրիվ նույնական լինել նրա հետ փոխկապակցված և առավել ևս այլ՝ երրորդ անձանց իրավունքների սահմանափակման ծավալների հետ: Հստակություն չմտցնելով պահանջվող տեղեկություններին ենթադրաբար տիրապետող սուբյեկտների ցանկի հարցում՝ Օրենսդիրն ի սկզբանե հավասարության նշան է դնում ցանկացած անձի պարագայում՝ ում օրինական շահերն ու իրավունքները կարող են շոշափվել կարգավորող նորմով:

326. Ըստ Դիմողի՝ Օրենքի դրույթները չեն հստակեցնում սուբյեկտների շրջանակը, որոնց՝ Սահմանադրության 31-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքները վարույթի շրջանակներում կարող են սահմանափակվել, իսկ անորոշ նորմը չի կարող հանդիսանալ անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքի սահմանափակման համար պիտանի միջոց. այսպիսով, Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքին, ինչն էլ իր հերթին սահմանափակման համար ընտրված միջոցի տեսանկյունից կհակասի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին:

327. Դիմողը նշում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ուսումնասիրություն սկսելու հանգամանքը, դրա հիմքերը, դրա ընթացքի վերաբերյալ և դրա արդյունքում ստացված տվյալները գաղտնի են, ենթակա են տրամադրման շահագրգիռ անձանց միայն սույն օրենքով նախատեսված կարգով, իսկ այլ անձանց՝ բացառապես իրավասու մարմնի համաձայնությամբ՝ ելնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից: Հաշվի առնելով, որ Օրենքի տեքստում բացակայում է վարույթի նպատակների սահմանումը, Դիմողը գտնում է, որ վարույթ իրականացնող մարմնի համար հայեցողության չափազանց լայն դաշտ է բացվում, քանի որ հենց այդ մարմինն է որոշում՝ արդյո՞ք տեղեկությունները փոխանցելն այս կամ այն անձին բխում է վարույթի նպատակներից:

328. Դիմողը նշում է նաև, որ Օրենքը չի հստակեցնում, թե ով և ինչ կարգով կարող է հասանելիություն ունենալ և օգտագործել ստացված անձնական տվյալները և ինչպես են վերջիններս պաշտպանվում երրորդ անձանց հասանելիությունից: Ըստ Դիմողի՝ Օրենքը թույլ է տալիս իրավասու մարմնին ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալները հասու դարձնել «այլ ներգրավված անձանց», իսկ վերջինիս կարելի է մեկնաբանվել որպես ցանկացած անձ, որին վարույթն իրականացնող մարմինը նպատակահարմար կգտնի փոխանցել անձնական տվյալներ պարունակող զգայուն տեղեկատվությունը, ինչն էլ իր հերթին չի բավարարում Սահմանադրությամբ

ամրագրված համաչափության սկզբունքը և վերջինիս համապատասխանության կումուլյատիվ չափանիշները:

329. Իր լրացուցիչ բացատրություններում Դիմողը նշում է, որ Օրենքն իրավասու մարմնին, դեռևս ուսումնասիրության իրականացման ընթացքում, թույլ է տալիս հավաքել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող չափազանց լայն շրջանակի տեղեկություններ: Նման լայն շրջանակի տեղեկատվությունը որևէ պարագայում համեմատելի չէ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված ապացույցներ պահանջելու հնարավորությունների հետ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի շրջանակներում գործին մասնակցող անձի ներկայացրած միջնորդությունը գնահատելիս դատարանը ելնում է կոնկրետ գործից, որն արդեն իսկ գտնվում է դատարանի վարույթում, այսինքն՝ հայտնի են կողմերի փաստարկները, ապացույցները և դատարանն առավել որոշակի է կարողանում գնահատել, թե որքանով է համաչափ ապացույցների տրամադրման պահանջը: Մինչդեռ, երբ գործը գտնվում է Դատախազության կողմից դեռևս Օրենքով նախատեսված ուսումնասիրության փուլում, դատարանը, բնականաբար, ունի առավել սահմանափակ տեղեկատվություն՝ օբյեկտիվորեն գնահատելու համար, թե որքանով է իրավաչափ ապացույցի ձեռքբերման վերաբերյալ իրավասու մարմնի պահանջը, այն էլ, երբ այդ իրավասու մարմինը Դատախազությունն է:

330. Ըստ Դիմողի՝ Պատասխանողը որևէ հիմնավոր բացատրություն չի տալիս դիմումի շրջանակներում բարձրացվող և հիմնավորվող այն հարցերին, թե ով և ինչ կարգով կարող է հասանելիություն ունենալ և օգտագործել ստացված անձնական տվյալները, ինչի արդյունքում կարող են լրջորեն խաթարվել անձի՝ Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված մասնավոր կյանքի անձեռնմխելիության և Սահմանադրության 34-րդ հոդվածով ամրագրված անձնական տվյալների պաշտպանության հիմնական իրավունքները:

331. Դիմողը գտնում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված հնարավորության համեմատ՝ Օրենքը մարդու անձնական տվյալների չափազանց լայն շրջանակին հասանելիության հնարավորություն է տալիս անգամ այն դեպքում, երբ խզված է պատճառահետևանքային կապը կատարված քրեորեն պատժելի արարքի և ապօրինի գույքի միջև: Այս մոտեցումը խնդրահարույց է, քանի որ չի հետապնդում հիմնական իրավունքի սահմանափակման համար լեգիտիմ նպատակ:

332. Դիմողը նշում է, որ Օրենքը հնարավորություն է տալիս ստանալ շահառուների չափազանց լայն շրջանակի անձնական տվյալներ ոչ միայն վարույթով ուղղակիորեն անցնող, այլ՝ փոխկապակցված անձանց կամ ցանկացած այլ անձի, որի անձնական տվյալները վարույթ իրականացնող մարմինը կհամարի անհրաժեշտ: Նման հնարավորություն Քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի շրջանակներում գործին մասնակցող անձը վստահաբար չունի:

333. Դիմողը նշում է, որ եթե անձնական տվյալների ձեռքբերումը կապված է անորոշ շրջանակի մասնավոր անձանց հետ, որոնք «կոնկրետ հանցագործության հետ աղերս չունեն», ապա նման միջամտությունն այդ անձանց անձնական տվյալների հիմնական իրավունքին համաչափ չէ:

2. Պատասխանող

334. Պատասխանողը գտնում է, որ քաղաքացիական հայցի նախապատրաստումը թե՛ մասնավոր անձանց, թե՛ պետական մարմինների կողմից շատ դեպքերում ենթադրում է անձնական տվյալների ստացում տարբեր պետական և ոչ պետական տվյալների բազաներից և դրանց օգտագործում հայցի հարուցման նպատակով: Անձնական տվյալների ստացումն ինքնին այս առումով չի կարող լինել խնդրահարույց, իսկ օրենքի խախտմամբ հայցվորի կողմից անձնական տվյալների մշակման դեպքում պատասխանող անձն օժտված է դատական գործի քննության ընթացքում ապացույցի անթույլատրելիության հարցի բարձրացման հնարավորությամբ:

335. Ինչ վերաբերում է օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տվյալներին, Պատասխանողը նշում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս կողմերին ստանալ այդպիսի տեղեկություններ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված կարգով: Պատասխանողը գտնում է, որ Օրենքը, քաղաքացիական դատավարության կանոնների հետ համեմատության մեջ, չի փոփոխել ինչպես սուբյեկտային կազմին առնչվող պահանջները, այնպես էլ տվյալների ստացման անհրաժեշտությունը գնահատելու համար դատարանի կողմից օգտագործվող չափանիշները:

336. Հավաքված անձնական տվյալների օգտագործման առնչությամբ Պատասխանողը գտնում է, որ իրավասու մարմնի կողմից տվյալները, բացի շահագրգիռ անձանցից, այլ անձանց հասանելի դարձնելու հնարավորությունը սահմանափակված է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներից բխող անհրաժեշտությամբ:

337. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պատասխանողը գտնում է, որ Օրենքն այնքանով, որքանով չի նախատեսում գաղտնիք կազմող տվյալների, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տվյալների հասանելիության այլ չափանիշներ և անձնական տվյալների օգտագործման այլ կանոններ, քան նախատեսված են Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, չի խախտում մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

338. Սահմանադրության 31-րդ հոդված՝ «Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը».

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման (...) նպատակով»:

339. Սահմանադրության 34-րդ հոդված՝ «Անձնական տվյալների պաշտպանությունը».

«1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով»:

Գ. Սահմանադրական դատարանի վերլուծությունը

340. Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ անդրադարձել է մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի (այսուհետ կրճատ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք) սահմանադրաիրավական բովանդակությանը՝ անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիքների համատեքստում: Մասնավորապես՝ նշյալ որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը միտված է անձի համար և անձի շուրջ այնպիսի շրջանակի (տարածության) երաշխա-

վորմանը, որում նա, զերծ մնալով պետության կամ հանրության կողմից որևէ ուղղորդումից կամ առավել ևս հարկադրանքից, կկարողանա ազատորեն դրսևորել և զարգացնել իր անհատականությունը՝ իր արժանապատվության և ընդհանուր և հատուկ ազատությունների և իրավունքների՝ պետության, հանրության և այլ մասնավոր անձանց կողմից հարգանքի պայմաններում: Հետևապես՝ անձի մասնավոր տարածության անձեռնմխելիությունը՝ այլ հիմնական իրավունքների և ազատությունների համակցության մեջ, հնարավորություն է տալիս ապահովելու թե՛ մարդու անհատական ներքին ինքնորոշումը՝ իր կենսական շահերին համապատասխան, թե՛ այլ մասնավոր անձանց հետ նրա մասնավոր-կենսական կապերի գաղտնիությունը՝ պետությունից, հասարակությունից և երրորդ անձանցից, և այդ իմաստով է Սահմանադրությունը երաշխավորում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը:

(…)

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանությունը ներառում է ոչ միայն պետության կողմից մասնավոր կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը, այլև պետության պոզիտիվ պարտականությունը՝ անհրաժեշտ և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ միջոցներով երաշխավորելու և ապահովելու այն: Հետևապես՝ պետությունը, նախ՝ ինքը չպետք է միջամտի այս հիմնական իրավունքին, բացառությամբ Սահմանադրությամբ թույլատրված դեպքերի, ինչպես նաև պարտավոր է սահմանել ոչ միայն իր, այլև երրորդ անձանց կողմից այս հիմնական իրավունքի խախտումների դեպքում դրանցից արդյունավետ պաշտպանվելու համար անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր, և, վերջապես, պարտավոր է նաև գործնականում ապահովել այս հիմնական իրավունքի պաշտպանությունը երրորդ անձանցից:

(…)

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակումները պետք է համապատասխանեն նաև Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին՝ փոխկապակցված Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջների հետ: Բացի դրանից, այդպիսի սահմանափակումներ ամրագրող օրենքները պետք է սահմանեն արդյունավետ դատական պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր, այսինքն՝ համապատասխանեն նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին՝ փոխկապակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ[57]»:

341. Սահմանադրական դատարանի նշյալ որոշումից հետևում է, որ՝

- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը մարդու՝ պետության և հասարակության ներգործությունից զերծ կենսատարածքի գոյությունը երաշխավորող հիմնական իրավունք է,
- վերջինս անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ հարաբերակցությունում հանդես է գալիս որպես ընդհանուր

[57] Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում, կետեր 4.1 և 4.3:

նորմ (*lex generalis*), որի հատուկ դրսևորումը (*lex specialis*) անձնական տվյալների պաշտպանության իրավունքն է,

- մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը, ներառյալ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, բացարձակ չէ և ենթակա է սահմանադրաչափ սահմանափակումների, որոնք պետք է համապատասխանեն Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական իրավունքներին միջամտության համաչափության սկզբունքի պահանջներին, որոնց սահմանադրական բովանդակությունը պետք է բացահայտվի՝ հիմք ընդունելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման՝ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընդհանուր կանոնները կամ Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հատուկ կանոնները՝ նույն մասով նախատեսված դեպքի համար:

342. Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ սահմանելով հիմնական իրավունքի սահմանափակման սահմանադրաչափության բացահայտման մեթոդաբանությունը, սահմանափակման հետապնդած նպատակի սահմանադրաչափության որոշման մասով նշել է հետևյալը.

> «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա[58]»:

343. Սահմանադրության 34-րդ հոդվածի՝ վերը մեջբերված 2-րդ մասին համապատասխան՝ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի օրենքով սահմանված նպատակով: «Անձնական տվյալ» և «անձնական տվյալների մշակում» հասկացությունները բացահայտված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով: Վերջինիս 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ[ը] ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն [է], որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անձնական

[58] Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշում, կետ 4.4:

տվյալների մշակումն անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ է, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի մեջբերված հոդվածից հետևում է, որ անձնական տվյալներն անձին վերաբերելի և նրան նույնականացնող տեղեկույթ են, որոնց մշակումը, ի թիվս այլնի, ընդգրկում է տվյալների հավաքումը, փոխանցումն ու օգտագործումը:

344. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով բացահայտված են «անձնական տվյալների փոխանցում երրորդ անձանց», «անձնական տվյալների օգտագործում», «անձնական տվյալներ մշակող» հասկացությունները: Այսպես՝

- անձնական տվյալների փոխանցում[ը] երրորդ անձանց՝ անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողություն [է], այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը.

- անձնական տվյալների օգտագործում[ը] անձնական տվյալների հետ կատարվող գործողություն [է], որի ուղղակի կամ անուղղակի նպատակը կարող է լինել որոշումներ ընդունելը կամ կարծիք ձևավորելը կամ իրավունքներ ձեռք բերելը կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելը կամ իրավունքները սահմանափակելը կամ զրկելը կամ այլ նպատակի իրագործումը, որոնք տվյալների սուբյեկտի կամ երրորդ անձանց համար առաջացնում կամ կարող են առաջացնել իրավական հետևանքներ կամ այլ կերպ առնչվել նրանց իրավունքներին ու ազատություններին.

- անձնական տվյալներ մշակող[ը] պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ [է], որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակում:

345. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածով կանոնակարգված են տվյալների ստեղծման, ներառյալ վերականգնման, փոփոխման և փոխանցման իրավական հիմքերը: Մասնավորապես՝ ըստ այդ հոդվածի 1-ին կետի՝ անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և

տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ նույն կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

346. Ըստ այդմ՝ անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝ տվյալների սուբյեկտի, այսինքն՝ տվյալների հասցեատիրոջ համաձայնությամբ (կամքով) մշակվող տվյալներ և առանց այդ համաձայնության (տվյալների սուբյեկտի կամքից անկախ) մշակվող տվյալներ: Վերջին պարագայում տվյալների մշակումը հանդես է գալիս որպես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանափակում, քանի որ օրենքով կարող են սահմանվել դեպքեր, երբ անձի վերաբերյալ տվյալները հավաքվեն, օգտագործվեն և փոխանցվեն երրորդ անձանց՝ առանց այդ անձի համաձայնությունն ստանալու:

347. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «*տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ (...)*»: Այլ կերպ՝ առանց տվյալների սուբյեկտի համաձայնության տվյալների ստեղծման, հավաքման, օգտագործման և փոխանցման նպատակը պետք է սահմանվի օրենքով: Այդ նպատակի սահմանադրաչափությունն այնքանով, որքանով առնչվում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջամտությանը, պետք է համընկնի Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման որևէ նպատակին:

348. Սահմանադրական դատարանի գնահատմամբ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված կառուցակարգն ուղղված է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու վերաբերյալ կասկածի առաջացման պայմաններում դրա ծագման օրինականության հիմքերի ստուգման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ համապատասխան վերաբերելի տեղեկատվության ստացմանը՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության և հանցագործությունների կանխման կամ բացահայտման սահմանադրաչափ նպատակներով (նախատեսված Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով): Այս նպատակները համարժեք են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման միջազգային չափորոշիչներին: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի համար ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ» 2022 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1108/2022 խորհրդատվական կարծիքում նշել է.

> «13. Ապօրինի հարստացման կամ ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական բռնագանձման մասին օրենսդրության գլխավոր նպատակն ամենից հաճախ կոռուպցիայի դեմ պայքարն է: (...) [Կ]ոռուպցիան խաթարում է իրավունքի գերակայությունը, նվազեցնում է քաղաքական ինստիտուտների

հանդեպ հանրային վստահությունը և բացասաբար է ազդում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման վրա: (...)[59]»:

349. ՄԻԵԴ ձևավորած իրավունքի համաձայն՝ առանց մեղադրական դատավճռի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավաչափ նպատակ կարող է հանդիսանալ երաշխավորելը, այդ թվում՝ որպես հանրային կոռուպցիայի դեմ պայքարի միջոց, որ անձինք նման գույքից ի վնաս հանրության օգուտներ չստանան[60]:

350. Նշածի լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված՝ սույն բաժնի քննարկման առարկա միջամտությամբ հետապնդվող նպատակները համընկնում են Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված միջամտության նպատակներին:

351. Հաջորդիվ, Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության պահանջին համապատասխանության ստուգման նպատակով Սահմանադրական դատարանը հիշեցնում է այս առնչությամբ իր կողմից արտահայտված վերաբերելի դիրքորոշումները (տե՛ս համակցության մեջ սույն որոշման 308-րդ կետի հետ) առ այն, որ՝

- «(...) Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ[61]»:

- «[Ի]րավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ

[59] Եվրոպայի խորհրդի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի համար ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի որոշակի հարցերի վերաբերյալ» թիվ 1108/2022 խորհրդատվական կարծիք (Amicus Curiae Brief for the Constitutional Court of Armenia on Certain Questions Relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin), 2022 թվականի դեկտեմբերի 19, էջ 5, կետ 13:

[60] *Gogitidze and others v. Georgia*, no. 36862/05, §§ 101-103, 12 May 2015:

[61] Սահմանադրական դատարանի 2017 թվականի մարտի 14-ի ՍԴՈ-1357 որոշում, կետ 5:

հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում[62]»:

- «1) *իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է,* որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ *կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների* միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

3) որոշակիության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն Սահմանադրության 79-րդ հոդվածում՝ որպես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակող օրենքներին ներկայացվող բովանդակային պահանջ, այլև՝ որպես օրինականության սկզբունքի հիմնարար բաղադրիչ, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուն լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին (Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն),

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն** հիշյալ **օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը[63]»:

352. Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որ օրենքի վերացական բովանդակությամբ նորմերին անհրաժեշտ լրացուցիչ որոշակիություն պետք է հաղորդվի դրանց դատական մեկնաբանության միջոցով, ամբողջությամբ համահունչ է ՄԻԵԴ-ի՝ իրավական որոշակիության պահանջի առնչությամբ ձևավորված պրակտիկային, համաձայն որի՝ «թեև օրենքում

[62] Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշում, կետ 4.3:
[63] Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշում, կետ 4.3:

որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար՝ շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանումը և կիրառումը պրակտիկայի խնդիրներ են»[64]:

353. Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումների համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն, մի կողմից՝ օրենքով սահմանվող վարքագծի կանոնների հստակության և կանխատեսելիության, իսկ մյուս կողմից՝ կյանքի փոփոխվող հանգամանքներին օրենքի համապատասխանության և ըստ այդմ՝ վերացականության անհրաժեշտ մակարդակի միջև, ինչը հնարավորություն կտա իրավակիրառին օրենքի մեկնաբանության համապատասխան մեթոդաբանությամբ բացահայտել օրենսդրի կամքը և ապահովել իրավակարգավորման արդյունավետությունն ու հետևողականությունը: Ընդ որում՝ իրավակարգավորման որոշակիության առումով խնդրահարույց չէ ինչպես իրավական նորմի կամ հոդվածի շարադրանքում վարքագծի ամբողջ կանոնի ամրագրումը, այնպես էլ ելնելով իրավաբանական տեխնիկայի տարբեր կանոնների կիրառումից՝ իրավական նորմի տարրերի տեղակայումն օրենքի տարբեր հոդվածներում:

354. Տվյալ պարագայում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանվում են (1) օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ հավաքելու իրավասու մարմնի լիազորությունը, տեղեկությունների ցանկը և (2) նշյալ տեղեկությունների հավաքման կարգը (վկայակոչող դիսպոզիցիա), ներառյալ իրավասու մարմնի կողմից տեղեկությունների հավաքման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը:

355. Սուբյեկտների շրջանակը, որի վերաբերյալ իրավասու մարմինը դատական կարգով կարող է հայցել և ստանալ համապատասխան տեղեկույթը բացահայտվում է Օրենքի այլ դրույթներով: Մասնավորապես՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով նախատեսված՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերի թվում սահմանված է համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելության կասկածի առկայությունը, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ անձին պատկանող գույք է, մասնավորապես, այն, որը սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի, բայց որի իրական շահառուն տվյալ անձն է կամ այն, որը տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է այլ անձի, իսկ նույն մասի 6-10-րդ կետերով նախատեսված են

[64] *Busuioc v. Moldova* no. 61513/00, § 52, 21 December 2004:

իրական շահառուի, փոխկապակցված անձի, մերձավոր ազգականի և ընտանիքի անդամի սահմանումները:

356. Ողջ վերոնշյալի հաշվառմամբ՝ հստակ է, որ ուսումնասիրություն սկսելու համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերոնշյալ սուբյեկտների վերաբերյալ իրավասու մարմնի կողմից, Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան, կարող են հավաքվել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող անձնական տվյալներ: Հետևաբար՝ Օրենքի դրույթների՝ Դիմողի կողմից վկայակոչված հիմնավորումների սահմաններում վերացական ստուգման արդյունքում Սահմանադրական դատարանը չի գտնում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին անհամապատասխանության որևէ հիմք:

357. Սահմանադրության 31-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների առնչությամբ բարձրացված մյուս համալիր հարցադրումը վերաբերում է այդ իրավունքներին միջամտության համաչափությանը: Սույն հարցին վերաբերելի մասով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1546 որոշման իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական իրավունքի սահմանափակման համաչափության սկզբունքի վերաբերյալ, որոնք արդեն իսկ ներկայացվել են սույն որոշման 135-րդ կետում, կիրառելի են նաև սույն սահմանադրական իրավունքի դրույթների ներքո Դիմողի կողմից առաջադրված հարցերը լուծելիս:

358. Նշված սահմանադրաիրավական չափանիշների համատեքստում գնահատելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքին միջամտության պիտանիության հարցը՝ պետք է նկատել, որ Օրենքի իմաստով իրավասու մարմնի՝ գույքի ենթադրյալ ապօրինի ծագումը պարզելու գործիքակազմը միտված է գույքի ձեռքբերման ժամանակ գույքի շուկայական արժեքի և ձեռք բերողի կամ նրա հետ փոխկապակցված անձի օրինական եկամուտների համեմատական վերլուծությանը և քաղաքացիական շրջանառությունում գույքի հետագա իրավական շարժի ուսումնասիրությանը (Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մաս): Սահմանադրական դատարանը չի կարող բացառել, որ գույքի շուկայական արժեքը, այն ձեռք բերած անձի եկամուտների օրինականությունը և գույքի հետ կապված հետագա գործարքները կարող են պարզվել անձնական տվյալ հանդիսացող համապատասխան տեղեկությունների միջոցով, որոնք, իրենց բնույթով պայմանավորված, պարունակում են կամ կարող են պարունակել այլ օրենքներով պահպանվող գաղտնիք (բանկային գաղտնիք, ապահովագրական գաղտնիք, նոտարական գաղտնիք, առևտրային գաղտնիք, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված ծառայողական տեղեկություններ, վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն):

Հետևաբար՝ Օրենքով հետապնդվող վերոքննարկյալ սահմանադրաչափ նպատակները և վերջիններիս իրացմանն ուղղված գործառնական (վարութային) խնդիրները կարող են լուծվել իրավասու մարմիններին համապատասխան տեղեկությունները հասու լինելու միջոցով: Հետևաբար՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված կարգավորումները նախատեսում են անձնական տվյալների մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքների սահմանափակման՝ հետապնդված սահմանադրաչափ նպատակին հասնելու համար պիտանի միջոցներ:

359. Համաչափության սկզբունքի՝ սահմանափակման ընտրված միջոցի անհրաժեշտության բաղադրիչը պետք է դիտարկվի Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ անձնական տվյալների մշակման բարեխղճության պահանջի լույսով, որն անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես նաև հատուկ նորմով (*lex specialis*) սահմանված իրավունքի սահմանափակման դեպքում գործող լրացուցիչ երաշխիք է: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձնական տվյալների մշակման բարեխղճության սահմանադրական պահանջը հանրային իշխանությանը պարտավորեցնում է անձին վերաբերելի մասնավոր տեղեկույթին հավակնության, ձեռքբերման, օգտագործման և փոխանցման ժամանակ սահմանափակվել բացառապես այն տեղեկատվությամբ, որն իրապես անհրաժեշտ է հանրային շահով պայմանավորված սահմանադրաչափ նպատակը հետապնդելիս, և մասնավոր տեղեկույթը տիրապետելիս այն մատչելի դարձնել բացառապես այն սուբյեկտներին, որոնց առնչությունն այդ տեղեկույթին արդարացված է Սահմանադրության 31-րդ և 34-րդ հոդվածներով սահմանված որևէ սահմանադրաչափ նպատակով:

360. Սահմանադրական դատարանը նկատում է, որ սույն դեպքում Օրենքի 7-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանվում են ուսումնասիրության ընթացքում պարզման ենթակա հարցերը՝ դրանով իսկ նաև ուրվագծելով անձնական տվյալների պաշտպանության իրավունքին Օրենքով նախատեսված իրավաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջամտության սահմանափակումների շրջանակը: Բացի դրանից, տեղեկատվությանն առնչվող սուբյեկտների շրջանակն Օրենքով սահմանափակված է միայն սահմանադրաչափ անհրաժեշտությամբ (ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակներով[65]) ներգրավված պետական մարմիններով, պաշտոնատար և ոչ պաշտոնատար անձանցով, որոնք ունեն

[65] Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նպատակների մասին տե՛ս սույն որոշման 104-118-րդ և 119-128-րդ կետերը:

իրենց հասանելի դարձած՝ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները չհրապարակելու պարտականություն[66]:

361. Միաժամանակ, անձնական տվյալների պաշտպանության իրավունքին միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դիմողի կողմից ներկայացված դիմումում և նրա հետագա բացատրություններում չի պարունակվում որևէ այլ՝ նվազ ինտենսիվության միջամտության միջոցի վկայակոչում, որը կարող էր ապահովել Օրենքով հետապնդվող համապատասխան նպատակների իրականացումը: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը սույն գործով որոշակիացված սահմանադրական վեճի շրջանակներում Օրենքի դրույթների վերացական ստուգման ընթացքում չի տեսնում այնպիսի միջոց, որն օրենսդրի տեսադաշտում լինելով հանդերձ, վերջինս անտեսել է՝ գերադասելով խնդրո առարկա միջոցը: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված կարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով «անհրաժեշտության» չափանիշին:

362. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող անձնական տվյալները, համաձայն ցանկի, կարող են տրամադրվել բացառապես դատարանի որոշմամբ: Սահմանադրական դատարանը փաստում է, որ իրավասու մարմնի կողմից հայցվող անձնական տվյալները կարող են դատարանի որոշմամբ ստացվել, եթե դատարանը հանգում է եզրակացության առ այն, որ իրավասու մարմնի դիմումում հիմնավորված է ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանման համար հայցվող տեղեկությունների անհրաժեշտությունը (Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մաս): Ընդ որում՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից բավարարվելու դեպքում գործում է դատական բողոքարկման երկաստիճան համակարգ (Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մաս): Այսպիսով, Օրենքի վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը, մի կողմից՝ իրավասու մարմնին թույլատրել է հավակնել անձնական որոշակի տվյալների տիրապետման, իսկ մյուս կողմից՝ սահմանել այդ տվյալների ստացման դատական կարգ՝ իրավասու մարմնի վրա դնելով հայցվող տեղեկատվության անհրաժեշտության հիմնավորման պարտականությունը, ինչպես նաև սահմանել ի վնաս անձնական տվյալների սուբյեկտի հնարավոր դատական

[66] Տե՛ս Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասը (որպես հանրային իշխանությանը հակադրվելիք անմիջապես գործող իրավունք), Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը (որն իրավասու մարմնին պարտավորեցնում է ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված և գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանմանն ուղղված միջոցներ ձեռնարկել), Օրենքի 9-րդ հոդվածը (համակցված ուսումնասիրության տվյալները հրապարակելու համար պատասխանատվություն սահմանող Քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածի հետ):

սխալի վերացմանն ուղղված դատական բողոքարկման երկաստիճան համակարգ:

363. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը նախատեսում են անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի սահմանափակման՝ հետապնդված սահմանադրաչափ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց:

364. Համաչափության սկզբունքի վերջին տարրը՝ սահմանափակման համարժեքության պահանջը՝ որպես հիմնական իրավունքին միջամտության սահմանադրաչափության գնահատման չափորոշիչ, ենթադրում է հավաստիանալն առ այն, որ իրավասահմանափակման կոնկրետ դեպքում Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սկզբունքի մնացյալ տարրերի լիարժեքության պայմանով առկա է արդար հավասարակշռություն հիմնական իրավունքի երաշխավորման անհրաժեշտության և սահմանափակումն արդարացնող հանրային շահի միջև, և ըստ այդմ՝ հիմնական իրավունքին միջամտությունը համարժեք է:

365. Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դիմողի դիմումը չի պարունակում որևէ հիմնավորում առ այն, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված միջամտության վերաբերյալ նորմերը պարունակում են համապատասխան հիմնական իրավունքին անհամարժեք միջամտության տարրեր: Հետևաբար՝ համաչափության սկզբունքի սույն բաղադրիչի՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխանությունն ստուգելու անհրաժեշտություն Սահմանադրական դատարանը չի տեսնում:

366. Սույն դեպքում Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև սույն գործով սահմանադրականության ստուգման վերացական բնույթը, չի նշմարում որևէ հանգամանք, որը կվկայեր սահմանափակման ենթարկվող՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անհատական տվյալների պաշտպանության իրավունքների նշանակության և Օրենքով այդ իրավունքների սահմանափակմամբ հետապնդվող նպատակների միջև հավասարակշռության խախտման մասին: Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սահմանադրական սկզբունքով առաջադրված սահմանադրական պահանջները քննարկվող օրինադրույթներով նախատեսված միջամտության պայմանների վերացական ստուգմամբ պահպանված են:

367. Հիմք ընդունելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների՝ Օրենքով նախատեսված սահմանափակումներն Օրենքի դրույթների վերացական ստուգման սույն

սահմանադրական վեճի շրջանակում Դիմողի կողմից ներկայացրած հիմնավորումների սահմաններում համապատասխանում են Սահմանադրությանը:

IX. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

Ա. Կողմերի դիրքորոշումները

1. Դիմող

368. Դիմողը գտնում է, որ Օրենքով որպես անձի գույքի օրինականության ուսումնասիրություն իրականացնելու համար իրավասու մարմին է սահմանվել Դատախազությունը, ինչը խնդրահարույց է վերջինիս լիազորությունները Սահմանադրության 176-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանված լինելու տեսանկյունից, քանի որ Դատախազությունն օժտվում է մի լիազորությամբ, որը նախատեսված չէ Սահմանադրությամբ:

369. Ըստ Դիմողի՝ Օրենքով սահմանված լիազորությունը չի կարող արդարացվել նաև պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման տեսանկյունից, քանզի այն դիտարկվում է ոչ թե որպես դատախազության ստանդարտ, այլ բացառիկ դեպքերում իրականացվող գործառույթ, իսկ այդ դեպքերի շրջանակն ու այդ գործառույթի իրականացման ընթացակարգը պետք է հստակեցվեն «Դատախազության մասին» օրենքով:

370. Դիմողը նշում է, որ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը մանրամասնում է բացառիկ դեպքերի այս շրջանակը: Դրանց վերլուծությունից հետևում է, որ այս պարագայում խոսքն այնպիսի իրավիճակների մասին է, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրեն վերապահված կամ պատվիրակված գործառույթների իրականացման արդյունքում պետությանը պատճառվել է վնաս, և համապատասխան մարմինը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման մասին, հայց չի ներկայացնում կամ նման իրավասություն չունի: Մինչդեռ Օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների առումով, ըստ Դիմողի, հնարավոր չէ պնդել, որ վնասը պատճառվել է պետության գույքային շահերին, այլ խոսքը հանրորեն վտանգավոր արարքի և հանրային շահերին հասցվող վնասի մասին է:

371. Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 176-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց է նաև Դատախազությանն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացնելու լիազորություն վերապահելը, քանի որ Սահմանադրության 176-րդ հոդվածով Դատախազության համար սահմանված լիազորությունների շրջանակը սպառիչ է, և դրանցից որևէ մեկը բովանդակային առումով չի կարող ներառել Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի իրականացումը: Այս առումով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթն ունի խիստ նեղ

բովանդակություն և կարող է վերաբերել միայն դատարան հայց հարուցելուն, այլ ոչ թե արտաքին ներգործություն ունեցող առանձին վարույթ իրականացնելուն:

372. Դիմողը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարույթի իրականացումը Դատախազությանը վերապահելը խնդրահարույց է այդ մարմնի օբյեկտիվության և անաչառության տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ ապօրինի ծագում ունեցող գույքի ուսումնասիրությունն իրականացվում է Դատախազության առանձին ստորաբաժանման կողմից, Սահմանադրության 176-րդ հոդվածի տրամաբանությամբ Դատախազությունը գլխավոր դատախազի ղեկավարությամբ գործող մեկ միասնական մարմին է: Այս առումով խնդրահարույց է նաև գլխավոր դատախազի ազդեցությունն ուսումնասիրության ընթացքի նկատմամբ, որն Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով անգամ իրավասու է հրաժարվել ուսումնասիրության արդյունքներով դատարան ներկայացվող հայցադիմումից: Արդյունքում, Դիմողի եզրահանգմամբ և՛ քրեական վարույթը, և՛ ապօրինի ծագում ունեցող գույքի ուսումնասիրությունն իրականացվում է մեկ մարմնի կողմից, որը կարող է մեկ վարույթից ստացված տեղեկությունն առանց խոչընդոտի օգտագործել մեկ այլ վարույթում:

373. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի շրջանակում ուսումնասիրություն իրականացնելը և դատարան հայց ներկայացնելը դուրս են Սահմանադրության 176-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանված՝ Դատախազության լիազորությունների շրջանակից: Օրենքը չի երաշխավորում նաև Դատախազության՝ որպես իրավասու մարմնի անաչառությունը և օբյեկտիվությունը, ինչպես նաև վերջինիս օժտում է մի շարք առավելություններով, որոնք հակասության մեջ են ինչպես մրցակցության հիմնարար սկզբունքի, այնպես էլ՝ միջազգային փորձի հետ:

374. Իր լրացուցիչ բացատրություններում Դիմողը նշում է, որ ըստ Պատասխանողի՝ Օրենքով սահմանված ուսումնասիրությունը հայցի նախապատրաստմանն ուղղված գործողությունների համախումբ է, որի շրջանակներում հավաքվում և ուսումնասիրվում են համապատասխան տվյալներ:

375. Դիմողի դիրքորոշմամբ՝ Պատասխանողի այն հիմնավորումները, որ Օրենքով սահմանված վարույթի դեպքում միակ առանձնահատկությունը նշված տեղեկությունները պահանջելու փուլի մեջ է, չեն արտացոլում «Դատախազության մասին» օրենքի և Օրենքի դրույթները: Դիմողը գտնում է, որ ի տարբերություն պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու այլ դեպքերի՝ Օրենքով սահմանված հայց հարուցելու նպատակով Դատախազությունն իրավասու է հայց հարուցելու համար անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ պահանջել և ստանալ ինչպես դատարաններից, այնպես էլ ֆիզիկական և իրավաբանական անձանցից: Բացի դրանից, Օրենքով սահմանված դեպքում մինչև հայց հարուցելը

Դատախազությունն իրավասու է հանձնարարելու իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

376. Ըստ Դիմողի՝ այն, որ Սահմանադիրը ցանկացել է Դատախազության լիազորությունների շրջանակը սահմանափակել առավելապես քրեական վարույթի շրջանակներում և այլ վարույթներում ներգրավել միայն բացառիկ դեպքերում, հուշում է հենց Սահմանադրությունը: Դիմողը նշում է, որ Սահմանադրությամբ Դատախազությանը վերապահված իրավասությունը՝ բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորությունը, օրենսդրի կողմից սահմանվելիս չի կարող բացարձակ հայեցողություն ունենալ, այլ պետք է ելնի Սահմանադրությունից և դրանում արտացոլված Սահմանադրի նպատակներից:

2. Պատասխանող

377. Պատասխանողը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը դասվում է օրենքով սահմանված այն բացառիկ դեպքերի շարքին, որոնց պարագայում Դատախազությունն իրավասու է պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնել դատարան, հետևաբար՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի ներկայացումը բխում է Սահմանադրության 176-րդ հոդվածով Դատախազությանը վերապահված լիազորություններից: Օրենքով սահմանված «ուսումնասիրությունը» չի հանդիսանում արտաքին ներգործության վարույթ և ոչ այլ ինչ է, քան հայցի նախապատրաստմանն ուղղված գործողությունների համախումբ:

378. Ըստ Պատասխանողի՝ հիմնականում պետական շահերի պաշտպանության հայցի նախապատրաստումը, ինչպես նաև դրա՝ դատարան ներկայացումն ու դատարանում քննությունն անխուսափելիորեն ենթադրում են քրեական գործի նյութերի օգտագործման անհրաժեշտություն, ավելին՝ հաճախ հայցի ներկայացման անհրաժեշտությունը գնահատվում է քրեական գործի նյութերում առկա տվյալների հիման վրա: Անդրադառնալով Դատախազության լիազորությունների վերաբերյալ Դիմողի ներկայացրած փաստարկներին՝ Պատասխանողը նշում է, որ քրեական գործի քննության ընթացքում ստացված տեղեկությունների օգտագործումը՝ պետական շահերի պաշտպանության հայցի ներկայացման համար ոչ միայն չի հակասում Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներին, այլև բխում է պետական շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու լիազորությամբ Դատախազությանն օժտելու տրամաբանությունից: Հիմք ընդունելով, որ պետությանը պատճառված վնասի և ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տեղեկություններ հաճախ ի հայտ են գալիս հենց քրեական գործի քննության ընթացքում, ըստ Պատասխանողի՝

տրամաբանական է հենց նույն մարմնին դրանց առնչությամբ քաղաքացիական վարույթ նախաձեռնելու հնարավորություն ընձեռելը:

379. Հետևաբար՝ ըստ Պատասխանողի՝ քրեական վարույթով հավաքված տեղեկությունների հիման վրա քաղաքացիական հայցի հարուցման հնարավորությունը բխում է Սահմանադրությամբ նախատեսված պետական շահերի պաշտպանությամբ հանդես գալու Դատախազության լիազորության էությունից ու բովանդակությունից, ինչը բացառում է քննարկվող լիազորության՝ Սահմանադրությանը հակասելու հնարավորությունը:

380. Անդրադառնալով հիշյալ գործառույթի դեպքում պետական շահի առկայության հարցին՝ Պատասխանողը նշում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը հանգեցնում է ոչ միայն հանրային բնույթի ոչ նյութական շահերի պաշտպանությանը, այլ հանդիսանում է վերականգնողական գործիք, որի արդյունքում պետական բյուջե մուտք եղած միջոցները կարող են հատկացվել սոցիալական կարևորություն ներկայացնող խնդիրների լուծմանը:

381. Ներկայացված փաստարկների և հիմնավորումների հաշվառմամբ Պատասխանողը գտնում է, որ Օրենքի համապատասխան դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

Բ. Վեճի լուծման նկատմամբ կիրառելի իրավունքը

382. Սահմանադրության 1-ին հոդված.

«Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է»:

383. Սահմանադրության 6-րդ հոդված՝ «Օրինականության սկզբունքը».

«1. Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

384. Սահմանադրության 176-րդ հոդված՝ «Դատախազությունը».

«(...)

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության (...) գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

Գ. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

385. Գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանմանն իրավասու մարմնի կարգավիճակ շնորհող Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի և իրավասու մարմնին Օրենքով վերապահված լիազորությունները սահմանող մյուս դրույթների, մասնավորապես՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի

3-րդ մասի, 7-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-2-րդ մասերի, 12-րդ հոդվածի 1-3-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի, 14-րդ հոդվածի 1-ին մասի, 15-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի, 20-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, 21-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը որոշելու նպատակով Սահմանադրական դատարանը, սույն որոշման 23-27-րդ կետերում որոշակիացված սահմանադրական վեճի շրջանակներում, անհրաժեշտ է համարում անդրադառնալ Դիմողի կողմից ներկայացված փաստարկներին՝ ըստ դրանց առաջադրման հաջորդականության և փոխկապակցվածության:

386. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե որքանով է Օրենքով նախատեսված հայցը հարուցելու, ինչպես նաև հայց հարուցելու մասին որոշման կայացմանը հանգեցրած ուսումնասիրություններ անցկացնելու՝ Դատախազության լիազորությունը համապատասխանում Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ «*դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացնում դատարան*» դրույթին:

1. Հայց ներկայացնելու՝ Դատախազության լիազորությունը

387. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ Դատախազությունը թե՛ քրեական արդարադատության ոլորտում և թե՛ դրանից դուրս գտնվող իրավահարաբերություններում Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթներն իրականացնում է հանրության անունից՝ հետապնդելով հանրային շահ: Դատախազության այս առաքելությունը և ստանձնած դերը ճանաչում ունեն նաև միջազգային պրակտիկայում, որով հասարակության անունից գործելու և հանրային շահի պաշտպանության նպատակով քրեական արդարադատությունից դուրս այլ գործառույթներ իրականացնելու Դատախազության կարգավիճակը չի համարվում իշխանությունների տարանջատման սկզբունքի դիտանկյունից խնդրահարույց[67]:

388. Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, որ Օրենքով Դատախազությանը վերապահված լիազորությունները չեն կարող արդարացվել նաև պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման տեսանկյունից,

[67] Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» անդամ պետություններին ուղղված թիվ Rec(2012)11 հանձնարարական (*անգլերենով*) (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 19-ին, Նախարարների տեղակալների 1151-րդ նիստում): Տե՛ս նաև՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի «Քրեաիրավական ոլորտից դատախազության դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ուղղված թիվ 3 կարծիք (*անգլերենով*) (ընդունված ԵԴԽԽ-ի կողմից իր 3-րդ լիագումար նիստում, 2008 թվականի հոկտեմբերի 15-17, Ստրազբուրգ), կետ 6:

քանի որ վերջինս իրականում բացառիկ դեպքերում իրականացվող գործառույթ է, իսկ այդ դեպքերի շրջանակն ու այդ գործառույթի իրականացման ընթացակարգը պետք է հստակեցվեին «Դատախազության մասին» օրենքով, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված լիազորությունը Դատախազությանը վերապահված էր նաև 1995 թվականի, ինչպես նաև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 103-րդ հոդվածով: 1995 թվականի Սահմանադրությունը հիշյալ լիազորության իրականացման դեպքերի և կարգի առնչությամբ օրենքին հղում չէր պարունակում, մինչդեռ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համաձայն՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու լիազորությունը կարող էր իրականացվել *«օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»*, իսկ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության համաձայն՝ *«օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»*:

389. Ինչ վերաբերում է «Դատախազության մասին» օրենքին, ապա դրա՝ սույն հարցին առավել վերաբերելի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն (Օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող խմբագրությամբ)՝

> «1. Դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝
>
> (…).
>
> 4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը:
>
> 2. Դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է հետևյալ բացառիկ դեպքերում, երբ՝
>
> 1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ
>
> 2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.
>
> 3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր»:

390. Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված *«դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան»* նորմից

բխում է, որ դրա իմաստով «դեպքերի» բացառիկության որոշման հարցը Սահմանադիրը վերապահել է օրենսդրին՝ ձեռնպահ մնալով դեպքի բացառիկության որևէ սահմանադրական վավերապայման սահմանելուց:

391. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նկատել նաև, որ քրեական արդարադատության ոլորտից դուրս դատախազական միջամտության՝ բացառապես օրենքի հիման վրա իրականացման սահմանադրական հրամայականը կարևոր երաշխիք է նման միջամտության կանխատեսելիությունն ապահովելու համար: Ընդ որում՝ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ *«օրենք»* հանդիսացող իրավական ակտով միջամտությունն է, որ պահանջվում է Սահմանադրությամբ, և այս առումով Օրենքն այդ պահանջը բավարարում է[68]:

392. Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի կատարումն Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների (*«օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»*)՝ Ազգային ժողովը «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչպես նաև Օրենքով նախատեսել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազության լիազորությունը և դրա իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերը և ընթացակարգերը:

393. Բացի դրանից, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ ընդգծել, որ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասը չի պարունակում պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու այնպիսի վավերապայման, ինչպիսին է լիազոր այլ մարմնի կողմից իր լիազորության չիրականացումը: Իսկ այն հանգամանքը, որ մի դեպքում օրենքով («Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մաս, 1-ին կետ) Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու համար անհրաժեշտ է, որ համապատասխան լիազոր մարմինը դրսևորած լինի անգործություն, ինքնին չի նշանակում, որ այն օրենսդրի համար Դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության իրականացման կառուցակարգ նախատեսելու կամ համապատասխան լիազորության մեկնաբանման համար շրջանակ կանխորոշող սահմանադրական չափանիշ է:

[68] Այս մոտեցումն իր ճանաչումն ունի նաև դատախազների և դատախազությունների կարգավիճակի մասին միջազգային ընդունված չափորոշիչներում: Մասնավորապես, սակայն չսահմանափակվելով միայն, տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության համակարգից դուրս հանրային մեղադրողների դերի մասին» անդամ պետություններին ուղղված թիվ Rec(2012)11 հանձնարարական (*անգլերենով*) (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2012 թվականի սեպտեմբերի 19-ին, Նախարարների տեղակալների 1151-րդ նիստում), կետեր 3 և 19:

394. Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու, ինչպես նաև դրան նախորդող՝ նախադատական փուլում ունեցած լիազորությունները Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դասվում են «*պետական շահերի պաշտպանության հայց*» ներկայացնելու սահմանադրական լիազորության ներքո՝ հանդիսանալով դրա իրականացման համար անհրաժեշտ լիազորությունների համախումբ: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը Դիմողի կողմից առաջադրված հարցադրումների շրջանակում և Օրենքի համապատասխան դրույթների՝ Դատախազության լիազորություններին վերաբերող մասով սահմանադրականության վերացական ստուգման արդյունքով չի համարում դրանք սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց:

395. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գալիս է այն հետևության, որ Սահմանադրությունը Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորությունը միայն և բացառապես կապում է նման իրավասության, ինչպես նաև դրա իրականացման կարգի՝ օրենքով սահմանված լինելու հետ՝ առանց որևէ այլ վավերապայման նշելու: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքը համապատասխանում է նշված վավերապայմանին:

2. Ուսումնասիրություններ իրականացնելու՝ Օրենքով նախատեսված լիազորությունը

396. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքով նախատեսված ուսումնասիրության շրջանակում Դատախազությանը վերապահված՝ նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված լիազորության ուժով՝ Դատախազությունը կարող է հանձնարարել տեղեկություններ ստանալու նպատակով իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված միջոցառումներ: Այս կապակցությամբ պետք է նշել, որ՝

- Դատախազության հանձնարարությունները չեն կարող վերաբերել այնպիսի միջոցառումների, որոնք նախատեսված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերով, այսինքն՝ այն գործողությունները, որոնք, նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կարող են իրականացվել միայն դատարանի թույլտվությամբ:

- Օրենքը հստակորեն սահմանագծել է օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակում կատարվող գործողությունների նպատակը, որը վերաբերում է բացառապես «իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը» պարզելուն, ինչն անհրաժեշտ է

Օրենքով նախատեսված և Դատախազության վրա դրվող ապացուցման դատավարական պարտականության կատարման համար:

- Ամեն դեպքում, ձեռք բերված տեղեկատվությունն ու այլ փաստական տվյալները տրամադրվում են շահագրգիռ անձանց՝ Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով, իսկ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա հետագայում հայցի հարուցման դեպքում պատասխանողը, Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հնարավորություն է ունենում ոչ միայն հերքելու գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ, այլև՝ դատարանում վիճարկելու համապատասխան ապացույցի թույլատրելիությունը՝ համաձայն Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի, որոնք սահմանում են, որ (1) փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով, և (2) հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

- Այս առնչությամբ հարկ է նկատել, որ օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակներում օրենքի խախտմամբ ապացույցների ձեռքբերումը հանգում է առանց օրինական հիմքերի վերաբերելի հիմնական իրավունքին կամ ազատությանը միջամտությամբ և, հետևաբար՝ դրանց խախտմամբ ապացույցների ձեռքբերմանը, որպիսի պայմաններում նման ապացույցների օգտագործումն արգելված է՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Իր հերթին, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստի ընթացքում գործին մասնակցող անձանց հետ քննարկում և լուծում է ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը, նույն օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճիռ կայացնելիս դատարանը, ի թիվս այլնի, գնահատում է ապացույցները, իսկ 66-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ ապացույցների գնահատումը, մասնավորապես, ներառում է դրանց թույլատրելիության ստուգումը:

397. Մյուս կողմից, Դատախազությանը հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության և անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքներով ապահովելուն ուղղված լիազորություններով օրենսդրորեն չօժտելու դեպքում, սույն որոշման 101-րդ կետում նշված իրավաչափ նպատակների հետապնդման և դրանց դատավարական ճանապարհով հասնելու հարցում Դատախազությունը զուրկ է լինելու ոչ միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը վերաբերող դատավարության շրջանակներում իր վրա

դրվելիք ապացուցման պարտականությունը կատարելու, այլ նաև հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության փուլում դրանց բացակայության վերաբերյալ եզրահանգման գալու և հայց հարուցելու որոշումից ձեռնպահ մնալու մասին որոշում կայացնելու հնարավորությունից: Այլ խոսքով՝ Դատախազությունը զուրկ է լինելու Սահմանադրությամբ ճանաչված իրավաչափ նպատակի բավարարմանն ուղղված իր դատավարական լիազորությունների իրականացման հնարավորությունից:

398. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու և նման որոշման կայացմանը հանգեցրած ուսումնասիրություններ անցկացնելու լիազորությունները բխում են Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասից, որպիսի եզրահանգման հիմքում ընկած վերը բերված հիմնավորումները հանգում են հետևյալին՝

- *Նախ*՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու՝ Դատախազության լիազորությունն ինքնին նախատեսված է Օրենքի 20-րդ հոդվածով: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի առկայությունը որպես «բացառիկ դեպք» որակելը և նման հայցի հարուցման կարգի սահմանումը գտնվում են օրենսդրի հայեցողության տիրույթում:

- *Երկրորդ*՝ ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման՝ «պետական շահի» առկայության չափորոշիչին համապատասխանության հարցին, ապա պետք է նկատի ունենալ, որ նախ սույն որոշման 104-118-րդ և 119-128-րդ կետերում նկարագրված նպատակները հանրային շահեր են, որոնք հետապնդվում են պետության կողմից և, ուրեմն՝ ձեռք են բերում պետական շահի որակ և, ապա՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ներկայացված պահանջների բավարարման նյութական շահառուն Հայաստանի Հանրապետությունն է: Այս երկու հանգամանքների համակցությունը բավարար է, որպեսզի այս տեսակի վարույթներով ներկայացված հայցերը դիտարկվեն որպես Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «պետական շահերի պաշտպանության» հայցեր:

- *Երրորդ*՝ ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության շրջանակներում Դատախազությանը վերապահված լիազորությունները Սահմանադրությամբ նախատեսված չեն, ապա այդ լիազորությունները հանդիսանում են բացառապես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ լիազորությունների համախումբ և իրականացվում են այդ նպատակով: Ուսումնասիրության շրջանակներում Դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացմամբ հետապնդվող արդյունքն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման

հայց հարուցելու՝ Օրենքով նախատեսված հիմքերի առկայությանը իրավական գնահատական տալն է:

3. Մրցակցության սկզբունքի մասով

399. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել նաև, թե արդյոք Դատախազության՝ ուսումնասիրություն իրականացնելու (մասնավորապես՝ դրա շրջանակներում ապացույցներ ձեռք բերելուն և/կամ դրանք պահանջելուն, ապացույցների նախնական ապահովմանը կամ հայցի նախնական ապահովում ստանալուն միտված լիազորությունների իրականացումը), ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու, հայցը դատարանում պաշտպանելու լիազորությունները համապատասխանում են քաղաքացիական դատավարության՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող մրցակցության սկզբունքին, այդ թվում՝ դատավարության կողմերի հավասարության պահանջին, և դրա շրջանակներում՝ տվյալ վարույթին մասնակցող դատախազների՝ Դիմողի կողմից բարձրացված անկախության և դատավարական ինքնուրույնության հարցերին:

400. Սահմանադրական դատարանն ավելորդ չի համարում նշել, որ ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական դատավարությունում հայցը հիմնավորելու նպատակով ապացույցների ձեռքբերմանը, դրանց ապահովմանը, ինչպես նաև հետագայում կայացվելիք դատական ակտերի կատարումն ապահովելուն ուղղված իրավունքներով օժտված են նաև արդարադատության գործընթացի մասնավոր սուբյեկտները՝ ինչպես գործին մասնակցող անձինք (օրինակ՝ տեղեկատվության ստանալու վերաբերյալ հարցումներ, փաստաթղթերի ձեռքբերում և այլն), այնպես էլ ավելի լայն առումով նրանց ներկայացուցիչները (համեմատության համար տե՛ս «Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածը):

401. Հետևաբար՝ ուսումնասիրության համար անհրաժեշտ լիազորությունների շրջանակը լիովին համատեղելի է Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված «*պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու*» Դատախազության սահմանադրական իրավասության հետ՝ որպես դրա իրացման համար անհրաժեշտ լիազորությունների համախումբ:

402. Ինչ վերաբերում է մրցակցության հիմնարար սկզբունքի հետ հակասությանը, ապա Սահմանադրական դատարանը նկատում է, որ Դատախազության՝ Օրենքով նախատեսված լիազորությունները չունեն խնդրո առարկա գույքի առնչությամբ վերջնական և միջամտող որոշման բնույթ: Այս լիազորությունների համախումբը միտված է քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելուն, որի լուծումը վերապահված է բացառապես դատարանին: Դիմողի կողմից վկայակոչված մրցակցության սկզբունքի հետ հակասության վերաբերյալ պնդումը չի անցնում ընդամենը հայցի

նախապատրաստման փուլում Դատախազության ունեցած լիազորությունների՝ պատասխանող կողմի ունեցած իրավունքներին անհամապատասխանության փաստարկից: Այս պնդումը, այլ խոսքով, չի վերաբերում քաղաքացիական դատավարության շրջանակում Դատախազության այնպիսի լիազորությանը, որը, ի տարբերություն պատասխանողի, նրան կտրամադրեր իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու կամ դատարանի համոզմունքի վրա ազդելու այնպիսի հնարավորություն, որը կասկածի տակ կդներ մրցակցության կամ կողմերի հավասարության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:

403. Ավելին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մրցակցության սկզբունքի ապահովման իմաստով առաջնային է ոչ այնքան գույքի և դրա օրինականության վերաբերյալ ապացույցների ձեռքբերման վերաբերյալ դատավարության առանձին սուբյեկտների ունեցած լիազորությունների հարաբերակցությունը, որքան նման ապացույցների հասանելիության և գույքի ձեռքբերման վերաբերյալ հիմնավորումների ներկայացման հարցում հավասարությունը: Այս իմաստով Օրենքով նախատեսված գույքի բռնագանձման վարույթներում պատասխանողներն են այն անձինք, որոնց գույքը կամ գույքային շահերը հանդիսանում են վեճի առարկան, և հետևաբար՝ նրանք են, որ ունեն բնական առավելություն՝ այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ տվյալների և դրա օրինականության մասին հիմնավորումների ներկայացման առնչությամբ ավելի տեղեկացված դիրք: Վերջապես, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը, այդ թվում՝ մեկ միավոր գույքը, մի քանի միավոր գույքը կամ մեկ միավոր գույքի բաժինը, չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով»:

404. Սահմանադրական դատարանը նախորդ կետում ներկայացված դրույթների տեքստային վերլուծության արդյունքում փաստում է, որ Օրենքով հստակ սահմանված է խնդրո առարկա բռնագանձման վարույթին վերաբերող գործերով ապացուցման առարկան: Ընդ որում՝ դրա ապացուցման պարտականությունը դրված է հայցվորի վրա, իսկ պատասխանողը, իբրև իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության եղանակ, օգտվում է իր օրինական եկամուտների և ունեցած գույքի արժեքի միջև տարբերությունը նվազեցնելու (օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ ներկայացնելով ընդհուպ մինչև զրոյացնելու) դատավարական հնարավորությունից, որի արդյունավետության աստիճանն էականորեն մեծանում է Օրենքի այն կարգավորման ուժով, որ երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, պատասխանողի կողմից իր ունեցած գույքն

օրինական եկամուտներով ձեռք բերված լինելը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականությունը չկատարելը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի, եթե ապացուցվում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել կամ կորել է ոչ նրա մեղքով:

405. Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված կարգավորումներն իրական երաշխիքներ են տրամադրում պատասխանողին՝ թե՛ ապացուցման առարկայի որոշակիության առումով և թե՛ գույքի՝ ապօրինի լինելու կանխավարկածը պատասխանողի կողմից արդյունավետորեն հերքելու և դրա բռնագանձումը կանխելու համար:

4. Վարույթին մասնակցող դատախազների անկախության և դատավարական ինքնուրույնության մասով

406. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում հիշեցնել, որ չնայած դատավարությունների ոլորտային տարբերություններին՝ Դատախազությունը բոլոր դեպքերում իրավասուբյեկտություն է հաղորդում հանրությանը՝ հանդես գալով իբրև դատավարության կողմ, որը գործում է վերջինիս անունից, ինչից բխում է սույն գործին վերաբերելի այն կարևոր իրողությունը, որ որպես այդպիսին Դատախազությունը հանդիսանում է դատավարության բնույթով չպայմանավորված իրավական միասնական պահանջների և վարքականոնների հասցեատեր: Այսինքն՝ Դատախազության անկախության ինստիտուցիոնալ և անձնական, կազմակերպական և դատավարական երաշխիքները, ինչպես նաև վարքագծի կանոնները միասնական են Դատախազության բոլոր աշխատակիցների համար և նույնական են բոլոր տեսակի դատավարությունների համար՝ քաղաքացիական, վարչական և քրեական:

407. Վերոգրյալի հիման վրա՝ Դիմողի այն պնդման առթիվ, որ Օրենքը չի երաշխավորում Դատախազության անկախության և անաչառության բավարար աստիճան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում, Սահմանադրական դատարանը նկատում է, որ նշված պնդումը չի կարող ներկայացված հիմնավորումների շրջանակում վիճարկվող Օրենքի կամ դրա որևէ դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դատողության հիմք ծառայել, քանի որ՝ (1) Դատախազությունն ինքնին չունի խնդրո առարկա գույքից օգտվելու իրավունքին միջամտող որևէ վերջնական որոշում կայացնելու իրավասություն, որը վերապահված է բացառապես դատարանին՝ մրցակցային դատավարության արդյունքում կայացված ակտով, (2) գլխավոր դատախազի վերադասությունը կամ դատախազության միասնական համակարգի բնույթը դատախազին ընդհանրապես, իսկ սույն սահմանադրական վեճին վերաբերելի դեպքերում՝ Օրենքի նպատակների համար չի ազատում «Դատախազության մասին» օրենքով պահանջվող անաչառության և անկախության երաշխիքների և, միաժամանակ, պահանջների ազդեցությունից, և (3) Օրենքի նպատակը և կարգավորման առարկան

Դատախազության գործունեությանն առաջադրվող պահանջների նյութական և ընթացակարգային իրավական կառուցակարգերի սահմանումը չէ, իսկ Դիմողի կողմից չի վիճարկվում նման կառուցակարգեր սահմանող իրավական ակտերի, մասնավորապես՝ «Դատախազության մասին» օրենքի՝ իբրև Դատախազության կազմավորումը և գործունեությունը կանոնակարգող ոլորտային միասնական օրենքի, ինչպես և քաղաքացիական, վարչական կամ քրեական դատավարության օրենսգրքերի՝ իբրև արդարադատության համապատասխան ոլորտները կարգավորող և դատախազական գործառույթների իրացման միասնական դատավարական ձև սահմանող ճյուղային օրենքների որևէ դրույթ, որի սահմանադրականության հարցը կարող էր բովանդակային քննության առարկա դառնալ միայն դրա վիճարկման դեպքում:

408. Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով հայց ներկայացնելու լիազորությունը բխում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու Դատախազության իրավասությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերը՝ նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա բռնագանձման ենթակա է այն գույքը, որը ձեռք է բերվել համապատասխան պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու պահից հետո:

2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը՝ նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բռնագանձման ենթակա է այն գույքը, որը կապ ունի համապատասխան հանցանքի հետ:

3. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Դիմողի կողմից վիճարկվող մնացած դրույթները դրանց վերաբերյալ ներկայացված հիմնավորումների շրջանակում Սահմանադրությանը համապատաս-

խանության վերացական ստուգման արդյունքներով համապատասխանում են Սահմանադրությանը:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1776

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության

կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի փետրվարի 13-ի N 129-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված ««Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևան քաղաքում:

2. Համաձայնագրի ընդհանուր նպատակն է՝ երկու պետությունների միջև բարեկամական և համագործակցային կապերն ամրապնդելը, ինչպես նաև Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեությունը կանոնակարգելը:

3. Համաձայնագիրն ունի հավելված, որը պարունակում է Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ՝ աշխատանքային պայմանագրի տիպային օրինակը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերից մեկի կողմից դիվանագիտական ուղիներով մյուս Կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից, որով Կողմերը միմյանց տեղեկացնում են Համաձայնագրի ուժի մեջ

մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերն ավարտելու մասին:

Դիմումին կից ներկայացված Արտաքին գործերի նախարարության Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ի դրությամբ կատարական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

5. Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կողմերի իրավասու մարմիններն սկսում են Համաձայնագրի իրականացման ընթացակարգերը Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6. Դիմումին կից ներկայացված՝ Համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման հիմնավորման համաձայն՝ «Համաձայնագրի վավերացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 1.1 կետից. մասնավորապես՝ «Կառավարությունը նպաստելու է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, ներառյալ հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգության ապահովմանը»: Ըստ նույն հիմնավորման՝ «Համաձայնագրի վավերացումը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության 6-րդ գլխով նախատեսված ռազմավարական նպատակ 4-ից. մասնավորապես՝ նպատակ 4.1-ով նախատեսվել է ունենալ զարգացած միգրացիոն համակարգ»:

7. Դիմումին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ Համաձայնագրի վավերացումը/հաստատումը կնպաստի Կատարի Պետությունում ներկայումս աշխատող Հայաստանի Հանրապետության տասնյակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կկանոնակարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Կատարի Պետությունում աշխատանքի անցնելու ողջ գործընթացը՝ այդպիսով հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցներին՝ տիրապետելու ամբողջական տեղեկատվության՝ Կատարում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թվի, որակավորման և աշխատանքային պայմանների վերաբերյալ:

8. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

8.1. նախաձեռնել բոլոր անհրաժեշտ միջոցները, որ Կատարի Պետությունում աշխատել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար հեշտացվեն բժշկական զննության ընթացակարգերը, անձնագրեր և ուղևորության թույլտվություն ստանալը, և որ այդ քաղաքացիներին տրամադրվեն տեղեկություններ Կատարի Պետությունում աշխատանքային պայմանների, ծախսերի և կենսամակարդակի վերաբերյալ (հոդված 5, մաս 1),

8.2. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը և Կատարի Պետություն մեկնելու նախապատրաստումը համապատասխանեն երկու երկրներում գործող համապատասխան օրենքներին և ընթացակարգերին (հոդված 5, մաս 2),

8.3. ապահովել, որ Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության հմտություն ունեցող քաղաքացիներն ունենան անհրաժեշտ որակավորումներ այն աշխատանքը կատարելու համար, որի համար հավաքագրվել են (հոդված 5, մաս 3),

8.4. ապահովել, որ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկնելը Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունենան աշխատանքի առաջարկ, որը պատշաճ կերպով ստորագրված կլինի Կատարի Պետության գործատուի կողմից և հաստատված կլինի Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության կողմից (հոդված 5, մաս 4),

8.5. ապահովել, որմինչև մեկնելն աշխատողներին տրամադրվի պատշաճ ցուցում/կողմնորոշում աշխատանքի ընդունման հետ կապված համապատասխան օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի, նորմերի, մշակույթների և գործելակերպի վերաբերյալ՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության աջակցությամբ և վերջինիս կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա (հոդված 5, մաս 5),

8.6. ապահովել, որԿատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բավարարեն պայմանագրի կողմ հանդիսացող Կատարի Պետության գործատուի պահանջները և կարիքները (հոդված 5, մաս 6),

8.7. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Կատարի Պետություն աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավական պաշտպանությունն ապահովելու համար՝ երկու երկրներում գործող համապատասխան օրենքների և ընթացակարգերի համաձայն (հոդված 5, մաս 7),

8.8. չօգտագործել Համաձայնագրով ձեռք բերված որևէ անձնական տվյալ Համաձայնագրի հետ անհամատեղելի նպատակներով, ինչպես նաև ձեռք բերված տվյալները չտրամադրել երրորդ կողմին, բացառությամբ այդ տվյալները տրամադրած կողմի նախնական գրավոր համաձայնությունն

ստանալուց հետո (հոդված 7),

8.9. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Կատարի Պետության իրավասու մարմինների հետ փոխհամաձայնեցված ընթացակարգով փոխանակեն տեղեկություններ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքների և ընթացակարգերի մասին (հոդված 12, մաս 2),

8.10. որպես ուղարկող Կողմ՝ կրել Համաձայնագրով նախատեսված պատվիրակությունների այցելությունների ծախսերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան դրույթների (հոդված 14):

9. Համաձայնագրի դրույթների կատարման համար իրավասու մարմիններն են.

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,

բ) Կատարի Պետության կառավարության կողմից՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարությունը:

10. Համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողով: Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները նշանակում են համատեղ համակարգող հանձնաժողովի երեք անդամի:

11. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը, նրանց մուտքը Կատարի Պետություն և այնտեղ աշխատանքային գործունեությունն իրականացվում են Կողմերի պետություններում գործող օրենքներին, կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն կարող են ուղեկցել նրա ընտանիքի անդամները՝ համաձայն Կատարի Պետության ազգային օրենսդրության:

12. Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու աշխատանքային պայմաններն ու ժամկետները՝ ներառյալ աշխատավարձի չափը, սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացու և գործատուի միջև Համաձայնագրին կից հավելվածով նախատեսված տիպային օրինակին համապատասխան կնքվող անհատական աշխատանքային պայմանագրով: Պայմանագիրը ներառում է Պայմանավորվող կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները՝ Համաձայնագրի

դրույթներին և Կատարի Պետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

13. Համաձայնագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողով: Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները նշանակում են համատեղ համակարգող հանձնաժողովի երեք անդամի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1777

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1777 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1777 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1777 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և

եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1777 որոշմամբ 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապա-

տասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից

ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական

դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում

հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«22» ապրիլի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործու-

նեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի փետրվարի 27-ի N 217-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» 1997 թվականի օգոստոսի 29-ի համաձայնագրով (այսուհետ՝ Հիմնադիր համաձայնագիր) ստեղծված Ռուս-Հայկական Համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գործունեության պայմաններն ամրագրելու նպատակով:

2. Համաձայնագրով Կողմերն ամրագրում են Հիմնադիր համաձայնագրով ստեղծված Համալսարանի գործունեության պայմանները:

Համալսարանը բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն է, որը համատեղ կառավարվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Համալսարանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական համալսարան և ունի հիմնադրամի կարգավիճակ:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ Համալսարանն օգտվում է Ռուսաստանի Դաշնությունում բարձրագույն կրթության

դաշնային պետական կրթական կազմակերպության կարգավիճակից:

Համալսարանի աշխատանքային լեզուներն են հայերենը և ռուսերենը: Համալսարանում գործավարությունն իրականացվում է ռուսերենով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում՝ հայերենով:

Հայերենն օգտագործվում է Համալսարանի և Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների ու կազմակերպությունների միջև նամակագրության համար:

3. Համաձայնագրով Կողմերի լիազորված մարմիններն են (այսուհետ՝ Լիազորված մարմիններ)՝ հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Հայկական Կողմից Լիազորված մարմին), ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (այսուհետ՝ Ռուսական Կողմից Լիազորված մարմին):

Լիազորված մարմինները հաստատում են Համալսարանի կանոնադրությունը, Կառավարման խորհրդի կանոնակարգը, Կառավարման խորհրդի կազմը, նշանակում են Կառավարման խորհրդի երկու համանախագահներին, ինչպես նաև համատեղ հրամանով հաստատում են Ռեկտորին պաշտոնում և համատեղ հրամանով՝ ազատում զբաղեցրած պաշտոնից:

4. Համաձայնագրի 13-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն՝ Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացվում է Կողմերի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Համալսարանի՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված խնդիրների իրականացման համար ֆինանսական ապահովումը հիմնվում է դրա նպատակային ուղղվածության և բազմաթիվ ֆինանսավորման աղբյուրների վրա և իրականացվում է Կողմերի կողմից՝ իրենց ազգային ռազմավարական փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրության դրույթները, ինչպես նաև Համալսարանի կողմից՝ եկամուտ ստեղծող գործունեության և ֆինանսավորման այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինը դիվանագիտական ուղիներով Ռուսական Կողմից Լիազորված մարմնին տեղեկացնի իր ներկայացուցիչների թեկնածությունների մասին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ փոփոխություններ կատարելու նպատակով (հոդված 6, պարբերություն 5),

5.2. Համալսարանում գիտական և մանկավարժական աշխատողներին ու ուսումնառուներին երաշխավորել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներ ու ազատություններ (հոդված 9),

5.3. հայոց և ռուսաց լեզուների տարածման ու Կողմերի պետությունների ընդհանուր մշակութային, կրթական և գիտական տարածքն ընդլայնելու նպատակով ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինն աջակցի Համալսարանին Կողմերի պետությունների կրթական և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման գործում (հոդված 11, պարբերություն 1),

5.4. ապահովել, որ Հայկական Կողմից Լիազորված մարմինը տեղեկացնի Համալսարանին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կրթության ու գիտության բնագավառում պետական ծրագրերին նրա մասնակցության հնարավորության մասին՝ նշված ծրագրերի իրագործմանն ուսումնառուներին, գիտական և մանկավարժական աշխատողներին ներգրավելու նպատակով (հոդված 11, պարբերություն 2),

5.5. Համալսարանի կողմից Համաձայնագրով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հողատարածքները տրամադրել Համալսարանին անհատույց օգտագործման՝ բացառապես Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար. ընդ որում՝ Համալսարանի ենթակառուցվածքի ընդլայնումը դիտարկվում է Կողմերի պետությունների կողմից իրականացվող ռազմավարական ծրագրերի շրջանակում (հոդված 12, պարբերություններ 3 և 4),

5.6. Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին (հոդված 13, պարբերություն 1),

5.7. ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Համալսարանի տարածքում անվտանգության ապահովման և իրավակարգի պահպանման համար (հոդված 15),

5.8. Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ միասին ապահովել Համալսարանի ուսանողների ուսման ավարտը, նշանակել լուծարքային հանձնաժողով, որը

կկազմի Համալսարանի գույքի լուծարքային հաշվեկշիռը (հոդված 18, պարբերություն 3):

6. Համաձայնագրի 18-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն՝ Համաձայնագիրը կնքվում է 10 տարի ժամկետով:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 10-ամյա ժամանակահատվածների համար, եթե Կողմերից ոչ մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցման միջոցով չհայտնի դրա գործողությունը դադարեցնելու վերաբերյալ իր մտադրության մասին ոչ ուշ, քան առաջին կամ հաջորդող ժամանակահատվածները լրանալուց 6 ամսից առաջ:

Համաձայնագրի համաձայն՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից իրենց գործողությունը դադարեցնում են Հիմնադիր համաձայնագրի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը և 2-13-րդ հոդվածները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1778

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1778 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1778 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1778 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը

կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1778 որոշմամբ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի

որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարա-

վորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին,

հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին

բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«22» ապրիլի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆՁԱՆՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում

փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի մարտի 6-ի N 247-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մարտի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2024 թվականի հոկտեմբերի 8-ին Մոսկվայում՝ Պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով: Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2016 թվականի նոյեմբերի 14-ին Ազգային ժողովի ԱԺՈ-254-Ն որոշմամբ (ՍԴՈ-1045)՝ վերապահումով:

2. Պայմանագրում՝ Արձանագրությամբ կատարվող փոփոխության նպատակն է Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) մասնակից պետությունների իրավասու մարմինների, ինչպես նաև անվտանգության և իրավակարգի ոլորտում գործող ԱՊՀ ոլորտային մարմինների միջև տեղեկատվական փոխանակման ամրապնդումը:

Արձանագրությամբ նախատեսված փոփոխությունները հնարավորություն են նախատեսում ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների համար՝ տեղեկատվական փոխհամագործակցության շրջանակներում կիրառել փաստաթղթի էլեկտրոնային պատճենը (թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճենը):

3. Արձանագրությունն ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության (վերապահումով), Հայաստանի Հանրապետության (վերապահումով), Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

4. Արձանագրությամբ՝ Պայմանագրում կատարվող փոփոխությունները հանգում են հետևյալին.

4.1. Պայմանագրի 1-ին հոդվածը լրացնել «ը» կետով, հետևյալ բովանդակությամբ՝

«ը) **փաստաթղթի էլեկտրոնային պատճեն (պատկեր)՝** թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցներով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճեն» (հոդված 1, մաս 1),

4.2. Պայմանագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) փաստաթղթի էլեկտրոնային պատճենի (պատկերի) տեսքով՝ գերատեսչական էլեկտրոնային փոստի ծառայությունների միջոցով՝ հետագայում ուղարկելով բնօրինակը (անհրաժեշտության դեպքում),» (հոդված 1, մաս 2):

5. Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանվում է, որ Սրձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո և ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

6. Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է վերապահումով, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ կմտնի և կկիրարկվի Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան, որով միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառում չի նախատեսվում:

7. Արձանագրության ժամանակավոր կիրառման կապակցությամբ վերապահում է կատարել նաև Ադրբեջանը՝ նշելով, որ Ադրբեջանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի սույն Արձանագրությունը դրա ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո:

8. Ըստ դիմումին կից ներկայացված Արտաքին գործերի նախարարության Արձանագրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի՝ 2024 թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել և այն ժամանակավորապես կիրառվում է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1779

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ««ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆՁԱՆՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԱՍԻՆ» 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1779 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1779 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1779 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը

կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1779 որոշմամբ 2024 թվականի հոկտեմբերի 8-ին քաղաք Մոսկվայում ստորագրված ««Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ

որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարա-

վորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական

դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ

հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«22» ապրիլի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 22 ապրիլի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Վահե Գրիգորյանի,
Հրայր Թովմասյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ Արթուր Ստեփանյանի (այսուհետ՝ Դիմող),
ներկայացուցիչ՝ փաստաբան Սիրանուշ Սահակյանի,
պատասխանող՝ Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող)
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված, ինչպես նաև գործում առկա այլ փաստաթղթերը, Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, վերլուծելով վիճարկվող և վերջիններիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Վարույթը Սահմանադրական դատարանում

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

2. Սահմանադրական օրենքի՝ *«Բարձրագույն դատական խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը»* վերտառությամբ 94-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին»:

3. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.03.2020 թ. ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ

կետին համապատասխան՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ:

4. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 09.02.2022 թ. ՀՕ-22-Ն սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:

5. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը փոփոխվել է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2023 թ. ՀՕ-335-Ն սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Նշված սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ «4. Սույն օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի 13-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 141-րդ հոդվածի 1.5-րդ մասի հիման վրա ընդունված Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

5. Մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթների, այդ թվում՝ ավարտված կարգապահական վարույթների, և այդ վարույթների արդյունքով կայացված որոշումների նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելը գործող կարգավորումները»:

6. Գործի քննության առիթը Ա. Ստեփանյանի՝ 2025 թվականի հունվարի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

7. Սահմանադրական դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 5-ի ՍԴԱՈ-16 աշխատակարգային որոշման 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ «Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 152-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության:

8. Սահմանադրական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴԱՈ-55 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 152-րդ հոդվածի 1-ին մասի մասերով, կարճվել է:

Սահմանադրական վեճի համառոտ նախապատմությունը

Սույն գործի նախապատմությունը հանգում է հետևյալին.

9. Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Արդարադատության նախարարին 2023 թվականի դեկտեմբերի 22-ին հասցեագրված և Արդարադատության նախարարությունում 2023 թվականի դեկտեմբերի 26-ին ստացված «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգողի հաղորդումը: Ի լրումն հաղորդման՝ հաղորդում ներկայացնողի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 29-ի գրությամբ (Արդարադատության նախարարությունում այն ստացվել է 03.01.2024 թ.) ներկայացվել են համապատասխան փաստաբանի դիմումները՝ ուղղված Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանին:

10. Արդարադատության նախարարի՝ 2024 թվականի փետրվարի 13-ի թիվ 18-Ա որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանի (այսուհետ նաև՝ դատավոր) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 33-Ա որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի ժամկետը երկարաձգվել է:

11. Արդարադատության նախարարի՝ 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 48-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

12. Խորհրդի՝ 2024 թվականի հունիսի 11-ի որոշմամբ նշանակվել է դատական նիստ: 2024 թվականի հունիսի 17-ին կայացած նիստում գործի քննությունն ավարտվել է:

13. 2024 թվականի հուլիսի 9-ին հրապարակվել է Խորհրդի թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշման եզրափակիչ մասը, որով Խորհուրդը որոշել է. «Արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:

(…)»:

14. Նշված որոշումը հրապարակվել է 2024 թվականի հուլիսի 30-ին:

Դիմողի դիրքորոշումը

15. Դիմողը բարձրացրել է Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով նշված դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումն ընդունվում է առանց հաշվարկելու դատական նիստին մասնակցած խորհրդի անդամների ձայները:

Այդ առնչությամբ Դիմողը, մասնավորապես, նշում է. «(…) 2024 թվականի հունիսի 17-ին կայացած նիստին մասնակցել են ԲԴԽ բոլոր 10 անդամները (…): Սակայն, դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման քվեարկության ընթացքում հաշվի են առնվել միայն 8 անդամների ձայները: Ավելին՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման բովանդակությունից հետևում է, որ ԲԴԽ-ն այդ որոշումը կայացրել է ամբողջական կազմով, ԲԴԽ բոլոր 10 անդամների մասնակցությամբ:

(…) Թեև դատական նիստին մասնակցել են տասը անդամները, օգտվելով դատավորին վերապահված բոլոր իրավունքներից, այդ թվում՝ հարցեր տալու, ինչը կարող էր ազդել նրանց դիրքորոշումների ձևավորման վրա, ձայների հաշվարկի հիմքում դրվել է 8-ը: Բացի այդ, ԲԴԽ-ն քվեարկությանը նիստին մասնակցած բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու հնարավորություն ունենալով, չի ստեղծել նման պայման, իսկ ձայների հաշվարկի նպատակով անտեսել է դատական նիստին մասնակցած 2 դատավորներին, ինչը խախտում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասն ու 63-րդ հոդվածի 1-ին մասը՝ հաշվի առնելով ԲԴԽ-ի կողմից նշված դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Որպիսի պայմաններում դատավորի լիազորությունները դադարեցվել են ոչ թե պահանջվող՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, որն առնվազն 6 ձայն է, այլ՝ 5 կողմ ձայնով»:

Պատասխանողի դիրքորոշումը

16. Դիմողի կողմից վիճարկվող՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանության ենթադրյալ հակասահմանադրականութան հարցի առնչությամբ, որի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու Խորհրդի որոշումն ընդունվում է՝ առանց հաշվի առնելու դատական նիստին մասնակցած խորհրդի անդամների ձայները՝ Պատասխանողը նշում է. «Ակնհայտ է, որ կոլեգիալ մարմիններում որոշումների կայացման համար միաձայնության պահանջն անխուսափելիորեն հանգեցնելու է որոշումների կայացման անհնարինության և տվյալ մարմնի գործունեության համար անհաղթահարելի խոչընդոտների: Բարձրագույն դատական խորհրդի պարագայում օրենսդիրը, դատավորին կարգա-

պահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման կայացման համար նախատեսելով նիստին մասնակցող խորհրդի անդամների մեծամասնության, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների առնվազն կեսի ձայնի առկայություն, գտել է, որ նշված քանակությամբ ձայների առկայությունը բավարար է Խորհրդի կողմից լեգիտիմ որոշում կայացնելու համար: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը որևէ պարագայում տարբերակված մոտեցում չի ցուցաբերում կոլեգիալ մարմինների որոշումների միջև կախված այն հանգամանքից, թե տվյալ մարմնի քանի անդամներն են կողմ եղել որոշման կայացմանը: Այսինքն, առավելագույն ձայների առկայությամբ կայացված որոշումն իրավական առումով ունի նույն լեգիտիմությունն ու իրավաբանական ուժն ինչ նվազագույն պահանջվող ձայների քանակությամբ կայացված որոշումը»:

Պատասխանողը խնդրել է սույն գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Սահմանադրական վեճի քննության շրջանակը

17. Հաշվի առնելով, որ *Դիմողի կողմից ներկայացված փաստարկները վերաբերում են Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի միայն առաջին նախադասության՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների մասով՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, սահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանը սույն սահմանադրական վեճի քննության շրջանակում չի անդրադառնում Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության սահմանադրականության հարցին, քանզի սույն անհատական դիմումի շրջանակում վերջինիս որևէ անդրադարձ կատարված չէ:*

18. Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված է Խորհրդի՝ որպես դատարան լիազորություններն իրականացնելիս որոշումների ընդունման համար անհրաժեշտ ձայներ սահմանող ընթացակարգը, իսկ *սույն գործի անհատական հանգամանքները/փաստերը, ըստ այդմ՝ սույն անհատական դիմումով վիճարկվող դրույթի առնչությամբ ներկայացված հիմնավորումները վերաբերում են միայն կարգապահական վարույթի շրջանակում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունմանը՝ դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ, Սահմանադրական դատարանն Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասության սահմանադրականության հարցին կանդրադառնա միայն Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգա-*

պահական փույժի կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների վերաբերյալ հարցի համատեքստում:

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները.

19. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե:*

Նշված սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի (որոշումն ընդունվում է նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ), այսինքն՝ հինգ կողմ ձայներով, համապատասխանու՞մ է արդյոք Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

20. Սահմանադրության՝ «Հանրային ծառայության անցնելու իրավունքը» վերտառությամբ 49-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:

21. Սահմանադրական դատարանը 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ անդրադարձել է Սահմանադրության 49-րդ հոդվածի առաջին նախադասությամբ ամրագրված՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանադրաիրավական բովան-

դակությանը՝ այդ առնչությամբ արտահայտելով, մասնավորապես, ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

«(...) ընդհանուր հիմունքներով *հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը,* որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:

Դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է *դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին,* առկա է լրացուցիչ՝ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող *անփոփոխելիության սահմանադրական երաշխիք,* որի ապահովման մանրամասները պետք է սահմանվեն բացառապես սահմանադրական օրենքով՝ Դատական օրենսգրքով (...)»:

22. Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման մեջ նշված է.

«1) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի, ընդհանուր հիմունքներով անցնելով հանրային ծառայության, ունի նաև *պաշտոնավարման և կամայական հիմքերով պաշտոնից չազատվելու իրավունք,*

2) *դատավորի պաշտոնն զբաղեցնող քաղաքացին,* ի լրումն պաշտոնավարման ընդհանուր իրավունքի, *ձեռք է բերում հատուկ երաշխիք*՝ պաշտոնավարման հաջորդայնությունը երաշխավորող *անփոփոխելիության* տեսքով,

3) *դատավորի պաշտոնից քաղաքացին կարող է հեռանալ կամ հեռացվել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով, Սահմանադրությամբ կանխորոշված կարգով*՝ սահմանադրական օրենքով ամրագրված հատուկ ընթացակարգի գործադրմամբ,

4) դատավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման՝ Սահմանադրությամբ ամրագրված այն հիմքերի մեկնաբանության ժամանակ, որոնք ենթակա են կոնկրետացման սահմանադրական օրենքում, օրենսդիրը պետք է դրսևորի զսպվածություն և օրենսդրական կարգավորումների միջոցով չնենգափոխի Սահմանադրության համակարգային տրամաբանությունը, այն է՝ անհարկի չընդլայնի այդ հիմքերի կիրառման օրենսդրական հնարավորությունը, թույլ չտա դրանց կամայական մեկնաբանություն, երաշխավորի դրանց կիրառման ժամանակ արդարության բոլոր պահանջների պահպանումը, այդ թվում՝ պատշաճ ընթացակարգային երաշխիքներ դատավորի լիազորությունները դադարեցնելու ժամանակ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բոլոր դեպքերում, *երբ դադարեցվում են դատավորի լիազորությունները, դա վերաբերում է ոչ միայն դատավորի կարգավիճակին, այլ նաև նրա՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին. նա զրկվում է հետագա պաշտոնավարման իր իրավունքից,* ուստի նրա այդ իրավունքը սահմանափակվում է» (կետ 4.1):

23. Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատավորի նկատմամբ կիրառվում է «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժը՝ ի հաշիվ վերջինիս իրավասահմանափակիչ ներուժի խիստ ինտենսիվ բնույթի, սահմանափակվում է նրա՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը: Այլ կերպ՝ *կարգապահական տույժերի տեսակներից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» տույժի կիրառման հետևանքային ազդեցության շրջանակի մեջ ներառվում է նաև հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանափակումը. հետևաբար՝ անհրաժեշտ է, որ նշված կարգապահական տույժի կիրառումը յուրաքանչյուր դեպքում ուղեկցվի ինչպես նյութահրավական, այնպես էլ ընթացակարգային այնպիսի երաշխիքներով, որոնց առկայությունը կբացառի վերոնշյալ սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման հնարավորությունը:*

24. *Նշվածը,* ի թիվս այլնի, *վերաբերում է նաև Խորհրդի կողմից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի տեսակի ընտրությամբ և կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ ընդունելու այնպիսի արդյունավետ ընթացակարգի առկայությանը, որի պայմաններում, մի կողմից, դատավորի լիազորությունների դադարեցումը չի հանգեցնի հանրային ծառայության անցնելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, մյուս կողմից՝ համապատասխան որոշումը կմարմնավորի Խորհրդի՝ որպես կոլեգիալ մարմնի կարգապահական վարույթի արդյունքում ձևավորած դիրքորոշումը:*

25. Սահմանադրությամբ ամրագրված են մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական համարժեք երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

Սահմանադրության՝ *«Դատավորի կարգավիճակը»* վերտառությամբ 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է (...)»: Վերոնշյալի համատեքստում Խորհրդի կողմից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում ընդունելու այնպիսի ընթացակարգը, որի պայմաններում դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու

վերաբերյալ Խորհրդի որոշումը կարող է ընդունվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կողմ ձայներով, լրջորեն վտանգում է դատավորի անկախության սկզբունքը, քանզի տեղի է ունենում ոչ իրավաչափ միջամտություն դատավորի հետագա պաշտոնավարմանը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ սույն գործին վերոնշյալի համատեքստում վերաբերելի է Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշման մեջ արտացոլված արձանագրումն առ այն, որ «(…) դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ կանոնակարգումներում սահմանված պաշտպանական լրացուցիչ երաշխիքները դատավորին տրամադրված ոչ թե արտոնություն է, այլ (…) նրանց անկախության ինստիտուցիոնալ երաշխիք» (կետ 4.2.1):

26. Սահմանադրության՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը»* վերտառությամբ 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

27. Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի ՍԴՈ-1757 որոշման մեջ արձանագրված է. «Նշված պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ ու իրական կենսագործմանը, քանզի իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար. ուստի՝ **համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական մակարդակում ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու համար»** (կետ 5.1):

28. Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է. «(…) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) *արդյունավետ իրականացման համար* (2) *անհրաժեշտ* (3) *կազմակերպական* (4) *կառուցակարգեր* և (5) *ընթացակարգեր:* Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը» (կետ 4.5):

29. Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշմամբ արձանագրված է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները» (կետ 4.1):

30. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունման՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված ընթացակարգը պետք է համահունչ լինի Սահմանադրության 75-րդ հոդվածին՝ չվտանգելով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի արդյունավետ իրացումը:

31. Սահմանադրության՝ Խորհրդի լիազորություններն ամրագրող 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

32. Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու*, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված այլ դեպքերում *Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:* Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ նշված է. «Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է (...) այն իմաստով, որ որպես դատարան հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին» (կետ 4.8):

Սահմանադրության նշված դրույթին համապատասխան՝ Օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասով որոշակիացված է *հարցերի այն շրջանակը (դատավորին և Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն*

փալու վերաբերյալ), որոնք քննելիս Խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

33. Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 6-8-րդ կետերում թվարկված լիազորությունները Խորհրդի՝ Սահմանադրության 173-րդ հոդվածով ամրագրված առաքելության էական բաղադրիչներն են, որոնք բովանդակում են առանցքային հանրային շահեր և ուղղակիորեն առնչվում են ինչպես դատարանների և դատավորների անկախության երաշխավորմանը, այնպես էլ դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

34. Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալիս որոշումների ընդունման ընթացակարգն ամրագրված է Օրենսգրքի՝ «Բարձրագույն դատական խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը» վերտառությամբ 94-րդ հոդվածի 6-րդ մասով, որի առաջին նախադասությամբ սահմանված է, որ, ի թիվս այլ հարցերի, դատավորին և Խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:

35. *Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ օրինադրույթով սահմանված ընթացակարգի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումը կարող է ընդունվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով:*

36. Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցող դատավորի 24.02.2025 թ. ՍԴԴ-14 և 26.02.2025 թ. ՍԴԴ-15 գրություններին ի պատասխան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ստորագրությամբ ստացվել է 07.03.2025 թ. թիվ ԴԴ-1 Ե-1777 գրությունը (Խորհրդի նախագահի հանձնարարությամբ), որի համաձայն՝ «(...) դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ (այսուհետ՝ Վարույթ) 17.06.2024թ. կայացած նիստին մասնակցել են Խորհրդի բոլոր տասն անդամները: Նշված օրը կայացած նիստում հարցի քննությունը հայտարարվել է ավարտված և Խորհուրդը հեռացել է որոշում կայացնելու: Վարույթով Խորհրդի թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշման եզրափակիչ մասը հրապարակվել է 09.07.2024թ. (...):

(...) մինչև Վարույթով Խորհրդի կողմից որոշման ընդունումը՝ Խորհրդի նախագահի 19.06.2024թ. թիվ 72-Ա հրամանի համաձայն՝ Խորհրդի անդամ (...)ը 24.06.2024-28.06.2024թթ. ներառյալ գտնվել է գործուղման մեջ, իսկ Վճռաբեկ դատարանի նախագահի 13.06.2024թ. թիվ 48-Ա հրամանի համաձայն՝ 01.07.2024-26.07.2024թթ. ներառյալ՝ ամենամյա հերթական

արձակուրդում: Բացի այդ, օրենքի ուժով (...) **21.06.2024 թվականին** դադարել է (...)ի որպես Խորհրդի անդամ պաշտոնավարելու հնգամյա ժամկետը (...):

(...)

(...) **Վարույթով որոշման ընդունման համար Խորհրդի նիստը կայացել է 09.07.2024թ., որին մասնակցել են Խորհրդի տասն անդամներից ութը** (...)**, որոնցից հինգը՝ կողմ է քվեարկել որոշման ընդունմանը և ստորագրել այն, իսկ երեքը՝ ներկայացրել են հատուկ կարծիք, այսինքն՝ փաստացի պահանջվել է Խորհրդի անդամների առնվազն հինգ ձայն: Արդյունքում՝ Խորհրդի 09.07.2024թ. թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշումը ստորագրվել է տվյալ նիստին մասնակից և կողմ քվեարկած հինգ անդամների կողմից:**

(...) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-22-Ն սահմանադրական օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ 25.02.2022թ. մինչ օրս Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի (5) կողմ ձայնով էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունները դադարեցվելու մասին կայացվել է ընդհանուր թվով 1 որոշում, այն է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Խորհրդի 09.07.2024 թվականի թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշումը»:

37. Քննարկվող հարցի համատեքստում *Սահմանադրական դատարանը նկատում է, որ* Օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու դեպքերում Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝* խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ:

38. Հաշվի առնելով վերոնշյալը՝ *Սահմանադրական դատարանը փաստում է, որ* Օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասով և 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորումների գործողության պայմաններում *Խորհրդի՝ համապատասխանաբար՝ դատարանակազմական լիազորություններ իրականացնելիս որոշումների ընդունման համար պահանջվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, իսկ Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալով լիազորություններն իրականացնելիս որոշումների ընդունման համար՝ նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությունը (որպես դատարան հանդես գալու դեպքում Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին (Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ*

*մաս)), **եթե որոշմանը կողմ է քվեարկել Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը**:*

39. Հաշվի առնելով քննարկման առարկա իրավահարաբերությունների կարևորությունն ու խնդրո առարկա շահերի խոցելիությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ հանրային արձագանքի զգայունությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է իրականացվեն դատական վարույթներին առաջադրվող սահմանադրաիրավական և դատավարական սկզբունքների խստիվ պահպանմամբ, այդ թվում՝ *համապատասխան որոշումների ընդունման ընթացակարգի առնչությամբ, իսկ այդ որոշումների ընդունման ընթացակարգերն ամրագրող իրավակարգավորումները չպետք է լինեն խնդրահարույց՝ անձի, առավել ևս՝ դատավորի կարգավիճակ ունեցող անձի, անհատական իրավունք(ներ)ին միջամտության առումով: Նշվածն առանձնակի կարևորություն է ձեռք բերում կարգապահական վարույթի արդյունքներով «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ, ինչը ենթադրում է ամենաինտենսիվ միջամտություն անձի անհատական իրավունք(ներ)ին, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունման պայմաններում:*

40. Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

41. Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Խորհուրդը կազմված է տասն անդամից:**

Սահմանադրության նշված հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության համապատասխան՝ **Խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝** համապատասխան պահանջը բավարարող **դատավորների կազմից:** Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ **Խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը**՝ համապատասխան պահանջները բավարարող **իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից. Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:**

42. *Խորհրդի կազմի առումով սահմանադրական մակարդակում ամրագրում սպացած վերոնշյալ համամասնականությունը խթանում է Խորհրդի ժողովրդավարական լեգիտիմությունը՝ հաշվի առնելով, որ Խորհրդի կազմը համալրվում է ինչպես դատական, այնպես էլ օրենսդիր իշխանության ճյուղերի կողմից՝ միաժամանակ, լեգիտիմության բարձր որակ (աստիճան) հաղորդելով Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալիս, այդ թվում՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը*

լուծելու սահմանադրական լիազորությունն իրականացնելիս համապատասխան գործընթացին և դրա արդյունքում ընդունվող որոշումներին:

43. *Հաշվի առնելով Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու իր սահմանադրական բացառիկ լիազորության իրականացման շրջանակում «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի (վերջինիս ընտրությունն ու կիրառումը Խորհրդի, ըստ էության, օրենսդրական մենաշնորհն է) կիրառմամբ դատավորի լիազորությունները դադարեցնելու հետևանքային ազդեցությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը պետք է նախատեսի այնպիսի կարգավորում, որը, մի կողմից՝ կբացառի Խորհրդի նշված լիազորության իրականացման շրջանակում Օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կարգապահական տույժերի տեսակներից մեկի, առավել ևս՝ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունման հնարավորությունը՝ բացառապես հինգ դատավորի կամ բացառապես հինգ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների կողմ ձայներով, մյուս կողմից՝ կերաշխավորի վերոնշյալ որոշման ընդունումը Խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ, այսինքն՝ առնվազն վեց կողմ ձայներով, քանզի Խորհուրդը, Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կազմված է տասն անդամից: Մինչդեռ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված կարգավորման գործողության ուժով դատավորը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել, արդյունքում՝ նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով կարող են դադարեցվել Խորհրդի համապատասխան որոշմանը Խորհրդի հինգ անդամի կողմ քվեարկելու դեպքում: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Խորհրդի՝ տասն անդամից կազմված լինելու վերաբերյալ սահմանադրական դրույթի գործողության պայմաններում Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունում գործածված «խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը» ձևակերպումը չի տեղավորվում «մեծամասնություն» եզրույթի ներքո: Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը վերաբերում է **Խորհրդի՝ որպես դատարան հանդես գալիս** լիազորությունների իրականացմամբ որոշումների ընդունմանը, ինչն ավելի է ընդգծում վերոնշյալ օրենսդրական կարգավորման՝ սահմանադրականության առումով խնդրահարույց լինելը՝ առավել ևս այն պայմաններում, երբ Խորհրդի՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ դա-*

փարանակազմական լիազորություններ իրականացնելիս որոշումների ընդունման համար պահանջվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

44. Սահմանադրական դատարանը վերոնշյալի առնչությամբ նկատում է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումների համաձայն՝ «Վենետիկի հանձնաժողովը խրախուսում է դատական ինքնակառավարման մարմնում դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարակշռման ապահովումը՝ կորպորատիվ կառավարման ռիսկերից խուսափելու համար: Եվրոպայի խորհրդի թիվ (2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատավորների խորհրդի անդամների առնվազն կեսը պետք է լինեն դատավորներ, որոնք ընտրվում են իրենց գործընկեր դատավորների կողմից՝ դատական իշխանության բոլոր ատյաններից՝ ապահովելով դատական համակարգի ներսում բազմակարծությունը:

(…) Վենետիկի հանձնաժողովի կարծիքներում առավել ողջունվում է ոչ դատավոր անդամների նշանակումը խորհրդարանի կողմից:

(…)

Բարձրագույն դատական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացման առումով խիստ կարևոր քայլ է նաև նախագծով դատավոր և ոչ դատավոր անդամների միջև պարիտետի հաստատումը: Համաձայն նախագծի՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամներից, որոնցից հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ (…), հինգին՝ դատավորների ընդհանուր ժողովը (…): Դրանով դատական իշխանության առանցքային մարմնի ձևավորման ժամանակ էապես կարևորվում է լայն քաղաքական համաձայնությունը խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի միջև (…)» («**2. Դատական իշխանության ինքնուրույնության և ինքնակառավարման բարձրացումը**», էջ 42):

45. Սահմանադրական դատարանը նկատում է, որ Օրենսգրքի՝ ընդունման պահին գործող խմբագրությամբ 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ»:

46. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

25.03.2020 թ. ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ «6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: (...)»:

47. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 09.02.2022 թ. ՀՕ-22-Ն սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:

48. Քննարկվող հարցի առնչությամբ առանցքային նշանակություն ունի Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշմամբ (համապատասխան դիմումով վիճարկվում էր նաև Օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը) արտահայտված այն դիրքորոշումը, որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը նկատում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի թեկնածուի հավակնորդին համապատասխան ցուցակ ներառելու մասին կայացվող որոշումներն այս ատյանի ձևավորման վերը նշված նպատակին համահունչ կայացնելու համար օրենսդրի կողմից իրավացիորեն ընտրվել է որոշումների կայացման ձայների այնպիսի քանակ, որն ապահովի պետական իշխանության երկու ճյուղերից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համաձայնությունը, ինչը, տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն է՝ առնվազն 6 ձայն: Սա բխում է դատական իշխանության ձևավորման՝ ներառյալ դատավորներ նշանակելու ընթացակարգի բաղադրիչ համարվող մասերին վերաբերող որոշումներին առաջադրվող ժողովրդավարական լեգիտիմության պահանջից:

(...) Հաշվի առնելով, որ վիճարկվող իրավադրույթներով կայացվող որոշումները դասվում են դատական իշխանության դատարանակազմական կարևոր գործառույթի առանցքային որոշումների շարքին, Սահմանադրական դատարանն արդարացված է համարում նման որոշումները Բարձրագույն դատական խորհրդի առնվազն 6 անդամների «կողմ» ձայներով ընդունելու

մասին օրենսդրի ընտրությունը: Տվյալ դեպքում նման իրավակարգավորման նպատակը դատական իշխանության ձևավորման ընթացքում դատավորի պաշտոնի համար այնպիսի թեկնածուի ընտրությունն է, որն արժանացել է Բարձրագույն դատական խորհրդի անդամներից առնվազն վեցի հավանությանը, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի այնքան անդամների համաձայնությամբ, որը բացառում է միայն դատավորների ընդհանուր ժողովի կամ միայն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից որոշումների կայացումը՝ ապահովելով, որ դատավորի նշանակման այս առանցքային ընթացակարգում ապահովվի որոշումների կայացումը պետական իշխանության երկու ճյուղերի կողմից ընտրված անդամների համաձայնությամբ:

Հետևաբար՝ վիճարկվող իրավադրույթները բխում են Բարձրագույն դատական խորհրդի ստեղծման և գործունեության հիմքում ընկած սահմանադրի նպատակներից» (կետ 4.8):

49. Սահմանադրական դատարանը գտնում է, որ *Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման 48-րդ կետում մեջբերված դիրքորոշումները (mutatis mutandis) վերաբերելի են նաև Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի որոշման ընդունման համար ընթացակարգի արդյունավետությանը:*

50. Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված այն կարգավորումը, որին համապատասխան՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի որոշման ընդունման համար սահմանված է ձայների այնպիսի շեմ, ինչպիսին է Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ համապատասխան որոշման՝ Խորհրդի անդամների հինգ կողմ ձայներով ընդունման պայմաններում, հանգեցնում է Խորհրդի որոշման ժողովրդավարական լեգիտիմության բարձր գործակից չապահովելու առումով անձի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, հետևաբար՝ համահունչ չէ Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, ինչպես նաև 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին:

51. Նման պայմաններում Սահմանադրական դատարանն այլևս անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված համապատասխան կարգավորմանն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հարցին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով, ճանաչել Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին հակասող:

2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին, 19-րդ մասին և 69-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով՝ դրանում նշված օրենսդրական կարգավորման մասով, Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 1-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին այն համապատասխանեցնելու սույն որոշմանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

22 ապրիլի 2025 թվականի
ՍԴՈ-1780

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1780 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սահմանադրական դատարանը 2025 թվականի փետրվարի 5-ի ՍԴԱՈ-16 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) կողմից լիազորությունները դադարեցված դատավոր Արթուր Ստեփանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ ԴՕ) 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի և դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 152-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության 61, 63 և 79-րդ հոդվածներին համապատասխանությունն ստուգելու նպատակով:

2. Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴԱՈ-55 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 152-րդ հոդվածի 1-ին մասի՝ սահմանադրականությունը որոշելու մասով, կարճվել է:

3. Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի ապրիլի 22-ին կայացրել է ՍԴՈ-1780 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որի եզրափակիչ մասում նշված է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա

լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի, այսինքն՝ հինգ կողմ ձայներով, ճանաչել Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին հակասող:

2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին, 19-րդ մասին և 69-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով՝ դրանում նշված օրենսդրական կարգավորման մասով, Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 1-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին այն համապատասխանեցնելու սույն որոշմանը:

(…)»:

4. Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-1780 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ս. Սաֆարյանս ներկայացնում եմ հատուկ կարծիք Որոշման եզրափակիչ մասի և դրա հիմքում դրված պատճառաբանությունների վերաբերյալ:

5. Ստորև առանձին կետերով ներկայացված են Դատավորի նկատառումները դիմումի ընդունելիության (կարճման հիմքերի), գործը դատաքննության նախապատրաստելիս արձանագրված ընթացակարգային հակասությունների և Որոշման պատճառաբանական մասի բովանդակային խնդիրների վերաբերյալ:

6. **Գործի դատավարական նախապատմության կարևոր շեշտադրումները, որոնք ներառվել են նաև թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 գործով կայացված Որոշման մեջ:**

6.1. ԲԴԽ 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-25 և 2023 թվականի փետրվարի 27-ի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-7 որոշումներով Դիմողին հայտարարվել է երկու նկատողություն, և Արդարադատության նախարարի կողմից ԲԴԽ-ին Դիմողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նոր միջնորդություն ներկայացնելու դրությամբ Դիմողն ունեցել է չմարված կարգապահական տույժեր:

6.2. ԲԴԽ-ն արձանագրել է, որ Դիմողը՝ որպես դատավոր, 79 քաղաքացիական գործերով իր գործողություններում զերծ չի մնացել դատական

իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, որը դիտվել է դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի էական կարգապահական խախտում, և կայացվել է Դատավորի լիազորությունները կասեցնելու մասին որոշում:

6.3. Կարգապահական վարույթի հիմք է հանդիսացել Արդարադատության նախարարի՝ 2024 թվականի մայիսի 23-ի թիվ 48-Ա որոշմամբ հաստատված միջնորդությունը՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ

6.4. 2024 թվականի հունիսի 17-ին կայացած նիստում գործի քննությունն ավարտվել է, և ԲԴԽ-ն անցել է խորհրդակցական սենյակ: Դատական նիստին մասնակցել են ԲԴԽ տասն անդամներ, իսկ Դիմողի՝ որպես դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ թիվ ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշմանը կողմ են քվեարկել ԲԴԽ հինգ անդամներ՝ Ա. Դանիելյանը, Կ. Թումանյանը, Ե. Թումանյանցը, Հ. Գրիգորյանը, Կ. Անդրեասյանը, երեք անդամներ՝ Ա. Աթաբեկյանը, Էդ. Հովհաննիսյանը, Մ. Համբարձումյանը հայտնել են հատուկ կարծիք, իսկ մյուս երկու դատավոր անդամներից Ք. Մկոյանը գտնվել է գործուղման մեջ և քվեարկությանը չի մասնակցել, Վ. Քոչարյանի լիազորությունները դադարել են:

6.5. Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի «Խնդրանք և փաստարկներ» բաժնի 4-րդ կետում խնդրել է ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, համաձայն որի՝ դատավորի լիազորությունները դադարացնելու ԲԴԽ որոշումն ընդունվում է՝ առանց հաշվարկելու դատական նիստին մասնակցած [ԲԴԽ] անդամների ձայները:

7. Գտնում եմ, որ Դիմողի՝ ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասով իրականացվող վարույթը ևս ենթակա էր կարճման՝ նույն հիմնավորմամբ, ինչ հիմնավորմամբ. կարճվել է դիմումում բարձրացված մյուս նորմերի սահմանադրականության ստուգման վարույթը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

8. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ ՍԴՕ) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:

9. ՍԴՕ-ի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

10. Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ սահմանված են դիմումի ընդունելիության օրենսդրական չափանիշների իրավական առանձնահատկությունները, որոնք դիմողը պետք է հաշվի առնի Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելիս: Ի շարս այլ չափանիշների՝ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև դիմումի առարկայի վերաբերելիությանը Սահմանադրական դատարանի իրավասությանը և այդ համատեքստում՝ նաև դիմումի առերևույթ հիմնավորվածությանը: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ «դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաև այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

11. Ըստ այդմ՝ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատման հարցեր:

12. Տվյալ պարագայում Դիմողի կողմից ներկայացվել են ԲԴԽ-ի կողմից իր կարգապահական գործով որոշման ընդունման ընթացակարգի ենթադրյալ խախտմանն առնչվող փաստական հանգամանքներ, դրանց տրվել է իրավական որակում, և ըստ էության որպես օրենքի խախտումը վերացնելու կառուցակարգ՝ «չորրորդ ատյան», դիմում է ներկայացվել Սահմանադրական դատարան՝ փորձելով ԲԴԽ որոշման իրավաչափության վիճարկումը քողարկել դիմումի ընդունելիության ֆորմալ պահանջների երևութական պահպանմամբ: Մասնավորապես՝ դիմումի փաստական հիմքի էությունը նկարագրվել է հետևյալ կերպ. «(…) 2024 թվականի հունիսի 17-ին կայացած նիստին մասնակցել են ԲԴԽ բոլոր 10 անդամները (…): Սակայն, դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման քվեարկության ընթացքում հաշվի են առնվել միայն 8 անդամների ձայները: Ավելին՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման բովանդակությունից հետևում է, որ ԲԴԽ-ն այդ որոշումը կայացրել է ամբողջական կազմով, ԲԴԽ բոլոր 10 անդամների մասնակցությամբ:

(...) Թեև դատական նիստին մասնակցել են տասը անդամները, օգտվելով դատավորին վերապահված բոլոր իրավունքներից, այդ թվում՝ հարցեր տալու, ինչը կարող էր ազդել նրանց դիրքորոշումների ձևավորման վրա, ձայների հաշվարկի հիմքում դրվել է 8-ը: Բացի այդ, ԲԴԽ-ն քվեարկությանը նիստին մասնակցած բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու հնարավորություն ունենալով, չի ստեղծել նման պայման, իսկ ձայների հաշվարկի նպատակով անտեսել է դատական նիստին մասնակցած 2 դատավորներին, ինչը խախտում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասը՝ հաշվի առնելով ԲԴԽ-ի կողմից նշված դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Որպիսի պայմաններում դատավորի լիազորությունները դադարեցվել են ոչ թե պահանջվող՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, որն առնվազն 6 ձայն է, այլ՝ 5 կողմ ձայնով»:

13. Մեջբերված նյութից ակնհայտ է դառնում, որ Դիմողի կողմից Սահմանադրական դատարանի քննությանն են ներկայացվել իր նկատմամբ ԲԴԽ որոշման իրավաչափությունը վիճարկող հանգամանքներ, որոնք, անգամ եթե պարունակեին իրավական խնդիրներ, օրինադրույթի և (կամ) դրա կիրառման պրակտիկայի սահմանադրականությանը վերաբերելի լինել չեն կարող:

14. Դիմումի շարադրանքի ընդհանուր դատողությունն այն է, որ Դիմողը փաստացի գտնում է, որ ԲԴԽ որոշումն ընդունվել է ԴՕ-ի պահանջների **խախտմամբ,** որը, ըստ Դիմողի, դրսևորվել է ԲԴԽ-ի՝ խորհրդակցական սենյակում ներկա անդամների թվի սխալ հաշվարկով:

15. Այս կապակցությամբ հարկ եմ համարում ընդգծել, որ օրինադրույթի կամ վերջինիս կիրառման պրակտիկայի սահմանադրականության վիճարկման համար անհրաժեշտ է, որ Դիմողը հստակորեն և որոշակիորեն մատնանշի սահմանադրաիրավական վեճը, այն է՝ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարցը: Վերջինս պետք է բխի իրավակիրառի կողմից համապատասխան իրավադրույթին տրված մեկնաբանության՝ սահմանադրական առումով վիճարկելիությունից, որը չի կարող արձանագրված համարվել լոկ Դիմողի կողմից համապատասխան իրավանորմի խախտման վկայակոչմամբ: Իրավախախտումը ոչ թե իրավանորմի վիճարկելի մեկնաբանությունն ու կիրառումն է, այլ իրավանորմի պահանջի կամայական չկատարումը կամ պահանջից կամայական շեղումը, որն առերևույթ անգամ չի կարող դիտարկվել որպես սահմանադրաիրավական քննության արժանի հարց (սահմանադրաիրավական վեճ):

16. Հետևապես՝ դատական ակտի (ԲԴԽ որոշման) իրավաչափության վիճարկումը հիմքում ունի ոչ թե իրավանորմի կամ դրա մեկնաբանության (կիրառման) սահմանադրականության վերաբերյալ լեգիտիմ վեճ, այլ դատական ակտի (ԲԴԽ որոշման) ենթադրյալ անօրինականությունը, որի քննությունը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից: Նշյալին հակառակ մեկնաբանությունը

կձևախեղի Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված կարգավիճակը՝ վերջինիս հաղորդելով «չորրորդ ատյանի» կամ «փաստի դատարանի» հատկանիշներ:

17. Վերոնշյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ նախ՝ լիազորությունները դադարեցված դատավոր Արթուր Ստեփանյանի դիմումով ի սկզբանե գործի քննությունը ենթակա էր մերժման, իսկ գործը քննության ընդունվելու պայմաններում այն պետք է կարճվեր՝ ՍԴՕ-ի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան:

18. **Որոշմամբ դիմումի առարկան փոփոխվել է. Սահմանադրական դատարանի կողմից ինքնուրույնաբար բարձրացվել է հարց, և տրվել պատասխան, ինչը թույլ է տալիս եզրահանգել, որ դատարանը հանդես է եկել որպես սահմանադրաիրավական վեճ նախաձեռնող մարմին:**

19. Որոշման 19-րդ կետում Սահմանադրական դատարանը փորձել է հիմնավորել դիմումի առարկայի սահմանազանցումը, սակայն բավարարվել է միայն ՍԴՕ-ի 32-րդ հոդվածով սահմանված՝ գործն ի պաշտոնե քննության առնելու՝ Սահմանադրական դատարանի լիազորության վկայակոչմամբ և առանց հետագա իրավավերլուծության՝ անցել այդ լիազորության հիման վրա՝ սահմանադրաիրավական փոփոխված հարցի շարադրմանը՝ նշելով հետևյալը. «Վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի (որոշումն ընդունվում է նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ), այսինքն՝ հինգ կողմ ձայներով, համապատասխանու՞մ է արդյոք Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին»:

Ըստ այդմ՝ կարելի է եզրահանգել, որ տվյալ գործով դիմումի առարկայից շրջանակից դուրս գալը Սահմանադրական դատարանի կողմից չի պատճառաբանվել և չի հիմնավորվել, ինչը, ինքնին պատշաճ ընթացակարգի (due process) խնդիր է հարուցում Որոշման պատճառաբանական մասի համար:

20. Վերոնշյալը հաշվի առնելով՝ հարկ է անդրադառնալ Սահմանադրական դատարանի ի պաշտոնե գործելու լիազորությանը՝ առնվազն խնդրո առարկա գործի համատեքստում բացահայտելու համար այն

նորմատիվ շրջանակները, որոնք պարփակում են Սահմանադրական դատարանին գործի քննության ընթացքն ուղղորդելիս:

21. Անհատական դիմումի քննության շրջանակի և ՍԴՕ-ի 32-րդ հոդվածում ամրագրված՝ Սահմանադրական դատարանի ի պաշտոնե (ex officio) գործելու սկզբունքի հարաբերակցության հարցը Սահմանադրական դատարանի պրակտիկայում տակավին չլուծված և իրարամերժ կիրարկում ունեցող հարցերից մեկն է: Խնդիրն այն է, թե ինչպիսի տարածական շրջանակ ունի Սահմանադրական դատարանի ի պաշտոնե գործելու սկզբունքը, և արդյո՞ք այն ենթադրում է դիմումի առարկայի կամայական (հայեցողական) փոփոխում:

22. Այս հարցին համակցվում է վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի հայեցողության օբյեկտիվ սահմանափակումների հիմնախնդիրը, որը պետք է անպայմանորեն հաշվի առնվի Սահմանադրական դատարանի ի պաշտոնե գործելու առարկայական և գործառնական շրջանակը որոշելիս:

23. ՍԴՕ-ի 32-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե:

2. Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

24. Մեջբերված իրավանորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ ի պաշտոնե գործելու սկզբունքի համաձայն՝ Սահմանադրական դատարանի առարկայական իրավասությունից ածանցվող գործառնական հայեցողությունը եզրագծվում է **գործի** փաստական հանգամանքների պարզման ուղղությամբ Սահմանադրական դատարանի կողմից ձեռնարկվող միջոցներով, որոնց էությունը նախանշված է ՍԴՕ-ի 32-րդ հոդվածի 2-րդ մասով:

25. ՍԴՕ-ի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ դիմումում նշվում են Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և դիմողի փաստարկները՝ Սահմանադրության համապատասխան նորմերին կատարված հղումներով:

26. Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման համաձայն՝ « (...) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև

դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ ձեռնպահ մնալով քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներից ու արտահայտություններից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաև այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

27. Մեջբերված դրույթներով հաստատագրվում է, որ դիմումը Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական գործառույթների և լիազորությունների իրացման և գործադրման իրավական և փաստական հիմքն է, ինչով և բացատրվում են ՍԴՕ-ով և Սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ դիմումի պատճառաբանվածությանն ու հիմնավորվածությանն առաջադրված հատուկ պահանջները, և դրանց չպահպանելու դեպքում դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքների սահմանումը՝ գործի քննությունը համապատասխան հիմքերով մերժելու ձևով:

28. Այսպիսով, Սահմանադրական դատարանի ի պաշտոնե գործելու սկզբունքի և դիմումին առաջադրվող իրավական պահանջների համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանն իրավասու է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ միայն դիմումի առարկայի շրջանակում, այն է՝ պարտավոր է հիմք ընդունել դիմողի կողմից բարձրացված սահմանադրաիրավական հարցը (հարցերը) կամ այլ կերպ՝ սահմանադրաիրավական վեճը:

29. Դատարանի ի պաշտոնե գործելու սկզբունքը, ինչպես հայտնի է, բնորոշ է նաև վարչական դատավարությանը: Համապատասխանաբար՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը համարժեքորեն անդրադարձել է նշյալ սկզբունքի իրավական բովանդակությանը: Ի մասնավորի՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(…) փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն. այս

դատավարական սկզբունքը վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը: (…) չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել:

(…)

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex offi cio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ:

(…)

Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ» (թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 30-ի որոշում, թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշում և այլն):

30. Ըստ էության, Վճռաբեկ դատարանն ի պաշտոնե գործելու սկզբունքի գործառնական նշանակությունը դիտել է վարչական դատավարությունում կողմերից մեկին՝ մասնավոր անձին դատավարական աջակցություն ցուցաբերելը՝ հաշվի առնելով մյուս կողմի՝ հանրային–իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ լինելը և վերջինիս այդ կարգավիճակով պայմանավորված՝ կողմերի միջև գոյություն ունեցող փաստացի անհավասարությունը: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը եզրագծել է ի պաշտոնե գործելու դատավարական սկզբունքի գործողության սահմանները՝ ընդգծելով, որ դատարանը չի կարող փոփոխել հայցի հիմքը, լրացնել վերաքննիչ բողոքը և այլն:

31. Այսինքն՝ ի պաշտոնե գործելու սկզբունքը լրացնում է տնօրինչականության դատավարական հիմնարար սկզբունքը, այլ ոչ թե փոխարինում է դրան, և, ըստ այդմ, դատավարության կողմի՝ տվյալ դեպքում հայցվորի կամ դիմողի՝ սեփական գործողություններով դատավարական իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ կրելու, դատավարական մարտավարություն ընտրելու իրավունքը չի կարող ենթարկվել դատարանի ոչ իրավաչափ միջամտության:

32. **Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը, իրավասու լինելով առնվազն խնդրո առարկա գործով ինքնաբավ**

մեկնաբանություն տալու ՍԴՕ-ի 32-րդ հոդվածով սահմանված, սակայն միջդատավարական (սահմանադրադատավարական և վարչադատավարական) բնույթ ունեցող ի պաշտոնե գործելու սկզբունքին, դա չի արել, և, ըստ այդմ, բաց է մնում սահմանադրական դատավարությունում այս սկզբունքի կիրառման հիմքերի և սահմանների հստակեցման հարցը:

33. **Տվյալ պարագայում Դիմողի կողմից բարձրացվել է ԲԴԽ-ի կողմից իր գործի քննությանը մասնակցած անդամների մի մասի (երկու անդամ) խորհրդակցական սենյակում չգտնվելու և որոշմանը չքվեարկելու հարցը՝ որպես ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասի (իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տված մեկնաբանության) հակասահմանադրականության դրսևորում: Մինչդեռ, Որոշմամբ առաջադրվել և քննության է առնվել բոլորովին այլ հարց՝ քվորումի պայմաններում «էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի՝ ԲԴԽ հինգ անդամի «կողմ» ձայնով կիրառման սահմանադրականությունը:**

34.Վերստին ընդգծելով, որ Դիմողի կողմից բարձրացված հարցը վերաբերում էր ԲԴԽ-ի կողմից իր նկատմամբ կայացված որոշման իրավաչափությանը, ուստի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չէր, գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճելու փոխարեն, չափազանց լայն և ՍԴՕ-ի 32-րդ հոդվածի իրավական շրջանակից դուրս մեկնաբանություն է տվել ի պաշտոնե գործելու սկզբունքին՝ փաստորեն փոխելով դիմումի առարկան և հիմքը՝ արդյունքում ձևախեղելով անհատական դիմումի հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության կառուցակարգը:

35. **Սահմանադրական դատարանի (զեկուցող դատավորի) կողմից գործով պատասխանող Ազգային ժողովին չի ծանուցվել դիմումի առարկայի փոփոխության վերաբերյալ և հնարավորություն չի տրվել այդ առթիվ ներկայացնելու իր դիրքորոշումը:**

36. ՍԴՕ-ի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցներն են՝

1) դատավարության կողմերը՝

ա. դիմողը՝ սույն օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք կամ պարտականություն ունեցող մարմինները և անձինք,

բ. պատասխանողը՝ սույն օրենքով նախատեսված մարմիններն ու անձինք:

(…)»:

ՍԴՕ-ի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կողմերն իրավունք ունեն՝

1) ծանոթանալու գործի նյութերին, անելու քաղվածքներ.

2) ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր.

3) գործի առնչությամբ ներկայացնելու իրենց դիրքորոշումը.

4) հարցեր տալու մյուս կողմին, նրա ներկայացուցչին, փորձագետին, վկային.

5) միջնորդություններ հարուցելու, առաջարկություններ անելու, առարկություններ ներկայացնելու»:

37. Օրենսդրի կողմից սահմանադրական դատավարության կողմերին վերապահված վարութային իրավունքներից հատկանշական է գործի առնչությամբ դիրքորոշում ներկայացնելու իրավունքը, որը հավասարապես գործում է թե՛ գրավոր և թե՛ բանավոր ընթացակարգով գործը քննելիս: Սույն իրավունքը Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքի ծավալում ընդգրկված կողմերի իրավահավասարության սկզբունքի բաղադրիչ է, որի բացակայությունը խաթարում է մրցակցային դատավարության բուն էությունը:

38. Սահմանադրական դատարանը համահավաք դիրքորոշում է ձևավորել կողմերի իրավահավասարության սահմանադրաիրավական սկզբունքի հարցում: Մասնավորապես՝ 2016 թվականի հունիսի 23-ի ՍԴՈ-1289 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ բոլորը հավասար են օրենքի առջև, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի շրջանակներում արտահայտվում է որպես դատավարական կողմերի իրավահավասարության պահանջ»:

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010 թ. ՍԴՈ-881 որոշման 5-րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «… օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝… սահմանելուն»:

39. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը [(այսուհետ նաև՝ ՄԻԵԴ)], անդրադառնալով դատավարության ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքին, Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության վճռում վերահաստատել է իր նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ «… դատավարությունում կողմերի իրավահավասարության պահանջը, որը արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում» (Nikoghosyan

and Melkonyan v. Armenia, app. no. 11724/04 and 13350/04, 06.12.2007, §37; Dombo Beheer B.V. v. the Netherlands, app. no. 14448/88, 23.09.1993, §33; Steck-Risch v. Liechtenstein, app. no. 63151/00, 19.05.2005)»:

40. Վերոնշյալի լույսի ներքո գտնում եմ, որ իր գործով դիրքորոշում ներկա-յացնելու անձի իրավունքը ողջամտորեն չի կարող պատշաճ իրացվել, եթե նա չի կոմունիկացվում մյուս կողմի դիրքորոշումներին, ներկայացված ապացույցներին և դատարանի միջանկյալ (ընթացիկ դատավարությանը վերաբերող և գործն ըստ էության չլուծող) որոշումներին:

41. Այսքանով հանդերձ՝ արդեն իսկ արձանագրված փաստ է, որ քննարկվող գործով Սահմանադրական դատարանը գործով պատասխանող Ազգային ժողովին չի ծանուցել դիմումի առարկայի փոփոխության մասին և այդպիսով Ազգային ժողովին հնարավորություն չի տվել սկզբնապես ներկայացված դիրքորոշումը հավելել լրացուցիչ դիրքորոշմամբ, որը կվերաբերեր Սահմանադրական դատարանի կողմից առաջադրված սահմանադրաիրավական նոր հարցին (սահմանադրաիրավական վեճին):

42. Ընդ որում՝ ավելորդ չէ նշել, որ Սահմանադրական դատարանը, բացի վերը մեջբերված հայեցակարգային իրավական դիրքորոշումներից, առանձին գործերով ինքն է առավել կոնկրետացրել և զարգացրել կողմերի իրավահավասարության սահմանադրաիրավական սկզբունքի նորմատիվ ընկալումը՝ վերջինիս ծավալում ներառելով նաև դատավարական գործողությունների (որոշումների) վերաբերյալ ծանուցված լինելու կողմի իրավունքը (2015 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-1189, 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴՈ-1529 որոշումներ և այլն), սակայն խնդրո առարկա գործով շեղվել է այդ սկզբունքից:

43. Հատկանշական է նաև, որ սահմանադրական դատավարության և սահմա-նադրական արդարադատության հիմնական առանձնահատկությունը նորմաստեղծման գործընթացին նեգատիվ միջամտությունն է: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը տարատեսակ գործերով իր իրավասության շրջանակում քննության է առնում օրենսդիր և գործադիր իշխանության նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթների սահմանադրաչափությունը և լիազորված է դադարեցնելու դրանց գործողությունը: Հետևապես՝ թեկուզ անուղղակիորեն Սահմանադրական դատարանը միջամուխ է լինում օրենսդրական քաղաքականությանը, ինչն առավել ևս արդիական և պահանջված է դարձնում վիճարկվող իրավանորմն ընդունած պետական մարմնի՝ տվյալ դեպքում Ազգային ժողովի պոզիտիվ ներգրավումը տվյալ գործի քննությանը՝ պարզելու համար վիճարկվող իրավանորմին վերաբերող սահմանադրաիրավական վեճի վերաբերյալ օրենսդրի դիրքորոշումը և բացահայտելու իրավանորմն ընդունելիս վերջինիս իմաստի և բովանդակության կապակցությամբ խորհրդարանի իրական կամքը:

44. Մինչդեռ սույն գործով Սահմանադրական դատարանը, ի հեճուկս ՍԴՕ-ի 47-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ըստ էության փոփոխություն

մտցնելով դիմումի բովանդակության մեջ, չի ապահովել գործով պատասխանող Ազգային ժողովի կոմունիկացումը կատարված փոփոխությանն ու դրա վերաբերյալ դիրքորոշում հայտնելու իր իրավունքի իրացումը:

45. Որոշմամբ արձանագրվել է, որ ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասը հակասում է Սահմանադրության 49-րդ հոդվածով սահմանված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքին՝ առանց կիրառելու Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը (վերջինից բխող թեստը):

46. Անգամ եթե չքննարկվեն Որոշման և դիմումի քննության ընթացքում արձանագրված և սույն հատուկ կարծիքում ներկայացված ընթացակարգային (ներառյալ դիմումի ընդունելիության) խնդիրները, Որոշումն ունի բովանդակային ընդգծված թերություններ: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է Որոշմամբ ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասով՝ որպես պետաիրավական միջամտության կառուցակարգով, հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման արձանագրմանը՝ առանց համաչափության սահմանադրական թեստի կիրառման: Այսպես՝ Սահմանադրական դատարանի կողմից քննության է առնվել ԴՕ-ի «(...) 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս նրա լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումների ընդունման համար այնպիսի կարգավորում նախատեսելու մասով, որի պայմաններում որոշումը կարող է ընդունվել Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի (որոշումն ընդունվում է նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ), այսինքն՝ հինգ կողմ ձայներով» (Որոշում, կետ 19):

47. Այս կապակցությամբ Որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:

Դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին, առկա է լրացուցիչ՝ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող անփոփոխելիության սահմանադրական երաշխիք, որի ապահովման մանրամասները պետք է սահմանվեն բացառապես սահմանադրական օրենքով՝ Դատական օրենսգրքով (...)»:

«(...) Օրենսդիրը պետք է դրսևորի զսպվածություն և օրենսդրական կարգավորումների միջոցով չենթգափոխի Սահմանադրության համակարգային տրամաբանությունը, այն է՝ անհարկի չընդլայնի այդ հիմքերի

կիրառման օրենսդրական հնարավորությունը, թույլ չտա դրանց կամայական մեկնաբանություն, երաշխավորի դրանց կիրառման ժամանակ արդարության բոլոր պահանջների պահպանումը, այդ թվում՝ պատշաճ ընթացակարգային երաշխիքներ դատավորի լիազորությունները դադարեցնելու ժամանակ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բոլոր դեպքերում, երբ դադարեցվում են դատավորի լիազորությունները, դա վերաբերում է ոչ միայն դատավորի կարգավիճակին, այլ նաև նրա՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին. նա զրկվում է հետագա պաշտոնավարման իր իրավունքից, ուստի նրա այդ իրավունքը սահմանափակվում է:

(…) Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատավորի նկատմամբ կիրառվում է «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժը՝ ի հաշիվ վերջինիս իրավասահմանափակիչ ներուժի խիստ ինտենսիվ բնույթի, սահմանափակվում է նրա՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքը: Այլ կերպ՝ կարգապահական տույժերի տեսակներից «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» տույժի կիրառման հետևանքային ազդեցության շրջանակի մեջ ներառվում է նաև հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանափակումը. հետևաբար՝ անհրաժեշտ է, որ նշված կարգապահական տույժի կիրառումը յուրաքանչյուր դեպքում ուղեկցվի ինչպես նյութաիրավական, այնպես էլ ընթացակարգային այնպիսի երաշխիքներով, որոնց առկայությունը կբացառի վերոնշյալ սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման հնարավորությունը (Որոշում, կետ 21-23):

(…)

(…) Հաշվի առնելով քննարկման առարկա իրավահարաբերությունների կարևորությունն ու խնդրո առարկա շահերի խոցելիությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ հանրային արձագանքի զգայունությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները պետք է իրականացվեն դատական վարույթներին առաջադրվող սահմանադրաիրավական և դատավարական սկզբունքների խստիվ պահպանմամբ, այդ թվում՝ համապատասխան որոշումների ընդունման ընթացակարգի առնչությամբ, իսկ այդ որոշումների ընդունման ընթացակարգերն ամրագրող իրավակարգավորումները չպետք է լինեն խնդրահարույց՝ անձի, առավել ևս՝ դատավորի կարգավիճակ ունեցող անձի, անհատական իրավունք(ներ)ին միջամտության առումով: Նշվածն առանձնակի կարևորություն է ձեռք բերում կարգապահական վարույթի արդյունքներով «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ, ինչը ենթադրում է

ամենաինտենսիվ միջամտություն անձի անհատական իրավունք(ներ)ին, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման ընդունման պայմաններում (Որոշում, կետ 39):

(…)

(…) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված այն կարգավորումը, որին համապատասխան՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի որոշման ընդունման համար սահմանված է ձայների այնպիսի շեմ, ինչպիսին է Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ «էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառմամբ համապատասխան որոշման՝ Խորհրդի անդամների հինգ կողմ ձայներով ընդունման պայմաններում, հանգեցնում է Խորհրդի որոշման ժողովրդավարական լեգիտիմության բարձր գործակից չապահովելու առումով անձի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, հետևաբար՝ համահունչ չէ Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ, ինչպես նաև 164-րդ հոդվածի 1-ին մասին, 174-րդ հոդվածի 1-3-րդ մասերին, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 2-րդ մասին» (Որոշում, կետ 50):

48. Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Սահմանադրական դատարանը Դիմողի կողմից վիճարկվող օրինադրույթին վերագրել է հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքին **ոչ իրավաչափ միջամտություն (այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում)**՝ ընդգծելով, այդ թվում՝ նշյալ սահմանադրական իրավունքի սահմանափակման ինտենսիվությունը: Այստեղ անկյունաքարայինն այն հանգամանքն է, որ Սահմանադրական դատարանը նշյալ դիրքորոշմանը հանգել է՝ առանց Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի կիրառման: Համապատասխանաբար՝ Սահմանադրական դատարանն առերևույթ **չէր տիրապետում** սահմանադրորեն անհրաժեշտ իրավահիմնավորող ելակետերին՝ հանգելու եզրակացության առ այն, որ օրենսդրական վիճարկվող միջոցով պետությունն անհիրավաչափորեն միջամտել է դատավորի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին:

49. Այսպես՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ անդրադարձել է համաչափության սահմանադրական սկզբունքին՝

նշելով հետևյալը. «(…) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

(…) Սահմանադրական դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչներից մեկն է: 2015 թվականի փոփոխություններով (գործող) Սահմանադրության մեջ այն ամրագրվել է ամբողջ ծավալով՝ հստակորեն (expressis verbis):

Համաչափության սկզբունքի էությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանափակումն է մասնավոր և հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովման միջոցով, և հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող սահմանադրական պահանջների շարքում այն ունի առանձնահատուկ կարևորություն:

Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու

միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:

50. 2025 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1775 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) համաչափության սահմանադրական սկզբունքը մի շարք փոխկապակցված նորմատիվ տարրերի համակցություն է, որոնց միաժամանակյա ապահովման դեպքում է հիմնական իրավունքին պետության միջամտությունը սահմանադրաչափ»:

51. Ըստ էության, Սահմանադրական դատարանն իրավազարգացնող մեկնաբանություն է տվել Սահմանադրության 78-րդ հոդվածին՝ համաչափության սահմանադրական սկզբունքին հաղորդելով հիմնական

իրավունքին պետահիրավական միջամտության սահմանադրաչափության անբեկանելի չափորոշչի սահմանադրական կարգավիճակ: Հետևապես՝ որևէ հիմնական իրավունքին վիճարկվող իրավադրույթով պետության միջամտության սահմանադրաչափությունը չի կարող գնահատվել՝ առանց համաչափության սահմանադրական սկզբունքի հաջորդական բաղադրատարրերի հետ բաղդատման:

52. Մինչդեռ Որոշմամբ ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասով Դիմողի՝ հանրային ծառայության անցնելու սահմանադրական իրավունքին պետության միջամտությունը դիտվել է ոչ համաչափ՝ առանց համաչափության սկզբունքով սահմանված թեստով վիճարկվող դրույթի և սահմանադրական համապատասխան իրավունքի միջև պատճառահետևանքային կապի վերլուծության: Ուստի՝ ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի կողմից դատավորի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառման մասին որոշման քվեարկության ընթացակարգի սահմանադրականության ստուգումը կատարվել է ոչ լիարժեք. կատարվել է եզրահանգում՝ առանց միջամտության՝ նորմատիվ ուժ ունեցող վերոքննարկյալ թեստի կիրառման:

53. Ի լրումն վերոգրյալի՝ համաչափության սահմանադրական սկզբունքի չկի-րառումն այս գործով ունի հստակ և շոշափելի բացասական հետևանքներ, մասնավորապես՝ օրենսդրի կամքը սահմանադրադատական քննության առարկա չդարձնելու առումով: Մինչդեռ տվյալ պարագայում օրենսդրի նպատակը, որն արտահայտվել է Դիմողի կողմից վիճարկվող օրինադրույթի փոփոխությունների հիմնավորման մեջ, արտացոլում է դատավորների օրինապահության ապահովման հարցում առկա կառուցակարգային խնդիրները՝ դրանց լուծման ուղղությամբ նախատեսելով որոշակի միջոցներ, որոնք Դիմողի կողմից վիճարկվել են այս գործով:

Օրենսդրի նպատակի էությունը հանգում է հետևյալին. առաջարկվող փոփոխությունների և լրացումների նպատակն էր ապահովել գործերի դատական քննության արդյունավետ իրականացումը, դրանց մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պատշաճ իրացումը, գործերը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու պահանջի ապահովումը, դատարանների բնականոն գործունեության ապահովման ինստիտուցիոնալ երաշխիքների ամրապնդումը (««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.03.2020 թ. ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքի հիմնավորումներ):

Հետևապես՝ Դիմողի կողմից վիճարկվող օրինադրույթի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը, պարտավոր լինելով առաջնորդվել համաչափության սահմանադրական սկզբունքով, պետք է, նախ՝ քննության առարկա դարձներ օրենսդրի վերոշարադրյալ նպատակի

սահմանադրաչափությունը, առանց որի՝ սահմանադրորեն հնարավոր չէր գործով գալ որևէ եզրահանգման:

54. Ավելին՝ Որոշման մեջ առկա է ներքին հակասություն. մի կողմից՝ արվում է եզրահանգում առ այն, որ չի պահպանվել հիմնական իրավունքի արդյունավետ իրացման կազմակերպական արդյունավետ կառուցակարգ և ընթացակարգ սահմանելու պետության պոզիտիվ պարտականությունը՝ Սահմանադրության 75-րդ հոդվածին համապատասխան, իսկ մյուս կողմից՝ խոսվում է իրավամիջամտության անհամաչափության մասին:

Այս մասով հարկ է նշել, որ տվյալ պարագայում Սահմանադրության 75-րդ հոդվածը վերաբերելի չէ այնքանով, որքանով դատական իշխանության համակարգում գործում են հանրային ծառայության անցնելու իրավունքի արդյունավետ իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ սկսած դատավորի նշանակումից մինչև պաշտոնեական առաջխաղացում և ազատման կամ պաշտոնանկության հիմքերի և ընթացակարգերի սահմանում: Ընդ որում՝ այս հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանը տարբեր տեսանկյուններից դիրքորոշումներ է հայտնել մի շարք որոշումներում (2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598, 2024 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1709 որոշումներ և այլն):

Այս դեպքում Սահմանադրական դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ բարձրացված հարցը վերաբերում է հենց հանրային ծառայության անցնելու իրավունքին պետահրավական միջամտության համաչափությանը, քանի որ որպես այդպիսին՝ Որոշման մեջ նշվում է կոլեգիալ մարմնի կողմից կարգազանց դատավորի պաշտոնանկության լեգիտիմ հիմքի պայմաններում որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների գործող նվազագույն (ոչ մեծամասնական) համամասնության հավասարակշռվածության մասին՝ հաշվի առնելով ինչպես խիստ կարգազանց դատավորների պաշտոնանկությամբ դատական իշխանության համակարգում օրինականության ապահովման և արդարադատության արդյունավետության բարձրացման հանրային շահը՝ մի կողմից, և դատավորի՝ որպես հանրային ծառայողի սուբյեկտիվ հիմնական իրավունքների պաշտպանվածության շահը՝ մյուս կողմից:

55. Հարցը կարելի է դիտարկել նաև հետևյալ տեսանկյունից. Սահմանադրական դատարանը Որոշմամբ փաստագրել է, որ Դատավորի նկատմամբ ամենախիստ կարգապահական տույժի կիրառման համար ԲԴԽ անդամների անհրաժեշտ ձայների թիվն անհամաչափ է և խախտում է Դիմողի հանրային ծառայության անցնելու իրավունքը, և եզրակացրել, որ այդպիսով պետության կողմից չի երաշխավորվել Դիմողի հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման արդյունավետ կազմակերպական կառուցակարգ և ընթացակարգ: Այս մոտեցումը հիմք է տալիս իրավատրամաբանական բնույթի հետևյալ հակափաստարկին. եթե արձանագրվում է, որ ձայների գործող համամասնությունն ինքնին անհամաչափ միջամտություն է

դատավորի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքին, արդյո՞ք դա հիմք է տալիս պնդելու, որ տվյալ կառուցակարգը կամ ընթացակարգն արդյունավետ չէ, թե՞ հարցը պետք է քննարկել միայն միջամտության համաչափության տեսանկյունից, կամ ընդհանրապես, հնարավո՞ր է արձանագրել մի երևույթի բացակայությունը, սակայն դիրքորոշում հայտնել այդ երևույթի բովանդակային թերությունների մասին:

56. Այսպիսով, ակնհայտ է, որ Որոշմամբ ԴՕ-ի 94-րդ հոդվածի 6-րդ մասին տրված սահմանադրաիրավական բնութագիրը հիմնված չէ իրավավերլուծության՝ Սահմանադրության 78-րդ հոդվածից բխող և այդ հոդվածից ածանցվող իրավական, տրամաբանական և կառուցվածքային կանոնների վրա, ուստի՝ չի կարող բավարար համարվել Դիմողի կողմից վիճարկվող իրավանորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու համար:

57. **Որոշմամբ հաշվի չի առնվել ԲԴԽ-ի՝ որպես դատավորների անկախությունը, ինքնակառավարումը և օրինականությունը երաշխավորող սահմանադրական մարմնի՝ դատավորների կարգապահության վերահսկողության հարցերով գործունակության ապահովման սահմանադրաիրավական հրամայականի կատարման անհրաժեշտությունը:**

58. Ընդհանրապես, կոլեգիալ ցանկացած պետական մարմնի գործունեության սահմանադրաչափությունը հիմնված է երկու փոխկապակցված նախապայմանների վրա՝ ա) որոշումներ կայացնելիս ներառականություն՝ բացառելու համար ընդհանուր շահերով միավորված կայուն խմբերի որոշիչ ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա և բ) գործունեության արդյունավետություն, որը ենթադրում է որոշման համար անհրաժեշտ ձայների այնպիսի նվազագույն շեմի սահմանում, որը, որոշումների կայացման ժողովրդավարական լեգիտիմության ապահովմանը զուգահեռ, կերաշխավորի նաև կոլեգիալ պետական մարմնի գործունակությունը, այն է՝ իր իրավասության շրջանակում որոշում կայացնելու կարողունակությունը: Այս երկու գործոնները պետք է գտնվեն հավասարակշռվածության այնպիսի ռեժիմում, որ մի կողմից՝ տվյալ կոլեգիալ մարմնի որոշումներն ընդունվեն պատշաճ քննարկումների և իրավական հետևանքներ ունեցող բազմակարծության պայմաններում, իսկ մյուս կողմից՝ բանավեճային և բազմակարծության պայմանները բացասաբար չազդեն պետական մարմնի՝ որոշում ընդունելու ինստիտուցիոնալ կարողության վրա: Այլ կերպ՝ որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակ սահմանելիս հարկ է հաշվի առնել քվորումի առկայությամբ ձայների պարզ մեծամասնությունը գերազանցող մեծամասնության ամրագրման նպատակահարմարությունը որոշումների կայացման կառուցակարգի արգելափակման ռիսկի տեսանկյունից: Անշուշտ, քննարկվող հարցի լրջությունն ու կարևորությունը ևս ուշադրության արժանի գործոններ են, որոնք անպայմանորեն պետք է հաշվի առնվեն նշածս մյուս գործոնների հետ մեկտեղ: Հակառակ պարագայում, եթե տուրք տրվի միայն ժողովրդավարական լեգիտիմությանն ու

բազմակարծությանը, մեծ է հավանականությունը, որ պետահիշխանական կոլեգիալ մարմինը պարզապես չի կարողանա պատշաճ և արդյունավետ իրականացնել իր իրավական գործառույթներն ու լիազորությունները՝ վնաս հասցնելով այն հանրային շահին, այդ թվում՝ որի իրացմանն են ուղղված այդ մարմնի կազմավորումն ու գործունեությունը:

59. ԲԴԽ կազմավորմանը նվիրված Սահմանադրության 174-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադիրը նպատակ է ունեցել ապահովելու դատական իշխանության անկախությունն ու միևնույն ժամանակ հանրային-իրավական հաշվետվողականությունը: Այսպես՝ ԲԴԽ տասն անդամներից հինգը դատավորներ են, որոնք ընտրվում են դատական իշխանության՝ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ հինգը՝ իրավաբան գիտնականներ կամ այլ ճանաչված իրավաբաններ, որոնց ընտրում է օրենսդիր իշխանությունը՝ Ազգային ժողովը: Այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմում հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված անդամները, ինչը ԲԴԽ ժողովրդավարական լեգիտիմության և ինստիտուցիոնալ ներառականության ցուցիչ է. ԲԴԽ սահմանադրական լիազորությունների իրականացումն ապահովվում է պետական իշխանության նշյալ երկու ճյուղերի կողմից ընտրված պաշտոնատար անձանց կողմից:

Միաժամանակ, ԲԴԽ ոչ դատավոր անդամների գործառութային նշանակությունը դատական իշխանության արտահամակարգային մշտադիտարկումն է, իսկ դատավոր անդամներինը՝ ներհամակարգային մշտադիտարկումը: Վերջին պարագայում օբյեկտիվորեն կարող է առկա լինել դատական կորպորատիվիզմի և շահերի բախման ռիսկ՝ ելնելով դատավորների իրավական կարգավիճակի ընդհանրությունից և աշխատանքային կապերից: Ուստի՝ հատկապես դատավորների կարգապահական գործերով ԲԴԽ որոշումները կարող են մեծապես ազդված լինել դատավորների համապատասխան քվեարկություններով, և եթե դատավորների ձայներն ունեն որոշիչ կարգավիճակ, կամ դրա համար լինեն ինստիտուցիոնալ նախադրյալներ, կխաթարվեն դատական իշխանությունում օրինականության ապահովման և դատավորների հանրային հաշվետվողականության կառուցակարգը: Հետևապես՝ ԲԴԽ սահմանադրական առաքելության պատշաճ կենսագործման համար խիստ կարևոր է ապահովել որոշումների կայացման այնպիսի մեխանիզմ, որը հաշվի կառնի նշյալ ինստիտուցիոնալ և գործնական ռիսկերը և կունենա դրանց հակազդելու ներուժ:

60. Որոշմամբ անուղղակի դրական գնահատականի արժանացած քվեարկության կառուցակարգը, որը գործում էր որպես կարգապահական տույժ՝ դատավորների լիազորությունների դադարեցման որոշման ընդունման դեպքում, նախատեսում էր ԲԴԽ անդամների ընդհանուր թվի երկու երրորդի «կողմ» ձայները: Այս կառուցակարգն իրենում պարունակում էր այսպես կոչված

«որոշիչ» կամ «նեգատիվ» փոքրամասնության ձևավորման վտանգ, որը փաստացի կունենար վետոյի հնարավորություն ԲԴԽ անդամների մեծամասնության սատարումն ունեցող որոշման նախագծի նկատմամբ: Ընդ որում՝ նախքան համապատասխան օրենսդրական փոփոխությունն իրավակիրառ պրակտիկայում նկատվում էր հենց վերը նկարագրված «որոշիչ» կամ «նեգատիվ» փոքրամասնության ազդեցությամբ որոշումների ընդունման միտում, ինչը և հիմք էր հանդիսացել առերևույթ ծանրագույն կարգապահական գործերով ԲԴԽ ֆունկցիոնալությունը լավարկելու նպատակով վիճարկվող օրենսդրական փոփոխությունը նախաձեռնելու և օրենսդրի կողմից ընդունվելու հիմք և հիմնավորում: Խիստ կարևոր է նաև նշել, որ բոլոր դեպքերում, որպես կարգապահական տույժ դատավորի լիազորությունների դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է ձայների ավելի քան պարզ մեծամասնությունը՝ ԲԴԽ անդամների հինգ «կողմ» ձայնը:

Այսպես կոչված «փոքրամասնության քվեարկությունը» վերացնելուն զուգահեռ՝ mutadis mutandis շարունակում է գործել ԲԴԽ-ում գործերի քննության վարչադատավարական ընթացակարգը, որն ապահովում է առերևույթ կարգապահական զանցանք կատարած դատավորի բոլոր ընթացակարգային երաշխիքները՝ լսված լինելու, ներկայացուցիչ ունենալու, միջնորդություններ ներկայացնելու, հրապարակային քննության և այլն: Այսինքն՝ ԴՕ-ով և Վարչական դատավարության օրենսգրքով ապահովված են կողմերի մրցակցությունն ու իրավական պետությունում գործող դատավարական մնացյալ երաշխիքները, որոնց միջոցով դատավորն ունակ է լեգիտիմ կերպով՝ փաստարկմամբ ազդել ԲԴԽ անդամների ներքին համոզմունքի ձևավորման վրա՝ հնարավորինս հասնելով լիազոր մարմնի միջնորդագիրը մերժելու մասին որոշման կայացման:

Այլ կերպ՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու կարգապահական տույժի կիրառման համար անհրաժեշտ ձայների շեմի նվազեցումը հավասարակշռվում է ԲԴԽ-ում կարգապահական գործի քննության ժողովրդավարական և իրավական պետությանը հարիր վարութային երաշխիքներով, որոնք միտված են ինչպես դատավորի իրավունքների պաշտպանությանը, այնպես էլ ԲԴԽ անդամների անաչառության ապահովմանը:

61. Այս համատեքստում խիստ կարևոր է նաև հավելել, որ Սահմանադիրը ԲԴԽ ընթացիկ գործունեության, այդ թվում՝ իր իրավասության մեջ մտնող հարցերով քվեարկության կարգավորումը թողել է օրենսդրի հայեցողությանը, որն օբյեկտիվորեն կրում է ԲԴԽ գործունեության արդյունավետության հանրային մշտադիտարկման արդյունքների հետևանքային ազդեցությունը: Այլ կերպ՝ օրենսդիրը, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնության հարուցման փուլում համագործակցելով Կառավարության հետ, ի զորու է գնահատելու ԲԴԽ գործունեության արդյունավետությունը և տարաբնույթ

շահերի հետևանքային ազդեցությունը՝ հընթացս «սրբագրելով» գործող իրավակարգավորումները՝ ներառյալ քվեարկության կարգի մասով:

62. Այսինքն՝ Սահմանադրի կամքն է ԲԴԽ ընթացիկ գործունեության կանոնակարգման հարցում Ազգային ժողովին օժտել հայեցողության լայն շրջանակով: Այս հետևությունն ամրապնդվում է նաև այն փաստով, որ Սահմանադրությամբ, մասնավորապես՝ ԲԴԽ որոշումների ընդունման կարգի, այդ թվում՝ քվեարկության ժամանակ ձայների համամասնության վերաբերյալ որևէ կանոնակարգում չկա:

63. ԴՕ-ում կատարված օրենսդրական փոփոխությունը, որը Որոշմամբ դարձել է ըստ էության քննության առարկա, հետապնդել է դատավորների աճող կորպորատիվիզմի դրսևորումների կանխման կամ նվազեցման նպատակ՝ ելնելով այն իրողությունից, որ դատավորի լիազորությունների դադարեցման կարգապահական տույժի հարցերով նախկինում գործող քվեարկության կարգը նպաստել էր փոքրամասնության որոշիչ ազդեցության ձևավորմանը, երբ ԲԴԽ մեկ կամ երկու անդամ կարող էր կանխորոշել քվեարկության արդյունքները: Ընդ որում՝ դատավորների կարգապահական գործերի վիճակագրությունը ցույց էր տվել, որ այդ որոշիչ փոքրամասնությունը գրեթե մշտապես կողմնորոշված է դեպի դատավորների նկատմամբ առավել մեղմ վերաբերմունքը: Արդյունքում՝ ԲԴԽ գործելակարգը դատավորների կարգապահական գործերով առերևույթ չէր ծառայում Սահմանադրությամբ ամրագրված կանխադրույթներին՝ ստվերելով ԲԴԽ սահմանադրաիրավական առաքելության առանցքային բաղադրիչներից մեկը:

64. Մինչդեռ Որոշմամբ վերոնշյալ մրցակցող շահերի համադրված վերլուծություն չի արվել, և հարցը դիտարկվել է դատավորների «բացարձակ» անկախության պրիզմայով՝ անտեսելով ԲԴԽ գործունեության արդյունավետության սահմանադրաիրավական հրամայականը և միայն տուրք տալով ԲԴԽ որոշումների ընդունման «ժողովրդավարական լեգիտիմությանը»:

65. Ըստ այդմ՝ Որոշման հետևանքային ազդեցությունը կարող է լինել կարգապահական գործերով ԲԴԽ որոշումների արգելափակումը, որը կարող է լրջորեն սպառնալ պետության իրավական անվտանգությանը:

66. Այս կապակցությամբ հատկանշական է, որ Դիմողն իր դիմումում ընդունել է 79 քաղաքացիական գործերով վճիռները կողմերին ուշ տրամադրելու փաստը՝ դա պատճառաբանելով իր գերծանրաբեռնվածությամբ:

Սրանով հանդերձ՝ ԲԴԽ վիճարկվող որոշման վերաբերյալ ԲԴԽ դատավոր անդամների հատուկ կարծիքներում երևակվում է ընդհանուր միտում՝ նվազեցնելու Դիմողի կողմից կատարված կարգապահական խախտման հանրային վնասակարությունն ու ծանրությունը, ինչը խոսում է դատական կորպորատիվիզմի բացասական երևույթի մասին, որի չեզոքացմանը կամ առնվազն նվազեցմանն է ուղղված Դիմողի կողմից վիճարկվող օրինադրույթը:

Ավելին՝ ինքնին, 79 գործերով դատական ակտերի տրամադրման ակնհայտ ուշացման փաստերը սահմանակցում են խախտման՝ իրավական անվտանգության վտանգմանը հանգեցնելու ինտենսիվության մակարդակին՝ նպաստելով հանրության՝ դատական իշխանության հանդեպ վստահության անկմանը: Ուստի՝ Սահմանադրական դատարանի (զեկուցող դատավորի) կողմից անհրաժեշտաբար պետք է վերլուծության ենթարկվեին նշյալ 79 գործերը՝ ամբողջապես պարզելու համար Դիմողի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով կողմերին պատճառված վնասը, ինչը տվյալ գործով ևս հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռվածության կարևոր գրավական կարող էր լինել:

67. Որոշման ընդհանուր տրամաբանությունը կառուցված է Դիմողի այն փաստարկի շուրջ, որ իր կարգապահական գործով սկզբնապես քննությանը մասնակցել է ԲԴԽ տասն անդամ, սակայն քվեարկության սենյակ չեն ներկայացել երկուսը, ուստի՝ եթե Սահմանադրական դատարանը խնդրին մոտենալու էր նիստին մասնակցած անդամների «կողմ» ձայների թիվն ավելացնելու դիրքորոշմամբ, անհրաժեշտ էր բացահայտել քվեարկությանը մասնակցելու ենթաինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը:

68. Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը պետք է պատասխաներ այն հարցին, թե Սահմանադրության 49, 61 և 63-րդ հոդվածների համատեքստում անձի իրավունքների դատական պաշտպանության հրամայականից ելնելով՝ ինչպե՞ս պետք է մեկնաբանվի նիստին մասնակցելը՝ որպես գործի քննությա՞նը մասնակցել, խորհրդակցական սենյակո՞ւմ գտնվել, թե՞ քվեարկությանը մասնակցել: Այս հարցին Սահմանադրական դատարանի չանդրադառնալն արժեզրկում և բովանդակազրկում է Որոշմամբ արտահայտված դիրքորոշումը:

69. Ամփոփելով վերոգրյալը՝ վերահաստատում եմ իմ դիրքորոշումը, որ խնդրո առարկա գործով Դիմողը չի հաղթահարել դիմումի ընդունելիության օրենսդրական արգելքները, իսկ Սահմանադրական դատարանի Որոշումն ունի ներքին հակասություններ և անորոշություններ՝ թերևս չծառայելով Սահմանադրական դատարանի կողմից հետապնդվող սահմանադրաչափ նպատակին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՍԱՖԱՐՅԱՆ**

2 մայիսի 2025 թվականի



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԽ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻՆ



2025 թվականի մայիսի 27-ին ՍԴ նախագահն ընդունել է ԵԽ քարտուղարության մարդու իրավունքների տնօրեն Քլեր Օվեյին, որը Հայաստան է ժամանել մասնակցելու «Հայաստանում ՄԻԵԴ որոշումների արդյունավետ կատարման միջոցով հետագա աջակցություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրարկմանը» խորագրով աշխատաժողովին:

Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը բարձր է գնահատել Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի տարբեր կառույցների միջև


ձևավորված արդյունավետ համագործակցությունը՝ սահմանադրական արդարադատության և մարդու իրավունքների ոլորտում:

Տիկին Քլեր Օվեյին շնորհակալություն է հայտնել ՍԴ նախագահին՝ նշելով, որ ի դեմս Բարձր դատարանի Եվրոպայի խորհուրդն ունի պրոֆեսիոնալ և վստահելի գործընկեր:

Կողմերը քննարկել են «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունավետությունը, նախանշել հետագա անելիքները:

Հանդիպմանը մասնակցել են ՍԴ դատավոր Էդգար Շաթիրյանը, ԵԽ համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ Լիլիթ Դանեղյան-Բոսլերը, ԵԽ երևանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Վեդրան Իան-Կյելդսենը, «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի ավագ պատասխանատու Եվգենիա Իվանովան:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ



2025 թվականի մայիսի 5-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տատյանա Պանայոտովիչ Ցվետկովիչին:

Ողջունելով հյուրին՝ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը կարևորել է հայ-սերբական հարաբերությունների զարգացումը սահմանադրական արդարադատության ոլորտում՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերում:

Դեսպան տիկին Պանայոտովիչ Ցվետկովիչը նշել է, որ երկու երկրների բարեկամական հարաբերությունները լավ հիմք են ստեղծում նաև Հայաստանի և Սերբիայի Բարձր դատարանների միջև արդյունավետ համագործակցության զարգացման համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:


ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ



2025 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտիին: Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը շնորհավորել է դեսպանին նշանակման առթիվ՝ հույս հայտնելով, որ նրա պաշտոնավարման ընթացքում նոր լիցք կհաղորդվի հայ-իտալական միջդատարանական ու իրավական երկխոսությանը: Անդրադառնալով երկու երկրների Սահմանադրական դատարանների միջև համագործակցությանը՝ Արման Դիլանյանը բարձր է գնահատել իրավունքի զարգացման և, մասնավորապես, սահմանադրական արդարադատության ոլորտում Իտալիայի հարուստ ավանդույթները՝ կարևորելով այս ոլորտում փորձի փոխանակումն ու կապերի ամրապնդումը թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափերում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին վստահեցրել է, որ իր գործունեության ընթացքում կգործադրի անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ երկու երկրների սահմանադրական արդարադատության մարմինների հարաբերությունները և համագործակցությունը զարգացնելու համար: Դեսպան Ֆերրանտիի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի գործառույթները և դերակատարումը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԻՒՀ ԴԵՍՊԱՆԻՆ



2025 թվականի ապրիլի 3-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիին:

Ողջունելով հյուրին՝ Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել հայ և իրանցի ժողովուրդների ջերմ ու բարեկամական հարաբերությունները: Արման Դիլանյանն ընդգծել է Սահմանադրական դատարանի պատրաստակամությունը՝ երկու բարեկամ պետությունների միջև սահմանադրական արդարադատության ոլորտում փոխգործակցության զարգացման ուղղությամբ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՍԴ դատավոր Էդգար Շաթիրյանը:

Հանդիպման ընթացքում Հայաստանում Իրանի դեսպանի խնդրանքով ՍԴ նախագահը ներկայացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի կառուցվածքը, կազմությունն ու գործունեության առանձնահատկությունները:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Հայաստանում Իրանի դեսպանը նշել է, որ իր գործունեությունը մշտապես ուղղված է երկու բարեկամ պետությունների և ժողովուրդների ջերմ հարաբերությունների շարունակականության պահպանմանն ու առավել զարգացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ



2025 թվականի ապրիլի 28-30-ը Սահմանադրական դատարանի պատվիրակությունը ճանաչողական այց է իրականացրել Ստրասբուրգ: Այցի ընթացքում ՍԴ աշխատակազմի ներկայացուցիչները 12 հագեցած աշխատանքային հանդիպումներ են ունեցել Եվրոպայի խորհրդում (ԵԽ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ):

ՀՀ ՍԴ պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) քարտուղարության, ՄԻԵԴ վճիռների կատարման վարչության, ՄԻԵԴ-ի մամուլի բաժնի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում անդրադարձ է եղել այնպիսի հարցերի, ինչպիսիք են Սահմանադրական դատարանների դերը զսպումների և հակակշիռների համակարգում, Վենետիկի հանձնաժողովի աշխատանքի ընդհանուր մեթոդները, Հանձնակատարի մանդատը, գործառույթները և առաջնահերթությունները, Սահմանադրական դատարանների հետ Հանձնակատարի գրասենյակի համագործակցության մեխանիզմները, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) նպատակները և աշխատանքի

ընդհանուր մեթոդները, համագործակցությունը ազգային դատական մարմինների հետ, ՄԻԵԴ վճիռների կատարման ընթացակարգը, վերահսկման մեխանիզմները, համագործակցության զարգացման հնարավոր ուղիները: ՀՀ ՍԴ աշխատակազմի ներկայացուցիչներին ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դատավոր Միկոլա Գնատովսկին:

ԵԽ և ՄԻԵԴ ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների մեկնաբանման գործում Սահմանադրական դատարանների դերին, միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների փոխազդեցությանը, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերջին զարգացումներին, ինչպես նաև ՋԼՄ-ների հետ դատարանների համագործակցությանը վերաբերող հարցեր:

Այցը կազմակերպվել է «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում՝ ԵԽ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 28.07.2025թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
http://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(119)2025
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(119)2025
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(119)2025

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am